Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԵԴԱ ՀԱՄԱՅԱԿԻ

ԱՆՁԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԹ. 00.01- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ն.Ռ. Հակոբյան

ԵՐԵՎԱՆ 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------3
Գլուխ 1 Արժեքային համակարգի հիմնախնդիրը տարբեր գիտակարգերում
1.1 Արժեքային ոլորտի բովանդակությունը, էությունը և առանձնահատկությունները--11
1.2 Անձի արժեքային ոլորտի վերակառուցումների հիմնախնդիրը----------25
1.3 Անձի արժեքային ոլորտի և հարմարվողական կարողությունների հարաբերակցությունը ----------44
Գլուխ 2 Անձի արժեքային ոլորտը մասնագիտական կարգավիճակի փոփոխության համատեքստում
2.1 Անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխության հոգեբանական հիմնախնդիրը և արժեքային վերակառուցումները----------62
2.2 Անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմանների հոգեբանական վերլուծությունը ----------76
2.3 Անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխության հոգեբանական առանձնահատկությունները միջին տարիքում----------86
2.4 Մասնագիտական մարգինալությունը և անձի հարմարվողական միտումները---101
Գլուխ 3 Մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում անձի արժեքային ոլորտի վերակառուցումների հետազոտությունը
3.1 Հետազոտության մեթոդիկաների նկարագրությունը և մասնակիցների համակազմը ----------117
3.2 Մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում անձի արժեքային ոլորտի հետազոտության արդյունքների վերլուծությունը ----------125
Եզրակացություններ ----------158
Գործնական առաջարկություններ----------161
Օգտագործված գրականության ցանկ----------164

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Հասարակական կյանքի ներկա պայմաններում, երբ առկա են սոցիալ-քաղաքական, սոցիալ-տնտեսական տարաբնույթ փոխակերպումներ և վայրիվերումներ, համաշխարհային հանրակցության և առհասարակ տնտեսական լայնամասշտաբ ճգնաժամեր, հետզհետե աճում է հետաքրքրությունը մարդկային ռեսուրսների կառավարման, անձի մասնագիտական դերի, մասնագիտական ինքնաիրացման, մասնագիտական կողմնորոշման և վերակողմնորոշման հիմնախնդիրների նկատմամբ, որոնց նշանակությունը մեծանում է հատկապես փոխակերպվող հասարակություններում, որտեղ քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային վերակառուցումների հետևանքով կազմալուծվում են նախկինում կայուն հասարակական կառուցվածքները, սոցիալական հարաբերությունների համակարգը և դրանց տարրերը՝ սոցիալական ինստիտուտները, սոցիալական խմբերը և կազմակերպությունները: Տարբեր մասնագիտությունների տեր անձինք հայտնվում են սահմանային, միջանկյալ, անցումային կարգավիճակում: Սոցիոլոգիական հետազոտություններում՝ Տ. Ի. Զասլավսկայայի, Ս. Լ. Դանովսկիյի, Վ. Ն. Շուբկինի, Վ. Ա. Յադովի, Ա. Գ. Զդրավոմիսլևի, Մ. Ն. Ռուտկևիչի, Ֆ.Ռ. Ֆիլիպովի կողմից շեշտադրվում են մասնագիտության փոփոխության օբյեկտիվ գործոնները:

Ա. Ա. Հովսեփյանի հետազոտությունները հայ իրականության պայմաններում, ցույց են տալիս, որ ներկայումս փոփոխությունների անմիջական ուղեկից են դառնում բոլոր ոլորտներում արժեքների վերաարժևորումը, կարծրատիպերի փոփոխությունը, կյանքի իմաստի խարխլումը, մարդկային հարաբերությունների ապաուրբանիզացումը, մարդկանց կարգավիճակների և սոցիալական դերերի տեղաշարժերը և այլն: Նախկին փորձը՝ այդ թվում մասնագիտական և դրա հետ կապված արժեքային համակարգը դադարում են կողմնորոշող դեր կատարելու, ինչը հատկապես դրսևորվում է մեծ քանակությամբ մասնագետների աշխատաշուկայից դուրս մնալու և գործազուրկների շարքերը համալրելու գործընթացով: Սակայն հեղինակը վերոնշյալի մասին իրականացնում է ոչ թե հոգեբանական մոտեցում, այլ վերլուծությունը կրում է

փիլիսոփայական բնույթ: Մեր նպատակը հիմնախնդրի հոգեբանական մեկնաբանությունն է, որը հիմք կստեղծի գործնական ելք ապահովելու համար:

Անձն ընկղմվում է փոփոխվող իրականության շարժընթացի մեջ, ինչը մեծապես ազդում է հոգեկան իրողությունների բովանդակության վրա՝ ստիպելով նրան վերաիմաստավորել, վերաարժևորել այնպիսի հիմնային արժեքներ, ինչպիսիք են՝ «կյանքը», «մասնագիտությունը», «աշխատանքը», «ազատությունը», «զարգացումը» և այլն: Փոխակերպվող հասարակությունում սոցիալ-տնտեսական գործընթացների հարափոփոխ բովանդակությունը, անձի մասնագիտական կյանքում արմատական փոփոխությունները անմիջականորեն ազդեցություն են գործում անձի արժեքային ոլորտի վրա բովանդակությունը: Արժեքներն անձը և սոցիալական միջավայրը կապող օղակներ են: Անձի արժեքային համակարգի և նրա փոփոխության հիմնախնդիրը գիտական հետազոտությունների առարկա է դարձել տարբեր գիտակարգերի կողմից՝ հայտնվելով փիլիսոփայության, սոցիոլոգիայի, մանկավարժության, ազգագրության, հոգեբանության և մարդաբանական մի շարք գիտակարգերի հատման կիզակետում: Հոգեբանության մեջ արժեքային ոլորտի հիմնախնդրին առավելագույնս անդրադարձել են ռուս հետազոտողներ՝ Վ. Գ. Ալեքսեևան, Գ. Մ. Անդրեևան, Վ. Գ. Ասեևը, Ա. Գ. Ասմոլովը, Մ. Ի. Բոբնյովան, Գ. Լ. Բուտինայտեն, Ֆ. Ե. Վասիլյուկը, Բ. Ի. Դոդոնովը, Դ. Վ. Կաշիրսկին, Դ. Ա. Լեոնտևը, Տ. Վ. Կորնիլովան, Դ. Ի. Ֆելդշտեյնը, Ա. Վ. Սերին, Մ. Ս. Յանիցկին և այլոք, իսկ արտասահմանյան գրականության մեջ՝ Մ. Վեբերը, Ռ. Ինգլհարդը, Ա. Մասլոուն, Գ. Օլփորթը, Վ. Ֆրանկլը, Կ. Ռոջերսը, Մ. Ռոկիչը, Շ. Շվարցը, Վ. Բիլսկին, Է. Շպրանգերը և այլոք:

Անձն ունենալով որոշակի մասնագիտություն, յուրացնելով և իրացնելով իր մասնագիտական դերը՝ բոլոր բովանդակային տարրերով հանդերձ և գործունեություն ծավալելով որոշակի պայմաններում, յուրացնելով տվյալ մասնագիտական դերի ավանդույթները, նորմերն ու արժեքները, հայտնվելով մասնագիտական կարգավիճակի անկման պայմաններում, կարող է ապրել հոգեկան խռովք, բախումներ, ֆրուստրացիաներ, տագնապել իր ներկայի և ապագայի համար: Առավել ևս, երբ բացակայում են հոգեբանական հարմարման համար նպաստավոր պայմանները, ապա առաջ է գալիս արժեքային վերակառուցումների խնդիրը, որը առաջադրում է

փոփոխվող իրականության վերաարժևորման և վերաիմաստավորման, արժեքային համակարգի փոփոխությունների անհրաժեշտություն:

Խնդիրը բարդանում է եթե խոսքը գնում է միջին տարիքի անձանց մասին, որոնց արժեքային համակարգը հարաբերականորեն կայացած է (Ն. Ն. Բրատուս, Ֆ. Ե. Վասիլյուկ, Բ. Ի. Դոդոնով, Կ. Ռոջերս, Մ. Ռոկիչ և այլոք): Նոր փոփոխվող մասնագիտական իրականության պայմաններում գործառնելը կապվում է լրացուցիչ դժվարությունների հետ, որոնք ծառանում են կենսագործունեության տվյալ փուլում: Մասնագիտության փոփոխությունը դառնում է օրինաչափ երևույթ:

Ներկա ժամանակում առավել ուսումնասիրված են հեղինակավոր սոցիալական կարգավիճակի կորուստի պայմաններում անձի վարքի շատ առանձնահատկություններ: Առավել քիչ են ուսումնասիրված մասնագիտական կարգավիճակի՝ վարընթաց սոցիալական շարժունությամբ պայմանավորված փոփոխության պայմաններում անձի՝ մասնավորապես միջին տարիքի անձի արժեքային ոլորտը: Միջին տարիքի անձն, ով մասամբ խորհրդային արժեհամակարգի կրողն է, ունի մասնագիտություն որոշակի ոլորտում, աշխատաշուկայում դուրս է մնում մրցակցությունից՝ մասնագիտությունների անվանացանկի նորացման, ժամանակակից մասնագիտությունների ի հայտ գալու, մասնագիտական պահանջներին անհամապատասխանության պատճառով: Կազմակերպված մասնագիտական վերակողմնորոշման գործընթացի բացակայության պայմաններում, անձի համար միակ ելքը դառնում է ոչ մասնագիտական, ցածր որակավորմամբ աշխատանքային գործունեության ոլորտը: Այս պայմաններում տեղ է գտնում հասուն անձի մասնագիտական աճի, ինքնաիրացման կասեցում, ինչը լի է բացասական հետևանքներով ոչ միայն առանձին անձի զարգացման, այլ նաև ողջ հասարակության նորմալ գործառնության համար: Ուստի առավել հրատապ է և արդիական սոցիալական վարընթաց շարժունությամբ պայմանավորված մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում անձի արժեքային ոլորտի հիմնախնդրի ուսումնասիրությունը:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել միջին տարիքի (40-60տ.) անձանց արժեքային ոլորտի վերակառուցումների առանձնահատկությունները

մասնագիտական կարգավիճակի փոփոխության և վարընթաց շարժունության պայմաններում:

Հետազոտության նպատակի իրականացման համար անդրադաձել ենք հետևյալ կոնկրետ խնդիրներին.

1. Տեսական վերլուծության միջոցով բացահայտել արժեքային վերակառուցումների բնույթը մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում:
2. Բացահայտել մասնագիտական արժեքների իրացվածության աստիճանը մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում:
3. Ուսումնասիրել անձի իմաստային ոլորտի վերակառուցումները մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում:
4. Ուսումնասիրել անձի արժեքային տիպը՝ մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում:
5. Բացահայտել անձի արժեքային ոլորտի վերակառուցումների տարրերը մասնագիտության փոփոխության համատեքստում:
6. Բացահայտել անձի հարմարվողական կարողությունների բնույթը մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում:

Հետազոտության օբյեկտն է՝ մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում անձի արժեքային ոլորտի նորագոյացությունները:

Հետազոտության առարկան է՝ անձի արժեքային ոլորտի վերակառուցումների հոգեբանական առանձնահատկությունները:

Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել անձի արժեքաիմաստային ոլորտի շարժընթացի վերաբերյալ՝ Ս. Լ. Ռուբինշտեյնի, Ա. Ն. Լեոնտևի, Դ. Ա. Լեոնտևի, Ի. Վ. Կալինինի, Ա. Վ. Սերիի, Մ. Ս. Յանիցկու, Ի. Ա. Սոինայի, Ն. Վ. Զոնկինի և այլ հետազոտողների մոտեցումները և հիմնադրույթները, Ս. Լ. Ռուբինշտեյնի, Բ. Գ. Անանևի, Ա. Ն. Լեոնտևի արժեքների և սոցիալական համակարգի փոխադարձ կապվածության վերաբերյալ տեսությունները, Ն. Ռ. Հակոբյանի անձի մարգինալ կարգավիճակի վերաբերյալ հիմնադույթը, Ա. Ա. Նալչաջյանի անձի և սոցիալական խմբերի հոգեբանական հարմարման տեսությունը,

Լ. Դ. Ստոլյարենկոյի, Ա. Գ. Մակլակովի հարմարվողականության մասին հիմնադրույթները, Ս. Ս. Խուդոյանի անձի տարիքային ճգնաժամերի վերաբերյալ տեսությունը:

Հետազոտության վարկածը մասնագիտական կարգավիճակի վարընթաց շարժունությամբ փոփոխության պայմաններում՝ անձի արժեքային ոլորտը ենթարկվում է փոխակերպումների՝ ներառելով մի շարք նորագոյացություններ, որոնք պայմանավորում են անձի հոգեբանական հարմարվողականության բնույթն ու առանձնահատկությունները:

Հետազոտության ընթացքում կիրառել ենք հետևյալ մեթոդները.

- հարցաթերթերի մեթոդ
- թեստավորման մեթոդը, որը ներառում է հետևյալ մեթոդիկաները՝ Մ. Ռոկիչի արժեքային կողմնորոշումների թեստը, Ռ. Ինգլիարդի մոդիֆիկացված մեթոդիկան՝ ըստ Մ. Ս. Յանիցկու, Ա. Գ. Մակլակովի և Ս. Վ. Չերմյանինի «Ադապտիվություն» անձնային հարցարանը, Դ. Ա. Լեոնտևի կենսաիմաստային կողմնորոշումների մեթոդիկան (ԿԻԿ):

Կիրառվել են մաթեմատիկական վիճակագրության, որակական, քանակական վերլուծության մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթ: Հետազոտության գիտական նորույթը նրանում է, որ բազմակողմանիորեն վերլուծության է ենթարկվել և վեր հանվել անձի արժեքային ոլորտի բովանդակությունը, մասնագիտական արժեքների իրացվածությունը, անձի բարձրակարգ մասնագիտական արժեքների տեղաշարժերը և նրանցով պայմանավորված նորագոյացությունները, անձի հարմարվողականության հնարավորությունները: Մասնագիտական վարընթաց շարժունության համատեքստում մշակվել է մասնագետ մարգինալի մասին պատկերացումը՝ իրեն բնորոշ արժեհամակարգի առանձնահատկություններով և հարմարման միտումներով:

Հետազոտության տեսական նշանակությունը: Աշխատանքի տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ բացահայտվել է անձի արժեքաիմաստային ոլորտի վերակառուցումների շարժընթացը և ձևավորված նորագոյացությունները անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխության համատեքստում, բացահայտվել է

անձի մասնագիտական վարընթաց ուղղվածությամբ շարժունության արդյունքում հոգեբանական հարմարվողականության միտումները և առանձնահատկությունները, որոնք թույլ են տալիս հարստացնել և ամբողջացնել անձի արժեքային ոլորտի, անձի սոցիալական դերի, մասնագիտական կողմնորոշման և հոգեբանական հարմարվողականության տեսությունների համախումբը:

Հետազոտության գործնական նշանակություն: Ատենախոսության գործնական նշանակությունը հետևյալն է. ա) ստացված արդյունքները կարող են օգտագործվել միջին տարիքի անձի արժեքային ոլորտը ուսումնասիրողների կողմից, բ) ատենախոսության նյութերը, մշակված գործնական առաջարկությունները կարող են օգտագործվել միջին տարիքի անձանց հետ աշխատող (մասնավորապես ՀՀ Զբաղվածության պետական գործակալության աշխատակիցների կողմից, մասնագիտության փոփոխության խնդրի առջև հայտնված անձանց հետ աշխատանքում՝ մասնագիտական կողմնորոշման և վերակողմնորոշման հարցերում) անձնակազմի մասնագիտական պատրաստության, վերապատրաստման և որակավորման բարձրացման համար:

Ատենախոսության տեսական դրույթները և հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել «ընդհանուր հոգեբանություն», «տարիքային հոգեբանություն», «անձի հոգեբանություն», «աշխատանքի հոգեբանություն», «մասնագիտական կողմնորոշում» դասընթացների շրջանակներում:

Հետազոտությունները իրականացվել են հետևյալ հաստատությունների՝ Հայաստանի պատմության թանգարանի, ԵՊՀ հյուրերի տան, «Փոքր Մհեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ի, Գր. Նարեկացու անվան թիվ 137 դպրոցի և սպասարկման ոլորտի ընկերությունների (տրանսպորտային ընկերություններ և սննդի ոլորտի հաստատություններ) աշխատակիցների հետ՝ թվով 101 անձ:

Հետազոտության փորձաքննությունը: Հետազոտության արդյունքները, հիմնական դրույթները զեկուցումների ձևով ներկայացվել են մի շարք հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Հետազոտության արդյունքները ներդրվել են «Փոխակերպվող հասարակությունում անձի հոգեբանությունը» դասընթացի մեջ:

Պաշտպանության ներկայացվող դրույթներն են.

- Միջին տարիքում անձի արժեքաիմաստային ոլորտի վերակառուցումները կապված են ոչ միայն տարիքային շրջափուլի առանձնահատկությունների հետ, այլ նաև պայմանավորված են մասնագիտական կարգավիճակի փոփոխության (վարընթաց սոցիալական շարժունության) պայմաններով:
- բացասական միտվածությամբ արժեքային վերակառուցումներն ընթանում են բարձրակարգ արժեքների տեղաշարժմամբ դեպի արժեքային համակարգի ցածր դիրքեր՝ հարմարման ցածրակարգ արժեքների գերակայմամբ կամ բարձրակարգ և ցածրակարգ արժեքների համագոյակցմամբ, ինչը պայմանավորում է անձի արժեքային ոլորտի առանձնահատկությունները:
- մասնագիտական կարգավիճակի վարընթաց շարժունության համատեքստում արժեքային ոլորտի շարժընթացում տեղ է գտնում մասնագիտական արժեքների իրացման սահմանափակության կամ «մասնագիտական արժեքների ֆրուստրացիայի» երևույթը: Այն արտահայտվում է անձի մասնագիտական ինքնաիրացման սահմանափակման մեջ՝ պայմանավորելով նման պայմաններում հայտնված անձի հոգեկան իրողությունների բնույթն ու առանձնահատկությունները:
- անձի անձնային իմաստները «արտադրվում են» անհատական արժեքային համակարգի աշխատանքի արդյունքում, ուստի արժեքային ոլորտի բացասական միտվածությամբ վերակառուցումները հանգեցնում են անձի կողմից իրականության իմաստավորման գործընթացի թուլացմանը՝ արտահայտվելով կյանքի իմաստավորվածության ցածր մակարդակի մեջ:
- անձի արժեքաիմաստային ոլորտի վերակառուցումները նոր սոցիալական իրականության պայմաններում կրում են հարմարվողական բնույթ՝ պայմանավորելով անձ-սոցիալական միջավայրի կայունությունը և հարմարվողականության շղթան:
- մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում հայտնված անձը բնորոշվում է իբրև մասնագետ մարգինալ, որին բնորոշ է փոփոխվող

սոցիալական, մասնավորապես՝ մասնագիտական փոփոխվող պայմաններում մարգինալ անձի հարմարվողական մարտավարություններն ու արժեհամակարգը:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության ընդհանուր ծավալը 169 էջ է:

ԳԼՈՒԽ 1

ԱՆՁԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՏԱՐԲԵՐ ԳԻՏԱԿԱՐԳԵՐՈՒՄ

1.1 Անձի արժեքային ոլորտի բովանդակությունը, էությունը և առանձնահատկությունները

«Սոցիալական միջավայրը» լայն հասկացություն է, այն ներառում է իր մեջ արժեքային դաշտ, որը «թելադրում է» վարքի ձևեր, կարգավորում է հասարակական հարաբերություններ: Առանձին անձի արժեքային ոլորտը «սնվում է» տվյալ սոցիալական միջավայրի հասարակական արժեքների համակարգից, ուստի անհատական և հասարակական արժեքային ոլորտների միջև կապը փոխադարձ համաձայնեցված է: Վերջին տասնամյակում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, քաղաքական վայրիվերումները, սոցիալական կառույցների վերակառուցումները, փոխակերպումները իրենց հորձանուտի մեջ ներգրավեցին հազարավոր մարդկանց:

Սոցիալական տարածության մեջ անձի հասկացման ելակետ է անձի սոցիալական կարգավիճակը՝ մասնավորապես նրա մասնագիտական կարգավիճակը հանրույթում: Սոցիալական վերակառուցումները առաջին հերթին արտահայտվեցին մեծ քանակությամբ անձանց սոցիալական, մասնավորապես, մասնագիտական կարգավիճակների տեղաշարժման մեջ՝ սոցիալական կառուցվածքում բարձր դիրքերից դեպի ավելի ցածրակարգ դիրքեր: Ակնհայտ է, որ սոցիալական վերակառուցումներից ծնունդ առած արժեքային դաշտի փոփոխություններն առաջացրեցին անձի կողմից կյանքի, աշխատանքի և այլ կենսական արժեքների վերաարժևորման անհրաժեշտություն և նոր սոցիալական իրականության մեջ սեփական տեղը գտնելու դժվար փնտրտուքներ: Որպես կանոն, մարդկանց մեծամասնության համար փակուղուց միակ ելքը ավելի ցածր կարգավիճակի ձեռքբերումն էր, ինչն ընթացավ մեծ քանակությամբ միջին տարիքի անձանց կողմից սպասարկման ոլորտի աշխատակիցների շարքերի համալրմամբ: Ուստի նման

պայմաններում հայտնված անձի արժեքային ոլորտի վերակառուցումները, փոխակերպումները, նրա հարմարվողականության գնահատումը հրատապ խնդիր է:

Անձի արժեքային ոլորտի և սոցիալական խմբում զբաղեցրած սոցիալական կարգավիճակի միջև կապն անվիճելի է: Ի. Ս Կոնը նշում է, որ սոցիալական դերի, հատկապես մասնագիտական դերի կատարումը էական ազդեցություն է ունենում անձնային որակների, արժեքային կողմնորոշումների ոլորտի վրա: Այդ կապը փոխադարձ է: Մի կողմից մասնագիտական կարգավիճակը ուղղվածություն է տալիս անձի արժեքային ոլորտին՝ պայմանավորելով նրա ինքնատիպությունը, իսկ մյուս կողմից՝ մասնագիտությունը անձի համար առաջնային կենսական արժեք է [42;72]: Ուստի մասնագիտության փոփոխության պայմաններում անձի արժեքային ոլորտի վերակառուցումների ուսումնասիրությունը սկսենք արժեքային ոլորտի բաղադրիչների՝ «արժեք» և «իմաստ» հասկացությունների մեկնաբանությունից:

«Արժեք» հասկացությունը բավականին ընդգրկուն է և հետազոտողների կողմից դիտարկվում է տարբեր դիտակետերից: Ակնհայտ է, որ այդ հասկացությունը բնորոշելիս սոցիոլոգի, փիլիսոփայի և հոգեբանի տեսակետները լիովին տարբեր են: Սոցիոլոգը «արժեք» ասելով հասկանում է այն, ինչը շարժում է մարդկային դրդապատճառայնությունը, առարկայի հատկություն, որն ուղղված է սոցիալական սուբյեկտի որոշակի պահանջմունքների բավարարմանը: Այս դեպքում կարևորվում է հասկացության ընդամենը մեկ հատկությունը: Լ. Վ. Սուրժենկոն նշում է, որ սոցիոլոգիայում արժեքները գլխավորապես ուսումնասիրվում են որպես սոցիալական սուբյեկտների սոցիալական վարքի կարգավորիչներ: Մ. Վեբերը, ով սոցիոլոգիայում առաջին անգամ խոսեց արժեքների մասին, կարևորում է դրանց նորմատիվ կողմը: Այս դեպքում արժեքը նորմ է և ունի որոշակի նշանակություն սուբյեկտի համար, բայց չի կարող դիտվել պատմականությունից դուրս, քանի որ նրա կարևորագույն հատկությունն այն է, որ արտահայտում է տվյալ ժամանակի դիրքորոշումները [77;4-8]: Վեբերի սոցիոլոգիական մոտեցումը արժեքը դիտարկում է իբրև արտաքին ինչ-որ երևույթ, սոցիալական պահանջ, որն ուղղորդում է անձի վարքը, իհարկե, չանտեսելով տվյալ ժամանակահատվածի մշակույթի առանձնահատկությունները և առկա արժեքների փոխհարաբերությունը:

Փիլիսոփայության մեջ առկա է արժեքների մասին ուսմունք, որն անվանում են աքսիոլոգիա: «Արժեք» հասկացությունը առաջին անգամ քննարկել է Գ. Լոտցեն: Վ. Կանկեն նշում է, որ մարդու յուրահատկությունը աշխարհի նկատմամբ արժեքային հարաբերության մեջ է: Անձի համար արժեք է այն ամենը, ինչ նշանակալի է, ունի անձնային կամ հասարակական իմաստ [35;152,153]: Ուստի արժեք կարող է լինել նաև աշխարհում իր տեղը կամ սոցիալական կառուցվածքում իր կարգավիճակը:

Փիլիսոփաները արժեքների մեջ առանձնացնում են հետյալը. լինել արժեք, ունենալ արժեք, լինել արժեքավոր ինչ-որ բան: «Լինել արժեք» ըստ նրանց՝ լինել արժեք և ոչ այլ բան: «Իրացնել արժեք» նշանակում է ստեղծել պայմաններ, որպեսզի արժեքը կարողանա դրսևորվել մարդկային գործունեության տարբեր ոլորտներում, չմնան իբրև սուբյեկտիվ բովանդակություն: Արժեքի նկատմամբ փիլիսոփայական մոտեցումը այն ներկայացնում է միակողմանիորեն, հաշվի չառնելով, որ արժեքը ամբողջական է այն դեպքում, երբ դիտարկվում է կրողի հետ միասնության մեջ [80;153]: Փաստորեն, փիլիսոփայությունը արժեքը բնորոշում է որպես շրջապատող միջավայրի օբյեկտների յուրահատուկ սահմանում՝ բացահայտելով դրանց դրական կամ բացասական նշանակությունը մարդու և հասարակության համար:

Հոգեբանության տեսանկյունից կարևոր է բուն գնահատման գործընթացը, դրա պայմանները, արժեքների իրացումը կոնկրետ մարդկանց և խմբերի կողմից: Կարևորվում է մարդկանց կողմից արժեքների բացահայտումն ու դրանց գիտակցվածության մակարդակը, ինչպես նաև արժեքների հետ մարդկանց, իրադարձությունների, օբյեկտների հարաբերակցությունը: Հոգեբանության տեսանկյունից կարևոր է արժեքի ներքին ընդունումը, իմաստավորումը և իրացումը վարքի և գործունեության մեջ, ոչ թե վերացական հասկացումը իբրև սուբյեկտից դուրս գտնվող ինչ-որ համապարփակ իրողության:

Անդրանառնանք հոգեբանության մեջ «արժեք» հասկացության մասին տարաբնույթ պատկերացումներին: Տևական ժամանակ «արժեք» հասկացությունը տարբեր հետազոտողների կողմից նույնացվել է հոգեբանական այլ կառուցվածքների (դրդապատճառ, պահանջմունք, դիրքորոշում, համոզմունք) հետ: Այս առումով կարևոր է նախ տարբերակել արժեքները այլ հոգեբանական կազմավորումներից:

Արժեքների ուսումնասիրության առաջամարտիկ Մ. Ռոկիչը արժեքները սահմանում էր որպես համոզմունքներ, անհատի համար վարքի որոշակի ձև, կյանքի նպատակ կամ իրականության որևէ այլ երևույթ, որը անձի համար սոցիալապես ավելի գրավիչ է, նշանակություն ունեցող: Ըստ նրա՝ կենսական արժեքները ստանդարտներ են, որոնք ղեկավարում են մարդու գործունեությունը, դրան տալիս ձևաչափ և ուղղվածություն: Նա դասակարգեց արժեքները երկու խմբի՝ տերմինալային և գործիքային: Տերմինալային արժեքները (արժեք-նպատակներ) համոզմունքներ են այն մասին, որ վերջնական նպատակը արժե, որ անձը ձգտի դեպի այն, իսկ գործիքային արժեքները՝ համոզմունքներ են այն մասին, որ գործողությունների որոշակի ձև կամ անձի հատկություն ավելի նախընտրելի են տվյալ իրադրության մեջ [103;5]: Մ. Ռոկիչը, այնուամենայնիվ, արժեքները հանգեցնում էր համոզմունքների և ըստ նրա՝ արժեք է անձի համար ցանկացած երևույթ, որը նրա համար ցանկալի է, փորձը կազմակերպող և ուղղորդում են անձի վարքը որոշակի իրադարձությունների նկատմամբ: Դրանք ամբողջացնում են անհատականի և սոցիալականի օղակները:

Հոգեվերլուծական ուղղության մեջ՝ Զ. Ֆրոյդի ներկայացրած անձի տեսական մոդելում, արժեքանորմատիվային գործառույթ իրականացնում է, ըստ երևույթին, Գեր ես-ը, որը անձի բարոյական, էթիկական արժեքների և նորմերի պահեստն է, նրա գործունեության և մտքերի յուրօրինակ դատավորն է [82;23]: Այս կառույցի ձևավորման գործում հսկայական նշանակություն է տրվում երեխայի փոխազդեցությանը ծնողների հետ: Ընդհանուր առմամբ արժեքների մասին պատկերացումները հոգեվերլուծության մեջ բավականաչափ մշակված չեն:

Լ. Վ. Սուրժենկոն, վերլուծելով արժեքների վերաբերյալ զանազան մոտեցումները, նշում է, որ հոգեվերլուծության մեջ անձի սոցիալական էությունը, նրա հոգեկանի սոցիալական պայմանավորվածությունը առաջնահերթ տեղ է զբաղեցրել Ա. Ադլերի և Է. Ֆրոմմի տեսություններում: Ա. Ադլերի առաջ քաշած «սոցիալական հետաքրքրության» գաղափարը գլխավորապես կենտրոնանում է ընդհանրության զգացման, մարդկանց իրար հետ համագործակցական հարաբերություններ ստեղծելու վրա, հետևաբար, կարևորում է մարդու վարքի և գործունեության համապատասխանությունը գործող արժեքային դաշտի հետ: Է. Ֆրոմմը զարգացնում է

սոցիալական բնավորության գաղափարը, ինչը որոշում է անձի ուղղվածությունը և արժեքային համակարգը [77;5]: Այնուամենայնիվ, սույն տեսությունները չնայած շեշտը դնում են անձի վարքի և գործունեության սոցիալական պայմանավորվածության վրա, բայց արժեքների վերաբերյալ ամբողջական տեսություն չեն առաջարկում:

Արտասահմանյան հոգեբանության շրջանակներում արժեքների տեսությունը ավելի մանրամասն մշակվել է հումանիստական, էքզիստենցիալ հոգեբանության ուղղության մեջ: Կ. Ռոջերսն առանձնացնում է «ինքնություն» հասկացությունը, որի կառուցվածքի մեջ մտնում են օրգանիզմի կողմից անմիջականորեն ապրվող, այնպես էլ «փոխառված», «ինտրոյեկտվող» արժեքներ, որոնք մարդու կողմից սխալմամբ մեկնաբանվում են իբրև սեփական: Նա կարծես դեմ է դուրս գալիս արժեքների սոցիալական պայմանավորվածության մասին ընդունված գաղափարին և գտնում է, որ արժեքային դատողությունների ձևավորման հիմքը մարդու ֆիզիոլոգիական ապարատն է: Անձի համար արժեքավոր է դառնում այն ամենը, ինչն ընկալվում է ֆիզիոլոգիական ապարատի կողմից և, իհարկե, նպաստում է օրգանիզմի պահպանմանը և ամրապնդմանը: Ըստ Ռոջերսի՝ այդ հիմքի վրա են յուրացվում մշակութային արժեքները [68;46]: Արժեքների վերաբերյալ Կ. Ռոջերսի մոտեցումը կարելի է բնորոշել իբրև «կենսաբանականացված»: Ա. Մասլոուն չի տարբերակում «պահանջմունք», «դրդապատճառ» և «արժեք» հասկացությունները: Ըստ նրա՝ արժեքների ընտրությունը մարդու կողմից կատարվում է բնազդաբար, այլ ոչ թե կյանքի ընթացքում որոշակի փորձի կուտակման կամ սոցիալականացման գործընթացների շնորհիվ: Ազատ ընտրության դեպքում, Ա. Մասլոուի կարծիքով, մարդն անպայման ընտրում է ճիշտը, ոչ թե սուտը, բարին՝ ոչ թե չարը: Փաստորեն, նա ևս կարևորում է մարդու հոգեկանում արժեքների արթնացման գործում կենսաբանական գործընթացների դերը [54;304]: Ի հակադրություն Ա. Մասլոուի՝ Գ. Օլփորթը գտնում է, որ արժեքների ձևավորման գործում կարևոր է արտաքին ամրապնդման դերը: Արտաքին արժեքները միջոց են, ներքին արժեքներին հասնելու պայմաններ, իսկ արտաքին արժեքներից անցումը ներքին արժեքների նա բնորոշում է «գործառնական ինքնավարություն» հասկացությամբ: Օլփորթը արժեքը հասկանում է իբրև անձնային իմաստ [59;130]:

Արժեքների հիմնախնդիրը ավելի մանրամասն մշակվել է խորհրդային և ռուս հոգեբանության դպրոցների՝ գործնեական մոտեցման (Ա. Ն. Լեոնտև, Դ. Ա. Լեոնտև, Ս. Լ. Ռուբինշտեյն), հարաբերության տեսության (Վ. Ն. Մյասիշչև) դիրքրոշումների տեսության՝ (Դ. Ն. Ուզնաձե, Կ. Դ. Դավիդով) կողմից: Մոտեցումների այս բազմազանությունը, թույլ է տվել ձևակերպել արժեքների մասին ամբողջական, չնայած երբեմն իրարամերժ բնորոշումներ: Կ. Վ. Կարպինսկին, քննարկելով արժեքների վերաբերյալ Ս. Լ. Ռուբինշտեյնի հայացքները, նշում է, որ ըստ նրա, մարդու և հասարակության մեջ ներդաշնակությունը ապահովվում է այն դեպքում, երբ անձի ուղղվածությունը և նրա կենսական ուղու օբյեկտիվ ուղղվածությունը ներդաշնակվում են, հակառակ դեպքում՝ անձին սպասում են անցած ուղու հետ կապված դառը հիասթափություններ, անբավարարվածություն և կյանքի իմաստի ճգնաժամ: Ս. Լ. Ռուբինշտեյնն առանձնացնում է արժեքի երկու կողմեր.

1. արժեքները որպես կենսական աշխարհի օբյեկտներ և երևույթներ, որոնք անձի համար ձեռք են բերել բարձր նշանակություն և անձնային իմաստ
2. արժեքները որպես անձի ներաշխարհի իմաստային կազմավորումներ՝ պրոյեկտված գիտակցության մեջ իդեալների ձևով:

Ըստ նրա՝ արժեքները սոցիալական են, ոչ առաջնային, քանի որ դուրս են բերվում մարդ-միջավայր փոխազդեցությունից, իրենցով արտահայտում են ոչ միայն երևույթի օբյեկտիվ նշանակությունը, այլ նաև պատմական զարգացումը [37;118]:

Լ. Ի. Բոժովիչը արժեքները դիտարկում է որպես վարքի դրդապատճառներ: Կենսագործունեության ընթացքում յուրացված արժեքը, որը ամրակայվել է անձի հոգեկանում ձեռք է բերում անմիջական մղման (ձգտման) բնույթ՝ ազդելով նրա կողմից գիտակցորեն ընդունվող որոշումների վրա: Դրանք ոչ կամածինորեն իրենց են ենթարկում անձի մղումները: Այս տեսանկյունից, փաստորեն, արժեքային և դրդապատճառային ոլորտները համընկնում են: Արժեքը մեկուսի հասկացություն է, այն օբյեկտիվորեն կարող է գոյություն ունենալ, սակայն որպես սուբյեկտիվ իրողություն, գնահատողական կազմավորում, կարող է ներգործել անձի վարքի և կենսագործունեության վրա, եթե ընդունվում է ներքուստ [17;168]: Այս առումով Բ. Ի. Դոդոնովը առանձնացնում է արժեքների երկու տեսակ. «փաստացի արժեք», որը

որոշվում է «իրի կամ երևույթի համապատասխանությամբ պահանջմունքի՝ որպես կարիքի օբյեկտի հետ», բայց ոչ կարիքի, որը «ապրվում և հասկացվում է սուբյեկտի կողմից»: Որոշակի արժեքների նկատմամբ անձն ունենում է կայուն կողմնորոշում՝ դրանց լրացուցիչ ընդունման արդյունքում: Հեղինակը նշում է, որ անձն ունի մեծ քանակությամբ արժեքներ, որոնք ընդունում է, բայց ոչ բոլորն են դառնում նրա վարքի կարգավորիչներ: Փաստորեն, ընդունվող արժեքների բովանդակությունն են կազմում այն իրերն ու երևույթները, որոնք անձը, հասարակությունը ինքն է «բարձրացնում»: Նա գրում է. «կոնկրետ անձի համար չկա շարժում պահանջմունքից դեպի արժեքներ և արժեքային կողմնորոշումներ: Մարդկանց մեծամասնության համար այդ ուղին կարող է լինել հակառակը. շրջապատողներից վերցնելով որևէ երևույթի մասին պատկերացում իբրև արժեք, որն արժանի է, որպեսզի դեպի այն մարդը կողմնորոշվի, անձը կարող է ստեղծել պահանջմունքի հիմք, որը մինչ այդ չի ունեցել»: Ըստ նրա՝ հույզը ևս արժեք է, այն իմաստով, որ վերջինս ոչ այլ ինչ է, քան արտաքին և ներքին աշխարհի տեղեկատվության գնահատման գործունեություն, ինչը զգայությունները և ընկալումները կոդավորում է սուբյեկտիվ պատկերների ձևով: Կյանքի տարբեր իրավիճակներում, արտաքին գրգռիչների հետ «բախվելիս» մեր հույզերը ոչ միայն «հուզական անհանգստություն» են արտադրում, այլև ներգործությունների գնահատման ձևեր են, որոնք ներառում են այդ «արդյունքները» համադրությունների և գնահատումների նոր շրջանառության մեջ [28;3-7,14-15]: Այս տեսանկյունից, եթե անձի մոտ մասնագիտական գործունեությունը առաջացնում է երջանկության, հաճույքի, բավարարվածության հույզեր, ապրումներ, ապա համապատասխանաբար նա արժևորում է մասնագիտական գործունեությունը, այն անձի կողմից ընդունվում և ապրվում է իբրև առաջնային արժեք:

Եթե Բ. Ի. Դոդոնովը արժեքները կապում է «պահանջմունք» և «հույզեր» հասկացությունների հետ, ապա Ֆ. Ե. Վասիլյուկի համար արժեքները իրերի նշանակությունն են, պահանջմունքների բավարարման միջոցներ, Ի. Ս. Նարսկու համար՝ բարձրագույն նպատակներ են, Վ. Պ. Տագարինովի և Օ. Գ Դրուբնիցկովայի համար արժեքները բնորոշվում են միաժամանակ որպես նշանակություն և իդեալներ: Վ. Պ. Տագարինովայի կարծիքով՝ արժեքների նշանակությունը օբյեկտիվ տրվածք չէ,

երբ վարքը կարգավորվում է արտաքին նորմերով, որոնք ստիպված ենք ընդունել, այլ միջնորդավորվում է մարդու կողմնորոշմամբ այլ մարդկանց, հասարակության մեջ գոյություն ունեցող նորմերի և պատկերացումների նկատմամբ [95;4-13]: Այսպիսով, արժեքի մեջ առանձնացվում է երկու կողմ՝ օբյեկտի սուբյեկտիվ գնահատական և «արժեքին դասելը», որը վերածվում է անհատական տպավորության, օբյեկտիվ՝ պատմական համակարգի հետ հարաբերակցելիս:

Կարելի է տարբերակել արժեքների գոյության երեք ձևեր.

1. արժեքները որպես իդեալներ, հասարակական գիտակցության կողմից մշակված պատշաճի մասին պատկերացումներ
2. արժեքները օբյեկտիվացված ձևով, նյութական և հոգևոր ստեղծագործությունների տեսքով կամ մարդկային արարքների, հասարակական արժեքային իդեալների կոնկրետ առարկայական մարմնավորումներ են
3. սոցիալական արժեքները, բեկվելով անհատական կենսագործության պրիզմայի միջով, մտնում են անձի հոգեբանական կառուցվածք իբրև անձնային արժեքներ՝ դառնալով վարքի դրդապատճառայնության աղբյուրներից մեկը [74; 755]:

Խորհրդային հոգեբանության մեջ կարևորվում էր հասարակական հարաբերությունների ոլորտում անձի արժեքային համակարգի հետազոտության խնդիրը: Արժեքների հասարակականից, «արտաքինից» «ներհոգեկան» ոլորտ անցման մեխանիզմը ավելի մանրամասն ներկայացնում է Վ. Գ. Ալեքսեևան: Նա տալիս է արժեքի համընդհանուր հասկացումը որպես անձի գործունեության ու վարքի մեխանիզմներում հասարակական արժեքների ներառման ձև, անցման աստիճան հասարակական արժեքներից դեպի սուբյեկտի գործունեություն [9;64]: Պարզ է, որ ի տարբերություն «պահանջմունք», «դրդապատճառ», «դիրքորոշում» հոգեբանական կազմավորումների՝ «արժեք» հասկացությունն ունի երկակի բնույթ, որի մեջ առանձնացնում են երկու հատկություն՝ նշանակություն և անձնային իմաստ: Արժեքի նշանակությունը կարևոր հատկությունների, իրերի գործառնությունների ամբողջություն է, որը դրանք դարձնում է արժեքներ հասարակության մեջ, իսկ արժեքների իմաստը որոշվում է մարդու կողմից: Այն ներառում է արժեքի օբյեկտիվ հատկությունները և սուբյեկտիվ, հոգեբանական հասկացումը:

Սոցիալ-հոգեբանական մոտեցումը դիտարկում է հասարակության արժեքների համակարգը ոչ թե մարդու նկատմամբ արտաքին նորմերի ու արժեքների ամբողջություն, այլ կարևորում է անձի կողմից արժեքների ընդունման սոցիալապես միջնորդավորվածության փաստը: Արտաքին արժեքների և անձի արժեքային համակարգը իրար պատճենավորումը չեն, քանի որ արտաքին արժեքային դաշտը բարդ հասարակական հարաբերությունների համակարգ է, իսկ դրա կրողը՝ սուբյեկտը, առանձին անձն է, իր հոգեկանի ողջ բարդությամբ և բազմազանությամբ: Բայցևայնպես, անձի արժեքային ոլորտի քննարկումը կլինի թերի, եթե չդիտարկենք մյուս կառույցները՝ իմաստները:

Գիտական գրականության մեջ հաճախ գործառնում են «արժեքաիմաստային ոլորտ» հասկացությամբ: «Արժեք» և «իմաստ» կազմավորումները օրգանապես կապված են: Վերջիններս արժեքներին իրենց նմանության պատճառով շատ հետազոտողների կողմից հաճախ նույնացվում են, չնայած կարելի է ասել, որ որակական այլ միավորներ են: «Իմաստը» առավել լայն հասկացություն է և եկել է հոգեբանության ոլորտ փիլիսոփայությունից, մասնավորապես մշակվել որոշ փիլիսոփաների կողմից՝ Ջ. Բյուջենտալ, Ի. Յալոմ, Ռ. Մեյ, Վ. Դիլտեյ և այլոք:

Վ. Ֆրանկլը չէր սահմանազատում «արժեքները» «իմաստներից»: Նա իմաստները բնորոշում էր որպես համապարփակ կազմավորումներ, գտնելով, որ դրանք գոյություն ունեն անկախ մեր ընդունելուց: Նա օգտագործում էր «արժեք» և «իմաստ» բառերը որպես հոմանիշներ: Արժեքի սուբյեկտիվ իմաստը նա հասկանում էր անձի կողմից դրա իրացման համար պատասխանատվության ընդունման մեջ [81;170]:

Ֆ. Վ. Բասսինը ընդգծում է իմաստի հոգեբանության մեջ Ա. Ն. Լեոնտևի ներդրումը: Վերջինս հոգեբանության մեջ առաջին անգամ մտցրեց «անձնային իմաստ» եզրույթը՝ իմաստները բնորոշելով իբրև գիտակցության կարևորագույն կազմավորումներ: Նշանակությունների հետևում թաքնված են հասարակայնորեն մշակված միջոցներ, գործողություններ, որոնց կատարման ընթացքում մարդիկ փոփոխում և ճանաչում են շրջապատող իրականությունը: Միևնույն ժամանակ նշում է, որ «նշանակությունները իրենք իրենցով, այսինքն՝ իրենց վերացարկման մեջ անհատական գիտակցությունից, նույնքան ոչ «հոգեբանականացված են», որքան այն

իրականությունը, որն ընկած է նրա հետևում» [16;13-23]: Ներքին համակարգային հարաբերություններում նրանք ձեռք են բերում իրենց հոգեբանական բնութագիրը:

Իմաստների, մասնավորապես, անձնային իմաստների ուսումնասիրությանը նվիրված են եղել Ա. Գ. Ասմոլովի, Ֆ. Վ. Բասսինի, Բ. Ս. Բրատուսի, Ֆ. Ե. Վասիլյուկի, Վ. Կ. Վիլյունասի, Պ. Յա. Գալպերինի, Բ. Վ. Զեյգարնիկի, Վ. Պ. Զինչենկոյի, Դ. Ա. Լեոնտևի, Վ. Վ. Ստոլինի, Օ. Կ. Տիխոմիրովի և այլոց աշխատանքները:

Վ. Ն. Զոնկինը առանձնացնում է իմաստների երկու տեսակ՝ գործունեության երկու մակարդակներին համապատասխան՝ ապրիորի և ապոսթերիորի: Առաջինները նախորդում են գործունեությանը, երկրորդները՝ ձեռք են բերվում գործունեության ընթացքում կամ ավարտին: Այսպիսով, սուբյեկտ-օբյեկտային կապից իմաստները վերածվում են ներսուբյեկտային կապերի, որոնք իրենց արտահայտությունն են գտնում տրանսցենդենտային օբյեկտիվացման մեջ ՝ նպաստելով անձի զարգացմանը [32;27]:

Գ. Լ. Բուտինայտեն դիտարկում է արժեքները իբրև իմաստների ավելի բարձր զարգացման մակարդակ: Նա գտնում է, որ «անձնային արժեքներ» են դառնում այն իմաստները, որոնց նկատմամբ սուբյեկտը ինքնորոշվում է: Փաստորեն, նման հասկացման դեպքում արժեքները իրենցից ներկայացնում են իմաստային կազմավորումների աքսիոգենեզ, իմաստից անցում դեպի արժեք, ինչը անձից պահանջում է որոշակի ակտիվություն: Այս գործընթացում գլխավոր դերը տրվում է իմաստավորմանը: Այդ դեպքում երևույթը՝ անկախ իր օբյեկտիվ նշանակության՝ ձեռք է բերում սուբյեկտիվ նշանակություն, դառնում է անձի ներաշխարհի բաղադրիչ [19;100]: Գ. Լ. Բուտինայտեն դիտարկում է աքսիոգենեզը որպես անցում է իմաստից դեպի արժեք, իսկ Բ. Ս. Բրատուսը, զարգացնելով իմաստային կազմավորումների մասին պատկերացումները, նշում է. «ընդհանուր իմաստային կազմավորումները (դրանց գիտակցման դեպքում անձնային արժեքները) անձի գիտակցությունը կառուցող միավորներ են, որոնք որոշում են կյանքի հիմնական ոլորտների նկատմամբ անձի գլխավոր, հարաբերականորեն կայուն վերաբերմունքը» [18;74]: Իմաստային կազմավորումների գործառույթներն են. առանձին արժեքների ընդունման (կամ մերժման) և որոշակի արժեքների իրացման գործում դրանց նշանակության ուժեղացումը, այդ արժեքների պահումը ժամանակի մեջ:

Իմաստի հոգեբանության մեջ իր բացառիկ ներդրումն ունի հետազոտող Դ. Ա. Լեոնտևը: Նա ընդլայնում է «իմաստ» հասկացության սահմանները՝ նրա մեջ ներառելով ոչ միայն օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը, այլ նաև ինտերսուբյեկտիվ (խմբային, հաղորդակցական) կողմը: Իմաստները գտնվում են գործունեության, գիտակցության և անձի հատման կետում՝ կապելով այդ երեք հիմնարար հոգեբանական կատերգորիաները: Դ. Ա. Լեոնտևը զարգացնում է շարժուն իմաստային իրականության տեսությունը՝ ցույց տալով դրա շարժուն, փոփոխական բնույթը: «Իմաստային կապերը» երկու օբյեկտների կամ երևույթների միջև այնպիսի հարաբերություններ են, որոնց շնորհիվ եթե մեկը կապ ունի սուբյեկտի որոշակի պահանջմունքի բավարարման հետ, ապա երկրորդ օբյեկտը կամ երևույթը նույնպես դառնում է ոչ անտարբեր այդ պահանջմունքի բավարարման նկատմամբ՝ ներառվելով դրա իրացման շղթայի մեջ [51;24-35]: Իմաստաստեղծման գործընթացը կապված է անձի և սոցիալական իրականության հետ անմիջական փոխազդեցության բնույթից:

Իմաստային ոլորտի ժամանակակից հետազոտողներից Ա. Վ. Սերին գտնում է, որ իմաստները և արժեքներն ունեն երկակի բնույթ: Արժեքները մարդու համար նշանակության չափորոշիչ են և գործունեության կողմնորոշիչներ են: Դրանք արտացոլում են անձնային իմաստներ: Իսկ իմաստները՝ արտահայտում են սուբյեկտի վերաբերմունքը օբյեկտիվ իրականության նկատմամբ և օժտում են իրերն արժեքային կարգավիճակով: Ըստ նրա՝ ցանկացած արժեք բնորոշվում է երկու հատկությամբ՝ նշանակությամբ և անձնային իմաստով: Արժեքների անձնային իմաստը արժեքների հարաբերությունն է մարդու պահանջմունքների նկատմամբ:

Արժեքների նշանակությունը իրի կամ գաղափարի հասարակայնորեն նշանակալի հատկությունների, գործառնությունների համագումարն է, որոնք դրանց դարձնում են արժեքներ հասարակության մեջ: Անհատական գիտակցության նկատմամբ արժեքները կրում են երկակի բնույթ. դրանք արտացոլված են նրանում որպես նշանակություններ, որոնք անձի համար ունեն որոշակի իմաստ: Հետևաբար, օբյեկտիվ իրականության ընկալման և յուրացման գործընթացում, իմաստները անձնային արժեքների ձևավորման հիմքն են, որոնք իրենց հերթին տալիս են անձնային կարգավիճակ իմաստներին:

Իմաստային համակարգի մեջ որոշակի իրի, երևույթի ներառումը, ենթադրում է գնահատում, որի դեպքում գնահատավող երևույթը պետք է համապատասխանի օբյեկտիվ չափորոշիչներին: Իմաստային հարաբերության շնորհիվ մշակվում է արժեքային կողմնորոշումը իրականության երևույթների նկատմամբ: Իմաստը գիտակցության ֆենոմեն է, ուստի իմաստային ոլորտի մակարդակային կազմակերպման հիմքում որպես նրա չափորոշիչ, առաջ է քաշվում մարդու և իրականության փոխազդեցության իմացական բարդությունը: Մարդն իմաստ է տալիս իրականության օբյեկտին, որն էլ սկսում է նորմատիվորեն կարգավորել նրա վարքը: Հեղինակը կարևորում է իմացական բարդության հարցը, գտնելով, որ դրա ցածր մակարդակը իր արտահայտությունն է գտնում կոշտ, ռիգիդ կառուցվածքներում: Նա իմացական բարդության տեսությունը կապում է ինտենցիոնալության հետ, որը բնորոշում է իբրև աշխարհի նկատմամբ գիտակցության առաջնային իմաստաստեղծ ձգտում, իրի նկատմամբ գիտակցության իմաստաստեղծ վերաբերմունք: Աշխարհը իմաստավորված ընկալելու, որոշակի արժեքներ, նորմեր ընդունելու համար մարդը պետք է լինի այդ հարաբերության սուբյեկտ, այսինքն՝ պետք է առկա լինի օբյեկտների հետ նույնացման որոշակի մակարդակ՝ սեփական իրականությունը, շրջապատող աշխարհի բարոյականության նորմերի հետ համապատասխանեցնելու ունակություն:

«Իմաստ» հասկացությունը, ըստ Ա. Վ. Սերիի, կապված է «կենսական հեռանկար» հասկացության հետ, ինչը ենթադրում է, որ իմաստն իր ժամանակային ենթատեքստից դուրս դիտելը անհնար է: Ներկայի գիտակցումը հնարավոր է միայն անցյալի քննադատորեն իմաստավորելու հիման վրա: Ժամանակային լոկուսները միջնորդավորում են իրականության օբյեկտների, երևույթների նկատմամբ իմաստավորված վերաբերումունքը և նրա սահմանները, արժեքային բաղադրիչները և անձնային իմաստի ուղղվածությունը: Իրականության որևէ երևույթի կամ օբյեկտի իմաստավորման գործընթացը իրականացվում է տարբեր ժամանակային լոկուսների համաժամացմամբ (սինխրոնացմամբ): Տվյալ գործընթացը ուղեկցվում է որոշակի հոգեկան վիճակով՝ կապված տարբեր ժամանակային լոկուսների իմաստների ապրման հետ: Մարդու վիճակը տվյալ պահին ակտուալ իրադարձությունների կամ իրադրությունների արդիականացումն է (ակտուալացում)՝ ներառելով անցյալի, ներկայի

և ապագայի լոկուսների համագումարը, որը անվանել է «արդիական իմաստային վիճակ» [72;7-20]: Ա. Վ. Սերիի ներկայացրած իմաստային համակարգի մոդելում «նույնականություն», «իմացական բարդություն» և «ժամանակային հեռանկար» հասկացությունները գտնվում են անխզելի միասնության մեջ և կազմում են շրջապատող աշխարհի նկատմամբ մարդու իմաստային հարաբերությունը:

Արդյո՞ք անձի արժեքները, իմաստները կամայական բաշխվածություն ունեն անձի հոգեկանում, ինչպե՞ս է առօրյայում անձն իր կենսագործունեության մեջ կողմնորոշվում որոշակի արժեքներով, իմաստավորում, կարևորում սոցիալական իրականության առանձին երևույթներ և իրեր:

Խորհրդային հոգեբանության մեջ «արժեք» հասկացությունը դիտարկվում է «ուղղվածություն» հասկացության ենթատեքստում՝ Բ. Գ. Լոմովի, Լ. Ս. Ռուբինշտեյնի, Բ. Գ. Անանևի, Լ. Ի. Բոժովիչի, Դ. Ն. Ուզնաձեի և այլ հոգեբանների կողմից: Անձի ուղղվածության մասին առավել արժեքավոր է Կ. Կ. Պլատոնովի անձի շարժուն (դինամիկ) գործառնական հոգեբանական կառուցվածքի տեսությունը: Անձի կառուցվածքը, համաձայն տեսության, ներառում է չորս հիմնական ենթակառուցվածքներ, որոնցից առաջինը՝ անձի ուղղվածությունն է: Ըստ Կ. Կ. Պլատոնովի՝ այն իր մեջ ներառում է ցանկությունները, հետաքրքրությունները, աշխարհայացքը, համոզմունքները: Այս ենթակառուցվածքն ունի սոցիալական պայմանավորվածություն [62;125,126]: Անձի ուղղվածության մեջ բացահայտվում են սուբյեկտիվ արժեքային հարաբերությունները իրականության տարբեր կողմերի նկատմամբ: «Արժեքային կողմնորոշում» հասկացությունը ցույց է տալիս անձի ուղղվածությունն այս կամ այն արժեքի նկատմամբ:

Պետք է նշել, որ անձի ուղղվածությունը, զբաղեցնելով առավել հզոր դիրք անձնային աստիճանակարգում, կրում է սոցիալական պայմանավորվածություն և ձևավորվում է դաստիարակության ընթացքում: Մարդը կարող է ունենալ մեծ քանակությամբ արժեքներ, բայց արժեքների նկատմամբ կողմնորոշման մասին կարելի է խոսել այն դեպքում, երբ սուբյեկտը, այսպես թե այնպես «պրոյեկտել» է գիտակցության մեջ (կամ ենթագիտակցության մեջ) դրանց ունենալու փաստը: Պարզ է, որ արժեքային կողմնորոշումները կազմակերպված են համակարգի մեջ: Արժեքային

կողմնորոշումների համակարգը արժեքային կողմնորոշումների համագումար է՝ կարգավորված ըստ կարևորության (նշանակալիության) աստիճանի: Այն ներառում է իր մեջ սուբյեկտի հարաբերականորեն կայուն, ոչ ամբողջովին գիտակցված վերաբերմունքը հասարակական կառուցվածքի տարբեր բաղադրիչների և արժեքների նկատմամբ: Հաճախ սուբյեկտիվորեն գնահատականները համընկնում են արժեքների հասարակայնորեն նշանակալի բնութագրերի հետ: Հասարակական կառուցվածքի բաղադրիչների մեջ ներառվում են վարքի, կազմակերպությունում գործելու, մասնագիտական և այլ նորմեր, որոնց անձը պետք է հետևի իր կենսագործունեության ընթացքում: Ըստ Ե. Ի. Գոլովախայի, արժեքային կողմնորոշումը անձի սոցիալ-մասնագիտական հեռանկարի միջուկն է, առանց որի նա կորցնում է իր հիմնական կարգավորիչ գործառույթը [25;23]:

Փաստորեն, արժեքի ընդունումը և իրացումը ենթադրում է վարքի որոշակի նորմերի ընդունում և այս տեսանկյունից հոգեբանության մեջ հաճախակի են կիրառում *«արժեքանորմատիվային համակարգ»* հասկացությունը: Մ. Ս. Յանիցկու կարծիքով անձի արժեքային կողմնորոշումները, որպես կարգավորիչ մեխանիզմ, ներառում են մարդու ակտիվության դրսևորումների ավելի լայն շրջանակ, քան դիրքորոշումները, որոնց վրացական հոգեբանական դպրոցում կապում են կենսաբանական պահանջմունքների հետ [95;4-14]: Արժեքային համակարգում կարելի է առանձնացնել կառուցվածքային բաղադրիչների երեք ենթահամակարգ. օբյեկտի մասին իմացական՝ գիտելիքների, դատողությունների համակարգ, հուզական՝ հույզերի, հուզական գնահատականների համակարգ, վարքային՝ որոշակի գործողությունների համակարգ:

Նման համակարգային կազմակերպվածություն ունի նաև անձի իմաստային համակարգը: Իզուր չէ, որ հաճախ կիրառում ենք *«արժեքաիմաստային ոլորտ»* հասկացությունը՝ փորձելով դրանք միավորելով սահմանազատել անձի մյուս՝ «պահանջմունքադրդապատճառային» և «աշխարհայացքային» ոլորտներից: Ներկայումս արժեքաիմաստային ոլորտի մեջ առանձնացնում են հետևյալ կողմերը.

1. արժեքաիմաստային ոլորտը իր դերը կատարում է գործունեության բոլոր փուլերում (նշանակալի խթանների և պահանջմունքների նկատելուց մինչև նպատակադրում և գործունեության արդյունքի գնահատում)

2. արժեքաիմաստային կազմավորումները լիովին օբյեկտիվ չեն, բայց միևնույն ժամանակ բացարձակապես սուբյեկտիվ չեն. դրանք գոյություն ունեն փոխազդեցության և շրջապատող աշխարհի տարածության մեջ և մեծամասամբ որոշվում են անձի սոցիալապես կողմնորոշված կառույցներով
3. արժեքաիմաստային կառույցների հոգեբանական ձևավորման հիմք են ծառայում դրդապատճառապահանջմունքային ոլորտը, համոզմունքները և աշխարհայացքային պատկերացումները, որոնք ձևավորում են անձի ուղղվածությունը, վերաբերմունքը կենսական իրադրությունների նկատմամբ
4. արժեքաիմաստային կողմնորոշումները ազդեցություն են գործում սոցիալական ակտիվության բովանդակության, շրջապատող աշխարհի և սեփական անձի նկատմամբ ընդհանուր մոտեցման վրա, տալիս են ուղղվածություն մարդու գործունեությանը, որոշում են նրա վարքն ու արարքները
5. անձի արժեքաիմաստային ոլորտը կրում է շարժական բնույթ [91]:

Այսպիսով, արժեքների հոգեբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ունեն երկակի բնույթ. այն օբյեկտիվ նշանակությունը կամ արժեքը, որ ունի օբյեկտը և դրան անձի կողմից տրվող սուբյետիվ նշանակությունը, արժևորումը: Այս է պատճառը, որ սոցիալական միջավայրի որոշ արժեքներ, չնայած իրենց օբյեկտիվ նշանակության, սուբյեկտիվ ընդունում չեն ստանում կամ տեղաշարժվում են արժեքային համակարգի ավելի ցածր դիրքեր: Այս փաստը շատ կարևոր է արժեքային ոլորտի վերակառուցումները նկարագրելու առումով:

1.2 Անձի արժեքային ոլորտի վերակառուցումների հիմնախնդիրը

Ներկայումս անձի արժեքային ոլորտի վերակառուցումների հիմնախնդրի հոգեբանական վերլուծությունը ավելի հրատապ է, քանի որ ժամանակակից հասարակությունը ավելի շարժուն է՝ կապված սոցիալական ինստիտուտների հարատև փոփոխությունների, մասնագիտությունների անվանացանկի նորացման, ժամանակակից մասնագիտությունների ի հայտ գալու, աշխատանքային գործունեության ոլորտ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ: Պատահական չէ, որ արժեքային ոլորտի վերակառուցումների հիմնախնդիրը

ծառանում է հասարակության զարգացման հիմնականում անցումային շրջաններում: Հետխորհրդային տարածքում ծավալվող սոցիալական գործընթացները դժվար կառավարելի և ինքնաբերական են: Նման պայմաններում հասարակության մեջ մեծ քանակություն են կազմում անձինք, ովքեր հին ու նոր արժեքային համակարգի կրողն են: Այս ամենը առաջացնում է անձի կողմից սեփական արժեքների, իսկ մասնագիտության փոփոխության պայմաններում՝ մասնագիտական արժեքների վերաարժևորման անհրաժեշտություն:

Անձի արժեքային համակարգը «սնվում է» հասարակության արժեքային համակարգից, որի կայացումը և վերափոխումը՝ ի տարբերություն անհատականի, տևում է տևական ժամանակահատված՝ ընդգրկելով որոշ դեպքերում պատմափուլեր: Սոցիալական իրականության ճանաչողության մեջ արժեքները կատարում են կարևոր դեր: Կայուն իրադրության պայմաններում արժեքային համակարգը որոշում է անձի նույնատիպ վարքը և, հետևաբար, աշխարհի ճանաչողությունը ընթանում է ըստ առաջադրված արժեքային դաշտի:

Արժեքային դաշտի համատարած փոփոխություններ նկատվեցին խորհրդային համակարգից անցման ժամանակ: Վ. Ի. Պանինը և Վ. Վ. Լապկինը, ուսումնասիրելով հետխորհրդային շրջանի արժեքները, նշում են, որ «հայրերի» և «որդիների» միջև նկատվում է տարբերություն՝ «աշխատասիրություն» արժեքի նկատմամբ վերաբերմունքի փոփոխության առումով: Աշխատասիրությունը խրախուսվում է խորհրդային սերունդի կողմից, իսկ երիտասարդ սերունդի կողմից աշխատասիրության արժեքը արժեզրկվել է [61;144-160]: Նրանք հակված են շահույթի կուտակմանը, ինչպես նաև հեդոնիզմի, երբ ձեռք բերվող շահույթը ծառայում է հաճույքի ուժեղացմանը: Արժեքային ոլորտի վերակառուցումների խնդիրը առավել սուր հառնում է այսպես կոչված «միջին սերունդի» մոտ: Նրանք խորհրդային և հետխորհրդային շրջանի արժեհամակարգերի կրողներն են: Բնակչության կրթված մասի ինքնաակտուալացման չբավարարված պահանջմունքը, սրված սոցիալական անարդարության զգացումը, ձևավորում է քննադատական վերաբերմունք իշխանության նկատմամբ: Ընդ որում՝ նոր պայմաններին այս խմբի հարմարվածության մակարդակը զիջում է երիտասարդների խմբին: Միջին սերունդի

անձի արժեքային վերակառուցումների խնդիրը ներկայացնում է հետաքրքրություն, քանի որ միջին տարիքում անձի արժեքաիմաստային ոլորտը հարաբերականորեն կայացած է և մասնագիտության փոփոխության պայմաններում արժեքային վերակառուցումների առանձնահատկությունները, արժեքային նորագոյացությունները հոգեբանության մեջ դեռևս բավարար չափով ուսումնասիրված չեն:

Միջին տարիքի անձի արժեքային ոլորտի շարժընթացը հասկանալու համար նախևառաջ կարևոր է քննարկել անձի կողմից արժեքների յուրացման, արժեքային համակարգի կայացման հարցերը: Արժեքների զարգացման արտաքին պայմաններ են՝ ընտանեկան և ինստիտուցիոնալացված ուսուցումն ու դաստիարակությունը, մասնագիտական գործունեությունը, պատմա-հասարակական պայմանները: Ներքին պայմաններն են՝ անձի իմաստների համակարգի ձևավորման, հոգեկան գործընթացների՝ առաջին հերթին մտածողության, հիշողության, հույզերի և կամքի ընթանալու անհատական տիպաբանական առանձնահատությունները: Անձի զարգացումը ենթադրում է սոցիալական խմբերի արժեքների յուրացում և դրանց փոխակերպում անձնային արժեքների: Մի կողմից՝ շարժում սոցիալական խմբերի արժեքներից դեպի անձնային արժեքներ՝ ներքնայնացում, մյուս կողմից՝ անհատական դրդապատճառայնության կառուցվածքից շարժում դեպի կառուցվածք, որում առաջատար դեր են խաղում արժեքները՝ սոցիալականացում:

Առանձին իրեր և երևույթներ հասարակության մեջ կարևորվում են, քանի որ նրանց նշանակությունը հասարակությունն է «բարձրացնում», նման ձևով անձին «թելադրելով», թե ինչն է արժեքավոր, գնահատված, ինչ նորմեր պետք է կարգավորեն առանձին անձի վարքը, որոնցով նա պետք է կողմնորոշվի:

Իսկ ի՞նչ մեխանիզմներով են անձի նկատմամբ արտաքին, հասարակական արժեքները դառնում ներքին, անձնային արժեքներ: Մ. Ս. Յանիցկու առաջարկած արժեքային կողմնորոշումների կառուցվածքա-շարժական տեսական մոդելում որպես այդպիսի գործընթացներ առանձնացվում են՝ հարմարումը, սոցիալականացումը և անհատականացումը: Ընդհանուր բնորոշմամբ՝ հարմարումն ուղղված է մարդ-միջավայր համակարգում ներքին միջավայրի կայունության ապահովմանը: Հարմարման հոգեբանական մեխանիզմը, ըստ հեղինակի, դրսևորվում է մարդ-

միջավայր համակարգի ներդաշնակության խախտման դեպքում անձի գծերի և վարքային հակազդումների ուժեղացմամբ կամ թուլացմամբ: Մ. Ս. Յանիցկին մեջբերում է Ֆ. Բ. Բերյոզովի տեսակետը, ըստ որի, հարմարումն իրականացվում է պաշտպանական մեխանիզմների միջոցով, որոնք գործի են դրվում, երբ խախտվում է անձի նորմալ կենսագործունեությունը, ի հայտ են գալիս խոչընդոտող գործոններ: Ներհոգեկան մեխանիզմն ուղղվում է տագնապի հեռացմանը: Այդպիսի պաշտպանություններ են՝ արտամղումը, ժխտումը, որոնք իրենց հերթին ուղեկցվում են այն հոգեբանական առանձնահատկությունների շեշտադրմամբ և անձի արժեքային համակարգի փոփոխությամբ: Հարմարումը արժեքների ձևավորման առաջատար գործընթացներից մեկն է, իսկ դրա իրականացման մեխանիզմները՝ պաշտպանական մեխանիզմներն են: Մյուս առաջատար գործընթացը սոցիալականացումն է, որը հեղինակը բնորոշում է արտաքին, սոցիալական շրջապատում գերակշռող նորմերի յուրացման գործընթաց: Սոցիալականացումը իրականացվում է նույնացման գործընթացի միջոցով: Այն միջանձնային փոխազդեցության գործընթաց է, այլ մարդու ճանաչում, նրա դրդապատճառների, նպատակների արժեքների համակարգի մեջ ներխուժում: Այն միջավայրի նորմերի և արժեքների յուրացման առաջատար մեխանիզմ է: Չի կարելի նույնացումը շփոթել «պատճենավորման» հետ: Նույնացումը մարդու հավասարակշռված դիրքի ձեռք բերումն է այլ մարդու նկատմամբ, ով հանդես է գալիս իբրև նմուշ, գրավիչ հատկությունների և գծերի կրող: Մ. Ս. Յանիցկին գտնում է, որ նույնացումը անձի արժեքային կողմնորոշումների համակարգի ձևավորման մեխանիզմ է և միջանկյալ դիրք է գրավում հիմնային հարմարման մեխանիզմների և ավելի բարձր կազմակերպված արժեքների, անձնային իմաստների գիտակցման մեխանիզմների միջև: Սոցիալական փորձի յուրացման մեկ այլ գործընթաց է ներքնայնացումը, որը հասկացվում է իբրև հասարակական-պատմական փորձի յուրացում, դրա հետ միասին նաև սոցիալական դերերի, դիրքերի և գործառնությունների յուրացում, որը բնութագրում է սոցիալական կառուցվածքը: Մ. Ս. Յանիցկու կարծիքով արժեքների յուրացման գործընթացը սոցիալականացման ընթացքում տեղի է ունենում ինչպես նշանակալից այլոց նմանակման, նրանց հետ նույնացման միջոցով, այնպես էլ հասարակության արժեքների յուրացման,

ներքնայնացման միջոցով: Խմբային արժեքները կարող են ընդունվել կամ չընդունվել: Երրորդ գործընթացը անհատականացման գործընթացն է, որն ընթանում է զուգահեռ և այս դեպքում արդեն հասարակական փորձին տիրապետելը ձեռք է բերում ինքնուրույնություն և ինքնավարություն: Անհատականացման հատկանիշներից մեկն այն է, որ մարդու մոտ ձևավորվում է իր սեփական յուրօրինակ կենսակերպը և սեփական ներաշխարհը: Անհատականացումը՝ ի տարբերություն հարմարման, որն ուղղված է հավասարակշռության պահպանմանը, ուղղված է կայացմանը, ներքին աճին կամ զարգացմանը (Ռոջերս), անձնային իմաստի կայացմանը (Վ. Ֆրանկլ), ինքնաակտուալացմանը (Ա. Մասլոու): Այս գործընթացի մեխանիզմը ինտեռնալացումն է, որը բնորոշվում է որպես բարդ մեխանիզմ և ենթադրում է շրջապատող աշխարհի գիտակցական և ակտիվ ընկալում, ինչպես նաև ընդունված նորմերի և արժեքների վերարտադրություն սեփական գործունեության մեջ [95;29-45]:

Այսպիսով, Մ. Ս. Յանիցկու առաջարկած արժեքային ոլորտի շարժական մոդելում առանձնացվում է երեք գործընթաց՝ հարմարում, սոցիալականացում, անհատականացում: Այդ գործընթացները ընթանում են ոչ թե իրարից անկախ, այլ զուգահեռաբար: Հեղինակի կարծիքով դրանցից յուրաքանչյուրը ունի երկակի բնույթ, որն արտացոլում է իր մակարդակում անհատի և միջավայրի ազդեցության հավասարակշռությունը արժեքների ձևավորման գործում և իրացվում է համապատասխան զույգային մեխանիզմների ազդեցությամբ. ասիմիլյացիա և ակոմոդացիա, օտարացում և նույնացում, ինտեռալացում և էքստեռնալացում: Այսպես, հեղինակը արժեքային կողմնորոշումների մակարդակում առանձնացնում է երեք մակարդակ կամ շերտեր, որոնք ձևավորվում են երեք գործընթացներով. «պաշտպանական» (հարմարման), «փոխառված» (սոցիալականացման) և «ինքնավար» (անհատականացման) արժեքներ: Մ. Ս. Յանիցկին ներկայացնում է արժեքային կողմնորոշումների համակարգի եռաստիճան մոդել, որը ներառում է հարմարման արժեքներ, որոնք արտացոլում են տագնապից ազատում՝ ֆիզիկական կամ տնտեսական անվտանգության պատճառով, ձեռք բերածի պահպանում: Դրանց կարող են դասվել «գոյատևելու», «կյանք՝ ոչ ավելի վատ, քան հիմա», «ուժերի և առողջության պահպանում» «հասարակության մեջ կայունություն» և այլն:

Սոցիալականացման արժեքները պայմանավորում են կողմնորոշումը դեպի այլ մարդիկ, հասարակության մեջ ինտեգրումը, որոշակի սոցիալական կարգավիճակի ձեռք բերումը և արտահայտվում են հետևյալ հասկացություններով. «ընտանիք», «լավ աշխատանք», «կարիերա», «գնահատում և հարգանք» և այլն: Անհատականացման արժեքները, որոնք ուղղված են զարգացմանը և ինքնաակտուալացմանը, կրում են ինքնավար բնույթ, մեկնաբանվում է «ինքնակատարելագործում», «հոգևոր զարգացում» և այլ հասկացություններով [95;54,55]: Վերոհիշյալ մոդելի շնորհիվ ավելի դյուրին է դառնում անձի արժեքային ոլորտի բովանդակության հասկացումը և անձի գերակա արժեքային կողմնորոշումը բնութագրելու խնդիրը: Այն իր կիրառությունն է գտել մեր աշխատանքում վարընթաց սոցիալական շարժունությամբ պայմանավորված մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում արժեքային վերակառուցումների վեկտորը՝ բարձրակարգ արժեքներից դեպի ցածրակարգ արժեքներ տեղաշարժը նկարագրելու, ինչպես նաև արժեքային ոլորտի բովանդակությունը հիմնավորելու առումով: *Բարձրակարգ* արժեքներ ասելով հասկանում ենք անհատականացման և սոցիալականացման արժեքների համախումբը, իսկ *ցածրակարգ* արժեքները՝ հարմարման ու գոյատևման արժեքները:

Հարց է առաջանում, արդյո՞ք հասուն անձի արժեքային համակարգը մշտապես կայուն է և կենսագործունեության ընթացքում որևէ փոփոխության չի ենթարկվում: Արժեքային համակարգի կառուցվածքա-շարժական մոդելը դիտարկում է արժեքային կողմնորոշումների համակարգը իբրև բազմաֆունկցիոնալ հոգեբանական օրգան և կատարում է վարքի կարգավորման գործառույթ՝ որոշելով անձի նպատակները, որոնք միասնության մեջ են կապում անձը և սոցիալական միջավայրը: Դրանք անձնային աճի և զարգացման մեխանիզմներ են, կրում են զարգացնող բնույթ և շարժուն համակարգեր են: Այսինքն՝ համակարգը հարաբերականորեն կայուն է և զանազան օբյեկտիվ և սուբյետիվ տեղաշարժերի, վերակառուցումների արդյունքում ենթակա է փոփոխության:

Արժեքաիմաստային ոլորտի ժամանակակակից հետազոտողներ Մ. Ս Յանիցկին և Ա. Վ. Սերին գրում են. «արժեքները և իմաստները մշտական չեն, դրանք փոխվում են ժամանակի ընթացքում և մարդկանց գործունեության արդյունքում,

ինչպես փոխվում են իրենք՝ մարդիկ: Կուտակված կենսափորձի ընթացում այն, ինչ անհատի համար կենտրոնական արժեք է, կարող է դառնալ ծայրամասային, փոխել իր բևեռայնությունը՝ դրական արժեքը կարող է դառնալ բացասական և հակառակը»: Հեղինակները ընդունում են, որ արժեքային համակարգի փոփոխության հիմնական պայմաններից են հասարակական-պատմական պայմանները, որոնց շրջանակներում դրանք ձևավորվում են [97;35]: Ընդ որում՝ արժեքների, իմաստների վերաիմաստավորումը օրինաչափ գործընթաց է, ինչը մարդուն թույլ է տալիս նոր ձևով նայել սոցիալական, ինչպես նաև ներհոգեկան իրականության երևույթներին:

Արժեքային ոլորտի տեղաշարժերի դեպքում նկատվում է որոշ արժեքների առաջնային նշանակության կորուստ՝ կապված նոր սոցիալական իրականության մեջ անձի զբաղեցրած սոցիալական դիրքի, մասնավորապես, մասնագիտության փոփոխության հետ: *Նման դեպքում կարող ենք կիրառել անձի արժեքային համակարգի «փոխակերպում» հասկացությունը, երբ արժեքային համակարգում տվյալ արժեքը կորցնում է իր ելակետային նշանակությունը: Արժեքային վերակառուցումը ենթադրում է արժեքային համակարգով առանձին արժեքների վերընթաց կամ վարընթաց ուղղությամբ տեղաշարժը:* Մեր հետազոտության մեջ կարևորում ենք անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխությամբ պայմանավորված արժեքային վերակառուցումների հոգեբանական կողմը: Ենթադրվում է, որ անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում *միջին տարիքի անձի արժեքային ոլորտում որոշակի մասնագիտական արժեքներ՝ կապված նախին մասնագիտական կարգավիճակի հետ «արժեզրկվում են», որոշներն էլ շարունակում են մնալ կենսունակ՝ հակասության մեջ մտնելով նոր, ավելի ցածրակարգ արժեքների հետ:* Արժեքները, որոնք ունեն անձի համար առաջնային նշանակություն, զբաղեցնում են բարձր դիրքեր արժեքային համակարգում որոշում են անձի արժեքային առաջատար ուղղվածությունը:

Արժեքաիմաստային ոլորտի վերակառուցումների հիմնախնդիրը միշտ եղել է հետազոտողների ուշադրության կենտրոնում (Ս. Լ. Ռուբինշտեյն, Ա. Ն. Լեոնտև, Դ. Ա. Լեոնտև, Բ. Ի. Դոդոնով, Գ. Ա. Անդրեևա, Ի. Վ. Կալինին, Ա. Վ. Սերի և այլոք), ուսանողների և դպրոցականների արժեքային կողմնորոշումների հարցը (Տ. Վ. Դրոբիշևա, Ն. Ա. Ժուրավլյովա, Չ. Ա. Չակաևա և այլոք):

Կ. Վ. Կարպինսկին նշում է, որ խորհրդային հոգեբան Ս. Լ. Ռուբինշտեյնը չի տարանջատում «արժեք» և «իմաստ» հասկացությունները: Հեղինակը գտնում է, որ սոցիալականացման ընթացքում մարդու կողմից ներքնայնացված արժեքները դառնում են անձնային արժեքներ և անխուսափելիորեն ներառվում են կյանքի իմաստի մեջ: Ուստի արժեքները կենսական ցանկացած իրադարձությունների հանգամանքներում ուղղորդում են անձին, կարգավորում անձ-միջավար փոխազդեցությունը: Արժեքաիմաստային ոլորտի շարժընթացը հեղինակը ներկայացնում է հետևյալ սխեմայով. կենսական հանգամանքների փոփոխություն, արժեքների վերաարժևորում, կյանքի իմաստի վերափոխում և այլափոխում: Այդ իրադարձությունների շնորհիվ որոշակի արժեքներ ընդունվում են, որոշներն էլ՝ մերժվում [37;128,129]: Այսպես, եթե խորհրդային հասարակարգում կոլեկտիվիզմը առաջնային արժեք էր անձի համար, ապա կապիտալիստական համակարգի պայմաններում անձը, ով երբևէ ընդունել է կոլեկտիվիմզը իբրև արժեք, կարող է մերժել այն և ընդունել իբրև առաջնային արժեք անհատապաշտությունը: Հեղինակը, կարևորելով կենսական իրադարձությունների կարևորությունը արժեքների արդիականացման գործում, նշում է, որ արժեքային վերակառուցումները մարդու կենսագործունեության մեջ օրինաչափ երևույթներ են:

Բազմաթիվ հետազոտողներ ուսումնասիրում են սոցիալական փոփոխվող պայմաններում անձի արժեքային փոփոխությունների հիմնախնդիրը՝ փորձելով այն կապել տարբեր գործոնների հետ:

Գ. Ա. Անդրեևան քննարկում է արժեքային փոփոխությունների հիմնախնդիրը սոցիալական ճանաչողության տեսանկյունից: Նա գտնում է, որ եթե առկա են արմատական փոփոխություններ հասարակության արժեքային դաշտում, ապա տրամաբանական է նոր արժեքային աստիճանակարգի ստեղծումը: Բերելով Ռուսաստանի օրինակը՝ նշում է, որ ժամանակին դասային արժեքների ամրակայումը զանգվածային գաղափարաբանության մեջ, իջեցրել է այնպիսի արժեքների նշանակությունը, ինչպիսիք՝ են կյանքը, բարությունը և այլն: Դրանք ընդունելու անպատրաստականությունը հանգեցրեց նրան, որ արմատական վերափոխումների պայմաններում «հին» արժեքները դարձան մեծապես կործանարար, իսկ նորերը՝ չընդունվեցին: Պարզ է, որ սոցիալական վերակառուցումը առաջ է բերում

վերակառուցումներ արժեքային ոլորտում, սակայն հեղինակը նշում է, որ հին արժեքային աստիճանակարգը իրեն ամբողջովին չի սպառում, չնայած որ դրա ոչ պիտանի լինելը դառնում է մարդկանց համար ակնհայտ և այն դադարում է լինել կողմնորոշիչ բազմաթիվ մարդկանց համար [12; 98]:

Որոշ հեղինակներ, քննարկելով ներկայումս արժեքային ոլորտի փոփոխությունների խնդիրը, գտնում են, որ այն հաճախակի կապվում է արժեքների արդիականացման հետ: Նման հիմնադույթ առաջարկեցին Ա. Ինիկելեսը, Դ. Սմիտտը: Արդիականացման գործընթացի կրողը առանձին մարդիկ են և նրանց հոգեկանում տեղի ունեցող իրողությունները: Հետազոտությունները բացահայտել են ռուս երիտասարդության կողմնորոշումը դեպի նորարարության և հաջողության արժեքները: Կարելի է ասել, որ եթե երիտասարդների մոտ նորարարությունը առաջնային արժեք է, ապա միջին տարիքի անձանց մոտ այն կարող է առաջացնել ապակողմնորոշվածություն, վախ, տագնապ, քանի որ անձին կանգնեցում է նոր փորձը յուրացնելու անհրաժեշտության առջև: Վերջին փաստը, ըստ երևույթին, կարելի է բացատրել տարիքային առանձնահատկություններով: Չ՞է որ երիտասարդներն ավելի ճկուն են և «բաց» նոր փորձի համար [63; 232]: Արժեքների փոփոխությունը թույլ է տալիս ենթադրելու, որ դրանք մեծապես կապված են ժամանակի մարտահրավերի և առանձին անձանց հակազդումների առանձնահատկություններով:

Ժամանակակից հետազոտողներից Ի. Ա. Սոինան զարգացում է փոփոխվող սոցիալ-հոգեբանական տարածության մեջ արժեքային փոփոխությունների հիմնախնդիրը: Ըստ նրա՝ արժեքային կողմնորոշումները բարդ սոցիալ-հոգեբանական ֆենոմեններ են, որոնք բնորոշում են անձի ուղղվածությունը դեպի գիտակցության նպատակների համակարգը, հանուն ինչի գործում է անձը և դրանց ձեռքբերման միջոցները, որոնք արտահայտվում են անձնային որակների կազմակերպման մեջ և որոշում են աշխարհի և իր նկատմամբ մարդու ընդհանուր մոտեցումը, տալիս են ուղղվածություն և իմաստ անձնային ընտրությանը, դիրքերին և արարքներին: Ընդ որում՝ «սոցիալ հոգեբանական տարածություն» հասկացության տակ նա հասկանում է անձի գիտակցության կողմից առանձնացվող հարաբերությունների և կապերի տարածություն, որը կազմված է նրա կենսական իմաստներից, նշանակություններից,

արժեքներից և կազմում է անձի արժեքային կողմնորոշումների համակարգի հիմքը: Արժեքային կողմնորոշումների փոփոխությունը դիտարկվում է պատանեկության տարիքում, երբ արժեքային կողմնորոշումների համակարգի ձևավորումը տեղի է ունենում ինտենսիվորեն: Հեղինակը գտնում է, որ գոյություն ունեն անձնային սոցիալ-հոգեբանական տարածությունների տարբեր տեսակներ: Փոփոխվող սոցիալական պայմաններում՝ նկատվում է միտում՝ մի տարածության տեսակից անցում մեկ այլ տեսակի, ինչը հանգեցնում է անձնային փոփոխությունների, մասնավորապես, արժեքային կողմնորոշումների շարժընթացի: Անձի արժեքային կողմնորոշումների շարժուն կողմը մեծապես որոշվում է անձնային սոցիալ-հոգեբանական տարածության կառուցման և վերակառուցման աստիճանով, որը կյանքի ընթացքում ընթանում է տարբեր ինտենսիվությամբ [75]: Արտաքնապես այդ գործընթացը պայմանավորված է սոցիալական իրականության փոփոխություններով, իսկ ներքնապես՝ նշանակալի, հիմնային նպատակների վերակառուցմամբ և անձի հասունացմամբ:

Կյանքի ճգնաժամային պայմաններում, կենսագործունեության նորմալ պայմանների փոփոխությունը և այլ հանգամանքներ առաջին հերթին առաջ են բերում արժեքների վերաարժևորման անհրաժեշտություն: Չէ՞ որ անձը դրանցով է աշխարհում կողմնորոշվում, խելամիտ կազմակերպում իր գործունեությունը: Առաջանում է *արժեքային ճգնաժամ:* Ի. Վ. Կալինինը արժեքային ճգնաժամը նկարագրում է հետևյալ կերպ. մարդն ունի որոշակի արժեքային կաղապար՝ արժեքային աստիճանակարգի ձևով, որի վրա հենվում է կենսագործունեության ընթացքում: Արտաքին կամ ներքին իրադարձությունների շնորհիվ, որոնց արդյունք կարող է լինել կյանքի ներքին անհրաժեշտության իրացման անհնարինությունը, ձևավորված արժեքային աստիճանակարգը խախտվում է, արժեքները կորցնում են իրենց կշիռը: Անձը կորցնում է իր ներքին հենման կետերը: Անձի արժեքային կաղապարի յուրաքանչյուր աստիճանի վրա հենվում է որոշակի հոգեբանական բաղադրիչ: Առաջանում է *արժեքային անհամապատասխանության վիճակ:* Այնքան ժամանակ մինչև չի առաջանում ծանրության ուժ, այսինքն՝ նոր արժեքային աստիճանակարգ, ճգնաժամային վիճակի հաղթահարումը անհնար է [34]: Այսպիսով, մարդու հարմարվողական վարքը երկու՝ ներքին և արտաքին հենման կետերի հավասարակշռության գործառույթ է:

Արժեքային ոլորտի փոփոխությունների խնդրին վերաբերող վերջին հետազոտություններից մեկը վերաբերում է երիտասարդության տարիքում արժեքային կարիերային մարտավարությունների ուսումնասիրությունը: Երիտասարդության շրջանը ընդունվում է որպես բարոյական հայացքների կայացման ժամանակաշրջան (Ե. Մ. Գրոմովա, Դ. Ի. Բերկուտվա, Տ. Ա. Գորշկովա): Հետազոտությունները ցույց են տալիս, որ ժամանակակից ռուս երիտասարդների արժեքային ոլորտում նկատվում է տեղաշարժ դեպի փողի, կարիերայի, կրթության, մասնագիտության և սեփական հաճույքի համար ապրելու արժեքները՝ ավելի նվազ են գնահատվում այնպիսի արժեքներ, որոնք համամարդկային են՝ ազատություն, հետաքրքիր աշխատանք և այլն: Փաստորեն, նյութական բարեկեցությունը ներկայումս ավելի բարձր է գնահատվում երիտասարդների կողմից, քան ազատությունը, իսկ աշխատանքի վարձատրության արժեքը գերակայում է հետաքրքիր աշխատանքի արժեքի վրա: Աշխատանքը իբրև արժեք և դրա վերաիմաստավորումը, իր կարևորությունն է ստացել նաև մեր հետազոտության մեջ: Աշխատանքի դիտարկումը, իբրև կյանքի կարևորագույն արժեքներից մեկը, ռուս երիտասարդության մեծամասնության համար կորցրել է իր նշականությունը: Այսպես, նրանց մոտ ձևավորվում է սոցիալական հոռետեսություն, անվստահություն սեփական ուժերը և ընդունակությունները հետաքրքիր և բովանդակալից աշխատանքում իրացնելու մեջ [26]: Այնուամենայնիվ, սույն հետազոտությունների արդյունքները վերաբերվում են ՌԴ-ն երիտասարդությանը և հայ երիտասարդների շրջանում, հնարավոր է հանդիպենք այլ դրսևորումների:

Պարզ է, որ արժեքները, այդ թվում և մասնագիտական արժեքները, յուրացվում են համատեղ գործունեության ընթացում: Որոշ հեղինակներ (Ն. Ն. Յանուշկին, Բեզումովա Լ. Գ.) գտնում են, որ անձի կենսագործունեության մեջ պահանջմունքների և իմաստների գործառույթները նույնական են: Սոցիալականացման ընթացքում անձը յուրացնում է հասարակության, չափանմուշային խմբերի արժեքները, իմաստաստեղծ կազմավորումների կառուցվածքում կրճատվում է պահանջմունքների տեսակարար կշիռը և ավելանում է անձնային արժեքների տեսակարար կշիռը, հետևաբար, տեղի է ունենում վարքի արժեքային կարգավորում: Բայց ոչ բոլոր սոցիալական արժեքներն են յուրացվում անձի կողմից և փոխակերպվում անձնային արժեքների:

Հետազոտությունները ցույց տվել, որ անձնային արժեքների և պահանջմունքների հարաբերակցության փոփոխությունը իբրև իմաստակազմավորման աղբյուրներ, կամ կարգավորման արժեքային և պահանջմունքային հարաբերակցությունը իմաստային հարաբերակցության շրջանակներում, ցույց են տալիս պահանջմունքային մակարդակի իջեցում և համապատասխանաբար արժեքային մակարդակի բարձրացում, ինչը կազմում է սոցիալականացման գլխավոր բովանդակությունը և վկայում է վարքի արժեքային կարգավորման գործընթացի զարգացման մասին [99]: Պարզ է, որ վարքի կարգավորման արժեքային մակարդակի բարձրացումը ավելի նախընտրելի է, քանի որ հիմնվում է ինչպես անձի, այնպես էլ հասարակության համար նշանակություն ունեցող նորմերի, արժեքների վրա՝ ի տարբերություն պահանջմունքների, որոնք հիմնված են կարիքի վիճակի վրա և ավելի «եսասեր են» և ժամանակավոր:

Արժեքային ոլորտի փոփոխության հիմնախնդրի տեսական մշակումներում շեշտը մեծապես դրվում է պատանեկության և երիտասարդության շրջանի վրա: Անձի արժեքային կողմնորոշումների շարժընթացի ուսումնասիրությունը հասուն տարիքում սկզբունքորեն կարևոր է մի քանի հարցերի լուծման առումով՝ կապված հասուն անձի անձնային զարգացման, ճգնաժամային շրջափուլերի հաղթահարման կառուցողական եղանակների որոնման հետ, որոնց հիմքում ընկած է անձնային արժեքների և դրանց իմաստային բովանդակությունների վերաիմաստավորումը: Տվյալ հիմնախնդրի մշակումը կարևորվում է մասնագիտական գործունեությասն ոլորտում, որոշվում է անձնակազմի պատրասատության և վերապատրաստության ձևերի և բովանդակության կատարելագործումը:

Հասուն տարիքում անձի արժեքաիմաստային ոլորտի շարժընթացի խնդիրը հետազոտող Ի. Ն. Վասիլևան գտնում է, որ անձի արժեքաիմաստային ոլորտն առաջին հերթին որոշում անձի դիրքերը և, հետևաբար, մասնագիտական ինքնորոշման և մարդու մասնագիտական ինքնաիրացման ուղղությունն ու բովանդակությունը: Հեղինակը գտնում է, որ հասուն տարիքում արժեքաիմաստային ոլորտի շարժընթացի հոգեբանական մեխանիզմը, որը պատճառավորում է այդ գործընթացը՝ արժեքային հակասության լուծումն է: Արժեքային հակասությունը անձի մոտ առաջանում է իբրև անձի տարբեր արժեքների միջև անհամաձայնություն: Այն ապրվում և գիտակցվում է

անձի կողմից իբրև ընտրություն անելու դժվարություն և հաղթահարվում է հատուկ արժեքային կողմնորոշված գործունեության արդյունքում՝ արժեքների և նրանց իմաստային բովանդակությունների արդիականացման, գիտակցման, չափման, համադրման միջոցով, գործունեության մեջ իրացնելու համար համաժեք միջոցների առկայությամբ: Արժեքային հակասության լուծումը այս տեսանկյունից ևս ենթադրում է անպայմանորեն արժեքաիմաստային ոլորտի վերակառուցում, որի դեպքում անձը պետք է հրաժարվի նախկին որոշակի արժեքներից և իմաստներից կամ ենթադրում է նոր արժեքային կողմնորոշումների համակարգի ձևավորվում [20]:

Արժեքային ոլորտի վերակառուցումները ավելի նվազ է ուսումնասիրված միջին տարիքում: Յու. Գ. Լեբեդևան քննարկում է միջին տարիքի անձի արժեքաիմաստային ոլորտի փոփոխությունները սոցիալական, կենսաբանական և հոգեբանական կարգավիճակի հետ համադրության մեջ՝ անելով հետևյալ եզրակացությունները.

1. հասունության տարբեր փուլերում տերմինալային և գործիքային արժեքների աստիճանակարգը, ինչպես նաև կյանքի նշանակալի ոլորտները, որոնցում արժեքները իրացվում են, տարբերվում են: Անցումը վաղ հասունությունից հասունություն և միջին հասունություն բնորոշվում է յուրահատուկ արժեքային համակարգով, որը հասուն մարդու կյանքի կարգավորման աղբյուրն է: Այն իրացվում է գործունեության մեջ և որոշում է ինքնազարգացման և ինքնաիրացման ուղղությունը,
2. հասունության տարբեր փուլերում գտնվող անձանց արժեքային համակարգերի միջև նշանակալի տարբերության վերլուծությունը թույլ է տալիս ավելի ճշգրիտ ընդգծել յուրաքանչյուր տարիքի առանձահատկությունները:
3. հասունության նորմատիվ ճգնաժամի դեպքում տեղի է ունենում արժեքների և իմաստների փոփոխություն: Նախաճգնաժամային փուլը և ճգնաժամի փուլը էականորեն տարբերվում են ըստ գործիքային արժեքների, ինչի հետ կապված կարելի է ենթադրել, որ նախաճգնաժամային փուլից ճգնաժամային փուլին անցնելու դեպքում տեղի է ունենում սեփական անձի վերանայում «ինչպիսին եմ ես»

տեսակետից: Ճգնաժամի փուլերը և ճգնաժամից ելքը էականորեն տարբերվում են տերմինալային արժեքների տեսանկյունից, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ ճգնաժամից ելքը և անցումը զարգացման մյուս կայուն փուլ կապված է նոր արժեքների հարցի հետ [49]:

Միջին տարիքում անձի արժեքաիմաստային ոլորտի շարժընթացի վերաբերյալ գաղափարները թույլ են տալիս դրանք կիրառել միջին հասունության շրջանում մասնագիտության փոփոխությամբ պայմանավորված արժեքաիմաստային ոլորտի հետազոտության մեջ: Ընդ որում՝ արժեքային վերակառուցումները նկարագրելու համար կարևորում ենք արժեքի երկու հատկություն՝ *նշանակություն* (իրի, երևույթի կարևորությունը անձի համար) և *իրացվածություն* (արժեքին համապատասխան գործել որոշակի կենսական ոլորտում, կիրառել, որը, ըստ երևույթին, արժեքի երրորդ բաղադրիչի՝ վարքային կողմի իրականացումն է):

Քանի որ գործառնում ենք «արժեքաիմաստային ոլորտ» հասկացությամբ, ապա արժեքային ոլորտի վերակառուցումը տրամաբանորեն ենթադրում է նաև վերակառուցումներ, փոփոխություններ իմաստային ոլորտում:

Վ. Ն. Զոնկինը գրում է. «առանձին իմաստի կայունությունը և անփոփոխությունը լրացվում է իմաստային շարժունությամբ՝ ապահովելով սուբյեկտի հարմարման ավելի լայն հնարավորությունները: Առանձին իմաստների կոշտությունը և իմաստային համակարգի ճկունությունը ապահովում է իմաստային համակարգի կայունությունը՝ թույլ տալով սուբյեկտին ճկունորեն հակազդել շրջապատող իրականության տարբեր կողմերին և դրսևորել համարժեք վարք՝ անփոփոխ պահելով կուտակած փորձը» [32]: Այսինքն՝ իմաստների շարժընթացը կրում է հարմարվողական բնույթ:

Իմաստային համակարգի շարժընթացի հարցը ավելի ամբողջական մշակվել է Դ. Ա. Լեոնտևի աշխատանքներում, որը անձնային իմաստը դուրս էր բերում սուբյեկտ-օբյեկտիվ միջավայր փոխհարաբերությունից: Իմաստային ոլորտը նա բնորոշում է իբրև հարաբերականորեն կայուն և ինքնավար աստիճանակարգային ձևով կազմակերպված համակարգ, որը ներառում է մի շարք տարաստիճան իմաստային կազմավորումներ, որոնք գործառնում են իբրև մեկ ամբողջություն: Այդ ամբողջության մեջ, իհարկե, կարելի է տարանջատել առանձին շարժուն իմաստային ոլորտներ՝

աշխատանք, ընտանիք և այլն, բայց ըստ Դ. Ա. Լեոնտևի, դրանց սահմանազատումը սխալ է, քանի որ դրանք հաճախ գտնվում են միասնության մեջ: Տարբեր շարժուն իմաստային կազմավորումներ սահմանազատված չեն խիստ սահմաններով: Ընդհակառակը հաճախ կարող են հատվել իրար հետ և ունենալ ընդհանուր ենթահամակարգեր, որոնք երկուսին էլ կարող են պատկանել [51; 124-128]: Այս տեսանկյունից աշխատանքի իմաստային ոլորտի իմաստային կազմավորումների վերաիմաստավորումը, ենթադրում է անձի ողջ իմաստային ոլորտի վերանայում:

Անձի իմաստային համակարգը ևս «քարացած» չէ և կարող է ձևափոխվել կյանքի ընթացում ճգնաժամային և այլ ինտենսիվ ներգործությունների ազդեցությամբ: Ա. Վ. Սերիի իմաստային համակարգի իբրև շարժական կառույցի տեսության մեջ «անցյալը», «ներկան» և «ապագան» կրում են արժեքային բնույթ և կազմում են անձի սուբյեկտիվ իրականությունը: «Այստեղ» և «հիմա» զգացման համար անհրաժեշտ է ժամանակային լոկուսների համաժամացում (սինխրոնացում), ինչը թույլ է տալիս անձին ինտեգրվել կյանքի նոր փոփոխվող պայմաններին: Անհատի սևեռվածությունը որևէ լոկուսի վրա, բացատրվում է սահմանների անթափանցելիությամբ և կոշտությամբ հարևան լոկուսի հետ, ինչը բերում է օբյեկտիվ իրականության համարժեք գիտակցման (իմաստավորման) անհնարինությանը: Այս դեպքում անձնային իմաստներն ապահովում են հարմարումը: Ժամանակային համաժամացումը, լինելով արդիական իմաստային վիճակի մեխանիզմ, անձի նորմալ կենսագործունեության պայման է, ինչը կարող է խախտվել սոցիալ-տնտեսական և քաղաքական վերափոխումների և այլ պայմանների ազդեցությամբ: Ըստ Ա. Վ. Սերիի, նման պայմաններում, խստանում են ժամանակային լոկուսների միջև սահմանները, ինչի շնորհիվ մոտակա անցյալի և ապագայի գոտիները արգելափկվում են, իսկ անձնային իմաստները տեղայնացվում է իրականության մոտակա և հեռավոր շրջաններում: Դրա հետ միասին տեղի է ունենում կենսական իրադրությունից արտամղում և մարդու վարքը կարող է կրել միակողմանի ուղղվածություն. մարդն ապրում է բացառապես հիշողություններով և հույսերով, պատասխանում է ներկա պահի պահանջներին: Իմաստի ժամանակային կողմի մասին պատկերացումները կիրառելի են հատկապես մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում, անձի արժեքաիմաստային ոլորտի իմաստային

վերակառուցումը նկարագրելու տեսանկյունից: Իմաստային համակարգն ունի աստիճանային ենթարկվածություն, այն կյանքի տարբեր փուլերում գտնվում է շարժընթացի մեջ: Մարդ-օբյեկտիվ իրականություն իմաստավորված համաբերությունը հեղինակը դիտարկում է հաշվի առնելով այն, որ անձնային իմաստների համակարգը, գործառնելով տարբեր մակարդակներում, ձևավորում է անհատի կենտրոնական դիրքը, ազդեցություն է գործում նրա ուղղվածության և սոցիալական ակտիվության բովանդակության վրա: Մ. Ս. Յանիցկին և Ա. Վ. Սերին անձի արժեքաիմաստային ոլորտի վերակառուցման կարևորագույն գործոնների մեջ առանձնացնում են հասարակության մեջ տեղ գտնող սոցիալ-տնտեսական, քաղաքական, գաղափարական փոփոխությունները: Վերջիններս հանգեցնում են ինչպես հասարակության, սոցիալական խմբերի, այնպես էլ առանձին անձի արժեքային ոլորտի, նորմերի և բարոյախոսության փոփոխության: Պարզ է, որ արժեքաիմաստային ոլորտի վերակառուցումը մեծապես կապված է անհատի և հասարակության կյանքի իրական գործընթացի օբյեկտիվության հետ: Մարդը ձգտում է ձեռք բերել իմաստ և զգում է ֆրուստրացիա կամ գոյաբանական վակուում, եթե այդ ձգտումը չի իրացվում: Կյանքի իմաստները և ընդհանրապես իմաստները առաջանում են արժեքների ապրման արդյունքում: Հույզերի միջոցով շրջապատող իրականության երևույթների նկատմամբ անձի մոտ ձևավորվում է անձնային, տարբերակված վերաբերմունք: «Սառած» արժեքները դառնում են արտաքին, օտար արտաանձնային արժեքներ: Նման իրադրությունն առաջացնում է գոյաբանական վակուում [71;37-40]: Կյանքի ընթացքում արժեքային համակարգի շարժընթացը ենթադրում է փոփոխություն արժեքային աստիճանակարգում: Եթե արժեքների զգալի մասը կորցնում են իրենց առաջնային նշանակությունը, ապա արժեքային համակարգը պարզանում է: Նման երևույթ հաճախ դիտարկվում է ծերության փուլում: Իմաստաստեղծումը թույլ է տալիս անձին ակտիվ գործել, յուրացնել շրջապատի սոցիալական օբյեկտները: Իրականում անձի հոգեկանին վտանգ է սպառնում այն դեպքում, երբ կյանքի իմաստավորումը ցածր է, չկա բավարար լարվածություն գործելու և հարմարվելու համար:

Փոփոխվող պայմաններում անցյալի վրա սևեռված լինելու փաստը, հասուն անձի մոտ, կարող է վկայել լուրջ ճգնաժամի առկայության մասին, երբ ներկան չի բավարարում նրան, նա չի կարողանում լիարժեք իրացնել հարաբերությունները շրջապատի հետ, իսկ ապագայի հեռանկարը՝ ներկայի չկայացվածության պատճառով, ամբողջովին անորոշ է թվում: Նման իմաստային շարժընթաց հնարավոր է տեղ գտնի հետխորհրդային երկրներում, որտեղ անցում է կատարվել սոցիալիստականից մեկ այլ՝ կապիտալիստական, շուկայական հասարակարգի, որի պայմաններում անձը կարող է ապրել անբավարարվածության զգացում՝ կապված սոցիալական կառուցվածքում իր զբաղեցրած կարգավիճակի հետ, ունենալ կյանքի իմաստավորման դժվարություններ: Մասնագիտական կարգավիճակի փոփոխության ներհոգեկան բաղադրիչի ձևափոխման անբաժանելի մաս է իմաստային ոլորտի վերակառուցումը: Այս առումով, իհարկե, հատկապես անհրաժեշտ է հաշվի առնել իմաստների ժամանակային կողմի փոփոխման փաստը: Տարբեր տարիքային փուլերում՝ կենսական, սոցիալական տեղաշարժերի բնույթն ու դրանց հոգեբանական պայմանավորվածությունը նպատակահարմար է հաշվի առնել իմաստային համակարգի ամբողջական հասկացման համար:

Անձի արժեքային ոլորտի փոփոխության հիմնախնդիրը չնայած բավականին ուսումնասիրված է, բայց հետազոտությունների մեծամասնությունը վերաբերում են պատանեկության և երիտասարդության շրջանում արժեքային շարժընթացի առանձնահատկություններին, երբ դեռ անձի արժեքային համակարգը ինտենսիվորեն կայանում է: Ինչպես տեսնում ենք, հասուն, մասնավորապես, միջին տարիքում անձի արժեքային ոլորտի վերակառուցումների հիմնախնդիրը մնում է նվազ հետազոտված:

Անձի արժեքաիմաստային ոլորտի վերակառուցումն օրինաչափ երևույթ է: Յուրաքանչյուր փուլում հինը դառնում է նորի մաս: Այնուամենայնիվ, այդ գործընթացի բացասական միտվածությունը տեղ է գտնում այն ժամանակ, երբ սոցիալական միջավայրում անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխությունը տեղի է ունենում հանկարծակի կամ արտաքին հարկադրմամբ: *Անձի արժեքային ոլորտում ծավալվում է հին ու նոր արժեքներն իրար հետ համատեղելու բարդ գործընթաց, ինչի արդյունք է արժեքային բախումը:* Այն ունի վառ արտահայտված բարոյական-բարոյախոսական և

գաղափարաբանական բնույթ: Արժեքային բախումը գլխավորապես անցումային հասակության ծնունդ է՝ կապված հասարակության ներսում ճգնաժամային երևույթների և բարդ հակասական իրադրությամբ, երբ մարդու համար սեփական կենսական տարածությունը, հասարակական նոր դիրքը չի բավարարում, իսկ նախկին դիրքով պայմանավորված արժեքային կողմնորոշումները շարունակում են գործող մնալ՝ չնայած մեծ մասամբ արտաքին աջակցություն չեն ստանում: Հակասական պայմաններում, մի քանի արժեքային համակարգերի առկայության դեպքում ընտրություն կատարելը անձի համար դառնում է դժվարագույն խնդիր:

Ըստ Վ. Ֆրանկլի՝ արժեքային բախումը նևրոտիկ խանգարումների հիմքում ընկած երևույթ է: Բայցևայնպես, փորձենք հասկանալ կոնկրետ «արժեքային բախում» հասկացությունը, ինչը տեղ է գտնում արժեքաիմաստային ոլորտի վերակառուցումների պայմաններում: Վ. Վ. Շպունտովան օգտագործում է «ներանձնային արժեքային բախում» հասկացությունը բնորոշելու համար սուր ապրումը, որն առաջացնում է ապաինտեգրման վիճակ: Այն արտահայտվում է անձի տարբեր ուղղվածություն ունեցող արժեքների (ավելի վաղ գոյություն ունեցող և նոր) միջև հակազդեցությունների առաջացման մեջ և պահանջում է հրատապ լուծում: Ըստ նրա.

1. ներանձնային արժեքային հակասության և ներանձնային արժեքային բախման առաջացման ավելի նշանակալի պայման է արժեքների բազմանշանակությունը. դրանց պատկանելությունը օբյեկտին և անձին, կոնկրետությունը և վերացականությունը
2. ներանձային արժեքային բախման կառուցողական լուծման նախապայման է անձի սուբյեկտային դիրքը
3. գոյություն ունեն ներանձային արժեքային բախման լուծման տարիքային և սեռային տարբերություններ:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ անձը, որը կողմնորոշվում է իրադրության մեջ և հակված է վերլուծելու հակասությունները, ընդունակ է կատարել գիտակցված ընտրություն և լուծել արժեքային բախումը կառուցողական ձևով [88;303-316]: Անհատական արժեքային համակարգի համաձայնությունը կամ աններդաշնակությունը միջավայրի արժեքների հետ, ձգտումը դեպի

հավասարակշռություն կամ անհավասարակշռություն, սեփական նպատակների իրականացումը որոշում է անձի պոտենցյալի իրացման աստիճանը: Իհարկե, արժեքային վերակառուցումների, բախումների կրողը անձն է, ուստի հեղինակի կողմից տեղին է անձի սեռային և տարիքային գործոնների հաշվի առնելը: Եթե դիտարկում ենք արժեքային ոլորտի վերակառուցումների հիմնախնդիրը միջին տարիքում, երբ արժեքային համակարգը հարաբերականորն կայուն է, ապա կախված արժեքային կողմնորոշման գերակայող տիպից, սեռային առանձնահատկություններից, արժեքային ոլորտի շարժընթացը, վերակառուցումը կունենա իր առանձնահատկությունները:

Այսպիսով, սոցիալական փոփոխվող պայմաններում, մասնագիտական կարգավիճակի փոփոխության կարևորագույն բաղադրիչ է անձի արժեքաիմաստային ոլորտի վերակառուցումը: *Իմաստները և արժեքները իրենց արտացոլումն են գտնում անձի գործունեության մեջ և ամրակայվում է են նրա փորձում, հետևաբար, անձի կենսագործունեության մեջ փորձի կտրուկ փոփոխությունը, ինչպես մասնագիտական կարգավիճակի անկումը, կարող հանգեցնել փորձի վերակազմակերպման և, որպես հետևանք, արժեքաիմաստային կառույցի վերակառուցման: Արժեքային վերակառուցումների ընթացքում տեղ գտած նորագոյացություններից է մասնագիտական արժեքների նշանակության և իրացվածության միջև տարբերությունը, մասնագիտական արժեքների նվազ իրացվածությունը*: Այստեղ տեղին է կիրառել *«մասնագիտական արժեքների ֆրուստրացիա»* հասկացությունը, երբ ոչ մասնագիտական գործունեության պայմաններում սուբյեկտը չի կարողանում ամբողջությամբ իրացնել կամ ամբողջովին չի իրացնում իր մասնագիտական կարգավիճակով պայմանավորված արժեքները՝ արդյունավետ կյանքի, ինքնազարգացման, արարելու և այլն: Արժեքաիմաստային ոլորտի մյուս նորագոյացությունը՝ մի դեպքում *հարմարման ցարծրակարգ արժեքների գերակայությունն է, մյուս դեպքում՝ դրանց համագոյակցումը բարձարկարգ արժեքների հետ: Ուստի կարող ենք զարգացնել «մարգինալ արժեհամակարգի» մասին պատկերացումը: Կարելի է ենթադրել, որ արժեքի արժեզրկումը ամբողջական է այն դեպքում, երբ արժեքային ոլորտում այն կորցնում է իր ատաջնային նշանակությունը և, հետևաբար, դադարում է գործել իբրև անձին ուղղորդող և նրա ակտիվությունը*

կարգավորող կառույց: Եվ վերջապես, *անհամատեղելի արժեքների առկայությունը անձի հոգեկանում կարող է հանգեցնել արժեքային բախման, ինչը մասնագիտական կարգավիճակի փոփոխության ցուցիչ է:* Արժեքային բախումից դուրս գալու հնարավորությունները, ընտրած մարտավարությունները մեծապես կախված են նոր իրականությունը վերաիմաստավորելու կարողությունից, ոչ մասնագիտական գործունեության պայմաններում անձի հարմարվողական կարողություններից:

1.3 Անձի արժեքային ոլորտի և հարմարվողական կարողությունների հարաբերակցությունը

Անձի և սոցիալական միջավայրի, անձի և հասարակության փոխազդեցության գործընթացը ենթադրում է արտաքին փոփոխվող պայմաններին, հասարակական նորմերին և արժեքներին, մասնագիտական պահանջներին և նորարարություններին մարդու օրգանիզմի և անձի հարմարում, ադապտացիա: Հարմարման անհրաժեշտությունը առաջանում է հատկապես այն դեպքում, երբ անձին շրջապատող սոցիալական համակարգում, արժեքային դաշտում կամ առանձին ենթակառուցվածքներում առաջանում է փոփոխություն, ինչն առաջացնում է փոփոխություն անձի կյանքի սովորական պայմաններում: Այդ փոփոխությունները անձն առաջին հերթին արժևորում և իմաստավորում է իր արժեքաիմաստային ոլորտի միջոցով: Ուստի գտնում ենք, որ անձի հարմարվողականությունը և արժեքաիմաստային ոլորտը ունեն փոխադարձ կապվածություն և դրանց օրգանական կապը պայմանավորում է նոր, մասնավորապես, ոչ մասնագիտական գործունեության պայմաններում անձի հոգեկան գործառնության առանձնահատկությունները: Քննարկումը սկսենք «հարմարում» և «հարմարվողականություն», «հարմարվողական կարողություններ» հասկացությունների պարզաբանումից:

Մինչ այսօր գիտական գրականության մեջ չկա «հարմարում» (ադապտացիա), «սոցիալական հարմարում» և «սոցիալ-հոգեբանական հարմարում» հասկացությունների միանշանակ բնորոշում: «Հարմարում» (ադապտացիա) հասկացությունը կենսաբանության կենտրոնական հասկացություններից է և նշանակում է փոփոխվող պայմաններին կենդանի օրգանիզմի հարմարման

մեխանիզմ: Անշուշտ, «հարմարում» հասկացությունը շատ ավելի լայն և ընդգրկուն հասկացություն է, քան մնացած երկու հասկացությունները, քանի որ ենթադրում է ոչ միայն անձի հոգեկանի՝ ներհոգեկան ոլորտի հարմարեցում միջավայրի պայմաններին, այլ նաև ողջ օրգանիզմի՝ ներառած նրա ֆիզիոլոգիական հակազդումները:

Հարմարման տեսության մեջ իրենց լուրջ ներդրումն ունեն հետազոտողներ՝ Հ. Սելյեն, Պ. Կ. Անոխինը, Ռ. Մ. Բաևսկին Ֆ. Զ. Մեերսոնը, Վ. Ժ. Կազնաչեևը, Վ. Ի. Մեդվեդևը և այլոք [96;6]: Ընդհանրապես հարմարումն ուղղված է ինչպես արտաքին միջավայրի, այնպես էլ օրգանիզմում տեղի ունեցող փոփոխություններին հարմարմանը: Մեզ հետաքրքրում է հարմարման հոգեբանական կողմը:

Սոցիալական միջավայրը «արտադրում է» նորմերի, արժեքների (մասնագիտական, էթիկական և այլն), պահանջների համակարգ, որի շրջանակներում արդյունավետորեն գործառնելու համար, անձը պետք է յուրացնի համապատասխան դերային նմուշներ, վարքի ձևեր: Ուստի, սոցիալական հարմարումը միշտ ենթադրում է մեկ այլ գործընթացի՝ սոցիալականացման արդյունավետ իրականացում, ինչը ենթադրում է անձի մուտք դեպի սոցիալական միջավայր: Վ. Ա. Սլաստենինը և Վ. Պ. Կաշիրինը նշում են, որ հոգեբանության մեջ սոցիալականացման փուլային բաժանման դեպքում ելնում են աշխատանքային գործունեության նկատմամբ վերաբերմունքից: Այսպես, նախաշխատանքային, որը ներառում է կյանքի ողջ հատվածը ծնված օրվանից մինչև դպրոց գնալը, պատանեկան սոցիալականացում՝ դպրոցում, ուսումնարանում կամ ԲՈՒՀ-ում սովորելու ժամանակահատվածը, աշխատանքային գործունեության շրջանը, որի սահմանները որոշելը բարդ է և հետաշխատանքային գործունեության շրջանը, որը կապված է աշխատանքային գործունեության դադարի հետ [73;173,174]:

Ըստ Տ. Շիբուտանու, սոցիալականացումը վարքի նոր շաբլոնների յուրացման գործընթաց է: Նա դիտարկում է սոցիալականացումը և հարմարումը իբրև փոխլրացնող, միահյուսված գործընթացներ [21;12]: Սոցիալակացումը, իհարկե, երկկողմանի գործընթաց է. մի կողմից անհատն ակտիվորեն յուրացնում է հանրույթի կապերն ու հարաբերությունները, նորմերն ու արժեքները, մյուս կողմից՝ ակտիվորեն վերարտադրում է դրանք իր գործունեության միջոցով՝ դրսևորելով սոցիալական

ակտիվություն: Իհարկե, սոցիալականացման գործընթացը միտված է անձի հոգեբանական հարմարմանը սոցիալական միջավայրում:

Ա. Ա. Նալչաջյանը վերլուծում է սոցիալական հարմարման վերաբերյալ հոգեվերլուծող Հ. Հարթմանի զարգացրած գաղափարները, ով հարմարումը դիտարկում է իբրև բազմաշերտ երևույթ, իսկ հարմարման մակարդակի մասին պատկերացումը, ըստ նրա, ընկած է առողջ անձի հիմնադրույթի հիմքում: Փաստորեն, հաջող հարմարումն անձի հոգեկան առողջության ցուցանիշ է: Ըստ հոգեվերլուծողների՝ լավ հարմարված են այն մարդիկ, որոնց արդյունավետությունը, կյանքով հիանալու, հաճույք ստանալու ընդունակությունը և հոգեկան հավասարակշռությունը խախտված չեն: Ա. Ա. Նալչաջյանը նախապատվությունը տալիս է սոցիալական հարմարման վերաբերյալ խորհրդային դպրոցի պատկերացումներին, որոնցում այն դիտարկվում է իբրև մարդկանց սոցիալական, սոցիալ-հոգեբանական, բարոյա-հոգեբանական, տնտեսական և ժողովրդագրական հարաբերությունների փոփոխության արդյունք 57;8-17]: Հարմարման արդյունքում մարդը ոչ թե պասսիվորեն հարմարվում է սոցիալական միջավայրի առաջադրվող պայմաններին, այլ ինքն է ակտիվորեն ստեղծում սոցիալական միջավայր և ակտիվորեն իրեն հարմարեցնում այն: Այսինքն՝ մարդը ոչ միայն «հարմարվող», այլ նաև «հարմարեցնող» արարած է: Սոցիալական միջավայրի արժեքները ոչ միայն պասսիվորեն յուրացվում են, այլ ենթարկվում են անձի կողմից ներհոգեկան վերամշակման: Անձը դրանց նկատմամբ ձևավորում է որոշակի վերաբերմունք և ընտրում է այն, ինչը դառնում են նրա վարքի ուղենիշ:

Ընդհանրպես հարմարման բազմաշերտ ու բազմագործառնական գործընթացի մեջ կարելի է առանձնացնել ֆիզիոլոգիական, հոգեբանական և սոցիալ-հոգեբանական կողմերը: Անձի համար որոշիչ նշանակություն ունի հոգեկան հարմարումը, որը էապես ազդում է մյուս մակարդակներում տեղի ունեցող հարմարման գործընթացների վրա: Վ. Ա. Սլաստենինը և Վ. Պ. Կաշիրինը քննարկում են հոգեկան հարմարման մասին Յու. Ա. Ալեքսանդրովսկու հայացքները: Նա դիտարկում է այն իբրև ամբողջական, ինքնակարգավորվող համակարգի գործունեության արդյունք, ինչը ապահովում է ոչ միայն մարդու գործունեությունը «օպերատիվ հանգստի»

վիճակում, բայց նաև թույլ է տալիս նրան հակազդել բնական և սոցիալական գործոններին և ակտիվ ու նպատակաուղղված ձևով ներգործել դրանց վրա: Հարմարման մակարդակներից յուրաքանչյուրն ունի իր գործառնությունը: Այսպես, հոգեկան հարմարումն ապահովում է հոգեկանի հավասարակշռությունը, սոցիալ-հոգեբանականը՝ սոցիալական միջավայրի հետ համարժեք փոխազդեցության կազմակերպումը, հոգեֆիզիոլոգիականը՝ հոգեֆիզիոլոգիական հարաբերակցությունների ձևավորումը և ֆիզիկական առողջությունը: Հարմարումը բնորոշելիս պետք է ելնել այն փաստից, որ այն երկու՝ կենսաբանական և հոգեբանական համակարգերի ամբողջություն է, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է իր ենթահամակարգերից: Օրինակ՝ անձի հոգեկանում առանձնացնում են ինտելեկտուալ-իմացական, հուզական, կամային, հոգեշարժողական, պահանջմունքադրդապատճառային ենթահամակարգերը [73;420]:

Փոփոխվող սոցիալական պայմաններում, անձի արժեքային վերակառուցումները նկարագրելու, նոր պայմաններում անձի հարմարվողական կարողությունների բնույթն իմաստավորելու տեսանկյունից առավել նպատակահարմար ենք գտնում «սոցիալ-հոգեբանական հարմարում» հասկացության պարզաբանումը: Սոցիալ-հոգեբանական հարմարումն անձի հոգեբանական կապերի և հարաբերությունների համակարգերի ներգրավվումն է համապատասխան հոգեբանական դերերի կատարման մեջ: Ընդ որում՝ սոցիալական, մասնավորապես, մասնագիտական կարգավիճակի հետ նույնացումը, մասնագիտական դերի հաջող կատարումը, մասնագիտական դաշտում անձի սոցիալ-հոգեբանական հարմարման գլխավոր ցուցանիշն է:

Սոցիալ-հոգեբանական հարմարումը ենթադրում է անձի և սոցիալական միջավայրի փոխազդեցություն, որը հանգեցնում է անձի և խմբի արժեքների և նպատակների, այսինքն՝ անհատական և խմբային արժեքային համակարգերի ճիշտ հարաբերակցությանը: Սոցիալական միջավայում սոցիալ-հոգեբանական հաջող հարմարումն անձի զարգացման ցուցիչ է: Ընդ որում՝ « սոցիալական միջավայրի հետ անձի փոխազդեցության մի փուլում զարգացումը հարմարման միջոց է, մյուս փուլերում՝ հարմարվողական գործընթացները անձի զարգացման հիմք և համապատասխան

պահեր են: Սոցիալական միջավայրում հարմարումն անձի հետագա զարգացման պայման է»: Այս տեսանկյունից կենսագործունեության ընթացքում սուբյեկտի առջև ծառացող դժվար իրադրությունները թույլ են տալիս անձին անընդհատ վերանայել սեփական արժեքները, գործադրել վարքային մարտավարություններ և իհարկե, կառուցողական ելքի դեպքում հիմք են դառնում զարգացման համար:

Ա. Ա. Նալչաջյանը տալիս է սոցիալ-հոգեբանական հարմարումը բնորոշում է. «անհատի և սոցիալական միջավայրի միջև այնպիսի փոխազդեցության գործընթաց, որի ընթացքում հայտնվելով տարբեր խնդրային իրադրություններում, որոնք առաջանում են միջանձնային հարաբերությունների ոլորտում, անհատը ձեռք է բերում սոցիալական վարքի նորմեր և նմուշներ, դիրքորոշումներ և բնավորության գծեր և դրանց բարդույթներ և այլ ենթակառուցվածքներ ու առանձնահատկություններ, որոնք ունեն հարմարվողական նշանակություն» [57;17-18]: Սոցիալ-հոգեբանական հարմարման նման մեկնաբանությունը թույլ է տալիս ենթադրել, որ անձի արժեքաիմաստային ոլորտի շարժընթացը, որը տեղ է գտնում մասնագիտության հարկադիր փոփոխության պայմաններում, օրինաչափ երևույթ է և ունի հարմարվողական բնույթ:

Ս. Ա. Վիխորևը քննարկում է Ս. Ա. Լարինայի պատկերացումները սոցիալ-հոգեբանական հարմարման վերաբերյալ: Նա այն դիտարկում է անձի բաղադրիչների կառուցվածքի միջոցով: Սոցիալ-հոգեբանական հարմարման գործընթացի միջուկը, որն ապահովում է բոլոր տարրերի փոխազդեցությունը, ինչպես նաև համակարգի փոխազդեցությունը սոցիալական միջավայրի հետ՝ արժեքային կողմնորոշումներն են, անձի ուղղվածությունը: Արժեքային կողմնղորոշումները, իբրև գիտակցության կայուն կազմավորումներ, աշխարհայացքի իմաստային բաղադրիչներ, պայմանավորում են պահանջմունքների և հետաքրքրությունների կայուն ուղղվածությունը, վարքի հետևողականությունը: Արժեքային կողմնորոշումները, արժեքային միջուկը, որոշում է նրա սոցիալական դիրքորոշումների սոցիալական նորմատիվությունը, պայմանավորում է անձի անհատական պահանջմունքների և սոցիալական խմբի շահերի համաձայնեցվածությունը: Անհատական պահանջմունքների և սոցիալական արժեքների բախումը, որպես կանոն, հանգեցնում է անձի սոցիալ-հոգեբանական

հարմարման խախտմանը [21;12-22]: Ըստ էության, սոցիալ-հոգեբանական հարմարման ողջ գործընթացն ուղղված է անձի հիմնային, սոցիալական պահանջմունքների բավարարմանը, արտահայտվում է դրական հարաբերության (վերաբերմունքի) և ինքնավերաբերմունքի մեջ և արտացոլում է անձի սոցիալական էությունը: Փաստորեն, հարմարման գործընթացի աղբյուրը անձի պահանջմունքային վիճակներն են, որոնք առաջանում են միջավայրի հետ անձի փոխազդեցության գործընթացում, գործունեության տարբեր տեսակների մեջ նրա ներգրավման դեպքում և ուղղված են դեզադապտացիոն պահանջմունքային վիճակների բավարարմանը, դրանց իրացման գործընթացներն են [73; 285, 428]:

Այնուամենայնիվ, անձի սոցիալ-հոգեբանական հարմարման մեկնաբանությունը անձի արժեքային կողմնորոշումների համակարգի միջոցով ավելի նպատակահարմար է և արտահայտում է դրանց միջև առկա գործառնական կապը: Մասնավորապես, *մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում անձի արժեքային ոլորտի վերակառուցումները և դրանց ուղղվածությունը՝ բարձրակարգ արժեքներից տեղաշարժ դեպի ցածրակարգ, հարմարվողական արժեքները կամ բարձրակարգ և ցածրակարգ արժեքների համագոյակցումը, որոշում են անձի սոցիալ-հոգեբանական հարմարման գործընթացի բնույթն ու հարմարվողականության առանձնահատկությունները: Ենթադրվում է, որ նոր իրականության պայմաններում բացասական միտվածությամբ արժեքային վերակառուցումներն անձի սոցիալ-հոգեբանական հարմարումն ապահովող հիմնական մեխանիզմներից են, որոնք չնայած պարզեցնում են անձի արժեքային ոլորտը, բայց ապահովում են սոցիալ-հոգեբանական հարմարումը նոր, ոչ մասնագիտական գործունեության պայմաններում:*

Այս տեսանկյունից կարող ենք ասել, որ մասնագիտական հարմարումը, սոցիալ-հոգեբանական հարմարման հիմնական տեսակն է, նրա հիմքը: Մասնագիտական հարմարումը կարելի է բնորոշել իբրև ներգրավում, մուտք մասնագիտական գործունեության ոլորտ, աշխատանքային պայմանների մեջ, հարմարում մասնագիտության առանձնահատկություններին: Մասնագիտական հարմարումը հասկացվում է իբրև միջոցների և միջոցառումների համակարգ, որը նպաստում է աշխատողի մասնագիտական կայացմանը և ձևավորում է նրա մոտ

համապատասխան մասնագիտական որակներ, ինչպես նաև օգնում են աշխատողին նոր սոցիալական կարգավիճակի ընդունման գործում: Մասնագիտական հարմարումը ենթադրում է ինքնանույնացում կարգավիճակային բնութագրերի հետ և մասնագիտական մշակույթի և արժեքների ընդունում: Միջին տարիքում նոր աշխատանքային ոլորտում սեփական տեղի որոնումը նոր, ավելի ցածր մասնագիտական կարգավիճակի առկայությունը, անձից պահանջում է մասնագիտական հարմարում: Հարմարման արդյունք է այս կամ այն չափով հարմարվածությունը: Հարմարման գործընթացի տարբեր փուլերում մարդու հարմարվածության մակարդակը կարող է լինել տարբեր: Հաջող հարմարվածությունը կյանքի մի ոլորտում, չի ենթադրում հաջող հարմարվածություն մեկ այլ ոլորտում: Լավ հարմարված մարդկանց տարբերում է արդյունավետությունը գործունեության մեջ, կյանքով բավարարվածությունը, հոգեկան հավասարակշռությունը:

Հոգեբանական հարմարումն իրականացվում է անձի կողմից գործադրվող հարմարվողական կարողությունների միջոցով: Կյանքի որոշակի ոլորտում՝ (մասնագիտական, ընտանեկան, անձնական և այլն) ինչպիսին էլ լինի անձի առջև ծառացող դժվարությունները, նրա հարմարվողականության գնահատման միջոցով պատկերացում ենք կազմում այդ իրավիճակը հաղթահարելու նրա հնարավորությունների մասին: Նոր իրադրության մեջ հարմարվողական կարողությունների գնահատումը թույլ է տալիս ենթադրել անձի հաջող կամ անհաջող հոգեբանական հարմարման մասին: Հեղինակներն առանձնացնում են հոգեբանական հարմարման հետևյալ տեսակները.

- *ներքին,* երբ տեղի է ունենում հոգեկանի գործառնական կառույցների, համակարգերի վերակառուցում՝ միջավայրի փոփոխության դեպքում: Այդ դեպքում մարդու արտաքին վարքն ու գործունեությունը ձևափոխվում են միջավայրի, արտաքինից եկող պահանջներին համապատասխան: Տեղի է ունենում անձի ամբողջական, ընդհանրացված հարմարում
- *արտաքին,* վարքային հարմարվողական, երբ անձը ներքնապես, բովանդակային առումով չի վերակառուցվում, այլ պահպանում է իր

ինքնուրույնությունը: Տեղի է ունենում անձի այսպես կոչված գործիքային, (ինստրումենտալ) հարմարում

- *խառը,* երբ անձը մասնակիորեն վերակառուցվում է և համապատասխանեցվում է միջավայրի պահանջներին, նրա արժեքներին, նորմերին, իսկ մասնակիորեն հարմարվում է գործիքային, վարքային ձևով՝ պահպանելով իր ես-ը, սեփական ինքնուրույնությունը, «ինքնությունը» [73;425]:

Հասուն անձի արժեքային ոլորտի վերակառուցումների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ *ոչ մասնագիտական գործունեության պայմաններում տեղ է գտնում հարմարման ներքին տեսակի գերակայություն, ինչը դրսևորվում է արժեքային ոլորտում հարմարման արժեքների գերակայությամբ:* Անձի գործունեությունը ուղորդվում է նյութական բարեկեցության, առողջության, և այլ ցածրակարգ, հարմարման արժեքներով: *Հարմարման խառը տեսակը մեծապես կապված է անձի մոտ խառը կամ միջանկյալ արժեքային կողմնորոշման տեսակի գերակայությամբ: Այս դեպքում անձի մոտ առկա է հարմարման, ցածրակարգ և բարձակարգ, անհատականացման, օրինակ՝ ստեղծագործելու մասնագիտական ինքնահրացման և ինչպես նաև ցածրակարգ արժեքների՝ փող, ապահովություն և այլն, համագոյակցման, համատեղման բարդ գործընթաց:* Կարելի է ենթադրել, որ նման անձանց հարմարումը ոչ մասնագիտական գործունեության պայմաններին ընթանում է ավելի դժվար, իսկ նրանց արժեքահիմաստային ոլորտը բնորոշվում է արժեքային բախումներով և նոր իրականությունը վերահիմաստավորելու դժվարություններով:

Մասնագիտական կարգավիճակի փոփոխությունը արտահայտող ելակետային ցուցիչ է հարմարվողականությունը, որն անձի խորքային ենթակառուցվածքներից է: Այն փաստում է անձի հոգեկանի հաջող կամ անհաջող գործառնության, նոր մասնագիտական դերի հաջող կամ անհաջող կատարման և ընդհանրապես կյանքի նոր պայմաններին անձի հարմարվածության մասին: Ուստի, անձի հարմարվողական հնարավորությունների հոգեբանական վերուծությունը թույլ է տալիս հոգեբանական տեսանկյունից իմաստավորել մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում արժեքային ոլորտի վերակառուցումների բնույթը և ուղղվածությունը:

Հարմարվողականության հիմնախնդրով զբաղվել են Տ. Ա. Գոլուբևան, Ս. Տ. Պոսոխովան Ե. Ն. Կիսելնիկովան, Լ. Գ. Պոպովան, Ի. Վ. Ռոզովան, Ս. Վ. Չեբառիկովան և այլոք: Հարմարվողականությունը բնորոշվում է իբրև անձի անհատական-հոգեբանական հատկությունների համալիր, որն ամրակայված է նրա կառուցվածքում և արտահայտում է հարմարման նկատմամբ ընդհանուր ընդունակությունը (Ե. Ն. Կիսելնիկովա, Ա. Ա. Նալչաջյան, Լ. Ն. Սոբչիկ և այլն) [48]: Ա. Բ. Ռոգոզյանը այն բնորոշում է իբրև անձի ինտեգրատիվ հատկություն, որը բնութագրում է անձի հոգեբանական հարմարման մակարդակը [67]:

Մ. Վ. Ռոստովցևան նշում է, որ հարմարվողականության ուսումնասիրության հետ կապված գոյություն ունի երկու մոտեցում՝ էվոլյուցիոն և անհատական-անձնային: Էվոլյուցիոն մոտեցման շրջանակներում այն դիտարկվում է.

1. հարմարվողականության որպես պայման, որն ապահովում է հարմարումը
2. հարմարման նկատմամբ համակարգի ընդունակություն
3. հարմարվողականությունը հասկացվում է որպես միջավայրի որոշակի պայմանների նկատմամբ համակարգի հարմարման գործընթաց (Ռ. Ակոֆ, Վ. Գրանտ, Լ. Վ. Կորել, Վ. Պ. Կուզմին, Վ. Ա. Մարկով, Տ. Պարսոնս և այլն):

Երկրորդ մոտեցման մեջ ներառված են հետազոտություններ, որոնցում հարմարվողականությունը հասկացվում է իբրև համակարգի ներքին պոտենցյալ, ինչը պայմանավորում են դրա զարգացումը (Ն. Ա. Աղաջանյան, Ա. Վ. Ժիրմունսկի, Վ. Ի. Կուզմին, Օ. Ս. Ռազումովսկի, Վ. Պ. Սկուլաչով և այլն): Մ. Վ. Ռոստովցևան նշում է, որ անհատական-անձնային մոտեցման տեսանկյունից՝ հարմարվողականությունը մեկնաբանվում է նաև իբրև անձնային հատկություն, որը որոշում է անձի ընդունակությունը հարմարման նկատմամբ և իբրև կենսական միջավայրին նրա հարմարվածության մակարդակ («հարմարվողականություն» հասկացությամբ հաճախ փոխարինում են «հարմարվածություն» հասկացությունը, որն արտահայտում է հարմարման գործընթացի արդյունավետությունը): Այս ուղղության կողմնակիցներն են՝ Գ. Ն. Ալեքսանդրով, Բ. Գ. Անանև, Ա. Վ. Պետրովսկի, Ա. Մ. Ստոլյարենկո, Մ. Գ. Յարոշևսկի և այլն [69]: Լ. Դ. Ստոլյարենկոն ճշմարտացիորեն նկատում է, որ հարմարվողականությունը իբրև անձի հիմնային հատկություն արտահայտում է

սոցիալական միջավայրին անձի փաստացի հարմարվածության մակարդակը, ինչպես նաև նրա սոցիալական կարգավիճակի, ինքնազգացողության մակարդակը, սեփական անձով և կյանքով բավարարվածության կամ անբավարարվածության չափը [78;74]:

Ժամանակակից հետազոտողներից Օ. Վ. Կուզնեցովան զբաղվում է հարմարվողականության անհատական տարբերությունների խնդրով, սահմանում է հարմարվողականությունը իբրև ներքին (ներանձային) և արտաքին (վարքային) վերափոխումների, վերակառուցումների նկատմամբ ընդունակություն, որն ուղղված է միկրո և մակրո միջավայրերի հետ հավասարակշռված հարաբերությունների պահպանմանը և վերականգնմանը՝ նրա բնութագրերի փոփոխության դեպքում: Հարմարվողականությունը, ըստ նրա, անձի ինտեգրալային կազմավորում է և նրանում առանձնացնում է հետևյալ մակարդակները.

- պաշտոնական-շարժական, որն արտահայտում է հարմարվողականության շարժուն հատկությունները (հարմարման իրադրության մեջ հարմարվողական դրսևորումների առաջացման և այդ ձևերի առանձնահատկությունները) և որակական (արտահայտում է հարմարվողականության իբրև հոգեբանական ֆենոմենի էությունը)
- բովանդակային անձնային, որն արտահայտում է հարմարվողականության այն կողմերը, որոնք վերաբերվում են անձի կողմից սեփական հարմարվողականության ինքնագնահատմանը:
- սոցիալ-իմպերատիվ, որն իրենից ներկայացնում է հարմարվողական դրսևորումների, «նորմերի» մասին գիտելիքների, պատկերացումների համակարգ, վարվելաձև հարմարման իրադրության մեջ:

Օ. Վ. Կուզնեցովան հարմարվողականության կառուցվածքում առանձնացնում է երեք բաղադրիչներ՝ հուզական, իմացական և վարքային: Այդ բաղադրիչներից որևէ մեկի գերակայությունը հարմարվողականության անհատական կառուցվածքում որոշում է անձի տիպը, սոցիալական միջավայրի հետ անձի փոխազդեցության մեջ հարմարվողական մարտավարությունների ուղղվածությունը: Դրա հիման վրա հնարավորություն է ստեղծվում առանձնացնել հարմարվողականության առանձին տիպեր, որոնք բնորոշ են առանձին մարդկանց՝ հուզական, վարքային կամ իմացական

կողմի գերակայության դեպքում [47]: Հարմարվողականության իբրև բազմակարդակ, ինտեգրալային անձնային հատկության մասին պատկերացումը, հարստացնում է դժվար, էքստրեմալ իրավիճակներում, ճգնաժամային պայմաններում անձի հարմարվողական դրսևորումների ուղղությունների նկարագրությունը, ինչպես նաև հարմարվողակության անհատական առանձնահատկությունները:

Մարդու կենսագործունեությունը ներառում է նրա կյանքի առանձին ոլորտներ՝ ընտանեկան, մասնագիտական ընկերական և այլն: Ն. Ն. Կուիմովան նշում է, որ հարմարվողականության բարձր մակարդակը կյանքի մի ոլորտում, օրինակ, ընտանեկան, չի նշանակում դրա բարձր մակարդակ մեկ այլ, ոլորտում, օրինակ՝ մասնագիտական: Չնայած վերջինս առանձին միավոր չէ, քանի որ մասնագիտական հարմարվողականության բարձր մակարդակը մեծապես որոշում է անձի կյանքի որակը, կյանքի բարեհարմարության զգացումը, ուստի այն վստահորեն կարող ենք բնորոշել անձի ընդհանուր հարմարվողականությունը որոշող հիմնային ցուցիչ [48]: Ուստի, անհրաժեշտ է տարբերակել երկու հասկացություններ. «հարմարվողականություն»՝ որպես հարմարման նկատմամբ կարողություն և «հարմարվածություն», որն արտահայտում է սոցիալական միջավայրում անձի հարմարված լինելու փաստը: Միևնույն ժամանակ «հարմարվածություն» և «գործունեության արդյունավետություն» հասկացությունները փոխկապակցված են, քանի որ բարձր հարմարվածությունը բնորոշում է մարդու գործունեության արդյունավետությունը, իսկ գործունեության արդյունավետությունը վկայում է հարմարվածության բարձր մակարդակի մասին, ինչը սոցիալական իրականության հետ համարժեք և ներդաշնակ փոխազդեցության երաշխիք է:

Մ. Վ. Ռոստովցևան ներմուծում է «սոցիալական հարմարվողականություն» հասկացությունը, ինչն իրենից ներկայացնում է անձի և հասարակության հարաբերությունը, փոխպայմանավորված ուղղվածությունը հակասությունների լուծման առումով, որոնք առաջանում են սոցիալականացման գործընթացում: Ըստ հեղինակի՝ սոցիալական հարմարվողականության չափորոշիչ է իմացական (ինտելետի ընդունակությունը կառուցելու և գտնելու անհրաժեշտ լուծումներ տարբեր սոցիալական իրադրություններում), հաղորդակցման (հաղորդակցական հարաբերություններ

կառուցելու կարողություն, հասնելու փոխընբռնման այլ մարդկանց, սոցիալական խմբերի հետ), արժե-մշակութային (տվյալ սոցիալական միջավայրի նորմերն ու արժեքները յուրացնելու ընդունակություն), վարքային (ուղղվածությունը դժվարությունների ակտիվ հաղթահարմանը, գործունեության համապատասխան տեսակների նկատմամբ պատրաստականությունը՝ ինքնաարտահայտման և ստեղծագործական ընդունակությունների ինքնաիրացման պայմաններում): Ընդհանուր առմամբ սոցիալական հարմարվողականությունը բարեհաջող սոցիալականացման գրավական է: Սոցիալ-հոգեբանական հարմարվողականությունը սոցիալական հարմարվողականության տեսակ է: Այն լուծում է հակասությունները, որոնք առաջանում են ժամանակակից հասարակության կողմից անձին առաջադրվող պահանջների և սոցիալական իրականությանը երիտասարդների հոգեբանական հարմարման ռեսուրսների միջև: Ըստ նրա, հարմարվողական ռեսուրսներ են՝ դրդապատճառային ոլորտի առանձնահատկությունները, արժեքային ուղղվածությունը, հաղորդակցական հմտությունների զարգացման և հասարակության մեջ վարքի կարգավորման մակարդակը, որոնք որոշում են հարմարվողականության ձևավորումը [69]: Հարմարման անհրաժեշտությունը և հարմարվողական կարողությունների գործադրումը կապվում է կյանքի տարբեր ոլորտներում՝ ընտանեկան, մասնագիտական և այլն, պայմանների փոփոխության հետ:

Լ. Մ. Կոլպակովան նշում է, որ կյանքի պայմանների փոփոխությունը դժվարացնում է մարդուն կողմից առօրյա խնդիրների լուծումը, ինչը կարող է առաջ բերել հոգեկանում զանազան բացասական վիճակներ և դառնալ տարատեսակ անձնային փոփոխությունների պատճառ: Հեղինակը ներկայացնում է «սուբյեկտային» հարմարվողականության հիմնադրույթը՝ կենտոնանալով դրա շարժական կողմի ուսումնասիրության վրա: Հարմարվողականությունը ներառում է երկու կարևորագույն և համապարփակ միտում. «հարմարում» և «հաղթահարում»: Հարմարվողականությունը, որպես հոգեկանի կարգավորման որոշակի մակարդակ, արտահայտվում է, ըստ հեղինակի, երկու երկու գործառնական ձևերում՝ անձնային և սուբյեկտային: Անձնային հարմարվողականությունը դրսևորվում է անձի սոցիոկողմնորոշված ակտիվության մեջ, սոցիալական միջավայրի կողմից

առաջադրված սոցիալական գործոններով: Սուբյեկտային ակտիվությունը պայմանավորվում է ներքին ակտիվությամբ: Այս երկու մակարդակները իրարից տարբերվում են «մարդ-միջավայր» համակարգում առաջ եկող հակասությունների լուծման դեպքում միջոցների գործադրման առանձնահատկություններով: Հեղինակը, կարևորելով անձի զարգացման տեսանկյունից սուբյեկտային հարմարվողականության դերը, գտնում է, որ այն թույլ է տալիս պրոբլեմային իրադրություններում գործել ոչ թե ըստ որոշակի առաջադրված մոդելի, այլ գտնել սեփական լուծումը, ինչը, իհարկե, ստեղծագործական ակտիվության արդյունք է: Հեղինակի կողմից առաջադրվող հարմարվողականության երկմակարդակ մոդելում ավելի զարգացած մակարդակ է սուբյեկտիային հարմարվողականությունը, ինչն իր դրևորումն է ունենում անձի ինքնավար վարքում և միտված է ոչ միայն հավասարակշռության ապահովմանը, այլ նաև կյանքի գրավչության և արժեքների պահպանմանը [40]: Կարելի է ենթադրել, որ հարմարվողականության այս տեսակը բնորոշ է ավելի հասուն անձին, ով պրոբլեմային իրադրություններում ունակ է գտնել այլընտրանքային լուծումեր, ինչը կհասցնի նվազագույն վնաս նրա հոգեկանին: Իհարկե, կարելի է ասել, որ այս բնութագիրը հատուկ է ճկուն, ով ունակ է վերանայել իր արժեքային համակարգը:

Իհարկե, փոփոխվող պայմաններում անձի վարքային մարտավարությունները, սոցիալ-հոգեբանական հարմարվողականության մակարդակը մեծապես կախված է անձի «հարմարվողական ռեսուրսներից», որոնց մեջ ներառվում է սոցիալ-հոգեբանական և անհատական բնութագրիչների շարք, ինչը որոշում է անձի սոցիալ-հոգեբանական հարմարվածության մակարդակը կոնկրետ սոցիալական պայմաններում: Դրդապատճառային ոլորտի առանձնահատկությունները, արժեքային ուղղվածությունը, հաղորդակցական հմտությունների զարգացման և հասարակության մեջ վարքի կարգավորման մակարդակը անձի սոցիալ-հոգեբանական ռեսուրսներն են, որոնք որոշում են հարմարվողականության ձևավորումը: Ս. Լ. Սոլովյովան նշում է. «որոշակի ռեսուրսների պոտենցյալի առկայությունը ընդլայնում է անձի գործունեության դաշտը՝ դարձնելով նրա համար նշանակալի նպատակներն ավելի հասանելի: Ռեսուրսները բարձրացնում են սեփական անձի մասին պատկերացումը, դարձնում են նրան ավելի ուժեղ: «Անձնային ռեսուրս» հասկացության մեջ հեղինակը

ներառում է հետևյալ հոգեբանական երևույթները՝ անհատական հոգեբանական առանձնահատկությունները, սոցիալ-հոգեբանական ռեսուրսները (փող, իշխանություն, սոցիալական աջակցություն և այլն), անձի հոգեբանական որակները, որոնց առկայությունը թույլ է տալիս հաջողությամբ հաղթահարել սթրեսային, պրոբլեմային իրադրությունները: Օրինակ, ինտելեկտը դասվում է իմացական ռեսուրսների դասին: Վերջինիս ճկունությունից է կախված իրականության վերաիմաստավորման դյուրինությունը, նոր իմաստներ ստեղծելու անձի կարողությունը [76]:

Կարելի է ասել, որ յուրաքանչյուր անձի ռեսուրսների աղբյուրը հարաբերականորեն կայուն արժեքաիմաստային ոլորտն է: Անձը կառուցում է իր կենսական տարածությունը՝ հիմնվելով արժեքների համակարգի վրա, որոնցով ուղղորդվելով մեկնաբանում է արտաքին իրադարձությունները: Կենսական տարածության ցանկացած փոփոխություն՝ մասնագիտական գործունեության, ընտանեկան և այլն, այս տեսանկյունից չի ենթադրում ավտոմատ և կրկնվող հարմարվողական մարտավարությունների գործադրում, այլ հիմնվում է անձի կենսական փորձի վրա և նրա առաջատար արժեքաիմաստային կողմնորոշումների համակարգի վրա:

Անձի հարմարման պոտենցյալի մասին պատկերացումը ներմուծել է Ա. Գ. Մակլակովը, որը բնորոշում է ոչ միայն հարմարման նկատմամբ ընդունակություն, այլ նաև մարդու անձնային հատկություն: Իրադրություններում, որոնք պահանջում են հարմարում, հարմարվողական ռեսուրսները մեծապես կախված են լինում անձի հոգեբանական հատկություններից, վերջիններս որոշում են օրգանիզմի ֆիզիոլոգիական հակազդումների կարգավորման հնարավորությունը: Իհարկե, որքան մեծ են անձի հարմարվողական հնարավորությունները, այնքան մեծ է հավանականությունը, որ օրգանիզմը կպահպանի նորմալ աշխատունակությունը և գործունեության արդյունավետությունը՝ արտաքին միջավայրի հոգեծին գործոնների պայմաններում: Հարմարվողական հնարավորությունների մակարդակի գնահատումը թույլ է տալիս խոսել արժեքային ոլորտի վերակառուցումների բացասական կամ դրական միտվածության մասին: Ա. Գ Մակլակովը գտնում է, որ որքան բարձր է անձի հարմարվողական կարողությունների մակարդակը, այնքան մեծ է հաջող հարմարման հնարավորությունը, այնքան մեծ է միջավայրի գործոնների շրջանակը, որին անձը

պետք է հարմարվի: Հեղինակի կարծիքով՝ անձի հարմարվողական պոտենցյալը կազմում է անձի հոգեբանական առանձնահատկությունների ամբողջությունը, որի մեջ նա առանձնացնում է նյարդա-հոգեկան կայունությունը, վերջինիս զարգացման մարկարդակն ապահովում է սթրեսի նկատմամբ հանդուրժողականությունը (տոլեռանտությունը), անձի ինքնագնահատականը, որը ինքնակարգավորման միջուկն է և գործունեության պայմանների և սեփական հնարավորությունների ընկալման համարժեքության մակարդակը, սոցիալական աջակցության զգացողությունը, անձի կոնֆլիկտայինության մակարդակը, սոցիալական շփման փորձը [52;16-24]: Իհարկե, այս հատկությունների համախումբի գնահատումը թույլ է տալիս հասկանալ և հետևություններ անել նոր պայմաններում միջավայրի հետ անձի ներդաշնակ հարաբերակցության, ինչպես նաև ներհոգեկան բովադակությունների, մասնավորապես արժեքաիմաստային ոլորտի վերակառուցումների բնույթի մասին:

Այսպիսով, ամփոփելով հարմարվողականության մասին տարբեր տեսական պատկերացումները կարող ենք ասել, որ հարմարվողականությունը փոփոխվող պայմաններում անձի հոգեկան իրողությունների փոփոխության բնույթն արտահայտող կենտրոնական հասկացություններից է: Անձի արժեքաիմաստային ոլորտը, լինելով մի կողմից առանձին գործող հոգեբանական կազմավորում, մյուս կողմից՝ ներառվում է հարմարվողական գործընթացներում՝ պայմանավորելով անձի հարմարվողականության բնույթն ու առանձնահատկությունները նոր պայմաններում՝ իրականության վերաիմաստավորման և վերարժևորման միջոցով:

Փոփոխվող պայմաններում, մասնագիտության փոփոխությունը, ոչ մասնագիտական ցածր որակավորմամբ գործունեության մեջ ներգրավվելը միջին տարիքի հարմարման գերակա ուղիներից մեկն է: Նոր խմբին անդամակցությունը հաճախակի լինում է ձևական, նկատվում է ցածր կարգավիճակի հետ դժվարություն նույնացման առումով: Այս ամենը ուղեկցվում է անորոշության, տագնապի, ընդհանուր հոգեբանական անբարեհարմարության զգացմունքներով: Այս տեսանկյունից անձին կարող ենք բնորոշել իբրև մասնագետ մարգինալ: Քանի որ նա հոգեբանորեն կապված է նախկին կարգավիճակի հետ, իսկ նորի նկատմամբ ունի ժխտողական

վերաբերմունք: Նման անձին բնորոշ են մարգինալ անձի հարմարվողական մարտավարություններ, որոնք նկարագրված են Ն. Ռ. Հակոբյանի կողմից:

Ուղղահայաց վարընթաց շարժունությամբ պայմանավորված մասնագիտական կարգավիճակների տեղաշարժի պայմաններում, անձանց մոտ նկատվում է ֆրուստրացման և չհարմարվածության գործընթաց: Հեղինակը փոփոխվող սոցիալական պայմաններում առանձնացնում է մարգինալների մի խումբ, որոնք բնորոշվում են զարգացած սոցիալական պահանջմունքներով ու սպասումներով, ունեն բարձրագույն կրթություն, բարձր որակավորում, բայց տեղաշարժերի արդյունքում դուրս են մնացել սոցիալական կառուցվածքներից: Նրանց մեծ մասին բնորոշ է ոչ միայն հարմարումը մարգինալ արժեքներին, այլ դրանց ձևափոխումը գաղափարականացման միջոցով, թե առօրյա գիտակցության մակարդակով: Նրանք ունեն ժխտողական, թշնամական վերաբերմունք նորի և այն ստեղծողների նկատմամբ և բնորոշվում են ապագայի նկատմամբ հոռետեսական վերաբերմունքով: Նման անձանց կողմից կիրառվող պաշտպանական մեխանիզմներ են.

- անձնային բարձր սուբյեկտիվ նշանակություն ունեցող հատկությունների ցածր ինքնագնահատական,
- ինքնամեղադրանք և ինքնաքննադատություն: Մարգինալ անձը իր անհաջողությունների համար նախառաջ մեղադրում է իրեն,
- սեփական ուժերի հանդեպ հավատի կորուստ, բացասական սպասումներ, անվճռականություն կարևոր որոշումների ընդունման ժամանակ և այլն:

Նման մարդկանց մոտ ձևավորվում է մարգինալ արժեքների համակարգ, որին բնորոշ են՝

ա) անհանդուրժողականությունը սոցիալական ինստիտուտների և մարդկանց հանդեպ,

բ) հականորմատիվ վարքի դրսևորման ծայրահեղ ձևերը,

գ) ապակառուցողականությունը,

դ) անհատապաշտությունը, բարոյական ռելյատիվիզմը, ժշտողականությունը, անպատասխանատվությունը:

Հեղինակի կարծիքով արժեքային վերակառուցումները ընդգրկում են ընդհուպ անձի իմացական կարողությունները՝ պայմանավորելով ընկալման, ուշադրության, հիշողության, մտածողության, մոռացման ուղղվածությունները, որոնք մեծապես կապված են անձի նոր արժեհամակարգի և պահանջմունքների բնույթից:

Մարգինալներին բնորոշ որոնողական ակտիվությունը ստիպում է նրանց հաղթահարել պասսիվությունը և իրենց գտնել գործունեության, որպես կանոն, ավելի ցածր որակավորմամբ ոլորտներում, որի պայմաններում հարմարումը ընթանում արժեքային ոլորտի վերակառուցմամբ՝ մասնավորապես մասնագիտական արժեքների տեղաշարժով: Հարմարման տեմպերը հաճախ չեն համընկնում այդ նույն փոփոխությունների տեմպերի հետ: Անձի փորձի անհամապատասխանությունը հատկապես նոր մասնագիտական դաշտի պահանջներին, դառնում է ավելի ակներև: Ըստ հեղինակի, այն է դրսևորվում անձի իմացական, արժեքանորմատիվային ոլորտի անհամապատասխանության մեջ [3;122-134]:

Մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում կարող ենք նկարագրել անձի հոգեբանական հարմարման երկու ձև.

- նախկին մասնագիտական կարգավիճակի հետ կապված արժեքներին ակտիվ հետևելու միտում, դրանցից չհրաժարվելու պայմաններում, նոր մասնագիտության հետ կապված պահանջների ժխտում, նախկին և նոր արժեքային համակարգի սուր բախում: Սա *հարմարման խառը ձևն* է: Այն բնորոշվում է որպես ռիգիդ, կոշտ հարմարում: Այս դեպքում առկա է արժեքային համակարգի մասնակի վերակառուցում:
- նոր ցածր կարգավիճակի պայմաններում անձի կողմից նոր աշխատանքային դաշտի և նրա հետ կապված արժեքների յուրացում: Այս տեսակը բնորոշվում է հարմարվողական արժեքների գերակայությամբ բարձակարգ արժեքների նկատմամբ: Սա բնորոշվում է որպես *ներքին հարմարում,* որը ենթադրում է արժեքային ավելի ամբողջական վերակառուցումներ:

Հաջող հարմարումը, հետևաբար, նաև հարմարվողականության բարձր մակարդակը, նոր մասնագիտական կարգավիճակի առկայության պայմաններում, ենթադրում է նախկին ու նոր արժեքների համատեղում, նոր արժեքային դաշտի

ակտիվ յուրացում և կիրառում: Նոր մասնագիտության պայմաններում բարձրակարգ արժեքների նշանակությունը որոշ դեպքերում չնայած պահպանվում է, բայց դրանց իրացումը անհնար է դառնում: Այս իրադրությունը առաջացնում է ֆրուստրացվածության վիճակ և արժեքային բախման պատճառ է դառնում, ինչն արտահայտվում է հարմարվողական կարողությունների ցածր մակարդակի մեջ: Հարմարվողականության ցածր մակարդակը նկատվում է անձանց մոտ, ում արժեքային ոլորտը բնորոշվում է նախկին և նոր արժեքների համագոյակցման բարդ գործընթացով, արժեքային բախմամբ, նոր արժեքների ձևական ընդունմամբ կամ դրանց ամբողջական ժխտմամբ:

Այսպիսով, արժեքաիմաստային ոլորտի և անձի հարմարողական հնարավորությունների միջև կապը փոխլրացնող, փոխպայմանավորող և գործառնական է: Արժեքային վերակառուցումները հետապնդում են հարմարվողական բնույթ՝ իրենցով պայմանավորելով ոչ մասագիտական գործունեության պայմաններում հարմարվողականության ցածր մակարդակը: Նոր, ոչ մասնագիտական կարգավիճակին տևական հոգեբանական հարմարումը, որն ընթանում է արժեքաիմաստային ոլորտի վերակառուցումների ձևով, հանգեցնում է անձի հարմարվողական կարողությունների թուլացմանը կամ սպառմանը:

ԳԼՈՒԽ 2

ԱՆՁԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՈԼՈՐՏԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

2.1 Անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխության հոգեբանական հիմնախնդիրը և արժեքային վերակառուցումները

Մարդկային հասարակությունը շարժուն կառույց է: Այն անընդհատ գտնվում է զարգացման և փոփոխման գործընթացում, ինչը բնորոշվում է հնի և նորի պայքարով, ճգնաժամերով, տեղաշարժերով, արժեքային վերակառուցումներով: Ճգնաժամը նորմալ երևույթ է հասարակական օրգանիզմի համար:

Նման սոցիալական վերափոխումների պայմաններում ծնունդ առած երևույթներից է մեծ քանակությամբ անձանց մասնագիտական կարգավիճակի փոփոխությունը՝ անկումը կամ կորուստը: Վ. Ա. Տոլոչեկը գտնում է, որ լրիվ այլ սոցիալական կարգավիճակ, ինքնագնահատական, ինքնավերաբերմունք, ինքնաընկալում ունեն մարդիկ, ովքեր աշխատում են իրենց ընտրած մասնագիտությամբ և մարդիկ, որոնց աշխատանքը չի համապատասխանում իրենց կրթությանը, կոչմանը, ինչպես նաև մարդիկ, որոնք ինչ-որ պատճառներով հարկադրված են լինել գործազուրկ: Աշխարհի շատ երկրներում՝ հատկապես զարգացող երկրներում, բավականին մեծաքանակ սոցիալական հանրություն են կազմում մարգինալ շերտերը, գործազուրկները, անօթևանները և այլ տարրեր: Մարդիկ, ովքեր երբևէ սոցիալական կառույցում գրավել են բարձր կարգավիճակ, այժմ սոցիալական վերակառուցումների հետևանքով հայտնվել են ավելի ցածր սոցիալական կարգավիճակում՝ զբաղվելով ոչ մասնագիտական գործունեությամբ կամ դարձել են կարգազուրկ՝ մարգինալ [79;107,215]: Նման անձանց հոգեկան իրողությունների հասկացումը սկսում ենք նրանց արժեքային ոլորտի վերակառուցումների հասկացումից, որոնք ավելի ամբողջական են արտահայտում մասնագիտական կարգավիճակի փոփոխության (տվյալ դեպքում անկման) հոգեբանական կողմը:

Անձը սոցիալական կյանքին «կցված է» իր սոցիալական կարգավիճակի միջոցով, որի մեջ ամբողջանում անձնայինը և սոցիալականը: Սոցիալական փոփոխվող պայմաններում՝ վարընթաց սոցիալական շարժունությամբ պայմանավորված մասնագիտական կարգավիճակի կտրուկ անկման դեպքում, անձի մոտ նկատվում է կյանքի, սոցիալական միջավայրի հետ կապված հարաբերության ներքին վերակառուցում, ինչը, մեր կարծիքով, արտահայտվում է արժեքային ոլորտի վերակառուցումների ձևով: Մինչև վերոհիշյալ վերակառուցումներին անդրադառնալը, նպատակահարմար է պարզաբանել «կարգավիճակ», «սոցիալական կարգավիճակ», «մասնագիտական կարգավիճակ», «սոցիալական դեր» հասկացությունները:

Դերադիրքային հիմնադրույթի հեղինակն է սոցիալական մարդաբան, սոցիոլոգ Ռ. Լինտոնը: Ա. Ի. Կրավչենկոն նշում է, որ Լինտոնի հասկացմամբ կարգավիճակը տեղն է, որը անհատը զբաղեցնում է տվյալ համակարգում: Նա գտնում էր, որ «կարգավիճակ» և «դեր» հասկացությունների միջոցով հասարակական համակարգերի հասկացումը կլինի ավելի հեշտ: Դերը իր մեջ ներառում է դիրքորոշումներ, արժեքներ, վարք, որոնք վերագրվում են հասարակության մեջ յուրաքանչյուրին, ով ունի որոշակի կարգավիճակ: Փաստորեն, դերի միջոցով յուրաքանչյուր անձ յուրացնում և իրացնում է որոշակի արտաքին արժեքներ: Դերը արտաքին վարք չէ, այն կարգավիճակի շարժուն կողմն է, այն, ինչը անհատը պետք է իրագործի, որպեսզի արդարացնի իր կողմից զբաղեցրած կարգավիճակը: Ա. Ի. Կրավչենկոն մեջբերում է Ֆ. Բեյթսի տեսակետը Ռ. Լինտոնի հայացքների վերաբերյալ, ով ճշմարտացիորեն նշում է, որ Լինտոնը համակարգված ձևով չի նկարագրել սոցիալական դիրքի և նրա տարրերի միջև հարաբերությունները: Սոցիալական կառույցի տեսության ևս մեկ թերությունն այն է, որ նա չկարողացավ գտնել միջոցներ նկարագրելու այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում ցանկացած սոցիալական դիրքում [43;57-67]:

Դերային տեսության շրջանակներում կարևոր է «դեր» և «դերային սպասում» հասկացությունների բնորոշումը, առանց որոնց սոցիալական կարգավիճակի հասկացումը կլինի թերի (Անդրեևա Գ. Մ., Բոգոմոլովա Ն. Ն., Պետրովսկյա Լ. Ա.): Մ. Դոյչը և Ռ. Կրաուսը, հաշվի առնելով դերերի բնորոշման զանազան մոտեցումներ և տեսակետներ, առանձնացնում են «դեր» հասկացության հետևյալ կողմերը.

1. դերը որպես հասարակության մեջ գոյություն ունեցող սպասումների համակարգ, որը վերաբերվում է անհատի վարքին, ով զբաղեցնում է որոշակի դիրք, նրա փոխազդեցությունը այլ անհատների հետ,
2. դերը որպես յուրահատուկ սպասումների համակարգ ուղղված սեփական անձին, ով զբաղեցնում է որոշակի դիրք. ինչպիսին է նա պատկերացնում սեփական վարքի մոդելը այլ անհատների հետ փոխազդեցության մեջ,
3. դերը որպես բաց, անհատի դիտվող վարք, ով սոցիալական կառույցում զբաղեցնում է որոշակի դիրք:

«Դերային սպասում» ասելով հասկանում ենք այն, ինչ սպասում են տվյալ դերը կատարողից: Չի կարելի ձևավորել անձի ուղղվածությունը, եթե չգիտես, թե ինչ են անձից սպասում առաջնային խմբերը, առանձին մարդիկ, հասարակությունը: Այսինքն՝ դերի նկատմամբ սպասման փոփոխությունը ենթադրում է անձի դերադիրքային վարքի փոփոխություն: Նման մոտեցումը ցույց է տալիս «կարգավիճակ» և «դեր» հասկացությունների փոխադարձ կապը, համակողմանիորեն բացահայտում է «սոցիալական դերի» բովանդակությունը: Քանի որ այս երկու հասկացությունները օրգանապես կապված են, իսկ դերը դիրքի շարժական կողմն է, ուստի կարգավիճակային ցանկացած փոփոխություն անխուսափելիորեն առաջացնում է դերային վարքում փոփոխություններ, ինչը ենթադրում է մարդուն բնորոշ հակազդումների, արժեքային համակարգի վերակառուցում [11;71]:

Սիմվոլիկ ինտերակցիոնիզմի դիրքերից անձը սոցիալական էակ է, որը հասարակությունից դուրս գոյություն չունի, ուստի այս ուղղությունը կարևորում է ոչ թե անձի արժեքները, այլ սոցիալական դերերը:

Վ. Վ. Նովիկովը, վերլուծելով Ջոն Միդի հայացքները, գտնում է, որ անձը նրա պատկերացմամբ գտնվում է հասարակության հետ անընդհատ փոխազդեցության մեջ, այդ պատճառով նրա վարքը խիստ փոփոխվող և դժվար կանխատեսելի է: Ուստի անձին հնարավոր է բնութագրել միայն «սոցիալական դեր» հասկացության միջոցով: Դերը, համաձայն սիմվոլիկ ինտերակցիոնիստների, չի ենթադրում գիտակցորեն դերասանական դերակատարում, այլ գործընթաց է, որում դրսևորվում է անձի էությունը: Մարդու դերային վարքը շրջապատի փոխազդեցությունից դուրս գոյություն

չունի: Որքան լավ է նա խաղում, այնքան ավելի լավ է հարմարված կյանքի բեմում: Միդը անձի կառուցվածքում առանձնացնում է երեք տարր. առաջին՝ «ես» (I), որը իմպուլսիվ, ստեղծագործական, շարժիչ սկիզբ է: Երկրորդ՝ «ինձ» (me)՝ ինչպիսին ինձ պետք է տեսնեն ուրիշները, սա ռեֆլեքսիվ, նորմատիվ ես-ն է, ներքին վերահսկողություն է՝ հիմնված նշանակալի մարդկանց և առաջին հերթին «ընդհանրացված այլոց» սպասումների և պահանջների վրա: Երրորդ՝ «ինքնություն» (self), որն իրենից ներկայացնում է իմպուլսիվ և ռեֆլեքսիվ ես-երի համագումար [50]:

Ջ. Միդից հետո ժամանակակից ինտերակցիոնիստները հասարակության մեջ փոփոխությունները տեսնում են անձի ստեղծագործական սկզբի մեջ, քանի որ նրանք վերացարկվում են պատմական և սոցիալ-տնտեսական օրինաչափություններից, ապա հասարակության մեջ փոփոխությունների պատճառը նրանց կարծիքով պետք է փնտրել անձի կառուցվածքի յուրահատկությունների մեջ: Այդ պատահական փոփոխությունները դառնում են վարքի նոր շաբլոնների չափանմուշ և հանգեցնում են հասարակության մեջ համապատասխան փոփոխությունների: Հետևաբար, հասարակության մեջ փոփոխությունները կրում են պատահական բնույթ և չեն ենթարկվում ինչ-որ օրինաչափությունների: Նրանք կարգավիճակը հասկանում են ոչ թե իբրև անհատի օբյեկտիվ վիճակ որոշակի սոցիալական հարաբերությունների համակարգում, այլ, առաջին հերթին, իբրև սուբյեկտիվ կատեգորիա, դերային սպասումների ամբողջություն, որը բաժանվում է անհատի սպասում-իրավունքների և սպասում-պարտականությունների՝ այս կամ այն դերի կատարման դեպքում: Ինտերակցիոնիստների կարծիքով ինտերակցիայի ընթացքում առաջացած սոցիալական դիրքերը չեն կրում կայուն բնույթ, այդ պատճառով անձի վարքը հնարավոր չէ ինչ-որ ձևով մեկնաբանել և կանխատեսել: Սիմվոլիկ ինտերակցոնիզմի նման մոտեցումը դերադիրքային վարքի նկատմամբ հաշվի չի առնում այն հանգամանքը, որ յուրաքանչյուր մարդու անձ յուրահատուկ, իրեն բնորոշ կենսափորձի, արժեքային համակարգի, սոցիալական կարգավիճակների և դերերի հարաբերականորեն կայուն ամբողջություն է և հասարակական փոփոխությունների բխեցումը նրա կառուցվածքից, ըստ էության, ճիշտ չէ: Անտեսվում են հասարակական փոփոխությունների օբյեկտիվ օրինաչափությունները՝ դրանք միշտ չէ որ

անտրամաբանական ու պատահական են [58;93-96]: Նման մոտեցումը մարդու անձը բնորոշում է իբրև ճկուն համակարգ՝ ենթադրելով, որ նա անընդհատ փոխում է իր դիրքերը ինտերակցիայի ընթացքում, բայց հաշվի չի առնվում այն փաստը, որ սեփական սոցիալական կարգավիճակի սուբյեկտիվ հոգեբանական բնութագրերը անձը ներքնայնացնում է և անընդհատ փոփոխությունները անձին կարող են դարձնել անկայուն, ապակողմնորոշված, ինչը սպառնալիք է անձի ամբողջականությանը և կայունությանը: Յուրաքանչյուր կարգավիճակային փոփոխություն՝ հոգեբանական տեսանկյունից ենթադրում է անձի ներհոգեկան բովանդակության վերակառուցումներ:

Սիմվոլիկ ինտերակցիոնիզմի մեկ այլ ներկայացուցիչ Տ. Շիբուտանին անձի սոցիալական կարգավիճակը դիտարկում է իբրև սոցիալական գործընթաց: Կայուն հասարակություններում կարգավիճակը հստակ որոշված է, իսկ փոփոխվող հասարակություններում ավելի քիչ է համաձայնությունը տարբեր դիրքերի, մարդկանց իրավունքների ու պարտականությունների միջև, իսկ տեղաշարժի ուղիները որոշված չեն: Կարգավիճակը լինելով մեկ անգամ հաստատված՝ մնում է հարաբերականորեն մշտական: Նա չի բացառում կարգավիճակների փոփոխության շարժընթացը փոփոխվող սոցիալական պայմաններում և նշում է, որ կարգավիճակը կարող է բարձրանալ՝ դանդաղ վերընթաց սոցիալական շարժունության հետևանքով, ինչպես նաև իջնել, երբ առկա է վարընթաց սոցիալական շարժություն: Կայուն կարգավիճակն ապահովում է նորմալ փոխազդեցությունը, այն մարդու «սոցիալական դեմքն» է, ինչը հեշտացնում է միջանձնային ընկալումն ու հարաբերությունները: Ես հիմադրույթի զարգացումը հեշտանում է այն սոցիալական աշխարհներում, որտեղ հստակ հաստատված են կարգավիճակների համակարգը. այստեղ յուրաքանչյուրը գիտի, ինչ վարքային շաբլոններ և անձնային գծեր է պահանջում այս կամ այն դիրքը: Նա գիտի որտեղ է ապրում, ինչ է սիրում, ինչ մասնագիտություն ունի և այլն: Առանց անձնային որոշակիության գոյություն չունի հասարակություն, որտեղ մարդը կունենա որոշակի սոցիալական կարգավիճակ: Ամեն անգամ, երբ փոխվում է մարդու սոցիալական կարգավիճակը, փոխոխության է ենթարկվում անձի վարքային շաբլոնները, նրա ես հիմադրույթը, հետևաբար, արժեքային համակարգում ևս տեղ են գտնում վերակառուցումներ [86;180-182,200-202]: Տ. Շիբուտանին սոցիալական

կարգավիճակի հասկացումը բխեցնում է ինտերակցիոնիստական ուղղության դիրքերից՝ դիտարկելով այն միջանձնային հարաբերությունների ենթատեքստում: Այս դեպքում կարևորվում է ոչ միայն մարդու պատկերացումները սեփական կարգավիճակի մասին, այլ շրջապատող մարդկանց, հասարակության սպասումները:

Ի. Ս. Կոնը անձի և հասարակության փոխազդեցությունը իմաստավորում է սոցիալական դերերի եզրույթներով: Նա գտնում է, որ անձին հասկանալու համար պետք սկսել հասարակությունից: Նա կարևորում է անձի հոգեկերտվածքում ինչպես հասարակականը, այնպես էլ անձնայինը: «Սոցիալական դիրքը» (դրություն, բայց ոչ կարգավիճակ) անհատի տեղն է սոցիալական կառուցվածքում: Սա իհարկե, սոցիոլոգիական բնորոշում է: Հասարակական հարաբերությունների բարդության պատճառով յուրաքանչյուր անհատ զբաղեցնում է բազմաթիվ դիրքեր (ուսուցիչ՝ մասնագիտական դիրք, հայր՝ ընտանեկան դիրք և այլն): Նա նշում է, որ անձը, որը զբաղեցնում է որոշակի դիրք, կատարում է որոշակի սոցիալական դեր: Դերը գործառույթ, նորմատիվորեն հաստատված վարքի նմուշ է, որը սպասվում է յուրաքանչյուրից, ով զբաղեցնում է տվյալ դիրքը: Եթե մարդը երկար ժամանակ որոշակի դեր է կատարում, ապա այն մեծ ազդեցություն է ունենում նրա անձի որակների (արժեքային կողմնորոշումներ, գործունեության դրդապատճառներ, նրա վերաբերմունքը այլ մարդկանց նկատմամբ) վրա: Ի. Ս. Կոնը գտնում է, որ սոցիալական դերը իրենով չի որոշում անձի վարքը: Դրա համար այն պետք է յուրացվի և ներքնայնացվի: Ներքնայնացված դերը անհատի կողմից սեփական դիրքի ներքին սահմանումն է և նրա վերաբերմունքն այդ դիրքի և դրանից բխող պարտականությունների նկատմամբ: «Անձի արժեքային կողմնորոշումները և նրա դերերը դերերի և արժեքների աստիճանակարգի մեխանիկական պատճենը չեն, որոնք գոյություն ունեն հասարարական գիտակցության մեջ: Տարբեր դերերի տեսակարար կշիռը տարբեր է տարբեր մարդկանց համար և տարատեսակ իրադրություններում: Կարևոր է սեփական դերի նկատմամբ անձի վերաբերմունքը, դերի բնորոշումը և ամենակարևորը՝ սեփական դերի հետ նույնացման աստիճանը»: Անձի վրա առավել մեծ ազդեցություն է ունենում մասնագիտական դիրքը [42;63-77,81]: Նման մոտեցումը բացահայտում է կարգավիճակի ավելի ամբողջական հասկացումը, նրանում

հոգեբանականի և սոցիալականի միահյուսվածությունը: Մարդու վարքը ճկուն է և ենթադրում է կյանքի տարբեր պայմաններում դիրքերի փոփոխություն: Այնուամենայնիվ, կարգավիճակով պայմանավորված դերային վարքը ձևական ու սառեցված չէ, այն մեծապես կապված է անձի կենսափորձի, նրա արժեքային կողմնորոշումների և անձնային առանձնահատկությունների հետ:

Սոցիոլոգ Մ. Բ. Գլոտնովը նշում է, որ հասարակության շերտավորման մոդելում ներառված մյուս ցուցիչների կողքին կարևորվում է անձի սոցիալական, մասնավորապես, մասնագիտական կարգավիճակը: Նա գտնում է, որ ժամանակակից հասարակության սոցիալական շերտավորման պատկերի մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է մարդկանց սոցիալական կարգավիճաների բազմագործոնային վերլուծություն [23]: Ուստի շերտավորման տեսության դիրքերից սոցիալական կարգավիճակի մասին տեսական պատերացումները արդի ժամանակաշրջանում կարևոր են հատկապես մասնագիտական կարգավիճակների զանազան տեղաշարժերը նկարագրելու գործում:

Ժամանակակից սոցիոլոգիայում հետաքրքրություն է ներկայացնում Ի. Էյդմանի առաջարկած սոցիալական կարգավիճակի մոդելը, հասարակության կառուցվածքի հիմնադրույթը՝ պատմական զարգացման մեջ: Սոցիալական համակարգի հիմքում, ըստ նրա, ընկած է կազմակերպված անհավասարության մոդելը կամ սոցիալական աստիճանակարգի ձևավորումը: Յուրաքանչյուր հասարակության մեջ գոյություն ունեն պահանջների որոշակի համակարգ, որոնց միջոցով որոշվում է սոցիալական աստիճանակարգում անձի տեղը: Մարդու սոցիալական գործունեությունը ուսումնասիրելիս նա համատեղում է երեք մոտեցումներ՝ հոգեբանական, փիլիսոփայական, սոցիոլոգիական: Անձի սոցիալական կյանքը նման հասկացման շրջանակներում որոշվում է գենետիկորեն նրան հատուկ, բնազդորեն կանխորոշված առաջնային արժեքների ձեռք բերման դրդապատճառայնությամբ: Ընդ որում՝ դրան հասնելու համար մարդը սոցիալական կյանքում ձգտում է սոցիալական կարգավիճակի, բարձր դիրքի: Նա առանձնացնում է սոցիալական կարգավիճակի երեք բաղադրիչ՝ սպառման, ազատության-իշխանության, հեղինակության: Սոցիալական կարգավիճակը որոշվում է այս երեք ոլորտներում անձի ունեցած դիրքով:

Նրա կարծիքով, անհատի և հասարակության շահերը կարող են համաձայնեցված լինել, միայն առաջնային արժեքների փոխշահավետ փոխանցման դեպքում: Ի. Էյդմանը ներմուծում է «սոցիալական կարգավիճակի պոտենցյալ» հասկացությունը՝ դրա մեջ ներառելով անձնային և սոցիալական մակրոբնութագրերը: Սոցիալական պոտենցյալը բնութագրերի ամբողջություն է, որը փոխանցվում է ժառանգաբար, ավանդույթի ուժով՝ սեփականություն, կաստա և այլն: Շարժուն պոտենցյալը բնութագրում է հասարակության պահանջներին անհատի ռեսուրսների համապատասխանությամբ: Սա վերաբերվում է մասնագիտական գործունեությանը: Այս պոտենցյալի մեջ մտնում են սոցիալական աճի, անձնային, կամային ռեսուրսներ՝ ուղղված սոցիալական կարգավիճակի բարձրացմանը: Շարժուն պոտենցյալը որոշվում է այն հանգամանքով, թե որքանով է անձը պատրաստ հրաժարվել իր կենսական ռեսուրսներից՝ սոցիալական հավակնությունների ազդեցությամբ, հասարակության մեջ բարձր դիրք ունենալու համար: Գործառնական պոտենցյալը բնութագրում է անձի համապատասխանությունը այս կամ այն տեսակի մասնագիտական գործունեություն իրականացնելու նկատմամբ սոցիալական համակարգի պահանջներին: Այն անհատից պահանջում է գիտելիքներ, մասնագիտական կրթություն [90;2-18,33-57]: Այսինքն՝ անձի մոտ պետք է առկա լինի որոշ անձնային որակներ սոցիալական կարգավիճակի «մրցավազքում» հաղթելու համար: Սոցիալական կայուն համակարգի դեպքում սոցիալական կարգավիճակի պոտենցյալները չեն փոխվում: Նա ընդունում է, որ սոցիալական տեղաշարժերի ժամանակ սոցիալական պոտենցյալներից յուրաքանչյուրը կատարում է իր դերը: Սոցիալական կարգավիճակի նման կառուցվածքային նկարագրությունը չի բացահայտում դրա հոգեբանական կողմը, բայց արժեքավոր է մասնագիտական կարգավիճակի փոփոխության շարժընթացը հասկանալու առումով:

Այսպիսով, սոցիոլոգիայում սոցիալական կարգավիճակը անդեմ է, նրանում անտեսվում են կարգավիճակային փոփոխության դեպքում մարդու հոգեբանական հարմարման, արժեքաիմաստային ոլորտի փոփոխության հարցերը: Հոգեբանության մեջ, այնուամենայնիվ, կարևորվում է սոցիալական համակարգի վերափոխումների, հասարակության զարգացման օբյեկտիվ օրինաչափությունների մասին տեղեկատվությունը, որը տրամադրում է սոցիոլոգիան: Մասնավորապես

մասնագիտական կարգավիճակի փոփոխությունների շարժընթացը և դրա հետ կապված մարդու անձի արժեքային ոլորտի վերակառուցումները ուսումնասիրելիս կարևոր է սոցիոլոգիական և հոգեբանական մոտեցումների համալիր կիրառումը:

Չնայած «սոցիալական կարգավիճակ» հասկացությունը բավականին ընդարձակ է, բայց մեզ համար առավել հետաքրքրություն է ներկայացնում հասկացության հոգեբանական կողմը: Խորհրդային հոգեբանության մեջ՝ Լ. Ս. Ռուբինշտեյնի, Ա. Ն. Լեոնտևի, Վ. Ն. Մյասիշչևի, Ա. Ե. Շերոիզիայի, Է. Վ. Իլյենկովի աշխատանքներում ներկայացված են սոցիալական դերի մասին հատակտոր պատկերացումներ: Սոցիալական կարգավիճակի մասին պատկերացումը առավելագույնս մշակված է Բ. Գ. Անանևի կողմից: Նա հատկապես կարևորում է անձի կարգավիճակը, կամ դիրքը հասարակության մեջ (տնտեսական, քաղաքական, իրավական և այլն), հասարակական գործառնությունները, որոնք իրագործվում են անձի կողմից տարբեր դերերի ձևով՝ կախված տվյալ դիրքից և պատմափուլից, նրա գործունեության և վարքի դրդապատճառայնությունը՝ կախված նպատակներից և արժեքներից, որոնք կազմում են նրա ներաշխարհը, աշխարհայացքը և շրջապատող աշխարհի նկատմամբ անձի հարաբերությունների ողջ համագումարը, բնավորությունը և հակումները: Ըստ հեղինակի՝ սուբյեկտի դիրքը բարդ հարաբերությունների համակագ է, որում ներառվում է ոչ միայն աշխատանքի, ինքն իր, այլ մարդկանց և խմբերի նկատմամբ անձի վերաբերմունքը, դիրքորոշումներն և դրդապատճառները նաև արժեքներն և նպատակները, որոնցով նա ղեկավարվում է իր գործունեության ընթացքում [10;72,252,262]: Իսկ անձի արժեքային կողմնորոշումները և կարգավիճակի գործառույթային կողմը՝ սոցիալական դերերը, փոխադարձ կապվածություն ունեն՝ մեկի շարժընթացը կախված է մյուսից:

Ընդհանրապես «կարգավիճակ» և «դիրք» հասկացությունները հաճախ օգտագործում են իբրև հոմանիշներ: Ս. Ա. Սեդրակյանը նշում է, որ «դիրք» ասելով պետք է հասկանալ սոցիալական խմբում անձի ազդեցիկության աստիճանը: Կարգավիճակը դիրքի խմբային գնահատականն է [6;28-31]: Կարգավիճակը անձի իրական վիճակն է ներխմբային հարաբերություններում, դրա հեղինակության մակարդակը: Սահմանումից պարզ է դառնում, որ դիրքը ավելի պաշտոնական է, իսկ

կարգավիճակում կարևորվում է հոգեբանական կողմը՝ խմբային գնահատականը, ուրիշների կողմից գնահատված և ընդունված լինելը (Ռ. Ի. Մոկշանցև, Ա. Վ. Մոկշանցևա): Կարգավիճակը միաժամանակ ներառում է իր մեջ գծեր, որոնք օբյեկտիվորեն բնորոշ են անհատին և այն, թե ինչպես են շրջապատողները ընկալում անձի կողմից սեփական գործառույթների կատարումը: Անհատի կարգավիճակում առկա է խմբի կարգավիճակը, նրա տեղը լայն սոցիալական ենթատեքստում, հետևաբար, անհատի կարգավիճակը մեկուսի, առանձնացված երևույթ չէ [56;57]: Այն սուբյեկտիվ ընկալման և խմբային գնահատականի արդյունք է և կենսագործունեության ընթացքում դառնում անձի է համար կենսական արժեք:

Անձի սոցիալական կարգավիճակի և նրա սոցիալական ակտիվության վերաբերյալ ավելի ամբողջական պատկերացում է զարգացնում Ե. Ա. Անուֆրիևը: Հեղինակը սահմանազատում է «սոցիալական դիրք» և «սոցիալական կարգավիճակ» հասկացությունները, գտնելով, որ առաջինը նույնացվում է անձի մասնագիտության, պաշտոնի հետ: Նա ընդգծում է «դիրք» հասկացության ձևականությունը, գտնելով, որ այն արտահայտում է անձի պատկանելությունը այս կամ հանրությանը: Այս դեպքում այն չի բացահայտում այդ հասկացության գործառույթները, հատկապես, եթե դիտարկվում է այլ հասկացությունների հետ կապի մեջ: Սոցիալական դերը ունի գործառույթային իմաստ: Այն անձի տեղն է հասարակական հարաբերությունների համակարգում և նրա կողմից բնորոշվող գործառնությունների ամբողջությունը: Դերային վարքին առաջադրվում են պահանջներ, որոնք անձն իրականացնում է ոչ թե ինքնաբերաբար, այլ գիտակցաբար, քանի ու նա գիտակցող և մտածող էակ է: Դերային վարքի նման հասկացումը ընդգծում է դրա հոգեբանական կողմի բարդությունն ու վարքային դրսևորումների բազմազանությունը: «Սոցիալական հեղինակություն» (պրեստիժ) հասկացությունը՝ ի տարբերություն սոցիալական դերի և դիրքի, որոնք գործառույթային հասկացություններ են, գնահատողական կամ արժեքային է, այսինքն՝ արտահայտում է այն, թե ինչպես է գնահատում մարդու գործունեությունը հասարակությունը, խումբը և ինքը՝ մարդը: Ե. Ա. Անուֆրիևի բնորոշմամբ «սոցիալական կարգավիճակ» հասկացության մեջ մտնում են «սոցիալական դեր» և «սոցիալական հեղինակություն» հասկացությունները

[13;168,174-178]: Փաստորեն, այն իր մեջ ամբողջացնում է գործառույթային (ինչպես գործել), այնպես էլ գնահատողական (ինչպես է գնահատվում այլ մարդկանց կողմից) կողմերը: Անձը որոշակի սոցիալական կարգավիճակի հասնում է աշխատանքի միջոցով, ընդ որում՝ այն «նվաճվում է»: Նա ձգտում է ոչ միայն կարգավիճակ ձեռք բերել, այլ նաև պահպանել ձեռք բերած կարգավիճակը:

Վ. Տ. Կրիսկոն գտնում է, որ զարգացման ընթացքում մարդուն նպատակահարմար է պարբերաբար «փոխել» իր կարգավիճակները, ինչը նրան հնարավորություն կընձեռնի ձեռք բերել մեծ սոցիալական ճկունություն, մշակելով միջանձնային հարաբերությունների ավելի հարմարվողական և սոցիալական վարքի բազմազան ձևեր, որոնք կապահովեն փոքր խմբում կոնֆլիկտայնության ցածր մակարդակը [46;163]: Նման մոտեցումը իրեն չի արդարացնում այն դեպքում, երբ խոսքը գնում է անձի գլխավոր՝ մասնագիտական կարգավիճակի փոփոխություն մասին՝ վարընթաց շարժունության արդյունքում, քանի որ կարող է հանգեցնել անձի հոգեկանում տարաբնույթ այլափոխումների, որոնց վերջնական արդյունքը հաճախ անձի չհարմարվածությունն է կյանքի և աշխատանքի նոր պայմաններին: Սոցիալական կարգավիճակը հարաբերականորեն կայուն, բայց միևնույն ժամանակ շարժուն կառույց է: Այն կարող է բարձրանալ, եթե սոցիալական հանրույթը գնահատում է սուբյեկտին աճի շարժընթացում կամ իջնել, եթե տեղ է գտնում սոցիալական այլափոխման շարժընթաց: Իհարկե, նման պայմաններում անձը պետք է վերակառուցի սեփական վարքը՝ փորձելով հարմարվել նոր պայմաններին: Որքան էլ ցածր լինի կարգավիճակը, միևնույն է այն կարևոր է անձի կենսագործունեության համար:

«Կարգավիճակ» հասկացությունը, ինչպես տեսնում ենք, բավականին լայն, ընդգրկուն հասկացություն է, ուստի կարևոր է տարբերակել նաև դրա տեսակները: Այսպես, տարբերում են սոցիալական և անձնային կարգավիճակներ: Մեծ հանրույթի շրջանակներում՝ մասնագիտություն, դասակարգ, սեռ, տարիք, կրոն և այլն, սուբյեկտի դրությունը բնորոշում են «սոցիալական կարգավիճակ» հասկացությամբ, իսկ փոքր հանրույթի շրջանակներում՝ «անձնային կարգավիճակ» հասկացությամբ (Մ. Ս. Եմելյանով): Առհասարակ տարբերում են կարգավիճակի երկու տեսակ՝ վերագրված, որը պայմանավորված է անձի առանձնահատկություններով՝ սեռային, տարիքային և

ռասսայական, մասամբ էլ՝ էթնիկական: Ձեռքբերված (նվաճած) կարգավիճակը, ձեռք են բերվում անձի գիտելիքների, աշխատանքի, ջանքերի շնորհիվ [30;58,59]: Այս տեսակի մեջ ներառվում է անձի սոցիալական կարգավիճակը, այն, ինչը որոշում է սոցիալական կյանքում նրա տեղը: Առաջին դեպքում անձը սոցիալական կարգավիճակը ձեռք է բերում առանց ջանքերի գործադրման, հանգամանքների բերումով, դրա նկատմամբ չունի վերահսկողություն՝ անկախ իր կամքից: Երկրորդ դեպքում՝ անձը իր կարգավիճակը ձեռք է բերում անձնական ջանքերի գործադրմամբ, այս կամ այն սոցիալական խմբերի միջոցով: Վերջին շրջանում լայն տարածում է գտել «մարգինալ կարգավիճակ» հասկացությունը, որը անձի զբաղեցրած դիրքն է հասարակության (հանրույթի, խմբի, կազմակերպության և այլն) կառուցվածքներում և բնորոշում է անձի դրության երկակիությունը, անորոշությունը կամ ընդհանրապես կարգազուրկ լինելը: Ըստ Ռ. Մերթոնի, ձեռք բերված կարգավիճակը ուղղակիորեն կապված է անձի պաշտոնական կարգավիճակի հետ, ինչին անձը հասել է մասնագիտական գործունեության ընթացքում: Ակնհայտ է, որ մասնագիտական կարգավիճակը ձեռքբերովի (նվաճվող) կարգավիճակ է, որը որոշվում է անհատական ընդունակություններով, ունակություններով, որակավորմամբ և արժանիքներով, ինչին անձը հասնում է մասնագիտական որոշակի գործունեությամբ զբաղվելով և որոշակի մասնագիտական հանրույթի մեջ ընդգրկված լինելու շնորհիվ [100;15]:

Մասնագիտական կարգավիճակի հարցը ավելի հաճախ քննարկվում է ժամանակակից սոցիոլոգիայում, հատկապես շերտավորման տեսության շրջանակներում: Գտնում են, որ հասարակության մեջ սոցիալական շերտավորումը անհրաժեշտ է, քանի որ իրականացնում է հասարակության գլխավոր խնդիրը՝ այն է անհատների բաշխումը ըստ խելամիտ (ռացիոնալ) դիրքերի, իսկ խրախուսանքը խթանում է նրանց լավ կատարել իրենց դերը: Բարձր մասնագիտական կարգավիճակ գրավելու կողմնորոշումը խթանում է անհատին դեպի սոցիալական և մասնագիտական ակտիվություն, հետևաբար, կարող ենք ենթադրել, որ մասնագետի կողմից ոչ մասնագիտական, ցածր որակավորմամբ գործունեությամբ զբաղվելը կասեցնում է անձի սոցիալական և մասնագիտական ակտիվությունը: Ընդ որում՝ կարգավիճակի փոփոխությունը ունի ոչ միայն սուբյեկտիվ պայմանավորվածություն,

այն է՝ անձի կողմից կամավոր մասնագիտական վերակողմնորոշումը, այլ օբյեկտիվ պայմանավորվածություն, ինչը ցույց է տալիս, որ մասնագիտական կարգավիճակի փոփոխությունը կարող է կապված լինել հասարակության մեջ տեղ գտնող գործընթացների հետ և այս դեպքում այն կրում է հարկադիր բնույթ:

Մասնագիտական կարգավիճակը մեկուսի հասկացություն չէ: Կարգավիճակին առաջադրվող պահանջները մեծապես արտահայտում են հասարակության մեջ տվյալ ժամանակահատվածում գերակայող արժեքային դաշտը, նախապատվությունները: Ուստի պատահական չէ, որ արտաքին արժեքային դաշտի փոփոխությունը, որը հանգեցնում է մասնագիտական կարգավիճակի փոփոխության, իր արտահայտությունն է գտնում անձի անհատական արժեքային ոլորտում: Վ. Ա. Ցվիկը նշում է, որ մասնագիտական կարգավիճակը մատնանշում է տեղը մասնագիտական հարաբերությունների սոցիալական միահյուսվածության մեջ, որի հետ կապվում են որոշակի հասարակական դերային սպասումներ: Անձը արժեքների կրող է, ուստի զբաղեցնելով որոշակի մասնագիտական կարգավիճակ, նա յուրացնում է տվյալ մասնագիտական կարգավիճակին համապատասխան արժեքները: Նա կարևորում է մասնագիտության հեղինակությունը: Անհատի տեղը մասնագիտական խմբում կախված է այն բանից, թե որքանով է կատարվող գործունեությունը թույլ տալիս իրացնել որոշակի արժեքներ, պատկերացումներն այն մասին, թե ինչն է ցանկալի: Հիմնվելով ներմասնագիտական և միջմասնագիտական շերտավորման տարբերակման վրա՝ հեղինակը տարբերակում է «սոցիալ-մասնագիտական» և «անձնային-մասնագիտական կարգավիճակ» հասկացությունները**:** Սոցիալ-մասնագիտական կարգավիճակը նշանակում է որոշակի մասնագիտական խմբի տեղը հասարակության մասնագիտական կառուցվածքում, ինչպես նաև որոշում է այդ դերի գնահատականը և ինքնագնահատականը, որը խաղում է տվյալ մասնագիտական խումբը մասնագիտական հարաբերությունների համակարգում: Անձնային-մասնագիտական կարգավիճակը բնութագրվում է անհատի ներգրավվածության աստիճանով մասնագիտական խմբի հարաբերությունների մեջ, որակավորման և վարպետության աստիճանով, մասնագիտական միջավայրում ընդունված լինելու, մասնագիտական ինքնագիտակցության աստիճանով: Կարելի է նշել, որ անհատի

անձնային-մասնագիտական կարգավիճակը որոշվում է պրոֆեսիոնալիզմի զարգացման մակարդակով: Այն ներխմբային շերտավորման չափորոշիչ է [84;47,48]:

Փաստորեն, հասարակության մեջ անձի դիրքը որոշում է գլխավոր կարգավիճակը, որի հիմքում ընկած է անձի մասնագիտությունը, պաշտոնը: Մասնագիտությունը կարգավիճակային համագումարային ցուցանիշ է: Աշխատանքի բնույթը հաճախ որոշում է այնպիսի «արժեքավոր ռեսուրսներ», ինչպիսիք են հարստությունը, հեղինակությունը և իշխանությունը: Պարզ է, որ մասնագիտությունը անձից պահանջում է որոշակի նախապատրաստություն և անձի գոյատևման միջոցների հիմնական աղբյուրն է: Ե. Ա. Կլիմովը մասնագիտությունը սահմանում է իբրև հանրությանն անհրաժեշտ, սոցիալակապես արժեքավոր աշխատանքի բաժանման և մարդու ֆիզիկական և հոգևոր ուժերի ներդրման վայր, որտեղ մարդն իր աշխատանքի դիմաց ստանում է անձի զարգացման և գոյատևման անհրաժեշտ միջոցներ [38;12]: Նման սահմանումը ներառում է մասնագիտության երկու կողմերը. նյութական՝ փողի և եկամուտի ձևով և հոգեբանական՝ զարգացումը, ինքնահիրացումը, մասնագիտության մեջ մասնագիտական որակների և հատկությունների զարգացումը: Ընդ որում՝ անձն իր մասնագիտության պահանջների մեխանիկական, անդեմ կրողը չէ: Ա. Գ. Ասմոլովը, նշում է. «մարդու անհատականությունը ավելի լայն է իր մասնագիտությունից: Եթե անհատականությունը բազմակողմանի է, ապա առաջանում է մի բնորոշ երևույթ. նրան նույնիսկ ըստ մասնագիտական ցուցանիշի չի հաջողվում տեղավորել մասնագիտության նեղ շրջանակների մեջ» [14;204]:

Ըստ Ռ. Ա. Սարգսյանի, «մասնագիտություն» եզրույթը ավելի շատ գործածվում է մասնագիտական բարձրաստիճան գործունեության նեղ շրջանակներում, իսկ գործունեության այլ տեսակները վերաբերում են աշխատանքի տեսակին կամ զբաղմունքին: Հեղինակի կարծիքով, մասնագիտությունն ավելի լայն հասկացություն է՝ իր տարբերակիչ նշաններով և միավորում է նմանատիպ գործունեության տեսակները [5;91-96]: Հետևաբար, անձին զարգացման, մասնագիտական ինքնահիրացման ավելի լայն հնարավորություններ ընձեռնում է մասնագիտական գործունեությունը: «Մասնագիտական զարգացումը» հոգեկանի փոփոխությունն է մասնագիտական, կրթական, աշխատանքային և մասնագիտական գործունեության յուրացման

գործընթացում: Այն արտացոլում է մարդու և մասնագիտության փոխազդեցության էությունը և դիտվում է իբրև անձի հոգեկանի փոփոխման հիմնային գործընթաց: Այդ է պատճառը, որ մասնագիտական գործունեությունից դեպի ոչ մասնագիտական գործունեության անցման հոգեբանական կողմի ուսումնասիրությունը արդիական հիմնախնդիր է:

Այնուամենայնիվ, կարևոր է այն, թե որքանով է անձը ընդունում մասնագիտական կարգավիճակը որպես կենսական արժեք, ինչն է նրան սոցիալապես ինքնորոշում: Քանզի դրանով է պայմանավորված նրա արժեքային ոլորտի վերակառուցումների միտումները: Միջին տարիքի անձի արժեքային ոլորտում, ով անցել է մասնագիտական որոշակի ուղի, ամրակայված են մասնագիտական արժեքներ, որոնց շարժընթացը մասնագիտական կարգավիճակի անկման պայմաններում դեռևս բավարար ուսումնասիրված չէ:

Այսպիսով, անձի սոցիալական կարգավիճակը, հասարակության մեջ անձի գլխավոր դիրքն է, որի հիմքում ընկած է պաշտոնը, մասնագիտությունը: Մարդու կենսագործունեության կարևոր կողմն է մարդու մասնագիտական գործունեությունը, այն ապահովում անձի ամբողջական, մասնավորապես մասնագիտական զարգացումը:

2.2 Անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմանների հոգեբանական վերլուծությունը

«Մասնագիտական կարգավիճակ» հասկացությունը անձի ելակետային բնութագրերից, իսկ մանսագիտական ուղու որոշակի հատվածում կարող է դառնալ անձի համար առաջնային արժեք: Կախված մասնագիտական կարգավիճակի հետ անձի նույնացման աստիճանից՝ մասնագիտական արժեքները կարող են գերակայել տվյալ անձի արժեքային ոլորտում՝ պայմանավորել նրա վարքի և գործունեության առանձնահատկությունները: Մ. Ա. Ռատնիկովան նշում է, որ անձի մասնագիտական կյանքը ժամանակակից պայմաններում աչքի է ընկնում բարձր շարժունությամբ՝ կապված նոր մասնագիտությունների առաջացման և գործունեության ավանդական տեսակներում աշխատանքի բովանդակության բարդացման հետ [66]: Գործազրկությունը շոշափում է տարբեր մասնագիտական խմբերի

ներկայացուցիչներին, ինչը սուբյեկտի մոտ առաջացնում է խնդրի օպտիմալ լուծման եղանակի որոնման և արդյունավետ ընտրության անհրաժեշտություն:

Ռուս գիտական գրականության մեջ մասնագիտական կարգավիճակի փոփոխության հիմնախնդիրը ներկայացված են սոցիոլոգիայում, մասնավորապես, շերտավորման տեսության շրջանակներում: Սոցիոլոգիական հետազոտություններում՝ Տ. Ի. Զասլավսկայայի, Ս. Լ. Դանովսկիյի, Վ. Ն. Շուբկինի, Վ. Ա. Յադովի, Ա. Գ. Զդրավոմիսլևի, Մ. Ն. Ռուտկևիչի, Ֆ. Ռ. Ֆիլիպովի կողմից շեշտադրվում են մասնագիտության փոփոխության օբյեկտիվ գործոնները. գիտատեխնիկական առաջընթացի ազդեցությունը, սոցիալ-տնտեսական պատճառները:

Ժամանակակից հասարակության պայմաններում, մասնագիտության փոփոխության և դրանով պայմանավորված արժեքային տեղաշարժերը նկարագրելու համար, անհրաժեշտ է բացահայտել այն պայմանների համախումբը, որոնք նպաստում են մասնագիտական կարգավիճակի փոփոխությանը:

- Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները և դրանց ուղեկցող հոգեբանական երևույթները:

Մ. Վ. Զակովորոտնայան բազմակողմանի վերլուծության է ենթարկում ժամանակակից պայմաններում նույնության ճգնաժամի խնդիրը: Նա նկատում է, որ գոյություն ունի խզում սոցիալական փոխակերպումների և դրանք ընդունելու հասարակական պատրաստակամության միջև: Փոփոխվող պայմաններում առաջացած նույնության ճգնաժամի ուղեկիցներն են դառնում դեպրեսիան և ապաթիան, որոնք արտահայտվում են դաժանության, անօգնականության, իրական աշխարհից փախչելու ձգտման մեջ, ավելորդ իշխանատենչության, դրսևորումներում, խորհրդապաշտության, ժխտողականության տարբեր ձևերում, ալկոհոլամոլության, թմրանյութերի օգտագործման, սեռական այլասերումներում: Այս երևույթը հանգեցնում է բացասական ինքնավարության, անժամանակ գաղափարաբանության, կենսական ծրագրերի բացակայության և նույնության կորստի: Հեղինակի կարծիքով համատարած փոփոխությունները մարդկանց դնում են նույնության ճգնաժամի իրադրության մեջ, ինչը մասնագիտական կարգավիճակի փոփոխության կարևոր բաղադրիչ է: Ստեղծված իրադրության մեջ մարդուն դժվար է միասնության մեջ կապել կենսական

նպատակները և ամենօրյա արարքները, գործողությունները և դրանց նշանակությունը: Այս ամենը անձին դնում է ամենօրյա ընտրության առջև: Արժեքային բախումը հասարակության գիտակցության վերափոխման պարտադիր բաղադրամաս է: Նա մեջբերում է Մ. Մ. Բախտինի գաղափարն այն մասին, որ կյանքում գոյություն ունի երկու արժեքային ենթատեքստ՝ «անվերջ աշխարհի կյանքը ամբողջությամբ, որը կարող է միայն օբյեկտիվորեն ճանաչված լինել և սեփական փոքրիկ անձնական կյանքը»: Այս երկու համակարգերում առկա է հարաբերակցություն [31;1-11,23]:

Մարդկային արժեքները, այդ թվում մասնագիտական կարգավիճակին ներկայացվող պահանջները, վերցնում ենք հասարակությունից, իսկ հասարակական արժեքները, մարդկային արժեքների ընդհանրացումներն են: Ուստի, հասարակական արժեքների փոփոխությունները, մարդու համար ստեղծում են ապակողմնորոշվածության վիճակ, նախկին կարգավիճակի հետ կապված նույնությունից հրաժարվելու և նորը ձեռք բերելու անհրաժեշտություն: Կարևորելով անձի մեջ սոցիալականը՝ է. Դյուրկհեյմը նշում է, որ առանձին անհատը այնքան սերտորեն է կապված հասարակության կյանքի հետ, որ վերջինս չի կարող լինել հիվանդ և չվարակել նրանց. հասարակության տառապանքները անխուսափելիորեն անցնում են նրա անդամներին, ամբողջի ինքնազգացողությունը տարածվում է բաղադրիչ մասերին [29; 54]: Կյանքի նկատմամբ արժեքի կորուստը մարդուն որոշ դեպքերում կարող է տանել ծայրահեղ քայլի՝ ինքնասպանության: Ժամանակակից հասարակության մեջ տեղաշարժերը ընդգրկում են բոլոր ոլորտները՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական: 20-րդ դարին բնորոշ է պլյուրալիզմը, որի շրջանակներում աշխարհում սեփական տեղը գտնելու հարցը վերաճում է գոյաբանական խնդրի: Ընտրելու հնարավորությունների բազմազանությունը մարդկանց մոտ առաջացնում է ապակողմնորոշվածություն, լարվածություն, սեփական ես-ը աշխարհի միասնական պատկերում ինտեգրելու անհնարինություն, քանի որ սեփական կարգավիճակը այլևս չի տեղավորվում նոր աշխարհ պատկերում: Ժամանակակից աշխարհի գլոբալիզմի պայմաններում հասարակության տարրերի միջև կապերը դառնում են անկայուն: Դրանք ամրապնդվում են տեղեկատվական կապերի միջոցով, հասարակական կապերի ինտեգրումը բարդացնում է սոցիալական համակարգի աստիճանակարգը:

Պլյուրլիզմի պայմաններում, նորի ստեղծման իրադրությունում արդիական է դառնում սեփական արժեքների և նպատակների համակարգի իմաստավորման խնդիրը: Անձի արժեքային համակարգի բովանդակությունը մեծապես պայմանավորված է նրա զբաղեցրած մասնագիտական կարգավիճակով [65]: Անձն իրականությունը և ինքն իրեն ընկալում և արժևորում է սեփական կարգավիճակի դիրքերից: Ուստի նոր պայմաններում, երբ կարգավիճակի «ուրվագծերը» դառնում են ոչ հստակ, անորոշ, անձը բախվում է արժեքային բախումների, սեփական արժեքների արժեզրկման խնդրի հետ: Մարդը, ով չի տեսնում իր խնդիրների խելամիտ լուծումը ընկնում է հուսահատության մեջ, նրան բնորոշ են, հուսախաբության, վախի, զգացումները: Մասնագիտության փոփոխության երևույթը ստանում է ավելի ու ավելի լայն չափեր:

Ժամանակակից աշխարհում նկատվում է մասնագիտական գիտելիքի նեղացում՝ որպես տեխնոլոգիական զարգացման անխուսափելի արդյունք [42;352]: Անհատը մասնագիտացվում և դառնում է փորձագետ գիտելիքի նեղ ոլորտներում: Նրան բնորոշ է դառնում անվստահությունը ապագայի, սեփական փորձի, ինչպես նաև իրադրության վրա ազդելու ընդունակության նկատմամբ, ինչը ծնում է խնդիրներ՝ կապված նույնության հետ: Բազմազանությունը ոչ միայն մեծացնում է ընտրելու հնարավորությունը, այլ առաջացնում է ապակողմնորոշվածություն: Փոփոխվող աշխարհում մարդը գտնվում է նոր տեխնոլոգիաների, զանգվածային լրատվական միջոցների, միատեսակ տեղեկատվության ճնշման տակ:

Ներակյումս մասնագիտության փոփոխությանը մեծապես նպաստում է ծանր ֆիզիկական աշխատանքի բաժնի կրճատումը և բարձր տեխնոլոգիաների ներդրումը, արտադրության համակարգչայնացումը: Հ. Սքոլիմովսկին գրում է. «Տեխնիկան անընդհատ հեռացնելով մեզ պատասխանատվությունից, հանձնարարելով ամեն ինչ փորձագետներին, իր մեջ մարմնավորում է չարի ցնծությունը, քանզի եթե ամեն ինչ արվում է մեր փոխարեն, եթե մենք այլևս ոչինչի համար պատասխանատվություն չենք կրում, ապա մեզ այլևս չի կարելի մարդ համարել» [102;495]: Նման կտրուկ փիլիսոփայական բնորոշումը ցույց է տալիս տեխնիկայի կողմից անձի մասնագիտական, գործունեության սահմանափակման հնարավորությունը: Այս պայմաններում աշխատաշուկայում ստեղծվում է նոր մասնագիտությունների ցանկ,

ինչը ենթադրում է, որ բազմաթիվ մարդիկ, ովքեր չեն համապատասխանում մասնագիտական նոր պահանջներին, հայտնվում են կարգազուրկ վիճակում: Ստեղծված իրադրությունը առաջացնում է ընդհանուր դժգոհություն լարվածություն անբավարարվածություն: Համատարած համակարգչայնացումը ունի երկու կողմ. առաջին դրանք սահմանափակում են մարդու գործունեության դաշտը՝ տրամադրելով աշխատանքը մեքենաներին, երկրորդ՝ աշխատաշուկայում հայտնվում են ժամանակակից մասնագիտություններ, որոնց տիրապետելը բազմաթիվ միջին տարիքի անձանց կանգնեցնում է մասնագիտական վերակողմնորոշման խնդրի առջև: Նրանց մասնագիտությունը նոր պայմաններում կորցնում է պահանջարկը: Նորը միշտ չէ, որ ընդունվում է անձի կողմից հեշտությամբ և նման պայմաններում հաճախ նկատվում է կարոտախտի զգացում հնի նկատմամբ: Ի. Ս. Կոնը նշում է. «ներկայումս հիասթափված և ապագայի նկատմամբ անվստահ մարդիկ հենարան են որոնում անցյալում, հասարակական գիտակցության ավելի խորը և հին շերտերում»: Հնի և նորի այս բախումը ընդարձակ երևույթ է և հաճախ ընդգրկում է սոցիալական կյանքի շատ ոլորտներ, այդ թվում առաջին հերթին մասնագիտական ոլորտը և կապվում դերադիրքային վարքին առաջադրվող նոր պահանջների հետ: Եթե աշխատողը գոհ չէ իր կյանքից, ապա կարելի է օգնել նրան հարմարվել դրան, բայց հնարավոր չէ սոցիալական իրականության ամբողջական վերափոխում [42;175]:

Այսպիսով, ժամանակակից աշխարհը իր տարաբնույթ փոխակերպումներով, նորարարություններով, որոնք առաջադրվում են անձի մասնագիտական կարգավիճակին, կարող է նպաստել կարգավիճակային տեղաշարժերի, որոնց դեպքում նկատվում է նախկին մասնագիտական կարգավիճակի անհամապատասխանություն ներկայիս իրականության պահանջներին՝ ուղեկցվելով հոգեբանական, մասնավորապես արժեքային ոլորտի վերակառուցումներով:

- Անցումային հասարակությունը, որը բնորոշվում սոցիալական կառույցների փոփոխությամբ:

Անցումային փուլում յուրաքանչյուր մարդու համար կարևոր է հարմարման հնարավորությունը: Հարմարումը ենթադրում է հասարակական հարաբերությունների փոփոխվող տիպի, արժեքային համակարգի սոցիալական և հոգեբանական

յուրացման (նոր կարգի յուրացման), ինչպես նաև մի համակարգից մյուսին անցման իրադրության (հարմարում անցումային ճգնաժամին) ապրման հոգեբանական, սոցիալական ընդունակություն [43;417]: Անցումային շրջանի ծնունդ են մասնագիտական կարգավիճակի տեղաշարժերը, որոնք հիմք են դնում մեկ այլ երևույթի՝ մարգինալության առաջացմանը: Ըստ Ն. Ռ. Հակոբյանի մարգինալությունը, խմբերի, անհատների վիճակն է այնպիսի պայմաններում, որոնք արտաքին գործոնների ազդեցությամբ՝ կապված հասարակության սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային վերափոխումների հետ, հարկադրում են փոխել իրենց սոցիալական դրությունը՝ հանգեցնելով նախկին կարգավիճակի, սոցիալական կապերի, սոցիալական միջավայրի, արժեքային կողմնորոշումների կորստին [3;38]: Վ. Տ. Կրիսկոն գտնում է, որ բնակչության մարգինալ շերտերին (գործազուրկներ, աղքատներ, անօթևաններ և այլոք) բնորոշ են անվստահությունը սեփական ուժերի նկատմամբ, անելանելիության զգացումը, բարոյական և հոգևոր այլափոխումը, սոցիալական վախը և այլն [46;218]: Մարգինալության երևույթը, սակայն, ավելի ընդարձակ երևույթ է, իսկ սոցիալական կարգավիճակի տեղաշարժը դրա առանձին կողմն է: Ճգնաժամային պայմաններում հայտնվում են մարդիկ, ովքեր նախկին կառույցում կորցրել են կայուն սոցիալական կարգավիճակը և ներկայումս տառապում են անցյալի կարոտախտով: Անցումային հասարակության պայմաններում, մարդկանց մեծամասնությունը բնորոշվում է մասնագիտական կարգավիճակի կորստով, իսկ նոր պայմաններում՝ ավելի ցածր կարգավիճակի առկայությամբ: Նրանցից շատերը համալրում են սպասարկման ոլորտի աշխատակիցների շարքը՝ լրացնելով սոցիալական աստիճանակարգի ավելի ցածր դիրքեր: Սոցիալական կարգավիճակի անկումը կամ կորուստը հանգեցնում է անձի մոտ անբարեհարմարության զգացման, ինքնագնահատականի իջեցմանը և այլն: Տ. Շիբուտանին ճշմարտացիորեն նշում է, որ անբավարարվածությունը սոցիալական փոփոխությունների «ավանգարդ» է [86; 482]:

- կարևորություն է ձեռք բերում անցումային հասարակության, մասնավորապես, անցումային Հայաստանի մասին պատկերացումների ամբողջացումը:

Ա. Ա. Հովսեփյանը բազմակողմանի վերլուծության է ենթարկում անցումային Հայաստանում սոցիալ-հոգեբանական տեշաշարժերը՝ կարևորելով այդ

փոփոխությունների ազդեցության հոգեբանական կողմը: Փոփոխությունների անմիջական ուղեկից են դառնում բոլոր ոլորտներում արժեքների վերաարժևորումը, կարծրատիպերի փոփոխությունը, կյանքի իմաստի խարխլումը, մարդկային հարաբերությունների ապաուրբանիզացումը, մարդկանց կարգավիճակների և սոցիալական դերերի տեղաշարժերը և այլն: Նախկին փորձը և դրա հետ կապված արժեքային համակարգը դադարում են կողմնորոշող դեր կատարելուց: Անխուսափելի են դառնում ներանձնային հակասություններն ու երկատվածությունը, բարոյա-հոգեբանական «սարդոստայնի» մեջ հայտնվելը, անպաշտպանվածությունն ու ահաբեկվածությունը: Նախկին սոցիալական հարաբերությունները դադարում են համապատասխանել տարբեր ոլորտներում առկա նորմերին ու արժեքներին: Ուստի, նոր շուկայական պայմաններում կարևորվում է արժեքների վերաարժևորման հարցը, առանց, որի մարդը չի կարող հարմարվել նոր պայմաններին: Նոր շուկայական պայմաններում անձի մասնագիտական կարգավիճակը մեծապես որոշվում է գործարար հաջողություններով, այսինքն՝ նյութական կողմով, ինչը հավասարության նշան է դնում ձեռներեցների կամ օրինակ՝ քաղաքական գործիչների միջև: Փաստորեն, կորսվում է սոցիալական կարգավիճակի գնահատողական կողմը՝ հեղինակությունը: Կորցնելով այս փոփոխությունների հորձանուտում անվտանգության պահանջմունքը, կողմնորոշիչ արժեքների բացակայությունը, առաջացնում են այնպիսի հոգեբանական իրողություններ, ինչպիսիք են՝ միայնակության, օտարվածության և ծանձրույթի զգացումները: Ստեղծված իրավիճակում, երբ կյանքում անձի կարգավիճակի սահմանները դառնում են անորոշ, նրա առջև հառնում է գոյաբանական խնդիր: Խնդիրը բարդանում է միասնական արժեքային համակարգի բացակայության պատճառով: Առաջանում է հակասություն նոր և հին արժեքային համակարգերի միջև: Նորի ընդունումը, ըստ հեղինակի, անպայմանորեն ենթադրում է մարդու վերասոցիալականացվելու անհրաժեշտություն: Ա. Ա. Հովսեփյանը նշում է, որ անցումային հասարակություններում առկա է երեք սերունդ, որոնք գտնվում են տարբեր կարգավիճակներում՝ հոգեբանական ու բարոյական առումով՝ ավագ, միջին և կրտսեր: Անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխության ենթատեքստում մեզ ավելի հետաքրքրում է միջին սերունդը, որի կյանքի մի մասը անցել է խորհրդային

համակարգում: Նման մարդիկ բախվել են նախկին կարգավիճակը կորցնելու, արժեհամակարգը վերարժևորելու խնդրի հետ: Նոր ոչ մասնագիտական գործունեությսան պայմաններում նրանց առջև ավելի սուր ձևով է ծառանում վերահարմարման և վերասոցիալականացման անհրաժեշտությունը, ինչը մեծապես կապված է այդ խումբը կազմող անձանց անձնային առանձնահատկություններից, հարմարման գերակա մարտավարություններից: Անցումային հասարակությունը դժվարություն է ստեղծում գործունեության մեջ ներգրավվելու առումով, ինչը, իհարկե, դժվարացնում է մարդու կողմից կայուն կարգավիճակ ձեռք բերելու հարցը [4;7-36]: Տնտեսական կյանքի վերափոխումները, արտադրության գործընթացի վերազինման միտումները, խորհրդային շրջանում գործունեության մեջ հաջողությամբ ներառված շատ տարրերի մոտ առաջացնում է մասնագիտական թերարժեքության խնդիր, քանի որ նրանց գիտելիքներն ու աշխատանքային փորձը այլևս կիրառելի չեն նոր պայմաններում: Արդյունքում ստացվում է հակասական վիճակ. մի կողմից ակնհայտ է զանգվածային գործազրկությունը, մյուս կողմից՝ առկա են բազմաթիվ աշխատատեղեր, որոնք թափուր են մնում համապատասխան գիտելիքներ ու հմտություններ ունեցող մասնագետների բացակայության պատճառով:

Անցումային շրջանը, վերագնահատումների փուլ է, երբ կորսվում, են հին կողմնորոշիչները և հիմք է դրվում նորի ձևավորման համար: Այս պայմաններում մասնագիտական կարգավիճակի տեղաշարժերը՝ անձի նախկին կարգավիճակի անհամապատասխանությունը նոր մասնագիտական պայմաններին, առաջացնում է արևի տակ իր «տեղի» գոյաբանական որոնումներ: Սոցիալական կառույցների փոփոխության պայմաններում սեփական կարգավիճակի նկատմամբ սպասումները փոխվում են, դառնում են անորոշ, մարդու համար անկայուն, անորոշ դրության մեջ սեփական կենսական նպատակները դառնում են հեռավոր, իսկ երբեմն էլ անիրականանալի՝ սահմանափակելով ինքնաիրացման հնարավորությունները:

- Հասարակության մեջ սոցիալական շարժունության առկայությունը:

Սոցիալական շարժունությունը մարդկանց տեղաշարժն է մի խմբից դեպի մյուսը, ինչը կարող է կապված չլինել համակարգի կառուցվածքային փոփոխությունների հետ: Սոցիալական շարժունությունը հանգեցնում է կադրային

փոփոխության և ապահովում է համակարգի բացվածությունը բոլոր ցանկացողների համար: Սա բնութագրում է շարժունությունը դրական տեսանկյունից, որը անձի առջև բացում է նվաճման դրդապատճառայնությունը իրականացնելու, ինքնահիրացվելու, կարգավիճակային ինքնահաստատման հնարավորություն: Սոցիալ-մասնագիտական շարժունությունը տնտեսության կառուցվածքային փոփոխությունների և տեղեկատվական հարթության մեջ մարդու դրության փոփոխությունների արտացոլումն է [43;307]: Է. Էրիքսոնը ճշմարտացորեն նշում է, որ ավելի շարժուն հասարակության մեջ կարգավիճակը ոչ թե նպատակ է, այլ միջոց [93; 131]: Այս տեսանկյունից, մասնագիտական կարգավիճակը ոչ միայն նյութական բարեկեցության միջոց է, այլ նաև կայուն նույնություն ձեռք բերելու և կենսական նպատակներին հասնելու միջոց: Ըստ Մ. Բորիսովի՝ մասնագիտական առաջխաղացման հնարավորությունների ապահովումը համակարգի կարևոր բնութագրիչ է, ինչպես նաև սոցիալական շարժունության ցուցանիշ [43; 303]: Մասնագիտական կարգավիճակի անկումը գլխավորապես սոցիալական վարընթաց ուղղահայաց շարժունության հետևանք է: Այնուամենայնիվ, շարժունությունը որպես սոցիալական իրողություն, իրենով չի որոշում հոգեբանական իրողության բովանդակությունը: Սոցիալական կարգավիճակի վարընթաց ուղղահայաց տեղաշարժը պայմանավորում անձի արժեքային ոլորտի շարժընթացը և դրա առանձնահատկությունները:

Ինչպես նշեցինք, յուրաքանչյուր սոցիալական, մասնավորապես, մասնագիտական կարգավիճակին, առաջադրվում են պահանջներ, նորմեր: Ա. Ի Կրավչենկոն մեջբերում է Ռ. Մերթոնի գաղափան այն մասին, որ հասարակությունը չի կարող գոյատևել առանց նորմների, որոնք վերահսկում են մարդու վարքը: Նորմերը վարքի համընդհանուր նմուշներ են, պատրաստի պատասխաններ [43; 47,67]: Խումբը, որից անձը վերցնում է իր նորմերը, արժեքները և դիրքերը սոցիոլոգիայում անվանում են չափանմուշային (լատ. refero՝ հարաբերակցվում եմ): Անձի դիրքային վարքը համահարաբերակցվում է խմբային արժեքների հետ ուստի այդ պահանջները անձի կողմից ներքնայնացվում են և դառնում են նրա ես հիմնադրույթի բաղադրիչ: Հետևաբար, անձի համար ավելի մեծ հեղինակություն է ներկայացնում այն չափանմուշային խումբը, որի հետ նույնացումը ավելի մեծ է: Այդ է պատճառը, որ

ոմանց համար մասնագիտական դիրքի կորուստը անձնական ողբերգություն է, իսկ մյուսների համար՝ ոչ: Տ. Շիբուտանու կարծիքով երբ մարդկանց դերերը որոշված են, նրանք հետևում են հիմնական վարքային շաբլոններին, որոնք համաձայնեցված են նրանց դիրքի հետ, ինչի շնորհիվ հասարակությունը չի նմանվում անկազմակերպ քաոսի: Երբ կյանքի պայմանները փոխվում են, հին խմբերը քանդվում են, ստեղծվում են նորերը: Տեղի է ունենում չափանմուշային խմբերի տեղաշարժ: Նրանք, ովքեր պաշտպանում են ավանդական արժեքները տագնապով են նայում նորույթներին: Լարվածություն է առաջանում է նրանց մոտ, ում դիրքերը հնացել են, այսինքն՝ այլևս չեն համապատասխանում չափանմուշային խմբի սպասումներին: Այստեղ տեղին է օգտագործել «արժեզրկվել են» հասկացությունը [86;202,246,248]:

Պ. Շտոմպկան նշում է, որ հասարակության մեջ վերառուցումներ առաջ են բերում սոցիալական շարժումները, որոնք առաջացնում են արժեհամակարգի, նորմերի, սոցիալական կարգի փոփոխություններ: Նա ընդգծում է, որ որոշները կենտրոնանում են սոցիալական կառուցվածքի փոփոխության վրա, որոշներն էլ՝ անձի փոփոխության վրա [89;192]: Այնուամենայնիվ, դրանք խիստ փոխկապակցված երևույթներ են և փոփոխությունը մեկում՝ առաջացնում է փոփոխություն մյուս համակարգում: Անձի և մասնագիտական համակարգի նման փոխազդեցությունը օրինաչափ երևույթ է: Նման իրադրությունում մարդը դեռ որոշ ժամանակ շարունակում է վարքային նախկին ռազմավարությունների գործադրումը՝ ամբողջովին չհամակերպվելով նոր իրադրության հետ: Անձի դիրքային վարքը խմբային սպասումներին ուղղված մեխանիկական պատասխան չէ: Այն հարաբերակցվում է անձի առաջատար հոգեբանական որակների, արժեքային ոլորտի հետ, ուստի հնարավոր է վարքի սպասումների փոփոխության դեպքում չնկատվի ամբողջական վարքային շաբլոնի փոփոխություն: Արտաքին սոցիալական փոփոխությունների ենթատեքստում անձի կարգավիճակին ուղղված սոցիալական սպասումների համակարգի փոփոխությունը օրինաչափ երևույթ է: Կարգավիճակային տեղաշարժը միշտ ենթադրում է խմբային նորմերի, արժեքների փոփոխություն, մասնագիտական կարգավիճակին ներկայացվող սպասումների փոփոխություն: Վերը նշված

պայմանները մասնագիտական կարգավիճակի փոփոխությանը նպաստող արտաքին, սոցիալական պայմաններն են:

Անձի մասնագիտական կարգավիճակը «գծում է» այն սահմանները, որոնց ներսում անձը զգում է իր կայունությունը, որոշակիությունը, ձևավորում է իր արժեքային համակարգը, մասնագիտական պատկանելությունը, ինչը ապահովում է ընդհանուր առմամբ նրա հարմարվածությունը սոցիալական միջավայրին, սակայն, երբեմն սոցիալական պահանջների փոփոխության հարկադրմամբ այդ սահմանները դառնում են, թափանցիկ, անկայուն: Խնդիրը զուտ սոցիալական, հոգեբանական դաշտից անցնում է ավելի լայն՝ գոյաբանական դաշտ: Անձի առջև ժամանակավորապես ծառանում է «լինել, թե չլինելու» խնդիրը՝ ստիպելով կրկին հարմարվել փոփոխվող իրականությանը: Առաջանում է մասնագիտական կարգավիճակի փոփոխության իրադրություն, որի գլխավոր վեկտորը ապակողմնորոշվածությունը, անորոշությունը, դժգոհությունը, չհարմարվածությունն է: Իսկ հետևանքներից է համատարած աղքատությունը, գործազրկությունը, մարգինալ երևույթները: Աղքատությունը այսօր կարելի է բնորոշել անձի սոցիալական կարգավիճակի տեղաշարժի դիրքերից: Աղքատները մարդիկ են, ովքեր նախկինում եղել են գիտաշխատողներ, քաղծառայողներ և այլ մասնագետներ, ովքեր ներկայումս զբաղեցնում են ավելի ցածր դիրքեր: Նման մարդիկ լրացնում են աղքատների, ցածր որակավորմամբ աշխատանք կատարողների, գործազուրկների շարքերը:

Այսպիսով, մասնագիտական կարգավիճակի փոփոխության արտաքին պայմանների հասկացումը կարևոր է ինչպես առանձին անձի հոգեկան առողջության, այնպես էլ, հասարակության մեջ տեղ գտնող փոխակերպումների, մասնավորապես, անձի արժեքաիմաստային ոլորտի վերակառուցումները իմաստավորելու առումով:

2.3 Անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխության հոգեբանական առանձնահատկությունները միջին տարիքում

Կենսական տարածության մեջ ակտիվ գործառնելու, սեփական պոտենցյալը ամբողջովին իրացնելու համար անձի ակտիվությունն ուղղված է կայուն սոցիալական կարգավիճակ ձեռք բերելուն և սեփական հնարավորությունները ստեղագործաբար

իրացնելուն: Ինչպես տեսնում ենք, չնայած հարաբերական կայունության, այնուամենայնիվ, կյանքի ընթացքում անձի սոցիալական կարգավիճակները, այդ թվում գլխավոր՝ մասնագիտական կարգավիճակը, ենթակա է տեղաշարժի: Մասնագիտական կարգավիճակների տեղաշարժերը, մասնավորապես, վարընթաց տեղաշարժը, ուղեկցվում է որոշակի հոգեբանական իրողություններով՝ արժեքային վերակառուցումներով, որոնք իրենց յուրահատկությունն են ստանում հատկապես տարիքային համատեքստում: Այս առումով հույժ կարևոր է մասնագիտական կարգավիճակի փոփոխության հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը միջին տարիքում: Ներկայիս միջին տարիքի անձը երկու՝ խորհրդային և հետխորհրդային արժեքային համակարգերի կրողն է: Երկակի արժեքային համակարգ կրելու փաստը պայմանավորում է անձի արժեքային ոլորտի առանձնահատկությունները՝ մասնագիտության փոփոխության պայմաններում:

«Միջին տարիքի» բնորոշման, նրա սահմանները որոշելու հարցում հաճախ հետազոտողների տեսակետները միանշանակ չեն: Միջին տարիքի մեջ ներառում են 40-ից մինչև 60-65 տարեկան հասակը: Ա. Ա. Ռեանը գտնում է, որ միջին տարիքի գնահատման մեջ կարևոր է տարիքը ընդունելու մարդու սուբյեկտիվ դիրքը: Տարիքային այս ժամանակահատվածը կարելի է բնորոշել իբրև մարգինալ՝ սահմանային, քանի որ գտնվում է երիտասարդության և ծերության տարիքային շրջափուլերի միջև, երբ անձի արժեքները, նրա աշխարհայացքը անձի կողմից ենթարկվում է վերաիմաստավորման, վերաարժևորման: Կյանքի այս փուլին բնորոշ է առողջության հետ կապված փոփոխությունները: Ա. Ա. Ռեանը նշում է, որ միջին տարիքը մարդու համար ստեղծագործելու ամենաարդյունավետ շրջաններից մեկն է: Ֆիզիկական փոփոխությունները, կենսական ուժերի թուլացումը ունենում է մարմնահոգեկան (սոմատոփսիխիկ) ազդեցություն՝ մեծապես ազդելով անձի ինքնազգացողության, նրա ինքնագնահատականի վրա: Այնուամենայնիվ, որոշ հետազոտողներ կյանքի կեսը բնորոշում են իբրև մարդու կյանքի լավագույն շրջան: Նա մեջբերում է Ռ. Կեսլերի տեսակետը, ով գտնում է, որ մարդու համար ամենալավ տարիքը 50 տարեկանն է: Ընդհանուր դիսթրեսի մակարդակը ցածր է, դեպրեսիվ և տագնապային վիճակները նվազում են 35 տարեկանի սահմաններում: Անձն առողջ է,

գործունյա, ընտանեկան կյանքը կայացել է, իսկ ամուսնալուծության հավանականությունը մեծ չէ: Միջին տարիքում անձը կարող է իր ողջ ժամանակը նվիրել կեցությանը, ոչ թե կայացմանը [64;478,489]: Սակայն այս տեսակետը հաշվի չի առնում էթնիկական, սոցիալ-տնտեսական տարբերությունները և իհարկե, կենսական իրադրությունը, ինչը հետխորհրդային փուլի պայմաններում խիստ կարևոր է միջին տարիքի անձի հոգեկան աշխարհը նկարագրելու առումով:

Միջին տարիքի առանձնահատկություններից է իմաստության հասնելու փաստը: Իզուր չէ, որ հին հույները այս տարիքը անվանում էին «ակմե», ինչը նշանակում է մարդկային անձի բարգավաճման պահ: Այնուամենայնիվ, միջին տարիքի հասկացումը մնում է հակասական տեսակետների կիզակետում: Այս տարիքային փուլին բնորոշ են վերարժևորումները, կյանքի իմաստի կորուստը և վերջապես «ճգնաժամը», որը ճիշտ է նորատիվային է՝ պայմանավորված է տարիքային առանձնահատկություններով, բայց պայմաններ է ստեղծում ընկճախտի, սթրեսների համար:

«Ճգնաժամ» բառը հանրագիտարանային բառարանում (հուն. krisis՝ որոշում, շրջադարձային կետ, ելք) հասկացվում է իբրև կտրուկ շրջադարձ, դժվար անցումային շրջան կամ դժվար դրություն: Լ. Ն. Յուրևան նշում է, որ մի քանի տասնամյակ առաջ հասունությունը ընդունվում էր իբրև ձեռքբերումների շրջան, բայց որոշ աշխատանքներ՝ Ջ. Լևինսոնի «Մարդու կյանքի փուլերը», Բ. Նեյգարտենի «Հասուն տարիքի գիտակցում», Ս. Օշերսոնի «Թախիծ կորսված «Ես»-ի մասին միջին տարիքում», ինչպես նաև տարիքային փուլում տեղ գտնող փոփոխությունները, ստիպեցին հետազոտողներին այն անվանել «հասունության ճգնաժամ»: Է. Էրիքսոնը գտնում է, որ այս փուլին բնորոշ է նաև մարդկության ապագա բարեկեցության մասին հոգատարությունը՝ հակառակ դեպքում առաջանում է անտարբերություն, ուրիշների մասին հոգ տանելու ցանկության բացակայություն: Կյանքի այս փուլում Լ. Ն. Յուրևայի կարծիքով, մեծանում է նևրոզների, ինքնասպանությունների, վարքի կախյալ ձևերի հաճախականությունը: Հասակակիցների մահը ստիպում է անձին մտածել սեփական կյանքի ավարտուն լինելու մասին [94;4-7]:

Հայրենական հոգեբաններից Ս. Ս. Խուդոյանը զարգացնում է տարիքային ճգնաժաների տեսությունը: Նա ընդլայնում է «ճգնաժամ» հասկցությունը, գտնելով, որ

այն մարդու կյանքում միշտ չէ կախված տարիքից, այլ կարող է պայմանավորված լինել այլ գործոններով: Ճգնաժամային տարիքը կապվում է մարդու կյանքի այն շրջանների հետ, երբ նա բախվում է նոր խնդիրների հետ և այդ հանգամանքն է պայմանավորում ճգնաժամը: Այս տարիքում մարդը խիստ զգայուն է լինում որոշակի խնդիրների նկատմամբ, ինչի ֆրուստրացիան սուր է ապրվում նրա կողմից, քան այլ շրջաններում: Հեղինակը ընդգծում է, որ հասուն տարիքի ճգնաժամերը նվազ են ուսումնասիրված [2;35,71]: Ավելի քիչ ենք հանդիպում միջին տարիքի ճգնաժամին նվիրված հետազոտությունները: Կարելի է ենթադրել, որ միջին տարիքում մասնագիտության փոփոխությունը ապրվում է հատկապես սուր ձևով, քանի որ այն մասնագիտական ինքանահիրացման, սեփական կենսական ծրագրերի ամփոփման փուլ է:

Միջին տարիքի ճգնաժամի սահմանը 40 տարեկանն է, որի բնորոշ գծերից են՝ կասկածները, կենսական կողմնորոշիչների բացակայությունը և հակվածությունը պատրանքային որոշումներ ընդունելու նկատմամբ: Այս ամենը կարող է ուղեկցվել երջանկության զգացումի կարճ պահերով: Այս տարիքում անձը սկսում է արագ աշխատել. կարծես ժամանակը նրան չի բավարարում սեփական ծրագրերը իրականացնելու համար: Նա խորհում է կյանքի ավարտունության, սեփական հնարավորություններն իրացնելու, անցած ժամանակն ամփոփելու մասին: Այս տարիքային ճգնաժամը հոգեբանական ֆենոմեն է, որն ապրվում է 40-45 տարեկան անձանց կողմից [65;401]: Այն մեծապես կապված է ապրած կյանքի վերաարժևորման հետ: Կյանքի կեսի ճգնաժամը նորմատիվային է և ունի սոցիալ-պատմական, մշակութային բնույթ: Այն հասարակության պատմության ավելի ուշ կազմավորում է: Ճգնաժամը առաջանում է այն ժամանակ, երբ անձի առջև ծառանում է ինքնաակտուալացման ուղիների միջև ընտրության հարցը:

Օ. Ա. Կարաբանովան նշում է, որ ժամանակակից հասարակության մեջ անձը կանգնած է բազմաթիվ այլընտրանքային հնարավորությունների առջև: Նման պայմաններում նա դժվարանում է ընտրություն կատարել: Ցանկացած ընտրություն ենթադրում է ինքնասահմանափակում և անձնային պատասխանատվության ընդունում: Առաջանում է նորմատիվային ճգնաժամի անհրաժեշտություն՝ որպես արժեքաիմաստային ճգնաժամի «կենսական արդյունքների ամփոփում և վերանայում»

[36;224]: Փաստորեն, այս տարիքային ճգնաժամն առաջին հերթին դրսևորվում է արժեքաիմաստային ոլորտի վերանայման, որոշ կենսական արժեքների վերաարժևորման մեջ: Նորմատիվային ճգաժամի շրջանակներում սեփական կյանքի, անձի և մասնագիտության հետ կապված վերաարժևորման և վերաիմաստավորման գործընթացները կառուցողական են:

Հասունության ճգնաժամերն ուսումնասիրող Ի. Գ. Մալկինա-Պիխը նշում է, որ Կ. Յունգը առաջին հետազոտողներից էր, ով ուշադրություն է դարձրել կյանքի երկրորդ կեսին, գտնելով, որ մարդն այս փուլում հանդիպում է սեփական անգիտակցականի հետ: Անձի համար առաջնային է կենտրոնացումը սեփական ինքնության վրա [53;50]: Նևրոզը, ըստ Յունգի, միջին տարիքում անձի զարգացման նախապայման է: Նևրոզի սրացումը հաճախ դառնում է կարևոր կենսական ընտրության նախապայման: Ըստ Յունգի, անձի բոլոր ուժերը ձգտում են միավորման, իսկ միասնականություն ձեռք բերելու ցանկությունը հակադրվում է ապակազմավորմանը և այդ ժամանակ անձն աստիճանաբար գալիս է իր ներքին միասնականության գիտակցմանը, որը մինչ այդ որոնում էր դրսում: Այս հակասությունը միջին տարիքում զարգացման հիմքը, խթանն է: Հեղինակներից ոմանք էլ գտնում են, որ ճգնաժամի դրական լուծումը անձի կողմից իմաստության ձեռքբերումն ու ստեղծագործելն է, իսկ դրա հակառակ բևեռը՝ նևրոզն ու հուսահատությունն են: Այս դեպքում նևրոզը ոչ թե անձի զարգացման խթան է, այլ չլուծված խնդիրների, հակասության հետևանք է [85;3-5]:

Միջին հասունությունը կապվում է վախերի հետ՝ ի տարբերություն պատանեկության փուլի, որը կապված է երազանքների հետ: Գ. Շիխին առանձնացնում է կյանքի կեսի ճգնաժամի հաղթահարման երկու ուղի, ինչից կախված է ճգնաժամից հաջող կամ անհաջող ելքը. արդյոք անձը տեսնում է իր առաջնային երազանքները իբրև իր անձնային խնդիրների լուծում, թե վերաձևակերպում է դրանք իրատեսական նպատակների: Իհարկե, ավելի հասուն տարբերակը իրատեսական նպատակներ դնելն է: Տարիքային ճգնաժամը հաղթահարելու հնարավորությունը անձի ներսում է, նրա ներքին ուժն է, ինչը պետք է նա գործադրի առաջ շարժվելու և ճգնաժամից դուրս գալու համար: Յուրաքանչյուր նոր իրադարձություն այս տարիքում

անձին կրկին ստիպում է վերանայել սեփական կենսագրությունը [87;183]: Կենսական ուղին միայն կրկնվող պատմական գործընթաց չէ, այն նաև կապված է անձի անհատական առանձնահատկությունների հետ, ինչպես նաև սոցիալական ենթատեքստից, որը փոփոխվող աշխարհում թելադրում է իր պահանջները անձի տարիքային զարգացմանը:

Ինչպես տեսնում ենք, ճգնաժամի կենտրոնում անձի կողմից ապրած կյանքի կեսի, ձեռք բերած փորձի, արժեքների, վերաարժևորման գործընթացն է: Անձն ի մի բերում իր ձեռքբերումները՝ անձնական, ընտանեկան և մասնագիտական ոլորտներում: Կրկին վերանայում է այս տարիքում արդեն կայացած արժեքային համակարգը, տեսնելու, թե ինչն է առավել կարևոր իր համար ներկայումս:

Ա. Ա. Ռեանը նշում է, որ այս ոլորտներից յուրաքանչյուրում առաջ եկած փոփոխությունը՝ սոցիալական կամ կենսական պայմանների ազդեցությամբ, կարող է առաջացնել «դրդապատճառային ճգնաժամ»՝ կապված առաջատար կենսական դրդապատճառի թուլացման կամ դրանից հրաժարման հետ: Չնայած այս տարիքում դրդապատճառային ճգնաժամ կարող է առաջ բերել մասնագիտական և անձնական կյանքում առաջացող ցանկացած իրադարձություն (նոր աշխատանքի առաջարկ, երեխաների ծնունդ, նոր սեր և այլն): Ճգնաժամի ապրման բնույթը, խորությունը, մեծապես կապված է միջին տարիքի անձի ինքնագնահատականի, հավակնությունների մակարդակի հետ: Ըստ Ա. Ռեանի՝ որքան ցածր է անձի ձեռք բերածը միջին տարիքում սեփական հավակնությունների մակարդակի հետ համեմատած, այնքան անձն ավելի ծանր է ապրում անհաջողությունը, ընկնում է ինքնագնահատականը՝ սրելով դրդապատճառային ճգնաժամը կենսական ուղու այս հատվածում [64;505]:

Միջին տարիքի անձի հիմնական ապրումները կապված են սեփական պոտենցյալը իրացնելու հնարավորության, ներկայի և ապագայի ծրագրերի հետ: Անձի կողմից սեփական պոտենցյալի իրացման հիմնական ուղին մասնագիտական գործունեությունն է: Այն սուբյեկտի ակտիվության յուրահատուկ ձև է, որին նա նվիրում է կյանքի զգալի մասը: Անձի հիմնական պահանջմունքները բավարարվում են աշխատանքային գործունեության միջոցով, ինչը թույլ է տալիս բացահայտել սեփական

ընդունակությունները, որոնել և գտնել խնդրային իրադրություններում ստեղծագործական մոտեցումներ, ինքնահաստատվել իբրև անձ:

Միջին տարիքում մարդու առաջատար գործունեությունն է աշխատանքը, ինչը որոշում է անձի կյանքի էությունը, դառնում է նրա զարգացման հիմքը: Ի. Ա. Ակինդիկովան նշում է մասնագիտական կարգավիճակի երկակի գործառնությունը. այն միաժամանակ զարգացման գործոն և զարգացման միջոց է: Մասնագիտական դերի կատարման ընթացքում անձը յուրացնում է մասնագիտական կարգավիճակին ներկայացվող պահանջները, որոնք ձևավորում են յուրահատուկ արժեքային դաշտ և ուղղորդում, յուրահատկություն են տալիս անձի արժեքներին: Տևական աշխատանքային գործունեությունը ձևավորում է ոչ միայն անձի առանձին գործառնական համակարգը և հոգեկան գործընթացները, այլ նաև սոցիալ-մասնագիտական տիպը՝ որոշակի արժեքային կողմնորոշումներով, բնավորությամբ, միջխմբային և ներխմբային շփման առանձնահատկություններով [8;29-36]: Մասնագիտական կարգավիճակը թույլ է տալիս անձին իրացնելու սեփական պոտենցյալը մասնագիտական գործունեության որոշակի ոլորտում: «Մասնագիտություն» հասկացությունը հաճախ դառնում է անձի համար կարևորագույն արժեք, իսկ մասնագիտական ինքնաիրացման ձգտումը՝ նրա արժեքային համակարգի բարձրագույն արժեքը: Ընդ որում՝ «մասնագիտական ինքնաիրացումը» ենթադրում է անձի մոտ հասունության որոշակի մակարդակի առկայություն, երբ տեղի է ունենում փորձի ձեռք բերում, կուտակում, վերակառուցում, դրա իրացում գործունեության մեջ: Անձնային աճը ենթադրում է անձի կողմից կյանքի իմաստի իրացման նկատմամբ մոտեցում՝ անձնային փորձի ձեռք բերման միջոցով, որը ներառում է իր մեջ ինքնաճանաչողությունը և համընդհանուր մարդկային արժեքների յուրացումը, այնպիսիք, ինչպիսիք են անկեղծությունը, վստահությունը, ընդունված լինելը, ազատությունը, և այլն: Ինքնաակտուալացումը մասնագիտական և անձնային աճի միասնությունն է:

Միջին տարիքում մտորումների կենտրոնական թեման մասնագիտական հեռանկարներն են: Մասնագիտության կորուստը կամ փոփոխությունը անձի համար ողբերգական իրադարձություն է: Ա. Մասլոուն գործազրկության հարցին մոտենում է

ինքնաակտուալացման տեսության դիրքերից: Նա գտնում է, որ մարդկային ցեղին պատկանելը մարդուն հնարավորություն է տալիս իրացնել իր՝ իբրև մարդկային արարածին տրված պոտենցյալը: Ըստ նրա, կարգավիճակ նվաճելու պահանջմունքը տեղայնացված են պահանջմունքային բուրգի վերին հատվածում, որի բավարարումն է անձին մոտեցնում ինքնաակտուալացմանը: Որպեսզի մարդը զգա հարգանքի և կարգավիճակի ձեռք բերելու պահանջմունք, նա պետք է փոխազդի մեծ քանակությամբ մարդկանց հետ, պետք է ունենա գործունեության լայն դաշտ, իր առջև դնի տևական խնդիրներ, կարողանա գործառնի ավելի բազմազան միջոցներով և նպատակներով: Բարձր պահանջմունքների բավարարումը վերջնական արդյունքում ծառայում է անձնային աճին: Հետևաբար, բուրգի վերին հատվածի պահանջմունքների ֆրուստրացիան՝ օրինակ, կարգավիճակի նվաճման պահանջմունքի, անձին ուղղում է դեպի բուրգի ստորին աստիճանները, դրանով իսկ սահմանափակելով ինքնաակտուալացման պահանջմունքը: Ա. Մասլոուն նշում է, որ տևական գործազրկությունը կարող է կործանարար լինել մարդու համար՝ ճնշելով նրա որոշ պահանջմունքներ [55;83-119]: Լինելով մեկ անգամ ճնշված, այդ պահանջմունքները կարող են մարել և չակտիվանալ նույնիսկ պայմանների փոփոխության դեպքում:

Հումանիստական ուղղության մեկ այլ ներկայացուցիչ է. Ֆրոմմը գտնում է, որ անձի դերերը և արտաքին պայմանները փոփոխվող են, բայց դրանք կարող են և չփոխել անձի վարքը, քանի որ այն ավելի շատ որոշվում է բնավորությամբ, անձնային գծերով: Կատարելով պատմական վերլուծություն՝ նա նշում է, որ դեռ հին ցեղերը հասկանում էին, որ կյանքում հաճույքի, երջանկության համար պետք է մարդ ունենա անհրաժեշտ նյութական միջոցներ: Կարևորելով աշխատանքի դերը՝ նա նշում է, որ աշխատանքի գործընթացում արտաքին միջավայրի փոփոխման գործընթացում, մարդը ևս ձևավորվում և փոխվում է: Աշխատանքի օտարված բնույթը հանգեցնում է ամբողջական ծուլության, առաջանում է թաքնված, հաճախ անգիտակցական թշնամական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ: Արդյունքը մարդկանց մոտ ծուլության ձգտումն է, ինչը ժամանակի ընթացում դառնում է նրանց հոգեկանի բնական վիճակ: Գործազրկությունը սոցիալական ախտաբանության ձևերից մեկն է: Հեղինակը փաստում է, որ 65 տարեկանից բարձր մարդկանց մեծամասնությունը,

աշխատանքը դադարելու անհրաժեշտության հետևանքով, դառնում են տխուր, իսկ երբեմն էլ՝ ֆիզիկապես հիվանդ: Սա, իհարկե, բնորոշ է անառողջ հասարակությանը: Է. Ֆրոմմը գտնում է, որ հասարակության անդամները, ովքեր զբաղեցնում են որոշակի հասարակական դիրք պետք է այնպես գործառնեն, ինչպես պահանջում է սոցիալական համակարգը [83;205,357,359]: Ըստ նրա՝ մարդու պահանջմունքները չունեն կենսաբանական հիմք, դրանց հիմքը կազմում է մարդու գործունեությունը, որը բխում է նրա գոյության պայմաններից: Ներկայումս բնակչության մեծամասնության համար փողը, հեղինակությունը և իշխանությունն մասնագիտական կարգավիճակ ձեռք բերելու գլխավոր խթաններն են:

Վ. Ֆրանկլի կարծիքով եթե հոգեվերլուծությունը խոսում է հաճույքի սկզբունքի մասին, ապա անհատական հոգեբանությունը խոսում է կարգավիճակի նկատմամբ ձգտման մասին: Այս տեսանկյունից մարդն իմաստին կարող է հասնել նաև սոցիալական կառուցվածքում կարգավիճակ ձեռք բերելով, իրեն հաճելի գործունեությամբ զբաղվելով, ինչը կնպաստի սեփական ռեսուրսների իրացմանը: Գտնելով և իրացնելով կյանքի իմաստը, անձն իրացնում է իր անձնային ռեսուրսները, ինքն իրեն: Այն բնածին դրդապատճառայնություն է: Մարդու կյանքի գործունեության համար կործանարար է հասարակության մեջ պահանջների ոչ թե ավելցուկը, այլ դրանց պակասը: Սոցիալական ախտաբանությունները, հասարակության մեջ տեղ գտած բացասական երևույթները, ճգնաժամերը Ֆրանկլը բացատրում է մեծ քանակությամբ մարդկանց մոտ «գոյաբանական վակուումի» առկայությամբ: Այն բնորոշվում է իմաստի նկատմամբ ձգտման ֆրուստրացիայով և արտահայտվում է ձանձրույթի մեջ: Աշխատանքային գործունեությունը անձի ինքնաիրացման հասնելու կարևոր ոլորտներից է: Ֆրանկլը գտնում է, աշխատանքը արժեք է, ինչպես նաև անձի ներդրումն է հասարակության կյանքում: Անձը պետք է անի իր գրաված ծառայողական պարտականություններից ավելին, ինչը նրա՝ իբրև անձի, ներդրումն է սեփական անձի զարգացման մեջ [81;10,35,39]: Այս տեսանկյունից մասնագիտական ինքնաիրացման ֆրուստրացիան կասեցնում է անձի նորմալ զարգացումը:

Գ. Օլփորթը գտնում է, որ աշխատանքը մարդու հոգեկան առողջության չափորոշիչ է: Ճիշտ է, հեղինակը ընդունում է, որ մարդու գործունեությունն ուղղված է

կարգավիճակ, հեղինակություն ձեռք բերելուն, բայց սոցիալական դերերի, կարգավիճակների և այլ եզրույթներով անձի բնութագրերի հասկացումը, ըստ նրա, սխալ է: Նա առաջնային նշանակություն է տալիս անձի գծերին: Դրանք թույլ են տալիս, ըստ Օլփորթի, փոփոխությունների լայն շրջանակ: Փոխադարձ հարմարումը ձեռք է բերվում անձի և սոցիալական համակարգի ներքին ճկունության հիման վրա: Նման մոտեցման դեպքում նույնիսկ փոխելով հիմնային գործունեությունը՝ դրա հետ կապված դիրքը հասարակական կառուցվածքում, մարդու անձը լուրջ փոփոխության չի ենթարկվի, քանի որ անձնային միջուկը մնում է անփոփոխ [60;283-286,386]: Չի կարելի անտեսել այն փաստը, որ անձի միջուկի հիմնական գծերից որոշները անձի մեջ կայունանում են սեփական կարգավիճակի հետ նույնացման արդյունքում, դառնալով կառույցներ՝ արժեքներ, տարբեր հատկություններ, ուստի մասնագիտական կարգավիճակի փոփոխության դեպքում կարող են նպաստել սոցիալական իրականության իմաստավորման փոփոխություններին, ինչը դիտվում միջին տարիքի անձի հոգեկանում: Անձի կենսական ուղու անհատական փոփոխականության փաստը նախազգուշացնում է մասնագիտական կարգավիճակի հետ խիստ նույնացման բացասական հետևանքների մասին, ինչը ենթադրում է, որ անձն իր հարմարման մեջ ավելի ճկուն է, ուստի կյանքի փոփոխվող պայմաններին՝ կարգավիճակային փոփոխության դեպքում, ենթադրում է արժեքային ոլորտում դրանց հետ կապված արժեքների իմաստների վերաարժևորման, վերաիմաստավորման անհրաժեշտություն:

Միջին տարիքի անձը մասնագիտությանը նայում է այլ կերպ: Մասնագիտությունը նրա համար հույզերի աղբյուր է: Սեփական մասնագիտական կարգավիճակով բավարարվածությունը կամ անբավարարվածությունը մեծապես որոշում է այս տարիքում անձի հոգեկան ապրումների երանգը: Այն անձինք, ովքեր կորցրել են մասնագիտական կարգավիճակը և ներկայումս զբաղվում են ոչ մասնագիտական գործունեությամբ, ինչը հաճախ ենթադրում է ավելի ցածր որակավորմամբ աշխատանքի իրականացում, զգում են դժգոհություն և անբավարարվածություն՝ կապված է մասնագիտական գործունեության մեջ կենսական հեռանկարների իրագործման անհնարինության հետ: Միջին տարիքում սոցիալական, մասնավորապես, մասնագիտական կարգավիճակի փոփոխությունը ապրվում է անձի

կողմից հիվանդագին ձևով՝ հատկապես նրանց կողմից, ում արժեքային համակարգում «մասնագիտություն» և «աշխատանք» արժեքներն առաջնային են և ունեն կենսական կարևորություն: Կարելի է ենթադրել, որ միջին տարիքի անձանց մոտ, ովքեր զբաղվում են ոչ մասնագիտական գործունեությամբ և զբաղեցնում են ավելի ցածր կարգավիճակ սոցիալական հանրույթում՝ *արժեքային ոլորտում նկատվում է «մասնագիտություն» արժեքի փոխարկերպում «աշխատանք» արժեքի՝ իբրև գոյատևման միջոցի:* Այսինքն՝ *անհատականացման բարձրակարգ արժեքից տեղի է ունենում փոխակերպում հարմարման արժեքի: Արժեքային ոլորտի նման վերակառուցումը տեղ է գտնում մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում, երբ մասնագիտական արժեքները կորցնում են առաջնային նշանակությունը:*

Չնայած միջին տարիքում արժեքային համակարգը ձևավորված և հարաբերականորեն կայուն է, այնուամենայնիվ, չի կարելի բացառել սոցիալական, տնտեսական-գաղափարական, արժեքային դաշտի փոփոխությունները, որոնք մեծապես ազդում են հասուն անձի արժեքային ոլորտի վրա: Սուբյեկտիվ արժեքների և իմաստային նախապատվությունների փոփոխականությունը կապված է անհատի և հասարակական կյանքի օբյեկտիվ իրականության հետ, որում արժեքային համակարգը դրսևորվում է: Այնուամենայնիվ, արժեքային ոլորտի վերակառուցման գործընթացը չունի միայն օբյեկտիվ պայմանավորվածություն քանի, որ այդ փոփոխությունների սուբյեկտն ունի անհատական առանձնահատկություններ, ներաշխարհ՝ իրեն բնորոշ արժեքային կողմնորոշումներ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել հիմնահարցի ուսումնասիրության մեջ: Հետազոտողները գտնում են, որ մասնագիտական գործունեության վերագնահատումը կապվում է մի շարք պատճառների հետ: Առաջինը կապված է արտադրության և աշխատանքի բաշխման ժամանակակից համակարգի հետ: Այսպես, առանձին գործընթացների իրականացման համար ներգրավվում են մասնագետներ, որոնք տիրապետում են տվյալ ոլորտում անհրաժեշտ կոմպետենտության, իսկ միջին տարիքի անձինք արդեն այնքան ճկուն չեն, որքան նախկինում և դուրս են մնում մասնագիտական գործունեության ոլորտից: Մյուս պատճառը հետևյալն է. աշխատանքը նման մարդկանց համար նվազ ցանկալի է: Հետազոտությունները ցույց են տալիս, որ աշխատանքի հետ կապված

վերագնահատումները ավելի հեշտ են ապրում այն անձինք, ովքեր իրատեսորեն են գնահատում իրենց ընդունակությունները, իրենց մասնագիտական դիրքի առավելությունները և թերությունները [45;711]: Իհարկե, այս տվյալները վերաբերում են ԱՄՆ-ի բնակչությանը: Այդ է պատճառը, որ այդ տվյալներին կարելի է մոտենալ որոշ վերապահումով՝ հաշվի առնելով էթնիկական և սոցիալական որոշ գործոններ:

Կյանքի կեսի ճգնաժամի ապրման հետ կարևորություն է ստանում սոցիալ-տնտեսական պայմանները: Վ. Ա. Տոլոչեկը նշում է, որ աշխատանքի մեջ լուրջ ճշգրտումներ մտցրեցին այնպիսի գլոբալ պատմական փոփոխություններ, ինչպիսիք են ծանր ֆիզիկական աշխատանքի մասի կրճատումը և բարձր տեխնոլոգիաների ներդրումը, համակարգչայնացումը, աշխատուժի (բանվոր) արտագաղթը («ապաորակավորումը», աշխատանքային շահույթի կրճատումը, մասնագիտական գործունեության ինտենսիվացումը, ինտելեկտուալ լարվածությունների աճը, օրվա ընթացքում յուրաքանչյուր մարդու աշխատանքի արդյունավետության վրա վերահսկողության ուժեղացումը): Իհարկե, նման պայմանները չեն կարող չանդրադառնալ հանրույթում անձի մասնագիտական կարգավիճակի տեղաշարժերի վրա: Ժամանակակից աշխարհը առաջարկում է մասնագիտությունների նոր «անվանացանկ», իսկ եղած մասնագիտությունների մեջ մտցնում է բարդություններ, որոնք միջին տարիքի անձը չի կարողանում հաղթահարել: Արդեն քննարկել ենք այն հարցը, որ ժամանակակից աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխության օբյեկտիվ պայմաններից մեկն է: Նման պայմաններում բազմաթիվ միջին տարիքի անձինք զբաղվում են ավելի ցածր որակավորմամբ աշխատանքով, ինչը որոշում է մեծ քանակությամբ միջին տարիքի անձանց հոգեկան աշխարհի առանձնահատկությունները: Վ. Ա Տոլոչեկը իրավացիորեն նշում է, որ աշխատանքը որպես անձի կարևոր կարևոր բաղադրիչ, ես հիմնադրույթի տարր, իր մասին «հայտարարում է» սոցիալական կամ ներքին՝ հոգեբանական միջավայրի ցանկացած փոփոխության դեպքում [79;29,107]:

Սոցիալական փոփոխվող պայմանների, անցումային շրջանի հորձանուտում հայտնված միջին տարիքի անձանց մեծամասնության հոգեկանում, ովքեր դուրս են մնացել սոցիալական կառուցվածքից, նկատվում են փոփոխություններ՝

մասնավորապես արժեքաիմաստային ոլորտի վերակառուցումների ձևով, ինչը թույլ է տալիս հարմարվել միջավայրին՝ կրկին իմաստավորելով նոր իրականության հետ հարաբերությունները: Խնդրի ուսումնասիրությունը հրատապ է հատկապես միջին տարիքի անձանց շրջանում, քանի որ նրանք են կազմում վարընթաց սոցիալական շարժունությամբ պայմանավորված մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում հայտնված «թիրախային խումբը»: Ինչպես նշեցինք, միջին տարիքում աշխատանքի փոփոխությունը կամ կորուստը, ապրվում է բավականին սուր ձևով: Հետազոտությունները ցույց են տալիս, որ աշխատանքի կամ մասնագիտական գործունեության փոփոխությունը այս տարիքում անձի առջև ծառացող կարևորագույն խնդիրներից է: Ներկա տնտեսական ճգնաժամերի փուլը ուղեկցվում է զանգվածային ազատումներով՝ կապված արտադրության կրճատման հետ, ծնում է նոր ֆենոմեն՝ գործազրկություն [64;535]:

Գործազրկությունը միջին տարիքում կարող է դառնալ ընտանեկան հարաբերությունների կորուստի, սեփական անպետքության զգացումի առաջացման և ինքնահարգանքի կորուստի պատճառ: Գործազրկությունը հատկապես սուր է ապրվում այն տղամարդկանց կողմից, որոնք սոցիալականացման ընթացքում յուրացրել են ընտանիքին կերակրողի դերը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ նրանք ավելի հաճախ են տառապում ուժեղ դեպրեսիայից և տագնապից, նրանց մոտ ավելի հաճախ, քան աշխատող տղամարդկանց մոտ նկատվում են հոգեախտածին հակազդումներ: Անձի մոտ առաջանում է անելանելիության իրավիճակ, կորցնում է հույսը ապագայի նկատմամբ: Ինչպես նշեցինք, միջին տարիքի անձի համար աշխատանքի հարցի լուծումը ավելի բարդ խնդիր է: Առաջինը նա կապված է այն հանգամանքի հետ, որ անձի մոտ դեռ առկա է նույնացում իր մասնագիտական կարգավիճակի հետ, ուստի նա դեռ պատրաստ չէ հրաժարվել մասնագիտական դերից: Երկրորդ՝ աշխատանքի ընդունելիս առկա է նման անձանց խտրականության հավանականություն՝ կապված տարիքի հետ: Երրորդ հերթին, ցանկացած մասնագետ այս դեպքում դառնում է ցածր վարձրատրվող և ունենում է ավելի ցածր կարգավիճակ, քան նախկինում: Նման իրադրության մեջ հայտնված անձանց ստվար զանգված են կազմում հետխորհրդային

երկրների բնակչությունը, որոնց ճնշող մեծամասնությունը միջին տարիքի ներկայացուցիչներ են [45;713]:

Լ. Ն Յուրևան փաստում է հետխորհրդային Ուկրաինայի բնակչության հոգեբանական ինքնազգացողության փոփոխության մասին: Մարդկանց մեծամասնության մոտ առկա է տագնապայնության աճ, հոռետեսական դիրքորոշումներ, «գոյաբանական վակուումի», սոցիալական չպահանջվածության և հեռանկարի բացակայություն: Սոցիոմշակութային փոփոխությունները հանգեցնում են զանգվածային գիտակցության փոփոխության՝ իրականության անտրամաբանական ընկալման միտմամբ, աուտիկ և արխաիկ մտածողության ձևերի գերակայությամբ [94]:

Աշխատանքի բնույթը, հեղինակությունը կապվում է անձի հարաբերությունների համակարգի հետ: Անկասկած, աշխատանքի բնույթն ու պայմանները իրենց ազդեցությունն են ունենում անձնային շարժընթացի շատ ֆենոմենների, հուզական վիճակների վրա: Սոցիալական կարգավիճակն ազդում է անձի ինքնագնահատականի վրա, իսկ վերջինիս միջոցով նաև մարդու տրամադրության վրա՝ հաշվի առնելով ներկայումս սեփական դերով բավարարված լինելու փաստը: Սթրեսին հատկապես նախատրամադրված են գործազուրկները, նույնիսկ եթե գործազրկությունը տևական չէ: Հետազոտությունները փաստում են, որ սթրեսի գործոնները ավելանում են ծառայողական դիրքի բարձրացմամբ: [33;87-95]: Փաստորեն, միջին տարիքում անձի մտորումները կապված սեփական կարգավիճակի հետ: Իհարկե, կարևորը ոչ թե մասնագիտական կարգավիճակի փոփոխության օբյեկտիվ իրադրությունն է, այլ դրա սուբյեկտիվ ընկալումը, ապրումը անձի կողմից

Այնուամենայնիվ, միջին տարիքում մասնագիտական կարգավիճակի փոփոխությունը անձի մոտ առաջացնում է վիճակ, որը հաճախ բնորոշվում է մասնագիտական ինքնաիրացման հնարավորության սահմանափակմամբ, սեփական կյանքի որակով անբավարարվածությամբ, կենսական հենարանի զգացման բացակայությամբ: Անձը կարող է հայտնվել հոգեբանական փակուղում, ինչը չհաղթահարելու դեպքում, տարիքային նորմատիվ ճգնաժամը կարող է վերաճել հոգևոր ճգնաժամի:

Հոգևոր ճգնաժամը, ըստ Վ. Վ. Կոզլովի, անձի զարգացման հատուկ փուլ է, երբ նախաձեռնվում է ես-ի նյութական, հոգևոր և սոցիալական ներքին ենթահամակարգերի միավորումը մեկ միասնական տարածության մեջ, ինչը տեղի է ունենում բոլոր արժեքների վերագնահատման ժամանակ և այդ գործընթացում անձը սկսում է վերաիմաստավորել կյանքում իր տեղը: Անձի առջև ծառանում են ինքնորոշման, ինքնաիրացման խնդիրներ և նա, փաստորեն, ներգրավվում է ճգնաժամի մեջ: Ճգնաժամի ժամանակ տեղի է ունենում կյանքի իմաստի վերաիմաստավորում, որը ծայրահեղ իրավիճակներում գոյատևման հոգեբանական մեխանիզմ է. կամ փախչել, կամ դիմակայել անբարենպաստ ճնշմանը: Եթե մարդու գոյության իմաստները չեն իրացվում, ապա կյանքի որոշակի փուլում առաջանում է գոյաբանական դատարկություն և նա բախվում է իր գոյության անիմաստության հետ, ինչը բավականին վտանգավոր իրադրություն է: Հեղինակը առանձնացնում է ես-ի երեք ենթահամակարգ՝ ես-նյութական, ես-սոցիալական, ես-հոգևոր: Յուրաքանչյուր ենթահամակարգ ունի իր միջուկը. նյութական ես-ի համար՝ մարմինն է, սոցիալական ես-ի համար՝ ինտերգրատիվ սոցիալական կարգավիճակը, իսկ հոգևոր ես-ի համար՝ գոյաբանական միջուկը: Վ. Վ. Կոզլովը գտնում է, որ հոգևոր ճգնաժամի պատճառ կարող է դառնալ այլափոխումը կամ այլափոխման սպասնալիքը՝ որպես ֆրուստրացնող գործոն ես-ի միջուկային բաղադրիչների համար: Վ. Վ. Կոզլովը նշում է, որ ինտեգրատիվ սոցիալական կարգավիճակի կորուստը՝ ազատման, հաստիքների կրճատման, թոշակի անցնելու, ձեռնարկության լուծարման կամ ապաորակավորման պատճառով նշանակալի սոցիալական կապերի այլափոխումը, հրահրում է ուժեղ հուզական ապրումներ և անձի կողմից ապրվում են որպես անհաջողություն: Հիրավի, կյանքի իմաստի կորուստը վտանգներով լի իրավիճակ է, երբ մարդուն իր գոյությունը չի բավարարում: Այդ վիճակը ուղեկցվում է դեպրեսիայիով և տագնապով: Անձը որպես իրադրությունից ելք կարող է ընտրել ինքնասպանությունը: Նրա մոտ կարող են ակտիվանալ մահվան հետ կապված մտքեր: Դրանք առաջանում են նախկին հավակնությունների կործանման և նախկին դերերից ազատագրման արդյունքում: Հեղինակը ճշմարտացիորեն նշում է, որ ճգնաժամը մարդուն զրկում է արտաքին հենարանի որոշակի տարրերից, օրինակ՝ սոցիալական կարգավիճակ, եկամուտ, և

այլն, ինչի հետ նա ունի նաև ներքին նույնացում: Կենսական իրադրությունից դժգոհ որոշ մարդկանց ճգնաժամից դուրս գալու մարտավարություններից են հոգեկան ցավը ալկոհոլի մեջ խեղդելը, պատահական սեռական արկածները այլն: Որոշներն էլ գտնում են ագրեսիայի համար օբյեկտներ [39;106-110]: Իհարկե, ճգնաժամը մարտահրավեր է անձի գոյությանը, որից ելքը մեծապես կապված է անձի հմտություններից, ընդունակություններից, անհատական առանձնահատկություններից:

Այսպիսով, մասնագիտության փոփոխության իրադրությունը հատկապես դժվար է իմաստավորվում անձի կողմից միջին տարիքում, երբ մասնագիտական ոլորտում ձեռք է բերված որոշակի կարգավիճակ: Վարընթաց սոցիալական շարժունությամբ պայմանավորված մասնագիտական կարգավիճակի փոփոխության իրադրությունը հոգեբանական առումով ունի հակասական բնույթ. մի կողմից անձը հեղինակավոր մասնագետ է նախկին մասնագիտական ոլորտում, կարող է հպարտանալ իր որոշակի ձեռքբերումներով, մյուս կողմից, այդ կարգավիճակը, հեղինակությունը, ձեռքբերումները այլևս նրան բավարարվածություն չեն բերում: Եվ միայն փոփոխությունների, նորի նկատմամբ ցանկությունը, ուժեղ դրդապաճառայնությունը, վախի բացակայությունը, թույլ կտան նրա արմատապես փոխել իր կյանքը, դառնալ մասնագետ այլ ոլորտում: Մասնագիտության փոփոխությունը միջին տարիքում դրսևորվում է հատկապես հոգեբանական առումով՝ ազդելով անձի հոգեվիճակների բնույթի վրա՝ ընդհուպ հոգևոր ճգնաժամի մեջ ընկնելը: Մեր կարծիքով, մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում տեղ է գտնում անձի արժեքային ոլորտի վերակառուցումներ, որոնք պայմանավորում են նոր պայմաններում անձի արժեքային ոլորտի բովանդակությունն ու հարմարվողականության մակարդակը:

2.4 Մասնագիտական մարգինալությունը և անձի հարմարվողական միտումները

Հետխորհրդային տարածության մեջ տիրող փոխակերպման սոցիալական գործընթացները առաջին հերթին արտահայտվեցին մասնագիտական դաշտի խորը վերափոխումներով: Սոցիալական կառուցվածքում ստվար զանգված կազմեցին անձինք, ովքեր հին ու նոր արժեքային համակարգի կրողներն են: Մարդկանց մեծ

մասը կորցերց իր մասնագիտական կարգավիճակը և հայտնվեց կամ գործազուրկի կարգավիճակում, կամ աշխատանք գտավ ավելի ցածր որակավորմամբ ոչ մասնագիտական գործունեության բնագավառում: Այս ամենը մեզ թույլ է տալիս ենթադրել, որ անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխության երևույթը կապվում է մեկ այլ երևույթի՝ մարգինալության հետ և զարգացնել ժամանակակից մասնագետ մարգինալի մասին պատկերացումը: Վերջինս արժեքային վերակառուցումների սուբյեկտն է, կրողը: Ուստի նպատակահարմար է մեկնաբանել այս հիմնահարցը նաև մարգինալության հիմնադրույթի դիրքերից:

Մարգինալության հիմնադրույթը ի սկզբանե դիտարկվել է սոցիոլոգիական դիրքերից: Վերջինս ուսումնասիրում է սոցիալական տեղաշարժերի հետևանքով մարգինալ կարգավիճակ զբաղեցնող անձի հոգեկանը, ձևավորված անձնային նորագոյացությունները, դերային նույնացումը՝ փորձելով հասկանալ սոցիալական միջավայրի հետ մարգինալ անձի փոխազդեցության, հարմարման յուրահատկությունը:

«Մարգինալություն» եզրույթը շրջանառության մեջ է դրել Ռ. Փարկը իր «Մարդկային արտագաղթը և մարգինալ մարդ» աշխատության մեջ: Նա վերլուծում է մարգինալությունը՝ այն կապելով արտագաղթի հետ, երբ մարդը հայտնվում է միաժամանակ երկու մշակույթների մեջտեղում: Մարգինալին գլխավոր առանձնահատկությունը բարոյական երկատվածության զգացումն է. երբ նախկին սովորությունները մերժված են, իսկ նորերը դեռ ձևավորված չեն: Առավել արժեքավոր են նրա կողմից առանձնացրած մարգինալ անձի հոգեբանական բնութագրերը. կասկածներ կապված սեփական անձնային արժեքի հետ, ընկերների հետ կապերի անորոշություն և նվաստացված լինելու մշտական վախ, այլ մարդկանց ներկայությամբ հիվանդագին վախ, միայնակություն, չափազանց երազկոտություն, մտահոգվածություն ապագայով, հաճույք ստանալու անընդունակություն և համոզմունք այն բանում, որ շրջապատողները իր հետ անարդարացի են վարվում [101;355-356]: Նրա առաջ քաշած մարգինալության հիմնադրույթը հիմնվում է մշակութային գործընթացների հասկացման վրա, երբ մարգինալ անձը բնորոշվում է իբրև մշակութակին հիբրիդ՝ որպես տարբեր մշակույթի մարդիկ միավորման արդյունք: Ուդտի նա կենտրոնանում է ոչ թե անձի, այլ հասարակության մեջ տեղ գտնող գործընթացների վրա:

Է. Սթոունքվիսթը ևս մարգինալության հիմնախնդիրը դիտարկում է մշակութային ենթատեքստում՝ իբրև երկու մշակույթների բախման արդյունք: Արտաքին բախումը առաջացնում բախում մարդու ներհոգեկան աշխարհում: Խնդիրը սրվում է այնքանով, որքանով անձը ձգտում է դիրք զբաղեցնել բախումնային իրադրության մեջ. արժեքային համակարգով և աշխարհայացքով նա պատկանում է մեկ խմբի, իսկ ռասսայով, ծագմամբ, արյունակցական կապերով մեկ այլ խմբի (որպես կանոն, գերակայող սպիտակ եվրոպական ռասայի): Այս տեսանկյունից մարգինալը արժեքային բախում ապրող անձն է, որի ինքնագիտակցությունը երկատված է: Բախման բովանակությունը կապված է թույլ խմբի ձգտմամբ տեղ զբաղեցնելու գերակայող խմբում: Նրանց մի մասը ձուլվում է գերակայող մշակույթին, իսկ մյուս մասը, որոնք ընդունում չեն ստանում խմբի կողմից՝ դառնում են մարգինալներ: Է. Սթոունքվիսթը առանձնացնում է մարգինալ մարդու հետևյալ հոգեբանական բնութագրերը. բարձր զգայունակություն և ինքնագիտակցություն, ռասսային պատկանելության սրված զգացում, երկակի, անկայուն նույնություն, հոգու հիվանդագին վիճակ, անլիարժեքության բարդույթ և տարբեր փոխհատուցող մեխանիզմներ: Հեղինակը նշում է, որ արյան խառնումը ինքն իրենով չի հանգեցնում մարգինալության, այլ առաջացնում է որոշակի սոցիալական իրադրություն, ինչը որոշում է անձի դիրքը [104;219]:

Մարգինալության նկատմամբ սոցիոլոգիական մոտեցումը այն բնորոշում է իբրև ծայրամասային երևույթ, որը տեղ է գտնում սոցիալական կառուցվածքներում և հասարակական գործընթացներում: Մարգինալության հիմնադրույթը սոցիոլոգիայում կապվում է սոցիալական կառուցվածքի, հարմարման, սոցիալականացման, սոցիալական շարժունության, անոմիայի դևիանտության, նույնացման, կարգավիճակի, օտարացման և ապադասակարգայնացման մարքսիստական հասկացման հետ: Կիրառվում են «մարգինալ խումբ», «մարգինալ իրադրություն», «մարգինալ կարգավիճակ» եզրույթները: Մարգինալության նկատմամբ որոշ մոտեցումներ այն կապում են հասարակության գործառնության դժվարությունների հետ: Մարգինալների մեջ այս դեպքում ներառվում են սոցիալապես մեկուսացված խմբերը, որոնք կազմում են «սոցիալական ընդհատակը»:

Մարգինալությունը միշտ չէ, որ կապվում բացառապես բացասական երևույթների հետ, այլ ենթադրում է նորարարություն, յուրատիպություն, ինչը պայմանավորվում է անձի զբաղեցրած կարգավիճակի յուրատիպությամբ: Ս. Ա. Գլադիշևի համոզմամբ, մարգինալները պետք է ոչ թե ամաչեն իրենց կարգավիճակից, այլ դրա մեջ տեսնեն իրենց յուրօրինակությունը: Նա հասարակությունը բաժանում է մարգինալների՝ նորարարների և ամբոխի՝ մնացած մարկանց, որոնք ապրում են՝ ընդունելով և հետևելով հասարակության նորմներն ու արժեքները: Փոփոխվող հասարակության պայմաններում, մարդիկ, ովքեր նման չեն բոլորին, ունեն ընտրելու հնարավորություն՝ կամ ընդունել նորմերը և մնալ մարդկանց հետ, կամ հեռանալ: Ըստ հեղինակի, նրանց մեծ մասը ընտրություն չի կատարում և այդ է պատճառը, որ հասարակության մեջ հայտնվում են ալկոհոլամոլներ, թմրամոլներ, հանցագործներ [22;1-8]: Այսպիսով, սոցիոլոգիական մոտեցումը կենտրոնանում է մարգինալ խմբերի, դրանց ծագման և շարժընթացի ուսումնասիրության վրա:

Մարգինալության շուրջ մոտեցումների բազմազանությունը կապված է երևույթի բարդ ու բազմաշերտ լինելու հետ: Այսպես, Լ. Մ. Բաննիկովան մարգինալությունը հասկանում է իբրև փոփոխվող պայմաններին հարմարման սոցիալ-ախտաբանական ձև, որը կապված է ժամանակակից Ռուսաստանի հասարակական հիմքերի վերակառուցման հետ: Այս պայմաններում առաջացնում է սոցիալական անոմիա, անհամաձայնություն, արժեքների հակասականություն, ինչը համահարաբերակցվում է «մարգինալություն», «մարգինալ անձ» հասկացությունների հետ: Հեղինակը տարբերակում է փոփոխվող պայմաններին հարմարման երկու ձև՝ դրական և բացասական: Դրականը բնորոշվում է կյանքի մակարդակի պահպանման միտմամբ, ինչը թույլ տալիս պահպանել և բարձրացնել կարգավիճակը և կապվում է պոտենցյալ մարգինալացման կայուն և խթանող կողմնորոշման հետ: Այս խումբը կազմում են տնտեսության կառավարական հատվածում աշխատած մասնագետները (նախկին կադրային զինվորականներ, ռազմա-արտադրական համալիրի, գիտական, ինժիներա-տեխնիկական ոլորտի աշխատողներ), ովքեր անցյալում ունեցել են բարձր կրթական մակարդակ և մասնագիտական կարգավիճակ և հայտնվել են այն հարկադրաբար փոխելու իրադրության մեջ: Փոփոխվող պայմաններում չպահանջվածությունը բերում

է նյութական վիճակի անհամապատասխանության, բարձր սոցիալական կարգավիճակի անկման: Հեղինակն այս խումբն անվանում է «հարմարվածների խումբ»: Նրանք ունեն կայուն սոցիալական կարգավիճակ և զարգացման հեռանկարներ: Երկրորդ խումբը կազմող անձանց բնորոշ է բացասական հարմարումը, չհարմարվածությունը: Այս խմբի մեջ մտնում են մարդիկ, ովքեր կայուն կարգավիճակ և զբաղվածություն չունեն՝ հանցագործ տարրեր, անտուններ, մուրացկաններ աղքատներ, որոնց վարքն ունի ապակառուցողական ուղղվածություն: Լ. Մ. Բաննիկովան նշում է, որ նման խմբերի դասակարգումը «մարգինալացում» և «հարմարում» հասկացությունների միջոցով կրում է պայմանական բնույթ, քանի որ մարգինալությունը ենթադրում է անորոշություն և փոխթափանցում, որն արդեն կապված է սոցիալական շարժունության և հասարակության փոխակերպման հետ [15]:

Որոշ հեղինակներ՝ Զ. Կ. Գոլենկովան, Ե. Դ. Իգիթխանյանը, Ի. Վ. Կազարինովան, մարգինալությունը նկարագրում են ինքնանույնացման եզրույթով, գտնելով, որ հասարակության մեջ տեղ գտած գործընթացների անկայունությունը առաջացնում է սոցիալական կառուցվածքում սեփական տեղի գիտակցման հետ կապված դժվարություններ: Ինքնանույնացման բովանդակությունը պատճառավորվում է հասարակության մեջ սոցիալական հարաբերություններով, դրանց կայունության մակարդակով, սուբյեկտների ներգրավվածությամբ և միասնական արժեքային համակարգի առկայությամբ կամ բացակայությամբ: Այս առումով, իհարկե, անցումային հետխորհրդային հասարակությունն ունի իր յուրահատկությունները: Միասնական արժեքային համակարգի բացակայությունը, դրա չկայացվածությունը, ինչպես նաև շերտավորման խստության բացակայությունը հանգեցնում է խմբերի միջև սահմանների լվացմանը, բազմաթիվ դժվար նույնացվող և մարգինալ խմբերի ի հայտ գալուն: Ըստ հեղինակների՝ մարգինալներ կարող են բնորոշվել նրանք, ովքեր գտնվում են հասարակության հետ սոցիալ-նույնականացնող (իդենտիֆիկացիոն) կապերի խզման իրադրության մեջ: Այս դեպքում հաշվի է առնվում մարգինալության երևույթի հոգեբանական կողմը, այսինքն՝ մարգինալությունը հասկացվում է ոչ թե զբաղեցրած սոցիալական կարգավիճակի և սոցիալական գործընթացների բնույթից ելնելով, այլ տվյալ փոփոխությունների ենթատեքստում սեփական կարգավիճակն ընդունելու,

անհատական արժեքային համակարգի հետ համադրելու տեսանկյունից: Այս դեպքում, իհարկե, կարևոր է նոր սոցիալական կարգավիճակի հետ անձի նույնացման աստիճանը, քանի որ այն ընդունելու կամ չընդունելու հարցից է մեծապես կախված մարգինալության երևույթը [24;12-17]: Իզուր չէ, որ հեղինակները պոտենցյալ մարգինալությունը կապում են մասնագիտական կարգավիճակի հետ: Վերջին շրջանում մեծացել է առանձին սոցիալական միջուկների «փակվածությունը», ինչպես նաև մեծացել են դրանց միջև սոցիալական տարբերությունները: Արդյունքում աշխատավորները սկսում են ավելի զգալ իրենց սոցիալական ձգտումների շեմը, ինչը չի կարող չազդել ինքնանույնացման, կատարվող պարտականությունների և մասնագիտական և սոցիալական պիտանելիության վրա: Անձի կողմից նոր ավելի բարձր շերտ մտնելու դժվարությունները կամ սոցիալական աստիճանակարգից ներքև գլորվելը լի է բացասական հետևանքներով, որոնք հանգեցնում են սոցիալական այլափոխման և լյումպենացման: Նախկինում ավելի բարձր սոցիալական, մասնագիտական կարգավիճակ զբաղեցրած անձը նոր՝ ավելի ցածր կարգավիճակի պայմաններում, կարող է բախվել ինքնանույնացման խնդրի հետ, երբ առաջանում է հակասություն նույնության տարբեր նմուշների միջև, ինչի տևական լինելու դեպքում զարգանում է նույնության ճգնաժամ: Ամեն դեպքում մարգինալությունը ենթադրում է անձի նույնության հիմքերի շոշոփում: Մարգինալ անձը չունի հստակ նույնություն, քանի որ նույնության նոր նմուշները դեռ չեն ձևավորվել կամ անձին չեն բավարարում:

Հետազոտող Ա. Ի. Կրավչենկոն մարգինալությունը բնորոշում է.

- անհատի կամ խմբի տեղաշարժման վիճակ (կարգավիճակի փոփոխություն)
- սոցիալական խմբերի բնութագիր, որոնք գտնվում են սոցիալական կառուցվածքում մարգինալ (ծայրամասային, սահմանագծային, մեկուսացված) դրության մեջ:

Պարզ է, որ մենք արժեքային վերակառուցումները դիտարկում ենք մարգինալության առաջին տարբերակի դեպքում, երբ տեղի է ունենում տեղաշարժեր սոցիալական խմբերում, քանի որ երկրորդ դեպքում մարգինալությունը պայմանավորված է անձի զբաղեցրած մարգինալ կարգավիճակով [44; 162-163]:

Մարգինալության երևույթի ուսումնասիրության մեջ առավել արժեքավոր երևույթի հոգեբանական մեկնաբանությունը: Քանի մարգինալության երևույթին բնորոշ են դերային, արժեքային բախումներ, նույնության ճգնաժամեր: Այս տեսանկյունից ժամանակակից հասարակության պայմաններում անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխությանը ուղեկցող հոգեբանական իրողությունների, արժեքաիմաստային ոլորտի վերակառուցումների, հարմարման միտումների ուսումնասիրությունը դարձել է օրախնդիր:

Մարգինալության հոգեբանական մեկնաբանության մեջ արժեքավոր են Ն. Ռ. Հակոբյանի հայացքները: Նա մարգինալությունը բնորոշում է իբրև սոցիալ-հոգեբանական ֆենոմեն, ինչը հատկապես փոխակերպվող, անցումային հասարակության ծնունդ է: Ըստ նրա՝ մարգինալությունը համապարփակ երևույթ է և անձի զարգացումը դրանից դուրս հասկանալը դժվար է: Այսպես, հեղինակը գրում է. «Առանց մարգինալության, հատկապես չափավոր մարգինալության, հնարավոր չէ պատկերացնել անձի սոցիալականացման և ինքնահիրականացման գործընթացը»: Այն մարդկային կեցությանը բնորոշ բնութագիր է: Այսինքն՝ յուրաքանչյուր մարդ պոտենցիալ մարգինալ է՝ համապատասխան սոցիալ-մշակութային և սոցիալ-հոգեբանական պայմանների առկայության դեպքում կարող է վերածվել իրական մարգինալի: Այս տեսանկյունից մարգինալությունը շեղում չէ նորմայից, այլ մի երևույթ է, որին անձն իր կենսագործունեության ընթացքում անխուսափելիորեն բախվում է: Մարգինալությունը հաճախակի կապվում է հասարակության մեջ տեղ գտնող սոցիալական շարժունության (մոբիլություն) երևույթի հետ, երբ նկատվում է անհատի տեղաշարժ մի խմբից դեպի մյուսը, որը կարող է լինել վերընթաց և վարընթաց ուղղություններով: Ընդ որում՝ վարընթաց ուղղվածության դեպքում մարդը շարժվում է իր նախկին կարգավիճակի համեմատ դեպի ավելի ցածր տեղեր (օրինակ, մարզիկը դառնում է հանցավոր խմբի անդամ): Բարձր որակավորում ունեցող մասնագետը կատարում է ցածր որակավորում պահանջվող աշխատանք և այլն): Վերընթաց շարժունության դեպքում մարդը ձգտում է բարելավել իր սոցիալական կարգավիճակը, ավելի բարձր տեղեր զբաղեցնել սոցիալական աստիճանակարգում (օրինակ, առևտրականը դառնում է գործարար, պատգամավոր կամ նախարար): Ըստ

հեղինակի՝ մարգինալության դեպքում կարևոր է ոչ միայն սոցիալական շարժունության առկայությունը, այլ նաև հոգեբանական շարժունությունը առկայությունը: Յուրաքանչյուր սոցիալական շարժունություն մեխանիկորեն չի հանգեցնում հոգեբանական շարժունության և ընդհակառակը: Այսպես, մարդը կարող է պահպանել իր սոցիալական, մասնագիտական կարգավիճակը, օբյեկտիվորեն անդամակցել տվյալ խմբին, սակայն սուբյեկտիվորեն (հոգեբանորեն) կորցնել այդ խմբին կամ կարգավիճակին բնորոշ հատկությունները: Եվ, ընդհակառակը, զրկվելով իր մասնագիտական կարգավիճակից, կարող է երկար ժամանակ պահպանել այդ կարգավիճակին բնորոշ հոգեսոցիալական հատկությունները, այսինքն՝ սոցիալական շարժունությունը միանշանակորեն չի հանգեցնում հոգեբանական շարժունության: Ակնհայտ է, որ անձի մասնագիտական կարգավիճակի անկումը գերազանցապես սոցիալական-հոգեբանական վարընթաց շարժունության արդյունք է: Երբ սոցիալական կառույցում տեղի է ունենում վարընթաց տեղաշարժ, նկատելի է դառնում հետևյալ երևույթը. մարդկանց զգալի մասի սոցիալական կարգավիճակը նոր պայմաններում չի բավարարում հանրույթի կողմից առաջադրվող մասնագիտական պահանջներին: Նման պայմաններում մարդկանց մի մասը ձեռք է բերում ավելի ցածր սոցիալական կարգավիճակ, իսկ մյուս մասն էլ՝ չի կարողանում ձեռք բերել սոցիալական կարգավիճակ և դառնում է կարգազուրկ կամ գործազուրկ: Այս դեպքում կարող ենք խոսել անձի հարմարման երկու միտումների առկայության մասին. առաջին դեպքում՝ *պասսիվ հարմարման*, որի արդյունքը հիմնականում չհարմարվածությունն է: Երկրորդ դեպքում՝ *ակտիվ հարմարման*, որը ընթանում է անձի կողմից որոշակի ակտիվության դրսևորմամբ, այն է՝ ներգրավմամբ ոչ մասնագիտական գործունեության ոլորտ: Այսպես, առաջին խմբի մեջ մտնում են մարդիկ, ովքեր զբաղվում են ավելի ցածր որակավորմամբ աշխատանքով (նախկին մտավորականներ, զինծառայողներ, քաղծառայողներ և այլոք, որոնք հիմնականում լրացնում են սպասարկման ոլորտի շարքերը), իսկ մյուս խումբը կազմում են գործազուրկները: Այս երկու խումբը կազմող անձինք ունեն մեկ ընդհանրություն. նոր պայմաններում սոցիալական կարգավիճակով անբավարարվածությունը, ինչը թույլ է տալիս նրանց բնորոշել իբրև մարգինալներ:

Ն. Ռ. Հակոբյանը նշում է, որ հետամբողջատիրական վերափոխվող հասարակություններում, որոնցից է նաև ՀՀ-ն, մարգինալացմանը նպաստող գործոններից է՝ խորհրդային սոցիալ-քաղաքական համակարգի փլուզումը, տնտեսական ու մշակութային կապերի խզումը, զանգվածային գործազրկությունը, պատերազմները, բռնագաղթը, ներգաղթը և այլն: Ներքին պատճառների մեջ առանձնացնում է անձի կենսաբանական, ֆիզիկական, իմացական, բարոյական և հոգեբանական անկայուն վիճակները, սոցիալականացման և հարմարողականության մակարդակը, որոնք պայմանավորված են նրա հոգեկան կառուցվածքի և հոգետիպի՝ խառնվածքի, բնավորության և մտածելակերպի առանձնահատկություններով: Անհատական մակարդակով մարգինալության առաջացման գործոններ կարող են լինել արժեքային բախումը, իմացական ու բարոյական աններդաշնակությունները, ֆրուստրացիաները, սոցիալական ու էթնիկական խտրականությունը, սոցիալական կարգավիճակի ու դիրքի կորուստը, ընդհանուր անբավարարվածությունը, անհամատեղելի սոցիալական դերակատարումները, կյանքի իմաստի որոնումները, այլընտրանքային, երբեմն անօրինական ճանապարհներով ինքնահաստատվելու ցանկությունը և այլն [3;31,42,46]:

Նկարագրված ներքին գործոնների ողջ համախումբը վկայում է, որ երևույթի ապրման, ընթացքի հոգեբանական առանձնահատկությունները մեծապես կախված են առանձին անձի հոգեբանական առանձնահատկություններից, նրա արժեքային նախապատվություններից, ուստի վերջին փաստը պետք է անպայմանորեն հաշվի առնել մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում անձի հոգեբանական այլափոխումները նկարագրելիս: Այնուամենայնիվ, մարգինալության երևույթի կենտրոնում մարգինալ անձն է՝ իրեն բնորոշ հոգեկան և մարմնական փոփոխություններով: Մարգինալությունը, ինչպես տեսնում ենք, բավականին ընդարձակ երևույթ է, ուստի այն ավելի մանրամասնորեն հասկանալու համար կարևոր է տարբերակել դրա տեսակները: Առանձնացնում են.

ա) կառուցվածքային (սոցիալական) մարգինալություն

բ) մշակութային և էթնոմշակութային մարգինալություն

գ) սոցիալական դերերի մարգինալություն

Կառուցվածքային կամ մարգինալությունը կապվում է սոցիալական խմբերի տեղաշարժման հետ և հատկապես ցայտուն դրսևորվում է տեղի ունեցող արմատական փոխակերպումների, ու ճգնաժամերի ժամանակ, երբ մի հասարակարգից անցում է կատարվում մյուս տիպին՝ քաղաքական, սոցիալական և տնտեսական անհավասարության պայմաններում (երբ անհատները, սոցիալական կամ էթնիկական խմբերը զրկվում են որոշակի իրավունքներից կամ էլ նրանց նկատմամբ կիրառվում է խտրականություն): Սոցիալական մարգինալությունը ենթադրում է ցածր կարգավիճակի առկայության, փոքրամասնությանը պատկանելություն, երբ անձը հայտնվում է սոցիալական կառուցվածքի ծայրամասում կամ սահմաններից դուրս և նրա կենսակերպն ու արժեհամակարգը տարբերվում է ընդունված նորմերից և արժեքներից: Ուստի այս տեսանկյունից վարընթաց սոցիալական շարժունությամբ պայմանավորված մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում հայտնված անձին կարող ենք բնորոշել իբրև մարգինալ: Ընդ որում՝ նրան մարգինալ է դարձնում ոչ թե կարգավիճակային փոփոխությունը, այլ նոր սոցիալական կարգավիճակից անբավարարվածության, այն չընդունելու, դրանից օտարված լինելու փաստը: Սոցիալական մարգինալությունը ավելի հստակ դրսևորվում է անցումային, փոխակերպվող հասարակության պայմաններում, երբ կազմալուծվում են նախկին սոցիալական ինստիտուտները, կառուցվածքները և ի հայտ են գալիս նորերը: Անձը հայտնվում է սահմանային, միջանկյալ, կարգավիճակում: Այդպիսի հասարակություն է հետխորհրդային հասարակությունը, որում համատեղվում է երկու արժեքային դաշտ նախկինը, որը իներցիայով շարունակում է գործել և նորը: Այս դրությունը առաջացնում է աններդաշնակություններ մարդկանց հոգեկանում [3;31,46]: Կարելի է ենթադրել, որ հասուն անձի հոգեկանում արժեքային վերակառուցումների վերջնական արդյունքը առանձին դեպքում *մարգինալ արժեհամակարգի* ձևավորումն է, որում դժվարությամբ համատեղվում են «հին» և «նոր» իրար հակասող արժեհամակարգերը:

Ա. Ի. Կրավչենկոն, փոփոխվող հասարակության պայմաններում դիտարկելով մարգինալության առաջացման հարցը, ճշմարտացիորեն նշում է, որ մարգինալներին կարող են դասվել ոչ միայն սոցիալական կառուցվածքից դուրս մնացած անձինք, այլ մարդիկ, ովքեր դեռևս չեն կողմնորոշվել նոր սոցիալական պայմաններում:

Արմատական փոփոխությունները պատճառ դարձան նոր մարգինալ խմբերի առաջացման համար՝ արտադրության կառուցվածքային վերափոխման և զբաղվածության ճգնաժամի արդյունքում: Նման դեպքում մարգինալության ցուցանիշ են դառնում փոփոխությունները սոցիալ-մասնագիտական կարգավիճակում, ինչը ոչ միայն սոցիալական մարգինալության, բայց նաև մասնագիտական կարգավիճակի փոփոխության կարևոր ցուցանիշ է: Դրան նպաստող արտաքին հանգամանքներն են՝ աշխատանքի ամբողջական կամ մասնակի կորուստը, մասնագիտության, աշխատանքի պայմանների և վարձատրության փոփոխությունը՝ ձեռնարկության լուծարման, արտադրության կրճատման, կյանքի ընդհանուր մակարդակի անկման արդյունքում: Այսպես, առաջանում է նոր մարգինալների խումբ, ովքեր ունեն բարձրագույն կրթություն և զարգացած պահանջնունքներ: Մեր կարծիքով, որքան բարձր է նախկին սոցիալական կառուցվածքում անձի սոցիալական դիրքը, այնքան ավելի սուր ընթացք է ունենում սոցիալական կարգավիճակի փոփոխությունը հոգեբանական առումով: Չէ՞ որ նախկին դերերը, հեղինակությունը, սոցիալական կապերը կորսվում են, իսկ դիրքի և մասնագիտության հետ կապված արժեքները, վարքային ձևերը շարունակում են գործել՝ առաջացնելով անձի հոգեկանում զանազան բախումներ՝ մասնավորապես դերային և արժեքային: Նոր մարգինալ խմբերի մեջ Ա. Ի. Կրավչենկոն առանձնացնում է երեք կատեգորիա՝ «հետմասնագետներ», «նոր գործակալներ» և «ներգաղթողներ: Մեծաքանակ մարգինալների խումբը «հետմասնագետներն» են (postspecialist): Այս խումբը կազմում են բարձրագույն կրթությամբ անձինք, որոնք ստացել են պատրաստություն խորհրդային բուհերում, աշխատել են խորհրդային ձեռնարկություններում, որոնց գիտելիքները նոր շուկայական պայմաններում հնացել են և պահանջված չեն: Դրանց են դասվում արդյունաբերության ոչ հեռանկարային բնագավառների ներկայացուցիչները: Այս խումբը ծնունդ է տնտեսության մեջ խորը կառուցվածքային փոփոխությունների, ինչի արդյունքն է ապաորակավորումը, ապամասնագիտացումը և գործազրկությունը: Խմբի մեջ մտնում են աշխատողներ, ովքեր կորցրել են աշխատանքը, ունեն բարձրագույն կրթություն, աշխատանքային փորձ, բարձր սոցիալ-մասնագիտական կարգավիճակ և աշխատանքի հետ կապված մեծ հավակնություններ[44;163]: Նրանց մարգինալացված

արժեհամակարգը ոչ թե նպաստում, այլ խանգարում է հոգևոր ներուժի դրսևորմանը և լիարժեք մասնագիտական ինքնանույնացմանը:

Այսպիսով, վարընթաց սոցիալական շարժունությամբ պայմանավորված մասնագիտական կարգավիճակի փոփոխության հետևանքով ավելի ցածր կարգավիճակ զբաղեցնող անձանց կարող ենք բնորոշել Ա. Ի. Կրավչենկոյի կողմից կիրառվող «հետմասնագետ» եզրույթով, որն առավել ճշգրիտ է բնորոշում այս խումբը կազմող անձանց [53; 163,164]: Անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխությունը օրինաչափորեն կապված է հանրույթում սոցիալ-մասնագիտական տեղաշարժերի հետ, ինչը ենթադրում է ոչ միայն անձի կյանքի օբյեկտիվ իրադրության փոփոխություն, այլ նաև սուբյեկտիվ (ներհոգեկան) տարածության վերակառուցում:

Անցումային հասարակության մեջ տեղ գտած սոցիալական շարժունության արդյունքում շատ խմբեր անհետանում են, ի հայտ են գալիս նոր դժվար նույնացվող խմբեր՝ էական փոփոխություններ առաջ բերելով մարդկանց կարգավիճակներում: Այսպես, անհետացավ ժամանակակից քաղաքակրթության ամենամեծ միավորը բանվոր դասակարգը: Յուրաքանչյուր կենսունակ հասարակության հիմք ծառայող նյութական բարիքների արտադրության ոլորտն իր տեղը զիջեց չարչիական մակարդակում հայտնված բաշխման ու վերաբաշխման հարաբերություններին: Մտավոր աշխատանքը կորցրեց իր էլիտար նշանակությունը: Դրության տերը դարձավ թերի միջնակարգ կրթության մակարդակում մնացած առօրեական մտածողությունը՝ նույնքան թերզարգացած բարոյական կողմնորոշումներով հանդերձ: Իհարկե, այս հանգամանքը վկայում է հասարակության մեջ գլոբալ արժեքային վերակառուցումների մասին, ինչը չնայած օրինաչափ է, բայց դժվարությամբ է ընդունվում միջին տարիքի մեծ քանակությամբ մարդկանց կողմից, որոնք հարկադրաբար կորցրել են մասնագիտական կարգավիճակը: Վերջիններս շրջանում մեծ քանակություն են կազմում նախկինում մտավոր աշխատանքով զբաղված մարդիկ: Նոր պայմաններում նրանց մասնագիտական կարգավիճակը պահանջված չէ: Նրանք համալրում են մարգինալ խմբերը՝ կազմելով մարգինալների նոր խումբ: Սոցիալական ուղղահայաց վարընթաց շարժունության շնորհիվ բազմաթիվ բարձր որակավորում ունեցող մասնագետներ ստիպված են զբաղվել ցածր որակավորմամբ աշխատանքով, ինչն էլ

ուղեկցվում է անձի արժեքային ոլորտում տարաբնույթ վերակառուցումներով, այլափոխումներով: *Արժեքային բախումը դառնում է այդ իրադրության ցուցանիշ:* Այն արտահայտվում է նախկին մասնագիտական կարգավիճակին բնորոշ արժեքների և դիրքորոշումների և նոր ցածր կարգավիճակի հետ կապված արժեքների և դիրքորոշումների հետ անհամատեղելիության մեջ: Այդ իրադրությունը ուղեկցվում է միայնության, օտարացվածության, ավելորդության զգացումներով: Արժեքային և դրդապատճառապահանջմունքային համակարգում փոփոխությունը ընթանում է առաջնային դրդապատճառների և պահանջմունքների կառուցվածքի փոփոխության ձևով: Մարդկանց գործունեության ոլորտը, նպատակների ընտրության դաշտը աստիճանաբար նեղանում է, մարդը ոչ թե ապրում է, այլ «գոյատևում է»: Երբ մարդկանց պահանջմունքները չեն բավարարվում գոյության առկա ձևերով, նրանք հայտնվում են անհանգիստ, նյարդային վիճակում: Ցանկանում են գործել, սակայն հանդիպում են խոչընդոտների՝ արդյունքում հայտնվելով ֆրուստրացված վիճակում [3;110-117]: Մարդու հիմնային պահանջմունքների անբավարարվածությունը նրան կարող է դնել ինքնահիրացման սահմանափակման իրադրության մեջ, երբ առկա պայմաններում հնարավոր չէ իրացնել սեփական պոտենցյալը: Մարդը կարող է դառնալ պասսիվ, սպառող, այլ ոչ թե ակտիվ, ստեղծագործող:

Այսպիսով, մասնագիտական կարգավիճակի փոփոխության (տվյալ դեպքում անկման) պայմաններում հայտնված անձը բնորոշվում է իբրև մարգինալ՝ նրան բնորոշ արժեհամակարգի ու հարմարման ձևերի առկայությամբ: Վերջին փաստը հատկապես գիտական ավելի ամբողջական ուսումնասիրության կարիք ունի: Ուստի միջին տարիքի անձի արժեքային ոլորտի վերակառուցումների հիմնախնդիրը կարելի է դիտարկել նաև մարգինալության հիմնադրույթի դիրքերից:

Մասնագիտական կարգավիճակի փոփոխությունը կապվում է մարգինալության մեկ այլ տեսակի՝ դերային մարգինալության կամ սոցիալական դերի մարգինալության հետ: «Դերային մարգինալությունը» տեղ է գտնում սոցիալական դերերի կատարման ընթացքում: Ն. Ի. Սեմեչկինը նշում է, որ այս տեսության հասկացմամբ անձն իր դերերն ու դիմակներն է, իսկ անհատականությունը՝ յուրաքանչյուր մարդու դերերի անձնային ամբողջությունն է: Հեղինակը նշում է, որ այս մոտեցումը, ըստ երևույթին,

ժխտում է անձի օբյեկտիվ գոյությունը, որովհետև դիտարկում է անձը որպես այլ մարդկանց տպավորությունների արդյունք: Անձը դառնում է այլ մարդկանց ընկալման արդյունք և այս դեպքում հաշվի չի առնվում նրա հոգեկան աշխարհի ողջ բովանդակությունը [70;48]: Ի տարբերություն սոցիոլոգիական մոտեցման, որը դերը հասկանում է իբրև անձից արտաքին ինչ-որ բան, սոցիալ-հոգեբանական մոտեցման դեպքում կարևորվում է, թե ինչպես է անհատը ընկալում, գիտակցում և գնահատում իր այս կամ այն գործառույթները, գործունեությունը, ինչ տեղ են դրանք գրավում նրա ես-պատկերում, ինչպիսի անձնային իմաստ է տալիս նրանց: Դերային վարքը սառեցված, կտրված պաշտոնական չէ, ինչպես մտածում են սոցիոլոգները, այլ «կենդանի», անձնավորված է, քանի որ այն կրողը անձն է [93;175]: Ըստ Ա. Ա. Նալչաջյանի, անհատական դերակատարումը կարող է որոշ չափով փոխել դերի իմաստը, իսկ դրա տևական դերակատարումը անձի մեջ կարող է ձևավորել որոշ գծեր: Դերը ներքնայնացվելիս վերածվում է անձի ներքին ենթակառուցվածքի [7;140]: Ուստի անձի դերային վարքը ավելի շատ է ենթարկվում հոգեբանական օրինաչափություններին, քան «սառեցված դերային պահանջներին», բայց միևնույն ժամանակ չի կարելի բացառել այն, որ ցանկացած դերի համար սահմանված է սպասումների համակարգ, ինչը օբյեկտիվորեն ամրագրված է և դրանից հեռանալու դեպքում անձի դերային վարքը հասարակության կողմից հավանության չի կարող արժանանալ:

Ինչպես արդեն նշել ենք, անձի սոցիալական կարգավիճակի հիմքը, նրա մասնագիտական կարգավիճակն է, ուստի այն մեծ ազդեցություն է ունենում անձի հոգեկան գործառնության վրա: Այսպես, Ի. Ս. Կոնի հետազոտությունները պարզել են, որ աշխատանքի բնույթի և արժեքային կողմնորոշումների միջև գոյություն ունի սերտ կապ [42;84]: Փաստորեն, կարող ենք ենթադրել, որ մասնագիտական կարգավիճակի փոփոխությունը՝ վարընթաց սոցիալական շարժունության պայմաններում ավելի ցածր կարգավիճակի առկայությունը, կարող է առաջացնել մի կողմից նոր և նախկին կարգավիճակների անհամատեղելիություն, մյուս կողմից՝ այդ կարգավիճակների հետ կապված արժեքների անհամատեղելիություն: Հետևաբար, կարող է փոփոխություն առաջանալ անձի դերային վարքում՝ հիմք դնելով *դերային բախման:* Դերային բախումը դառնում է մասնագիտական կարգավիճակի փոփոխության իրադրության

մեջ հայտնված անձի հոգեկան իրողությունը բնորոշող գլխավոր հասկացություններից մեկը: Դերային բախման տակ հասկանում են իրադրություն, երբ անհատը, որն ունի որոշակի սոցիալական կարգավիճակ բախվում է անհամատեղելի պահանջների հետ: Ընդհանրապես տարբերում են դերային բախման հետևյալ տեսակները.

1. միջդերային բախում՝ անձը բախվում է, այն դեպքում, երբ միաժամանակ այնպիսի դերերի կրող է, որոնք առաջադրում են նրան անհամատեղելի կամ դժվար համատեղվող սպասումներ,
2. ներդերային բախում՝ առկա է այն դեպքում, երբ անձն ընկալում է իրեն այնպիսի իրադրության մեջ, որում ուրիշները ունեն իր՝ որպես միակ դերի կատարողի նկատմամբ տարբեր սպասումներ,
3. անձնա-դերային բախման յուրահատկությունն է նրա սերտ կապը այնպիսի օբյեկտիվ բնութագրիչի հետ, ինչպես տեղը, դիրքը, որը զբաղեցնում է անհատը սոցիալական կապերի և փոխազդեցությունների համակարգում [50;168-169]:

Բնորոշումներից երևում է, որ մարգինալությունը ենթադրում է անձի մոտ դժգոհության առկայություն սեփական կարգավիճակից, դրա ժխտում: Քանի որ սոցիալական կարգավիճակի հիմքը մասնագիտական կարգավիճակն է, ուստի մասնագիտական կարգավիճակի փոփոխության դեպքում կարող է տեղ գտնել մասնագիտական մարգինալության երևույթը, որը ըստ երևույթին, դերային մարգինալության ենթատեսակ է:

Լ. Ի. Դեմենտին մասնագիտական մարգինալությունը բնորոշում է մասնագիտական նույնականության եզրույթներով: Մասնագիտական նույնականությունը, ըստ հեղինակի, բարդ կազմավորում է, որի մեջ մտնում են իմացական (սեփական խմբի առանձնահատկությունների մասին գիտելիքներ և նրա անդամը լինելու գիտակցում), արժեքային (սեփական խմբի գնահատում և նրա նկատմամբ վերաբերմունքի գնահատում) և հուզական (սեփական խմբի ընդունում կամ մերժում): Հեղինակը մասնագիտական մարգինալությունը սահմանում է որպես մասնագիտական նույնականության կորուստ, որը բնորոշվում է իրականացվող մասնագիտական դերին չներգրավվածության զգացողությամբ, ինքնաժխտմամբ, մասնագիտության անձնային նշանակության կորուսով: Մասնագիտական

մարգինալության երևույթը կործանարար է հասարակության համար և հանգեցնում է մասնագիտական գործունեության աղքատացմանը: Նկատվում է ձևական մասնակցություն մասնագիտական գործունեությանը, մասնագիտական նորմերի և արժեքների չընդունում: Նա մասնագիտական մարգինալությունը և մասնագիտական նույնականությունը բնորոշում է զուգահեռ երևույթներ: Եթե առաջինը ենթադրում է չներգրավվածություն, ապա երկրորդը՝ ինքնաժխտում [27;48-52]:

Այսպիսով, անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխության հարաբերակցությունը մարգինալության երևույթի հետ երկակի է, այն իմաստով, որ սոցիալական մարգինալությունը հանգեցնում է նոր մարգինալ խմբերի առաջացմանը, մյուս կողմից՝ մասնագիտական մարգինալությունը դառնում է այդ տեղաշարժերի հետևանք: Արդյունքում ձևավորվում է մասնագետ մարգինալի կամ «հետմասնագետի» կերպարը: Նման իրադրությունը վտանգավոր է այն առումով, որ հանգեցնում է անձի մասնագիտական ինքնաիրացման սահմանափակմանը և գործունեության արդյունավետության անկմանը:

ԳԼՈՒԽ 3

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՆՁԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Հետազոտական մեթոդիկաների նկարագրությունը և մասնակիցների համակազմը

Մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում անձի արժեքաիմաստային ոլորտի հետազոտության նպատակով կիրառել ենք հետևյալ հոգեբանական մեթոդներն ու մեթոդիկաները:

Արժեքային կողմնորոշումների համակարգի ուսումնասիրության նպատակով կիրառել ենք **Մ. Ռոկիչի «Արժեքային կողմնորոշումների» թեստը՝** մշակված 1973 թվականին: Տվյալ մեթոդիկան հիմնված է տերմինալային (արժեք-նպատակների) և գործիքային (արժեք-միջոցների) արժեքների դասակարգման հիման վրա: Նպատակահարմար ենք գտել իրականացնել արժեք-նպատակների դասակարգումը՝ ելնելով հետազոտության նպատակներից, ինչպես նաև հաշվի առնելով աշխատավայրում հետազոտության անցկացման հետ կապված դժվարությունները: Տերմինալային արժեքների իրացվածությունը վկայում է այն մասին, որ մարդը հասել է որոշակի ձեռքբերումների կյանքում և գործունեության մեջ: Մեթոդիկան թույլ է տալիս եզրակացություն անել ոչ միայն ներկայումս անձի արժեքային համակարգի բովանդակության, տեղ գտած տեղաշարժերի, այլ նաև առանձին, մասնավորապես, մասնագիտական ինքնաիրացման արժեքների իրացվածության աստիճանի մասին:

Չնայած Մ. Ռոկիչի թեստի անցկացման հնարների բազմազանությանը, մենք այն իրականացրել ենք հետևյալ ընթացակարգով. հետազոտվողին հրահանգվում է 18 արժեքները դասակարգել ըստ ներկայումս իր համար ունեցած նշանակության՝ հաշվի առնելով սկզբունքները, որոնցով նա ղեկավարվում է կյանքում: Դասակարգումը պետք

է անել անշտապ: Ավարտելուց հետո նույն արժեքային ցուցակը առաջարկվում է դասակարգել ըստ ներկայումս այդ արժեքների իրացվածության աստիճանի:

Հետազոտության արդյունքում ստացած արժեքային աստիճանակարգը կարող է բաժանված լինել երեք հավասար խմբերի. (1-6 տեղեր)՝ տարբերակված, (7-12)՝ անտարբեր կամ չեզոք և 13-18՝ մերժվող, նշանակություն չունեցող: Ռուսերեն լեզվով թեստը ադապտացրել է Ա. Ա. Գոլշթաութասը, Ա. Ա. Սեմյոնովը, Վ. Ա. Յադովը և մոդիֆիկացվել է Դ. Ա. Լեոնտևի կողմից: Թեստի ադապտացիայի ընթացում արժեքների ցուցակը ենթարկվել է մասնակի փոփոխության՝ առաջնային տարբերակի հետ համեմատած Դ. Ա. Լեոնտևը արժեքները խմբավորում է առանձին խմբերի մեջ.

Կենսական արժեքներ (առողջություն, աշխատանք, ընկերներ, ընտանեկան կյանք) և *վերացական արժեքներ* (ճանաչողություն, զարգացում, ազատություն, ստեղծագործություն)

Մասնագիտական ինքնաիրացման արժեքներ (հետաքրքիր աշխատանք, արդյունավետ կյանք, արարել, ակտիվ կենսագործունեություն) և *անձնական կյանքի արժեքներ* (առողջություն, սեր, ընկերների առկայություն, երջանիկ ընտանեկան կյանք, զվարճանք)

Անձնային արժեքներ (առողջություն, արարել, ազատություն, ակտիվ կենսագործունեություն, ազատություն, վստահություն սեփական անձի մեջ, նյութապես ապահովված կյանք), *միջանձնային հարաբերությունների արժեքներ* (ընկերների առկայություն, երջանիկ ընտանեկան կյանք, այլ մարդկանց երջանկություն):

Ակտիվ արժեքներ (ազատություն, ակտիվ կենսագործունեություն, արդյունավետ կյանք, հետաքրքիր աշխատանք) և *պասսիվ արժեքներ* (բնության և արվեստի գեղեցկություն, վստահություն սեփական անձի մեջ, ճանաչողություն, կենսական իմաստություն): Հետազոտության նպատակն է որսալ անձի կողմից անձնային արժեքային կողմնորոշումների համակարգի կառուցման անհատական օրինաչափությունը: Այս մեթոդիկան նպատակահարմար է կիրառել ուսանողների և բարձրագույն կրթություն ունեցող անձանց հետ:

Մ. Ս. Յանիցկին նշում է, որ իր կողմից առաջարկած Մ. Ռոկիչի թեստի մեկնաբանությունը նախատեսված է անձի զարգացման պոտենցյալի, ինչպես նաև

ինքնաիրացման գնահատման համար: Մեթոդիկայի անցկացման ընթացակարգում կիրառել ենք Ս. Ռ. Պանիլեևի հնարը. հետազոտվողին առաջարկվում է դասակարգել արժեքները ոչ միայն ըստ նշանակության, այլ նաև ըստ իրացվածության [97;98-103]: Այս հնարը թույլ է տալիս իրականում տեսնել այդ երկու մեծությունների միջև տարբերությունը և ենթադրություններ անել արժեքային ոլորտի գործառնության առանձնահատկությունների, վերակառուցումների և արժեքային բախումների առկայության մասին: Մեթոդիկան թույլ է տալիս բացահայտել մասնագիտական արժեքների տեղաշարժը և դրանց դիրքը արժեքային ոլորտում, ինչն էլ մեր հետազոտության հիմնական նպատակն է:

2. **Ռ. Ինգլհարդի «Արժեքային պատկերացումների» մոդիֆիկացված մեթոդիկան՝ ըստ Մ. Ս. Յանիցկու,** որը նախատեսված է տարբեր սոցիալական հանրույթների արժեքային պատկերացումների ուսումնասիրության համար (օրինակ, ԲՈՒՀ-ի ուսանողների, երիտասարդության և այլն): Մեթոդիկան, թույլ է տալիս դասել հետազոտվողին այս կամ այն արժեքային տիպի, ինչպես նաև պատկերացում կազմել անհատական արժեքային համակագի զարգացման մակարդակի մասին և, հետևաբար, կիրառվում է անձի արժեքային ոլորտի զարգացման անհատական մակարդակի ախտորոշման համար: Մեթոդիկան կիրառվել է ընտրանքի հետ, որը հավասարապես տիրապետում է հայոց լեզվին և ռուսաց լեզվին, ինչը թույլ է տալիս պահպանել հավաստիության, վալիդության և հուսալիության չափանիշները:

Ռ. Ինգլհարդի «Արժեքային պատկերացումների» մոդիֆիկացված մեթոդիկան հիմնվում է Մ. Ս. Յանիցկու կողմից մշակած անձի արժեքային կողմնորոշումների համակարգի կառուցվածքա-շարժական մոդելի մասին պատկերացման վրա է, որն ունի եռաշերտ կառուցվածք: Հետևաբար, այս մեթոդիկան թույլ է տալիս վեր հանել հարմարման (գոյատևում և անվտանգություն), սոցիալականացման (սոցիալական ընդունում) և անհատականացման (անկախություն և ինքնազարգացում) արժեքների անձի նկատմամբ կողմնորոշումը: Մեթոդիկայի արդյունքների վերլուծության շնորհիվ կարող ենք եզրակացություն անել այն մասին, թե նոր սոցիալական կարգավիճակի պայմաններում անձի արժեքային ոլորտում, որ ինչ տիպի արժեքներ են գերակայում, այսինքն՝ պատկերացում կազմել արժեքային ոլորտի բովանդակության մասին:

Մեթոդիկայի անցկացման ընթացակարգը հիմնված է հետազոտվողի կողմից առաջարկվող ցուցակից առավել կարևոր արժեքների ընտրության վրա, որոնք ներառում են նաև որոշակի խմբի արժեքների նկատմամբ կողմնորոշման ցուցիչներ: Առաջարկել ենք ցուցակից ընտրել հետազոտվողի համար առավել կարևոր 3 արժեք.

1. նյութական բարեկացություն, կարիքի բացակայություն
2. ընտանեկան բարեկեցություն
3. մտավոր և ստեղծագործական ինքնաիրացման հնարավորություն
4. ուժերի պահպանում և առողջություն
5. հեղինակավոր աշխատանք
6. ժողովրդավարական իրավունքներից և ազատություններից օգտվելու հնարավորություն
7. հասարակության մեջ կարգուկանոնի և կայունության պահպանում
8. շրջապատողների հարգանք, հասարակական ընդունում
9. ավելի հանդուրժող և մարդասիրական հասարակության կառուցում

1 4 7 կետերը հարմարման արժեքների նկատմամբ կողմնորոշման ցուցիչներն են, 2 5 8՝ սոցիալականացման արժեքների նկատմամբ, 3 6 9՝ անհատականացման արժեքների նկատմամբ կողմնորոշումը: Հետազոտվողներին առաջարկվում է ընտրել ներկայացված արժեքներից այն, ինչ առավել կարևոր են համարում (տվյալ դեպքում ընդհանուրից պետք է ընտրեն երեք արժեք) մեկ, երկու կամ երեք միանման ընտրության դեպքում կառուցվում է համապատասխան արժեքային տիպը: Երեք կետերի ընտրության դեպքում համապատասխան արժեքային տիպը հաստատվում է երկու կամ երեք ընտրությունների համապատասխանության դեպքում: Երկու կամ երեք տարբեր ուղղվածություններով տարբերակների դեպքում ախտորոշվում է միջանկյալկամ խառը տիպ: Դիտարկվող տիպերի տարածվածության վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են տարիքը, կրթության մակարդակը [97; 88-98]:

3. **Դ. Ա. Լեոնտևի կենսաիմաստային կողմնորոշումների մեթոդիկա՝** 1964 թվականին Ջ. Կրամբոն և Լ. Մահոլնիկը Վ. Ֆրանկլի լոգոթերապիայի և իմաստի նկատմամբ ձգտման տեսության հիման վրա մշակեցին «Նպատակը կյանքում» թեստը (PIL - Purpose in Life): Ռուսերեն լեզվով թեստը ադապտացվել է Կ. Մուզդիբաևի

կողմից: Սույն տարբերակի հիման վրա Դ. Ա. Լեոնտևի կողմից մշակվել և ադապտացվել է ևս մեկ տարբերակ, որը անվանվեց «Կյանքի իմաստավորվածության թեստ»: Հետազոտվողներին տրվում է հետևյալ հրահանգը. «Ձեզ առաջարկվում է զույգ իրար հակադիր պնդումներ: Ձեր խնդիրն է ընտրել պնդումներից որևէ մեկը, որը ըստ ձեզ, ավելի շատ է համապատասխանում իրականությանը և նշել 1 2 3 թվերից մեկով՝ կախված այն բանից, թե որքանով եք դուք վստահ ընտրության մեջ (կամ 0, եթե երկու պնդումներն էլ ձեր կարծիքով միաժամանակ ճիշտ են):

Չնայած հարցարանի փոքրիկ ծավալի՝ գործոնային վերլուծության ժամանակ վեր են հանվում 6 գործոններ, որոնցից 5-ը (բացառությամբ երկրորդի) մեկնաբանվում են: Դ. Ա. Լեոնտևի, Օ. Ի Կալաշնիկովի կարծիքով գործոնային վերլուծության արդյունքում ստացված արդյունքները վկայում են, որ անձի կյանքի իմաստավորվածությունը չունի միատար կառուցվածք: Այս արդյունքների հիման վրա կյանքի իմաստավորվածության թեստը ձևափոխվել է կենսաիմաստային կողմնորոշումների թեստի (ԿԻԿ): Կյանքի իմաստավորվածության ընդհանուր ցուցա-նիշների կողքին իր մեջ ներառում է նաև 5 ենթասանդղակ, որոնք արտացոլում են 3 կենսաիմաստային կողմնորոշումներ և վերահսկողության լոկուսի երկու կողմեր: Ստացված գործոնները (բացառությամբ երկրորդի) կարելի է դիտարկել որպես անձի կյանքի իմաստի բաղադրիչ: Ընդ որում՝ դրանք բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի մեջ մտնում են կենսաիմաստային կողմնորոշումները. նպատակը կյանքում, կյանքի հագեցվածությունը և ինքնաիրացմամբ բավարարվածությունը: Դժվար չէ նկատել, որ այդ երեք կատեգորիաները հարաբերակցվում են նպատակի հետ (ապագայի հետ), գործընթացի հետ (ներկայի) և արդյունքի հետ (անցյալի): Ինչպես երևում է բերված տվյալներից, մարդը կարող է վերցնել իր կյանքի իմաստը կամ առաջինից, կամ երկրորդից կամ երրորդից (կամ բոլոր երեք բաղադրիչներից): Սա ևս մեկ անգամ ապացուցում է Վ. Ֆրանկլի ճշմարտացիությունը այն հարցում, որ իմաստ միշտ կարելի է գտնել և այս տեսանկյունից հիմք է դնում իմաստների տեսական և էմպիրիկ տիպաբանության համար: Մնացած երկու գործոնները բնորոշում են ներքին վերահսկողության լոկուսը: Ընդ որում՝ դրանցից մեկը բնութագրում է ընդհանուր աշխարհայացքային համոզմունքն այն մասին, որ վերահսկողությունը հնարավոր է,

իսկ երկրորդը՝ արտացոլում է նման վերահսկողության իրականացման ընդունակության նկատմամբ հավատը: Թեստի ցուցանիշները ներառում են իրենց մեջ ընդհանուր կյանքի իմաստավորվածության ցուցանիշը, ինչպես նաև հինգ ենթասանդղակ, որոնք արտացոլում են երեք կենսաիմաստային կողմնորոշումներ և երկու վերահսկողության լոկուսներ:

Նպատակը կյանքում՝ բնորոշում է նպատակաուղղվածությունը, ապագայի հետ կապված նպատակների առկայությունը կամ բացակայությունը, որոնք կյանքին տալիս են իմաստավորվածություն, ուղղվածություն և ժամանակային հեռանկար:

Կյանքի գործընթաց, հետաքրքրություն կամ կյանքի հուզական հագեցվածություն՝ բնորոշում է ներկայում կյանքով բավարարվածությունը:

Կյանքի արդյունավետությունը կամ բավարարվածությունը ինքնահրացմամբ՝ չափում է բավարարվածությունը կյանքի ապրած հատվածով, անցած կենսական ուղու գնահատականը, ինչպես նաև որքան է արդյունավետ ու իմաստավորված եղել կյանքի ապրած մասը:

Ես-ի վերահսկողության լոկուս՝ բնորոշում է սեփական անձի մասին պատկերացումը որպես ուժեղ մարդու, ով ունի ընտրության ազատություն, որպեսզի կառուցի իր կյանքն իր նպատակների և իմաստի մասին պատկերացումներին համապատասխան, վերահսկի սեփական կյանքի իրադարձությունները:

Կյանքի վերահսկողության լոկուս՝ արտահայտում է համոզվածությունն այն մասին, որ մարդուն տրված է սեփական կյանքը վերահսկելու հնարավորություն, ինչը թույլ է տալիս ազատորեն որոշումներ ընդունել և դրանք կյանքի կոչել: Այսինքն՝ մարդու կյանքը ենթակա է գիտակցական վերահսկողության:

Մեթոդիկան թույլ է տալիս գնահատել կյանքի իմաստավորվածության «աղբյուրը», որը կարող է գտնվել կամ ապագայում (նպատակ), կամ ներկայում (գործընթաց) կամ անցյալում (արդյունք):

Աղյուսակում բերված են ԿԻ (կյանքի իմաստավորվածություն) բոլոր հինգ ենթասանդղակների ընդհանուր ցուցանիշների միջին և ստանդարտ շեղումները (200 մարդուց բաղկացած ընտրանքի համար՝ 18-ից 29 տարեկան):

Աղյուսակ 1

Ենթասանդղակներ	**Կանայք**	**տղամարդիկ**
Նպատակը կյանքում	29.38±6.24	32.90±5.92
Կյանքի գործընթաց	28.80±6.14	31.09±4.44
Կյանքի արդյունավետությունը	23.30±4.95	25.46±4.30
Ես-ի վերահսկողության լոկուս	18.58±4.30	21.13±3.85
Կյանքի վերահսկողության լոկուս	28.70±6.10	30.14±5.80
ԿԻ ընդհանուր ցուցանիշ	95.76±16.54	103.10±15.03

Չնայած տեսական մշակվածության և գործնական կիրառելիության, այնուամենայնիվ, Դ. Ա. Լեոնտևի կենսաիմաստային կողմնորոշումների թեստը զուրկ չէ թերություններից: Այսպես, ԿԻԿ (կենսաիմաստային կողմնորոշումների) թեստի կողմից չափվող ցուցանիշների բաշխումն ունի աջ բացասական անհամաչափություն: Բաշխում, որը նորմայից տարբերվում է: Թեստի տվյալների սանդղակներով բաշխման դեպքում ստացվում են առաջնային, ոչ ստանդարտացված ցուցանիշներ և, հետևաբար, դրանք իրարից հարաբերականորեն տեղաշարժված են, ինչը դժվարացնում է ցուցանիշների նշանակությունների համադրությունն ըստ այդ սանդղակների [92;389-392]: Ինչպես երևում է ԿԻ արդյունքներից, որոնք ստացվում են տվյալ մեթոդիկայով, ժամանակային լոկուսներից որևէ մեկի ցածր իմաստավորվածությունը կարող է որոշակի չափով փոխհատուցվել մյուսների բարձր իմաստավորվածությամբ, ինչը բավականին վիճելի է:

4. **Ա. Գ. Մակլակովի և Ս. Վ. Չերմյանինի «Ադապտիվություն» բազմամակարդակ հարցարանը** մշակվել է Ա. Գ. Մակլակովի և Ս. Վ. Չերմյանինի կողմից 1993 թվականին: Նախատեսված է անձի հարմարվողական (ադապտիվ) կարողությունների ուսումնասիրության համար՝ որոշ հոգեֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական բնութագրերի գնահատման հիման վրա, որոնք արտացոլում են հոգեբանական և սոցիալական զարգացման ինտեգրալային

առանձնահատկությունները: Հարցարանը հիմնականում օգտագործվում է մասնագիտական հոգեբանական ընտրության, ուսումնական և մասնագիտական գործունեությասն հոգեբանականն ուղեկցման խնդիրներ լուծելիս: Հարցարանը բաղկացած է 165 հարցերից և ունի հետևյալ սանդղակները.

- հավաստիության (Հ)
- նյարդահոգեկան կայունության (ՆԿ)
- հաղորդակցական կարողություններ (ՀԿ)
- անձնային հարմարվողական պոտենցյալ (ԱՀՊ)

Արդյունքների մշակումը իրականացվում է համապատասխան չորս ենթասանդղակների «բանալիներով» [1; 60-65]:

5. Մեր կողմից մշակված **մասնագիտության փոփոխության գնահատման հարցաթերթիկը՝** միտված է մասնագիտական կարգավիճակի անկման պայմաններում անձի աշխատանքի, կյանքի, ժամանակի նկատմամբ վերաբերմունքի բացահայտմանը, ինչը թույլ է տալիս պատկերացում կազմել ներկայումս սոցիալական կարգավիճակով բավարարվածության, կյանքի բարեհարմարության մասին:

Հետազոտական աշխատանքները անց կացվել Հայաստանի պատմության թանգարանի, ԵՊՀ հյուրերի տան, «Փոքր Մհեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ի, Գր. Նարեկացու անվան թիվ 137 դպրոցի և սպասարկման ոլորտի (տրանսպորտային և սննդի ոլորտի) ընկերությունների աշխատակիցների հետ՝ թվով 101 անձ (40-60տ.), ովքեր ունեն մասնագիտական որակավորում և ներկայումս զբաղվում են ցածր որակավորմամբ, ոչ մասնագիտական աշխատանքով:

Հետազոտության արդյունքների մշակման ժամանակ կիրառվել են փորձարարական տվյալների մշակման համընդհանուր մեթոդներ, որոնք միավորել են քանակական մեթոդները՝ (տվյալների վիճակագրական մշակում):

Ստացված արդյունքների հավաստիությունն ապահովվել է հետազոտական ընթացակարգերի և հնարքների բազմազանությամբ, նրանց փոխկապակցվածությամբ, փոխլրացվողականությամբ, ինչպես նաև տվյալների մշակման և վերլուծության մաթեմատիկական մեթոդներով: Հետազոտության արդյունքների հուսալիությունն ապահովվել է հիմնարար հոգեբանական

հետազոտություններով, բոլոր տվյալների համադրմամբ, որոնք ստացվել են տվյալ հետազոտության մեջ, ինչպես նաև հիմնական տեսական եզրահանգումների փորձարարական ստուգման միջոցով: Վերը նշված սկզբունքները և չափանիշները հաշվի առնելով՝ հետազոտական մասում ներգրավվեց ընտրանքի այնպիսի կազմ, որը համապատասխանում էր տարիքով և զբաղեցրած սոցիալական կարգավիճակով:

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ հիմնական փուլերով.

1-ին փուլ – հետազոտության ուղղության ընտրություն և հիմնահարցին նվիրված գրականության վերլուծություն (ուսումնասիրվել և վերլուծվել է մոտ 104 սկզբնաղբյուր),

2-րդ փուլ – հետազոտության գիտափորձերի, մեթոդների և մեթոդիկաների մշակում, հետազոտությունների անցկացում,

3-րդ փուլ – իրականացված հետազոտության ընդհանրացում, արդյունքների մշակում և վերլուծություն:

3.2 Մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում անձի արժեքային ոլորտի վերակառուցումների հետազոտության արդյունքների վերլուծություն

Զրույցի մեթոդը կիրառվել է հետազոտության տարբեր փուլերում. ինչպես առաջնային կողմնորոշման համար, այնպես էլ հետևությունների ճշտման համար: Զրույցի ընթացքում շոշափվել են մեզ հետաքրքրող հարցեր, որոնք կապված են՝ ներկայիս և նախկին սոցիալական կարգավիճակի, ընտանեկան վիճակի, սոցիալական դրության, կյանքի նկատմամբ վերաբերմունքի հետ:

Հետազոտությանը մասնակցել են 40-60 տարեկան թվով 101 հոգի տղամարդ և կին՝ միջին և բարձրագույն կրթությամբ, որոնք հայտնվել են մասնագիտությունը փոխելու իրադրության մեջ: Հետազոտական ընտրանքը բաժանվել է մեր կողմից խմբերի. ըստ սեռի՝ 45 կին և 55 տղամարդ և ըստ կրթական գործոնի՝ 51 հոգի բարձրագույն կրթություն ունեցող և 50 հոգի՝ միջին մասնագիտական կրթությամբ հետազոտվողներ: Նշենք, որ հետազոտվողները հավասարապես տիրապետում էին հայոց լեզվին և ռուսաց լեզվին, ինչը չառաջացրեց լեզվական խոչընդոտ:

Մեր կողմից մշակված մասնագիտության փոփոխության գնահատման հարցաթերթիկի տվյալները թույլ են տալիս պատկերացում կազմել հետազոտվողի վերաբերմունքի մասին ներկայիս և նախկին սոցիալական, մասնագիտական կարգավիճակի, կյանքի որակի, դրանով բավարարվածության, աշխատանքային գործունեության մեջ սեփական պոտենցյալը ներդնելու մասին, ընդհանրապես ներկայումս «աշխատանք» հասկացության, ինչպես նաև ժամանակի (անցյալ, ներկա և ապագա) իմաստավորման հարցերի վերաբերյալ (տես հավելված 1)

աղյուսակ 1

1.Այժմ աշխատանքը ձեզ համար	ապրուստի միջոց է 86%	ինքնաարտահայտման և ինքնահիրացման միջոց է 12%	-
2.Ինչպե՞ս եք վերաբերվում շրջապատում տեղի ունեցող փոփոխություններին	փոփոխությունները ինձ ուրախացնում են 33%	անտարբեր եմ 28%	փոփոխությունները ինձ վախեցնում են 39%
3.Ձեր կյանքն այնպիսին է, ինչպիսին դուք կուզենայիք	ես իմ կյանքից գոհ եմ 40%	ես իմ կյանքից գոհ չեմ 60%	-
4.Կյանքում ձեզ համար կարևոր է ապահովության զգացումը	այո, այդպես է 96%	ինձ համար միևնույն է 3%	ոչ, այդպես չէ 1%
5.Նախկին աշխատանքը ձեզ ավելի էր գոհացնում	այո 95%	ոչ 5%	
6.Զգում եք, որ կյանքում ձեր «տեղը» ամուր է	այո, այդպես է 45%	չգիտեմ 23%	ոչ, այդպես չէ 32%
7.Հաճախ ե՞ք մտածում, որ կյանքում հնարավոր չէ ոչինչ փոխել	այո 35%	ոչ 65%	
8.Դուք ապրու՞մ եք անցյալի հիշողություններով	այո 69%	երբեմն 28%	ոչ 3%
9.Դուք ներդնու՞մ եք ձեր ողջ պոտենցյալը աշխատանքի մեջ	այո 70%	ոչ 30%	
10.Մտածու՞մ եք ապագայի մասին	հաճախ 78%	երբեմն 18%	Հազվադեպ 4%
11.Դուք գո՞հ եք ներկայիս աշխատանքից	ոչ այնքան 68%	այո, լիովին 28%	Ոչ 4%

Մասնագիտության փոփոխության գնահատման հարցաթերթիկը՝ հարցաթերթիկի ցուցանիշները ողջ ընտրանքի համար՝ արտահայտված տոկոսներով

Ստացված տվյալները ցույց են տալիս, որ նոր սոցիալական կարգավիճակի պայմաններում տեղի է ունենում «աշխատանք» արժեքի իմաստի փոխակերպում: Հետազոտվողների (86%) գերակշռող մեծամասնության համար այն ապրուստի, գոյատևման միջոց է: Նկատվում է նաև նախկին սոցիալական կարգավիճակից բավարարվածության և ներկայիս կարգավիճակից դժգոհության առկայություն հետազոտվողների 90%-ի մոտ: Չնայած ներկայիս կարգավիճակի հետ նույնացումը հետազոտվողների մոտ դժվար է ընթանում, բայց այնուամենայնիվ, հարաբերական հարմարման մասին են վկայում հետևյալ հարցերի դրական պատասխանները. հետազոտվողների 43%-ը կյանքում իրենց տեղը համարում են ամուր, 22% -ը անորոշ են այդ հարցում, 32%-ը գտնում են, որ իրենց տեղը ամուր չէ: Նրանց ստվար զանգված (73%) ծրագրեր է կապում ապագայի հետ, չնայած այս առումով ԿԻԿ թեստի և հարցաթերթիկի տվյալների միջև առկա է հակասություն: Հետազոտվողների 65%-ը կարևորում է անցյալի հիշողությունները, վերջիններս ներկայումս անձի համար կյանքի իմաստի աղբյուրներ են: Հետազոտվողների 64%-ը գտնում են, որ կյանքում դեռ ամեն ինչ հնարավոր է փոխել, ինչը վկայում է դրդապատճառայնության առկայության և մասնագիտության փոփոխության իրավիճակի ազդեցության թուլացման մասին: Չնայած ներակյումս սոցիալական կարգավիճակի ցածր է, բայց նրանց մեծամասնությունը այդ իրադրությունը չի ընկալում իբրև փակուղի և պատրաստ է փոփոխությունների: Ընդ որում՝ շրջապատում տեղի ունեցող փոփոխությունները հետազոտվողների 39%-ը ընկալում են վախեցնող, իսկ 33%-ը՝ ուրախալի: Հետազոտվողները կարևորում են ապահովության զգացումը (91%): Ընդհանուր առմամբ նոր կարգավիճակի պայմաններում անձի հոգեկանում վերակառուցումները չնայած ունեն հարմարման վեկտոր, բացասական ուղղվածություն, այնուամենայնիվ, իրականության իմաստավորման ներկա փուլում, անձը սեփական կյանքի որակը գնահատում է ոչ բավարար (60%), ինչն առաջացնում է մասնագիտության

փոփոխության իրադրության մեջ հայտնված անձանց մասնագիտական վերակողմնորոշման անհրաժեշտություն: Առկա է աշխատանքից բավարարվածության ցածր ցուցանիշներ հետազոտվողների 68%-ի մոտ:

Բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցող հետազոտվողների տվյալները նույնն են, չնայած նկատվում է տարբերություն շրջապատում տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ վերաբերմունքի առումով: Բարձրագույն կրթություն ունեցող հետազոտվողներին փոփոխությունները վախեցնում են (52%)՝ ի տարբերություն միջին մասնագիտական կրթություն ունեցող հետազոտվողների խմբի, որոնց փոփոխությունները ուրախացնում են (40%): Կարելի է ասել, որ կրթական գործոնի ազդեցությունը կապվում է այն փաստի հետ, որ բարձրագույն կրթությունը թույլ է տալիս իրականության ավելի խորը իմաստավորման հնարավորություն, ուստի փոփոխությունների նախկին փորձը նպաստում է այս խմբի հետազոտվողների մոտ «փոփոխություն» հասկացության նկատմամբ դրսևորել բացասական վերաբերմունք:

Ի տարբերություն կանանց (50%)՝ տղամարդիկ (74%) առավել վստահ են կյանքում փոփոխություններ մտցնելու հարցում:

Անձի արժեքային ոլորտի ուսումնասիրության, մասնավորապես, արժեքների իրացվածության մասին պատկերացում կազմելու համար կիրառվել է Մ. Ռոկիչի արժեքային թեստը (տես հավելված 2): Թեստի անցկացման ընթացակարգում կիրառել ենք Ս. Ռ. Պանտելեևի հնարը. հետազոտվողներին առաջարկվել է տերմինալային արժեքների խումբը դասակարգել ըստ ներկայումս արժեքների իրացվածության աստիճանի: Հետազոտության ընթացքում ստացված արդյունքների վերլուծությունը հնարավորություն տվեց բացահայտել որոշ օրինաչափություններ:

Աղյուսակ 2

	Ակտիվ կենսագոր-ծունեություն (հ)	Կյանքի իմաստություն (հ)	Առողջություն (հ)	Հետաքրքիր աշխատանք (հ)	Բնության և արվեստի գեղեցկություն (հ)	Սեր (հ)	Նյութապես ապահովված կյանք (հ)	Լավ ու հարազատ ընկերներ(հ)	Հասարակութ-յան կողմից ընդունում (հ)
Ակտիվ կենսագործունեություն (ն)	0,300**	-	-	-	-	-	-	-	-
Կյանքի իմաստություն (ն)	-	0,357**	-	-	-	-	-	-	-
Առողջություն (ն)	-	-	0,293**	-	-	-	-	-	-
Հետաքրքիր աշխատանք (ն)	-	-	-	0,167	-	-	-	-	-
Բնության և արվեստի գեղեցկություն (ն)	-	-	-	-	0,226*	-	-	-	-
Սեր (ն)	-	-	-	-	-	0,293**	-	-	-
Նյութապես ապահովված կյանք (ն)	-	-	-	-	-	-	0,264*	-	-
Լավ ու հարազատ ընկերներ (ն)	-	-	-	-	-	-	-	0,444**	-
Հասարակության կողմից ընդունում (ն)	-	-	-	-	-	-	-	-	0,486**

P* ≤ 0,05 ; P ≤ 0,01**

աղյուսակ 2-ի շարունակությունը

	Ճանաչողություն (ի)	Արդյունավետ կյանք (ի)	Զվարճանք (ի)	Ազատություն (ի)	Զարգացում (ի)	Երջանիկ ընտանեկան կյանք (ի)	Այլ մարդկանց երջանկություն (ի)	Արարել (ի)	Վստահություն սեփական ուժերի մեջ (ի)
Ճանաչողություն (ն)	0,381**	-	-	-	-	-	-	-	-
Արդյունավետ կյանք (ն)	-	0,162	-	-	-	-	-	-	-
Զվարճանք (ն)	-	-	0,603**	-	-	-	-	-	-
Ազատություն (ն)	-	-	-	0,319**	-	-	-	-	-
Զարգացում (ն)	-	-	-	-	0,414**	-	-	-	-
Երջանիկ ընտանեկան կյանք (ն)	-	-	-	-	-	0,265*	-	-	-
Այլ մարդկանց երջանկություն (ն)	-	-	-	-	-	-	0,498**	-	-
Արարել (ն)	-	-	-	-	-	-	-	0,354**	-
Վստահություն սեփական ուժերի մեջ (ն)	-	-	-	-	-	-	-	-	0,351**

P* ≤ 0,05 ; P ≤ 0,01**

Իրականացվել է արժեքների իրացվածության և նշանակալիության միջև համեմատություն ամբողջ ընտրանքի համար: Մուգ գույնով ընդգծված են մեզ հետաքրքրող մասնագիտական ինքնաիրացման արժեքների համախումբը: Դրանք են՝ ակտիվ կենսագործունեություն, հետաքրքիր աշխատանք, հասարակության կողմից ընդունում, արդյունավետ կյանք, զարգացում: Այսպես, նկատվել է նշանակալի տարբերություն հետևյալ արժեքների նշանակության և իրացվածության միջև (վերոհիշյալ արժեքները աղուսյակում նշված են երկու աստղանիշով). ակտիվ կենսագործունեություն, կյանքի իմաստություն, առողջություն, սեր, լավ ու հարազատ ընկերների առկայություն, հասարակության կողմից ընդունում, ճանաչողություն, զվարճանք, ազատություն, զարգացում, այլ մարդկանց երջանկություն, արարել, ստեղծագործել, վստահություն սեփական ուժերում: Համեմատությունը ցույց է տալիս, որ մասնագիտական ինքնաիրացման խմբի արժեքների զգալի մասի իրացվածության և նշանակալիության միջև առկա է նշանակալի տարբերություն. արժեքը անձի համար շարունակում է մնալ առաջնային, բայց նոր մասնագիտական պայմաններում դրանց իրացվածությունը կամ նվազ է, կամ բացակայում է: Վերջին փաստը մեզ թույլ է տալիս խոսել մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում անձի արժեքային ոլորտում մասնագիտական արժեքների ֆրուստրացիայի երևույթի մասին, ինչպես նաև հնարավոր արժեքային բախման առկայության մասին: Մասնագիտական արժեքների ֆրուստրացիա ասելով նկատի ունենք այն, որ չնայած արժեքային ոլորտում մասնագիտական կարգավիճակի հետ կապված արժեքները առանձին դեպքերում պահպանում են իրենց նշանակությունը անձի համար, սակայն չեն իրացվում: Դրանք անձի հոգեկանում գտնվում են «սառեցված» վիճակում: Մասնագիտական արժեքների չիրացվածությունը հասուն անձի արժեքային ոլորտի բովանդակությունը դարձնում է ավելի պարզ և աղքատ:

Աղյուսակ 3

Արժեքներ	***Ընդհանուր ընտրանք***		***բարձրագույն կրթ.***		***միջին մասն. կրթ.***		***տղամարդ***		***կին***	
	Ն2.	իր.	Ն2.	իր.	Ն2.	իր.	Ն2.	իր.	Ն2.	իր.
Ակտիվ կենսագործունեություն	15	16	8	16	15	15	15	15	5	15
Կյանքի իմաստություն	8	9	12	1	8	8	5	8	8	10
Առողջություն	2	2	1	3	2	7	2	2	1	8
Հետաքրքիր աշխատանք	5	15	5	18	9	12	8	17	6	2
Բնության և արվեստի գեղեցկություն	13	7	13	11	12	9	16	9	15	9
Սեր	4	5	4	5	4	5	12	3	9	6
Նյութապես ապահովված կյանք	3	17	3	12	3	3	3	16	3	13
Լավ ու հարազատ ընկերներ	6	3	7	9	5	2	4	4	7	4
Հասարակության կողմից ընդունում	14	8	15	4	14	4	7	5	14	11
Ճանաչողություն	12	12	16	13	18	14	14	11	16	16
Արդյունավետ կյանք	7	10	18	15	7	6	6	14	13	14
Զվարճանք	18	18	11	17	17	18	18	18	18	18
Ազատություն	11	4	10	8	16	13	13	7	10	5
Զարգացում	10	14	14	6	11	10	9	13	11	7
Երջանիկ ընտանեկան կյանք	1	1	2	2	1	1	1	1	2	1
Այլ մարդկանց երջանկություն	17	11	17	7	10	11	17	12	12	12
Արարել	16	13	6	10	13	17	10	10	17	17
Վստահություն սեփական ուժերի մեջ	9	6	9	14	6	16	11	6	4	3

Մ. Ռոկիչի արժեքային թեստի ռանգավորումը ողջ ընտրանքի և առանձին խմբերի համար

Կատարված ռանգավորումը բացահայտում է, որ հետազոտվողների մոտ արժեքային համակարգում ըստ նշանակության առավել բարձր տեղեր են զբաղեցնում հետևյալ արժեքները՝ երջանիկ ընտանեկան կյանք, առողջություն, նյութապես ապահովված կյանք, սեր, հետաքրքիր աշխատանք, լավ ու հարազատ ընկերների առկայություն: Ինչպես տեսնում ենք, անձնական կյանքի և մասնագիտական ինքնաիրացման արժեքների կողքին առաջնային նշանակալիություն է տրվել առողջություն և նյութապես ապահովված կյանք արժեքներին, որոնք Մ. Ս. Յանիցկու դասակարգմամբ պատկանում են հարմարման ցածրակարգ արժեքների խմբին: Վերջին փաստը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում, ավելի ցածր մասնագիտական կարգավիճակի առկայության պայմաններում, անձի արժեքային համակարգում բարձր, մտավոր արժեքները զբաղեցնում են ավելի ցածրակարգ դիրքեր՝ իրենց տեղը զիջելով անձնական կյանքի և հարմարման արժեքներին, որոնք պայմանավորում են նախկին մասնագետի հարմարումը կյանքի տվյալ փուլում: Այս երևույթը միջին տարիքում մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում արժեքային վերակառուցման վեկտորներից մեկն է: Իսկ առողջություն արժեքի կարևորումը հետազոտվողների մոտ կապվում է նաև տարիքային գործոնի հետ: Միջին տարիքում կյանքի ավարտունության, ժամանակի սահմանափակության մասին մտորումները, ինչպես նաև նկատվող ֆիզիոլոգիական փոփոխությունները ուղղում են անձի ուշադրությունը դեպի սեփական առողջությունը:

Աղյուսակից երևում է, որ ողջ ընտրանքում մասնագիտական ինքնաիրացման արժեքների՝ հետաքրքիր աշխատանք, ակտիվ կենսագործունեություն, զարգացում, հասարակության կողմից ընդունում, նշանակության և իրացվածության մեջ նկատվում է էական տարբերություն, հետևաբար, մասնագիտական կարգավիճակի անկումը անպայմանորեն ենթադրում է մասնագիտական արժեքների իրացման սահմանափակություն: Այս փաստը թույլ է տալիս խոսել հասուն անձի մասնագիտական ինքնաիրացման անհնարինության կամ սահմանափակ լինելու մասին: Օրինակ,

իրավաբանի մասնագիտական որակավորմամբ անձը, ով ներկայումս աշխատում է իբրև վարորդ, իր գիտելիքները իրացնելու հնարավորությունից զրկված է: Արդյունքում բարձրակարգ որոշ արժեքներ, օրինակ՝ զարգացում, մտավոր ինքնաիրացում, ճանաչողություն և այլն, նրա համար շարունակում են մնալ կարևոր, բայց դրանք իրացնել, կյանքի կոչել նա չի կարող՝ գործունեության նոր դաշտի ընձեռած սահմանափակ հնարավորությունների պատճառով: Այլ պատկեր է նկատվում անձնական կյանքի արժեքների խմբում: Այս դեպքում արժեքների՝ երջանիկ ընտանեկան կյանք, սեր, զվարճանք, իրացվածության և նշանակության միջև տարբերություն չի նկատվել, իսկ ազատություն և լավ ընկերների առկայություն արժեքների իրացվածությունը տվյալ արժեքների նշանակությունից ավելի բարձր է: Փաստորեն, մասնագիտական ինքնաիրացման սահմանափակությունը բացասականորեն չի ներգործում անձնական կյանքի վրա, այլ անձին առանձին դեպքերում կողմնորոշում է դեպի անձնական ոլորտ, ինչը դառնում է կյանքի իմաստի աղբյուր: Այս իրողությունը, կարելի է ասել, միջին տարիքում մասնագիտական փոփոխության իրադրության մեջ հայտնված անձի հոգեկանում կատարում է փոխհատուցող գործառույթ: *Նկատվում է «գործող, ստեղծագործող անձի» վերափոխում «հարմարվող անձի»:*

Բարձրագույն կրթություն ունեցող հետազոտվողների խմբում արժեքների ռանգավորումն ըստ նշանակության, ունի նույն տեսքը, ինչպես ամբողջ ընտրանքում: Էական տարբերություններ չեն նկատվել: Իրացված են որոշ մասնագիտական ինքնաիրացման արժեքներ, ինչպիսիք են հասարակության կողմից ընդունում, զարգացում, արդյունավետ կյանք, չնայած արժեքային համակարգում այս արժեքները զբաղեցնում են վերջին տեղերը: Որոշ մասնագիտական ինքնաիրացման արժեքների՝ հետաքրքիր աշխատանք, ակտիվ կենսագործունեություն՝ նշանակության և իրացվածության միջև առկա է նշանակալի տարբերություն: Կյանքի արդյունավետությունը հետազոտվողները դեռ տեսնում են աշխատելու մեջ, իսկ զարգացումը և հասարակության կողմից ընդունումը նրանց կողմից ընկալվում է իբրև ձեռք բերված փորձի և գործունեության արդյունք: Հետաքրքիր աշխատանք և ակտիվ կենսագործունեություն

արժեքների ցածր իրացվածությունը ներկայում սեփական կյանքով և մասնագիտական կարգավիճակով անբավարարվածության ցուցիչ է:

Միջին մասնագիտական կրթությամբ հետազոտվողների խմբում ևս առաջնային տեղեր են զբաղեցնում անձնական կյանքի և հարմարման արժեքները, չնայած որոշ մասնագիտական ինքնահիրացման արժեքների իրացվածության մակարդակը այս խմբում նշանակալիորեն բարձր է, ինչը կարելի է կապել կրթության գործոնի հետ. մասնագիտության փոփոխությունը այս խմբում մասնագիտական արժեքների իրացման առումով էական փոփոխություն չի մտցրել: Հասարակության կողմից ընդունում, ակտիվ կենսագործունեություն, զարգացում, արդյունավետ կյանքի մասնագիտական արժեքները՝ ըստ տվյալների, այս խմբում իրացված են, նվազ է իրացված հետաքրքիր աշխատանքի արժեքը, ինչը ևս վկայում է, որ աշխատանքը որը անձը կատարում է նոր պայմաններում կապվում է տհաճ ապրումների հետ: Խնդիրը նրանում է, որ ի տարբերություն բարձրագույն կրթություն ունեցող հետազոտվողների (ըստ նշանակության 5-րդ տեղ)՝ այս խմբի հետազոտվողների համար հետաքրքիր աշխատանքը առաջնային արժեք չէ (ըստ նշանակության 9-րդ տեղ):

Բարձրագույն կրթություն ունեցող տղամարդկանց խմբում՝ վերոհիշյալ առաջնային արժեքների կողքին առկա է նաև զարգացման մասնագիտական արժեքը, ինչը վկայում է, որ չնայած մասնագիտական կարգավիճակի անկման, այնուամենայնիվ, զարգացումը այս խմբի ներկայացուցիչների համար առաջնային արժեք է (ըստ նշանակության 3-րդ տեղ)՝ ի տարբերություն միջին մասնագիտական կրթություն ունեցող հետազոտվողների խմբի (ըստ նշանակության 10-րդ տեղ): Մասնագիտական ինքնահիրացման արժեքների՝ ակտիվ կենսագործունեություն, հետաքրքիր աշխատանք, արդյունավետ կյանք, նշանակության և իրացվածության միջև տարբերությունը նշանակալի է, իսկ հասարակության կողմից ընդունում արժեքի իրացվածությունը գերազանցում է այդ արժեքի նշանակությունը:

Միջին մասնագիտական կրթություն ունեցող տղամարդկանց խմբում՝ բացառությամբ ակտիվ կենսագործունեություն արժեքի, մնացած մասնագիտական արժեքները նվազ են իրացված: Հետազոտվողների մոտ իրացված է միայն

հասարակության կողմից ընդունման արժեքը: Պետք նշել այն, որ հասարակության կողմից ընդունումը հետազոտվողները կապում են ոչ թե մասնագիտական գործունեության ձեռքբերումների, հեղինակության գնահատականի հետ, այլ սեփական նեղ շրջապատի՝ հարազատների կողմից ընդունման և գնահատման հետ: Ուստի, այս արժեքի իրացվածության փաստը ավելի շատ կապվում է հետազոտվողների կողմից երևույթի սուբյեկտիվ ընկալման և իմաստավորման հետ:

Ի տարբերություն բարձրագույն կրթություն ունեցող տղամարդկանց՝ բարձրագույն կրթություն ունեցող կանանց մոտ մասնագիտական ինքնաիրացման արժեքները՝ ակտիվ կենսագործունեություն, հասարակության կողմից ընդունում, արդյունավետ կյանք և զարգացում, նշանակալիորեն իրացված են: Իրացված չէ հետաքրքիր աշխատանք մասնագիտական ինքնաիրացման խմբի արժեքը: Մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում, նոր սոցիալական կարգավիճակի իմաստավորման հարցում բարձրագույն կրթություն ունեցող կանանց և տղամարդկանց խմբերի միջև նկատվում է տարբերություն: Կարելի է ասել, մասնագիտության հետ կապված հարցերում, միջին տարիքի կանայք նվազ հավակնոտ են, քան տղամարդիկ: Աշխատանքի առկայությունը ոչ մասնագիտական գործունեության ոլորտում, նրանց մեծամասնությունը դրական է գնահատում, ուստի այդ է պատճառը, որ կանանց խմբում մասնագիտական արժեքների իրացվածությունը ավելի բարձր է: Հետազոտությանը մասնակցող կանանց որոշ մասը աշխատում են որպես հսկիչներ թանգարաններում, ադմինիստրատորներ հյուրանոցներում: Այս դեպքում, չնայած նրանց ցածր սոցիալական կարգավիճակի, բայց նրանք այն սուբյեկտիվորեն գնահատում են ավելի բարձր, քանի որ ինչպես ցույց են տալիս զրույցի տվյալները, նոր կարգավիճակը հնարավորություն է ընձեռում շփվել մարդկանց հետ, կիրառել սեփական մասնագիտական գիտելիքները: Ուստի անձի հոգեկան իրողությունները, այդ թվում և արժեքների իրացվածությունը, մեծապես կախված է սոցիալական կարգավիճակի գծած սահմաններից և ընձեռած հնարավորություններից: Բարձրագույն կրթություն ունեցող կանանց արժեքային համակարգում՝ ի տարբերություն տղամարդկանց, առաջնային տեղ է գրավում այլ

մարդկանց երջանկություն արժեքը, ինչը վկայում է կանանց մոտ ապրումակցման ունակության ավելի զարգացած լինելու մասին: Վերջին փաստը կապվում է ինչպես սեռային, այնպես էլ կրթական գործոնի հետ, քանի որ նման արդյունք չի նկատվում միջին մասնագիտական կրթություն ունեցող կանանց խմբում:

Միջին մասնագիտական կրթություն ունեցող կանանց խմբում իրացված չեն ակտիվ կենսագործունեության, արդյունավետ կյանքի մասնագիտական արժեքները: Մնացած արժեքները համեմատաբար իրացված են: Այս խմբում առաջնային արժեքների շարքում է արդյունավետ կյանք մասնագիտական խմբի արժեքը: Միջին մասնագիտական կրթություն ունեցող հետազոտվողների խմբում առաջնային արժեքները համընկնում են ողջ ընտրանքի առաջնային արժեքների հետ, ուստի տարբերություններ չեն նկատվում:

Ընդհանուր առմամբ՝ ըստ սեռային գործոնի, Մ. Ռոկիչի թեստում առանձին արժեքների առումով տարբերություններ չեն նկատվել: Ինչպես երևում է աղյուսակներից, կանանց և տղամարդկանց խմբերում՝ ամբողջ ընտրանքի հետ համեմատած, ըստ նշանակության առաջնային տեղեր են զբաղեցնում երջանիկ ընտանեկան կյանք, նյութապես ապահովված կյանք, առողջություն արժեքները: Տղամարդկանց խմբում առաջնային արժեքներ են նաև լավ ու հարազատ ընկերների առկայություն և կյանքի իմաստություն արժեքները, իսկ կանանց մոտ՝ վստահություն սեփական անձի մեջ և ակտիվ կենսագործունեություն արժեքները: Ի տարբերություն տղամարդկանց, որոնց մոտ 6-ից 10-րդ տեղերը զբաղեցնում են մասնագիտական ինքնաիրացման արժեքները, այսինքն՝ ըստ Մ. Ռոկիչի թեստի, արժեքային համակարգում այս արժեքները գտնվում են անտարբեր կամ չեզոք հատվածում, դեռ ունեն որոշակի նշանակություն անձի համար, կանանց խմբում՝ մասնագիտական ինքնաիրացման խմբի արժեքները զբաղեցնում են ավելի ցածրակարգ տեղեր, այսինքն՝ կորցրել են իրենց նշանակությունը անձի համար: Տղամարդկանց համար մասնագիտությունը առավել կարևոր արժեք է և չնայած, ոչ մասնագիտական գործունեության պայմաններում մասնագիտական արժեքների իրացման անհնարինությանը, այնուամենայնիվ, տղամարդիկ՝ ի տարբերություն կանանց, հեշտությամբ չեն հրաժարվում մասնագիտական արժեքներից:

Աղյուսակից երևում է արժեքների իրացման և նշանակության միջև առկա է տարբերություն հետևյալ արժեքների առումով. ակտիվ կենսագործունեություն արժեքի նշանակության և իրացվածության միջև տարբերությունը էական է: Արդյունավետ կյանք արժեքի նշանակությունը հետազոտողների մոտ բարձր չէ (13-րդ տեղ): Տվյալ արժեքի նշանակության և իրացվածության միջև առկա է ոչ էական տարբերություն: Հետաքրքիր աշխատանք, հասարակության կողմից ընդունում և զարգացում արժեքների իրացվածությունը գերազանցում է դրանց նշանակությունը: Կարելի է ենթադրել, որ կանանց խմբում մասնագիտական արժեքների նման դասավորությունը, ինչպես նաև իրացվածությունը պայմանավորված է նրանով, որ նոր պայմաններում աշխատանք ունենալը կնոջ համար կարևոր ձեռբերում է, ինչը թույլ է տալիս բավարարել որոշ պահանջմունքեր՝ ոչ մասնագիտական գործունեության շրջանակներում: Փաստորեն, մասնագիտական կարգավիճակ ձեռք բերելու դրդապատճառայնությունը տղամարդկանց մոտ ավելի բարձր է: Ուստի, այս առումով սեռային գործոնի հաշվի առնելը կարևոր է արժեքային ոլորտի վերակառուցման խնդրի համատեքստում: Չնայած արժեքային վերակառուցումների բնույթի վրա սեռային գործոնի ազդեցության առումով, ինչպես ցույց տվեցին հետազոտությունները, էական տարբերություններ չեն նկատվել: Տվյալները հաստատում են, որ մասնագիտական կարգավիճակի փոփոխությունը, մասնավորապես անկումը՝ հանգեցնում է մասնագիտական արժեքների նվազ իրացվածության և նոր պայմաններում ինքնաիրացման հնարավորությունների կասեցմանը:

Ամփոփելով, նշենք, որ Մ. Ռոկիչի թեստի տվյալները փաստեցին միջին տարիքի հետազոտվողների մոտ, որոնք հայտնվել են վարընթաց սոցիալական շարժունությամբ պայմանավորված մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում, արժեքային ոլորտի վերակառուցումների հետևյալ միտումները. արժեքային համակարգում անձնային և հարմարման արժեքների գերակայություն: Արժեքային տեղաշարժերի արդյուքնում՝ մասնագիտական արժեքների տեղաշարժ դեպի արժեքային համակարգի ստորին դիրքեր և մասնագիտական ինքնաիրացման խմբի արժեքների չիրացվածություն՝ ֆրուստրացիա, ինչը արտահայտվում է մասնագիտական ինքնաիրացման խմբի

արժեքների նշանակության և իրացվածության միջև էական տարբերության ձևով: Փաստորեն, անձն իր կենսագործունեության ընթացքում կարող է կարևորել տվյալ արժեքը, բայց տևականորեն չիրացվելու դեպքում, այն դադարում է լինել վարքի ուղենիշ, գործում է միայն խոսքային մակարդակում: Այն արժեքային ոլորտում գտնվում է «սառեցված»՝ չգործող վիճակում:

Հետազոտվողների մոտ արժեքային տիպի որոշման համար (ըստ Մ. Ս. Յանիցկու եռաստիճան մոդելի) կիրառվել է Ինգլիարդի մեթոդիկան՝ ձևափոխված Մ. Ս. Յանիցկու կողմից, որը առանձնացնում է հարմարման, սոցիալականացման և անհատականացման արժեքներ, իսկ արժեքային համակարգում այդ արժեքներից որևէ մեկի գերակայության դեպքում՝ հետևյալ արժեքային տիպերը՝ հարմարման, սոցիալականացման, անհատականացման և միջանկյալ կամ խառը (տես հավելված 3):

Հարմարման արժեքներն ուղղված են տագնապի հեռացմանը և տնտեսական անվտանգությանը, ձեռք բերածի պահպանմանը: Այդ խմբին են դասվում հետևյալ արժեքները՝ «գոյատևում», «կյանքը ոչ վատ, քան այսօր», «ուժերի և առողջության պահպանում», «արժանի թոշակ և աշխատավարձ», «հասարակության մեջ կայունություն» և այլն: Սոցիալականացման արժեքներն ուղղված են դեպի այլ մարդիկ, հասարակության մեջ ինտեգրմանը, սոցիալական կառուցվածքում որոշակի սոցիալական կարգավիճակ ձեռք բերելուն: Այդպիսի արժեքներ են՝ հեղինակավոր աշխատանք, ընտանեկան բարեկեցություն, շրջապատողների հարգանք և հասարակական ընդունում: Եվ վերջապես, անհատականացման խմբի արժեքներն ուղղված են դեպի զարգացում, ինքնաակտուալացում և ունեն ինքնավար բնույթ: Այդ արժեքներ են՝ մտավոր ինքնահրացումը, ժողովրդավարական իրավունքներից և ազատություններից օգտվելու հնարավորությունները, հանդուրժող և մարդասիրական հասարակության կառուցումը:

Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում, երբ առկա է անձի սոցիալական կարգավիճակի վարընթաց շարժունություն, անձի արժեքային ոլորտում գերակայում են հարմարման արժեքները (40%), որոնք ուղղված են հասարակության մեջ անձի գոյատևմանը,

բարեհարմարության ստեղծմանը՝ սահմանափակելով ինքնաիրացման, մտավոր զարգացման նրա ավելի լայն հնարավորությունները: Նոր մասնագիտական կարգավիճակի պայմաններում տեղի է ունենում ևս մեկ արժեքային վերակառուցում. «մասնագիտություն», «մասնագիտական ինքնաիրացում» արժեքը փոխակերպվում է՝ կորցնելով անձի համար իր առաջնային իմաստը և վերաիմաստավորվում է դառնալով՝ «աշխատանք», «գործ», «աշխատանքը որպես ապրուստի միջոց» արժեքի: Այսինքն՝ տեղի է ունենում բարձրակարգ արժեքի փոխակերպում հարմարման արժեքի*: Նման արժեքային վերակառուցումը կարելի է դիտարկել իբրև նորմալ սոցիալ-հոգեբանական հարմարման մեխանիզմ, երբ արժեքային վերակառուցումը կապվում է ոչ թե արժեքային համակարգով տվյալ արժեքի վերընթաց կամ վարընթաց տեղաշարժի հետ, այլ ընդհանրապես արժեքի վերաարժևորման, նշանակության փոփոխության հետ:* Հետազոտվողների մոտ գերակշռում է նաև միջանկյալ արժեքային տիպը (27%), ինչը բնորոշվում է արժեքային համակարգի չկայացվածությամբ, նրանում հակասական արժեքների առկայությամբ: Նման արժեքային համակարգը խիստ բնութագրական է փոփոխվող սոցիալական պայմաններում հայտնված անձին, որը դժվարությամբ է կարողանում համատեղել նախկին և նոր սոցիալական կարգավիճակի հետ կապված արժեքները: Այս բախումը հաճախ պայմանավորվում է նախկին բարձր մասնագիտական կարգավիճակի հետ կապված արժեքների՝ զարգացում, մասնագիտական ինքնաիրացում, հանդուրժողականություն, ազատություն, ստեղծագործելու հնարավորություն և նոր սոցիալական կարգավիճակի՝ ապրելու, գոյատևելու, նյութական ռեսուրսներ կուտակելու, առողջությունը պահպանելու ավելի ցածրակարգ արժեքների իրար հետ համատեղելու իրողության հետ: Հետազոտվողների զգալի մասը (26%) պատկանում է սոցիալականացման արժեքային տիպին: Նրանք ավելի շատ կողմնորոշված են դեպի սեփական ընտանիքը, կարիերան, մերձավոր միջավայրը՝ խիստ կարևորելով, իհարկե, շրջապատողների կարծիքը և հասարակական ընդունումը: Նրանց վարքը սահմանափակվում է հասարակության մեջ ընդունված նորմերով: Ուստի կարելի է ասել, որ նոր պայմաններում՝ յուրացնելով տիրապետող արժեքները, նորմերը, մասնագիտական

պահանջները, այս խմբի ներկայացուցիչները, լինելով բավականին պահպանողական, հեշտությամբ են հարմարվում նոր մասնագիտության, աշխատանքային պայմաններին: Եվ վերջապես, անհատականացման արժեքային տիպն առկա է նվազ քանակությամբ հետազոտվողների մոտ (7%): Ստացված տվյալները հստակ ցույց են տալիս կարևոր միտում. նոր ավելի ցածր սոցիալական կարգավիճակի առկայության պայմաններում հետազոտվողների արժեքային ոլորտում առկա է տեղաշարժ բարձրակարգ՝ անհատականացման արժեքներից դեպի ցածրակարգ հարմարման արժեքները՝ հաստատելով արժեքային վերակառուցումների բացասական միտվածության փաստը:

Չմոռանանք, որ զանգվածային գիտակցության մեջ արժեքային տիպի տարածվածության վրա մեծապես ազդում են ժողովրդագրական, գործոնները, տարիքը, կրթական աստիճանը, եկամուտը: Մեր հետազոտության մեջ հաշվի ենք առել տարիքը, կրթական աստիճանը և սեռը:

Գրաֆիկ 1



Ռ. Ինգլհարդի մոդիֆիկացված մեթոդիկայի ցուցանիշները ողջ ընտրանքի և առանձին խմբերի համար

Բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցող հետազոտվողների խմբերում՝ նկատվում է կողմնորոշում դեպի միջանկյալ և հարմարման արժեքային տիպը: Հնարավոր է, որ բարձրագույն կրթությամբ հետազոտվողների խմբում միջանկյալ արժեքային կողմնորոշման (40%) գերակայությունը կապված է տարբեր՝ սոցիալականացման, հարմարման և անհատականացման արժեքներ իրար հետ համատեղելու բարդ գործընթացի հետ՝ ի տարբերություն միջին մասնագիտական կրթություն ունեցող հետազոտվողների խմբի, որոնց ճնշող մեծամասնությունը (48%) պատկանում է հարմարման արժեքային տիպին: Այս խմբի հետազոտվողները դեռևս լիովին չեն հրաժարվում բարձրակարգ անհատականացման արժեքներից: Վերջին փաստը թույլ է տալիս ենթադրել բարձրագույն կրթությամբ հետազոտվողների խմբում արժեքային բախման ավելի մեծ հավանականության մասին: Այնուամենայնիվ, բարձրագույն կրթությամբ հետազոտվողների խմբում գերակշռում է նաև հարմարման արժեքային տիպով անձինք՝ 33%, որոնց վարքն ու գործունեությունը մեծապես միտված են գոյատևմանը և կենսագործունեության օպտիմալ վիճակի պահպանմանը: Դրան հետևում է սոցիալականացման արժեքային համակարգով հետազոտվողները՝ 21% և միջին մասնագիտական կրթությամբ խմբում՝ 29% և անհատականացման արժեքային համակարգով հետազոտվողները՝ բարձրագույն կրթությամբ խմբում՝ 6% և միջին մասնագիտական կրթությամբ խմբում՝ 9%:

Ընդհանուր առմամբ կանանց և տղամարդկանց խմբերի միջև էական տարբերություններ չեն բացահայտվել: Այս խմբերում գերակշռում են հարմարման արժեքային տիպով հետազոտվողները, այնուհետև սոցիալականացման, միջանկյալ և վերջում անհատականացման արժեքային տիպով հետազոտվողները: Վերոհիշյալ արժեքային տիպերի մասին ավելի ամբողջական պատկերացում կազմելու համար, նպատակահարմար ենք գտնում ներկայացնել արժեքային տիպերի Մ. Ս. Յանիցկու նկարագրությունը:

Հարմարման տիպի արժեքային համակարգը ձևավորվում է գերազանցապես հոգեբանական պաշտպանական մեխանիզմներով և կողմնորոշված է դեպի

առողջությունը, նյութական բարեկեցությունը և զվարճանքը: Զարգացման և ինքնաիրացման, այլ մարդկանց երջանկության արժեքները արժեքային համակարգում զբաղեցնում են վերջին տեղը: Առաջատար ուղղվածությունն է ձեռք բերածի պահպանումը: Նման մարդկանց բնորոշ է բարձր տագնապայնությունը և ֆրուստրացիոն լարվածությունը: Քաղաքական հայացքների մեջ գերակշռում են հավասարության, արդարության, պրոկտեկցիոնիզմի հայացքները: Նման տիպի մարդիկ բնորոշվում են քաղաքական պասսիվությամբ: Կարելի է ասել, որ նրանց զբաղեցնում է սեփական գոյատևմանն ուղղված խնդիրների լուծումը, քան ինքնաիրացման, սեփական զարգացման հետ կապված հարցեր:

Սոցիալականացման տիպն ուղղված է դեպի հասարակության մեջ ընդունված նորմերը և կանոնները: Կարևորություն է տրվում այնպիսի արժեքների, ինչպիսիք են՝ ընտանիք, կարիերա, հեղինակություն, հասարակական ընդունում: Որպես առաջատար ուղղվածություն՝ դիտարկվում է կողմնորոշումը դեպի այլ մարդիկ: Բնորոշ է կոնֆորմությունը, կախվածությունը և էքստեռնալությունը: Անձնային զարգացման վեկտորը՝ ավանդույթներին հետևելն է: Սոցիալական վերահսկողության հիմնային մեխանիզմ է ամոթը, ընդունված նորմերին հետևելը, նշանակալի այլոց կողմից քննադատությունից խուսափելը: Եթե որպես չափանմուշային խումբ է դևիանտ խումբը, ապա նման անձանց մոտ մեծ է դևիանտ վարքի հավանականությունը:

Խառը կամ միջանկյալ տիպը բնորոշվում է արժեքային համակարգի չկայացվածությամբ, ընդհանրուր արժեքային կողմնորոշիչների բացակայությամբ, կարգավորված, համակարգված արժեքային աստիճանակարգի բացակայությամբ: Նրանց բնորոշ է իռացիոնալությունը, պարզ իմացական ապարատը, ընդհանուր հոգեսոցիալական անբարեկեցությունը: Կարելի է ասել, նման արժեքային համակարգը ավելի շատ բնորոշում է մարգինալ անձին, որը դժվարությամբ է կարողանում համատեղել հին ու նոր իրարամերժ արժեքները, ինչի արդյունքն է արժեքային բախումը: Մեր հետազոտություններում նման մարդիկ կազմում են հետազոտվողների 27%-ը: Վերջին փաստը վկայում է այն մասին, որ մասնագիտական կարգավիճակի փոփոխությունը, որն

ուղեկցվում է արժեքային վերակառուցումներով, հաճախակի ընթանում է հին ու նոր, բարձակարգ ու ցածրակագ արժեքները համատեղելու բարդ գործընթացով, ինչի արդյունքում նման անձանց մոտ նկատվում է խառը՝ չկայացած արժեքային համակարգ: Արժեքային վերակառուցումը այս դեպքում մասնակի է:

Եվ վերջապես *անհատականացման* արժեքային տիպին հատուկ է գնահատականների և դատողությունների անկախությունը, «ինքնավար» բարոյախոսության առկայությունը՝ ուղղված դեպի ինքնաակտուալացման, ստեղծագործության, ազատության և հանդուրժողականության արժեքները: Այս խմբին բնորոշ են այնպիսի բնութագրեր, ինչպիսիք են կյանքի բարձր իմաստավորվածությունը, ինտեռնալությունը, դրական ես հիմնադրույթը: Այս դեպքում ինքնազարգացումը կենտրոնական հասկացություն է: Այս խմբի մարդիկ աչքի են ընկնում վարքի ներքին կարգավորմամբ, սոցիալական նորմերի ինտեռնալացմամբ: Պետք է նշել, որ անհատականացման արժեքային կողմնորոշմամբ խումբը ընդհանրապես կազմում է հետազոտվողների ամենափոքր խումբը:

Դ. Ա. Լեոնտևի կենսաիմաստային մեթոդիկան թույլ է տալիս պարզել անձի իմաստային համակարգի շարժընթացը, ընդհանուր կյանքի իմաստավորվածության ցուցանիշը: Կյանքի արդյունավետության (անցյալ), կյանքի գործընթացի (ներկա) և կյանքում նպատակի (ապագա) իմաստավորման մասին գաղափարը պատկանում է հետազոտողներ՝ Ջ. Կրամբոյին և Լ. Մահոլնիկին: Այս մոտեցումը զարգացում է ստացել իմաստային ոլորտի հետազոտող Ա. Վ. Սերիի կողմից, որը գտնում է, որ իրականության որևէ երևույթի կամ օբյեկտի իմաստավորումը իրականացվում է տարբեր ժամանակային լոկուսների (անցյալի, ներկայի և ապագայի) համաժամացման (սինխրոնացման) միջոցով: Այդ գործընթացը ուղեկցվում է որոշակի հոգեկան վիճակով՝ կապված իմաստի տարբեր ժամանակային լոկուսների ապրման հետ, որը հեղինակը անվանում է արդիական (ակտուալ) իմաստային վիճակ: Ժամանակային լոկուսներից յուրաքանչյուրը կարող է ժամանակի որոշակի պահի լինել բավարար չափով իմաստավորված և ներառված լինել ակտուալ իմաստային վիճակի մեջ (լինել «բաց») կամ ոչ բավարար իմաստավորված (լինել

«փակ»): Ըստ Ա. Վ. Սերիի՝ ակտուալ իմաստային վիճակի փոփոխությունն առկա է էքստրեմալ իրադրության պայմաններում [98;124-130]: Հետևաբար, այն ուղեկցվում է իմաստային ոլորտի վերակառուցմամբ:

Հաշվարկի մեջ կիրառվել է Ստյուդենտի t-չափանիշը:

Աղյուսակ 4

Ենթասանդղակ	***Միջին նշանակություններ ± ստանդարտ. շեղում.***
Նպատակը կյանքում	38.91±3,20
Կյանքի գործընթաց	35.95±4.06
Կյանքի արդյունավետություն	29.83±3.00
Ես-ի վերահսկողության լոկուս	24.65±2.39
Կյանքի վերահսկողության լոկուս	34.59±4.44
ԿԻ ընդհանուր ցուցանիշ	120.36±10.21

ԿԻԿ ընդհանուր ցուցանիշի և ենթասանդղակների միջին և ստանդարտացված շեղումները (ըստ Ե.Ա. Պետրովայի և Ա. Ա. Շեստակովայի՝ 30-55 տարեկան n=75)

Դ. Ա. Լեոնտևի ԿԻԿ մեթոդիկայի տվյալների ընդհանուր քանակական ցուցանիշները ողջ ընտրանքի համար բավականին ցածր են: Բոլոր ենթասանդղակներից ստացված ցուցանիշները՝ նպատակը կյանքում 31.5, միջին նշանակությունը՝ 38.91, կյանքի արդյունավետությունը՝ 22.3, միջին նշանակությունը՝ 29.83, կյանքի գործընթացը՝ 26.9, միջին նշանակությունը՝ 35.95, ես-ի վերահսկողության լոկուսը՝ 19.7, միջին նշանակությունը՝ 24.65, կյանքի վերահսկողության լոկուսը՝ 25.9 միջին նշանակությունը՝ 34.9: Կյանքի իմաստավորվածության ընդհանուր ցուցանիշը՝ 93.6, այն դեպքում, երբ միջին մեծությունը՝ 120.36 է:

Գրաֆիկ 2



ԿԻԿ մեթոդիկայի ցուցանիշները ողջ ընտրանքի և առանձին խմբերի համար

Այս տվյալները կարելի է մեկնաբանել՝ ելնելով Ա. Վ. Սերիի հայացքներից: Նա գտնում է, որ էքստրեմալ իրադրության մեջ իմաստային ոլորտի ձևափոխությունը

կատարում է հարմարվողական գործառույթ, ինչը թույլ է տալիս ավելի թեթև ապրել էքստրեմալ իրադությունը: Ստացված տվյալները ցույց են տալիս, որ անձի կյանքի իմաստը կազմող անցյալի, ներկայի, ապագայի ժամանակային լոկուսները բավականին ցածր են իմաստավորված: Փաստորեն, տևական սթրեսածին իրադրությունը, այն է՝ մասնագիտական կարգավիճակի կորուստը և նոր, ավելի ցածր կարգավիճակի առկայությունը, միջին տարիքի անձի կողմից ապրվում է որպես սթրեսածին իրադրություն: Այս իրադրությունը լի է վտանգներով, քանի որ նկատվում է ընդհանրապես իրականության իմաստավորման գործընթացի թուլացում: Ստացված տվյալների հիման վրա կարելի է կազմել հետազոտվողների կյանքի իմաստավորվածության և մասնագիտության փոփոխության պայմաններում հայտնված մասնագետ մարգինալի հոգեկան իրողությունների մասին պատկերացում: Նման անձինք բնորոշվում են իրականության իմաստավորման հետևյալ առանձնահատկություններով. անձն ապրում է այսօրվա կամ երեկվա օրով՝ չկարևորելով ապագան: Նա չի զգում ներկայում իր իրական հենարանը, քանի որ նոր սոցիալական կարգավիճակը այդ հնարավորությունը նրան չի ընձեռնում: Միևնույն ժամանակ «կյանքի գործընթացը» ենթասանդղակի ցածր միավորները փաստում են սեփական կյանքով և ներկայով անբավարարվածությունը: Կյանքի իմաստավորվածությունը որոշ չափով ապահովվում է անցյալի հիշողությունների կարևորման միջոցով. հետազոտվողների մոտ նկատվում է անցյալի իդեալականացում: Չնայած մեթոդիկայի տվյալները ցույց են տալիս, որ անցյալի իմաստավորումը ևս ցածր է, ուստի կարելի է ասել, որ անձի մոտ առկա է ընդհանուր անբավարարվածություն, ինչը տարածվում է ոչ միայն ներկայի, այլ նաև անցյալի վրա, իրեն համարում է անզոր սեփական կյանքը վերահսկելու հարցերում: Վերջինիս կյանքը գտնվում է արտաքին, օբյեկտիվ հանգամանքների, իրադարձությունների վերահսկողության տակ: «Կյանքի վերահսկողության լոկուս» ենթասանդղակի ցածր ցուցանիշները փաստում են, որ անձը ճակատագրապաշտ է, նա համոզված է, որ իր կյանքը ենթակա չէ գիտակցական կառավարման, իսկ ազատությունը պատրանքային է և իմաստ չունի ծրագրել նպատակներ ապագայի համար: Տվյալները ևս մեկ անգամ վկայում են, որ անձի

մասնագիտական, սոցիալական կարգավիճակը անձի հիմնային, կենսական արժեքներից մեկն է: Դրա փոփոխությունը, անկումը, առաջացնում է անձի ոչ միայն արժեքային նաև իմաստային ոլորտում խորքային փոփոխություններ՝ ժամանակային ասպեկտների նորովի ընկալման և իմաստավորման, սեփական կյանքը վերահսկելու հարցերում: Ընդհանուր կյանքի իմաստավորվածության ցուցանիշի ցածր միավորը ցույց է տալիս, որ անձը կարող է նախատրամադրված է «գոյաբանական նևրոզի», որի կենտրոնում կյանքի իմաստի կորուստն է, նոր իրականության իմաստավորման դժվարությունները, այդ գործընթացի թուլացումը, ինչն արտահայտվում է ցածր հարմարվողական կարողություններում:

Աղյուսակից երևում է, որ ընդհանուր ընտրանքի միավորների հետ համեմատած՝ բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցող հետազոտվողների խմբերի միավորների միջև էական տարբերություն չկա:

Աղյուսակ 5

		Կրթության միջև տարբերություն Ստյուդենտի t-չափանիշ	**Սեռերի միջև տարբերություն Ստյուդենտի t-չափանիշ**
Դ. Ա. Լեոնտև ԿԻԿ թեստ	**Նպատակ**	0.712	2.157*
	Գործընթաց՝	0.747	1.386
	Արդյունք	1.123	0.373
	Ես-ի վերահսկողության լոկուս	1.488	0.978
	Կյանքի վերահսկողության լոկուս	2.322*	0.406
	Ընդհանուր	1.788	1.072

Դ. Ա. Լեոնտևի ԿԻԿ մեթոդիկայի ցուցանիշների համեմատությունը՝ տարբեր խմբերի միջև

Աղուսյակից երևում է, որ բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ խմբերում առկա է տարբերություն (2.322*) «կյանքի վերահսկողության լոկուս» ենթասանդղակի միավորների միջև: Փաստորեն, ինչպես ցույց են տալիս տվյալները, բարձրագույն կրթությամբ հետազոտվողները իրենք ավելի շատ են զգում «իրենց կյանքի տերը» և կարող են ազատորեն որոշումներ կայացնել, գտնել խնդիրների ինքնուրույն լուծումներ՝ անկախ արտաքին հանգամանքների: Նրանք գտնում են, որ սեփական կյանքը իրենց վերհսկողության ներքո է: Այլ իրադրություն է միջին մասնագիտական կրթություն ունեցող հետազոտվողների խմբում, որոնց միավորները վկայում են արտաքին հանգամանքներին ենթարկվելու, ճակատագրապաշտության մասին: Իհարկե, այս առումով կրթության գործոնի դերը թերագնահատել չի կարելի: Հնարավոր է, բարձրագույն կրթությունը թույլ է տալիս շրջապատող իրականության ընկալման և իմաստավորման ավելի բարդ իմացական գործընթացների ներգրավվում և պրոբլեմային իրադրությունում ավելի ստեղծագործական լուծումներ գործադրման հնարավորություն:

Ըստ սեռային գործոնի՝ առկա է տարբերություն՝ կապված «նպատակը կյանքում» ենթասանդղակի տվյալների (2.157*) հետ: Ստացված տվյալները վկայում են, որ չնայած սոցիալական ցածր կարգավիճակի առկայության, տղամարդիկ, ավելի շատ քան կանայք, կապում են ապագայի հետ ծրագրեր, բնորոշվում են ավելի մեծ նպատակաուղղվածությամբ: Նրանց գործողությունները մեծապես միտված են դեպի ապագան: Այս առումով պետք է նշել, որ չնայած 21-րդ դարում անընդմեջ արծարծվում է գենդերային խնդիրը, սեռերի միջև հավասարության հարցը, բայց կենսաբանության տեսանկյունից սերունդի շարունակման, նրա գոյատևման համար բարենպաստ պայմաններ ապահովելու առումով տղամարդու նպատակաուղղվածությունը նրա կարևորագույն հիմնային հատկանիշներից մեկը: Կարելի է ենթադրել, որ մասնագիտական կարգավիճակի փոփոխության իրադրությունը տղամարդիկ ավելի բարեհաջող են հաղթահարում քան կանայք, քանի որ շարունակում են գործել և ծրագրեր

կապել ապագայի հետ՝ արդեն նոր ավելի ցածր սոցիալական կարգավիճակի առկայության պայմաններում:

Ա. Գ. Մակլակովի և Ս. Վ. Չերմյանինի «Ադապտիվություն» հարցարանը կիրառվել է մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում անձի հարմարվողական կարողությունները գնահատելու, արժեքային վերակառուցումների բնույթը իմաստավորելու համար (տես հավելված 4): Հարմարվողականությունը ինտեգրալային անձնային հատկություն է, որը թույլ է տալիս պատկերացում ունենալ նոր պայմաններում անձի սոցիալ-հոգեբանական հարմարման, նոր միջավայրին ինտեգրման մասին:

Գրաֆիկ 3



Ա. Գ. Մակլալովի և Ս. Վ. Չեմյանինի «Ադապտիվություն» հարցարանի ցուցանիշները ողջ ընտրանքի և առանձին խմբերի համար՝ արտահայտված է պատերով

Ստացված տվյալները ողջ ընտրանքի, ինչպես նաև առանձին խմբերի համար ներկայացված են պատերով: Հարմարվողական կարողությունը գտնվում է 1-2 պատի

սահմաններում, ինչը ցույց է տալիս, որ մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում, երբ նկատվում է սոցիալական կարգավիճակի վարընթաց շարժունություն, անձի հարմարվողական կարողությունները թուլանում են կյանքի, աշխատանքի նոր պայմաններին՝ տևական բարդ սոցալ-հոգեբանական հարմարման արդյունքում: Նոր պայմաններում արժեքային համակարգի վերակառուցումները դառնում են հարմարման հիմնական մեխանիզմ: Այն իրականացվում է ավելի բարձրակարգ՝ հանդուրժողականության, մտավոր ինքնահիրացում, մարդասիրություն, զարգացում և նմանատիպ բարձրակարգ արժեքներից հրաժարվելու և հարմարման արժեքները ընդունելու միջոցով: Առանձին դեպքերում նկատվում է արժեքի նշանակության պահպանում արժեքային համակարգում, բայց այն չի ունենում իրացվածություն կամ նվազ է իրացվում: Այս դեպքում կարող ենք խոսել արժեքային բախման և, հետևաբար, ցածր սոցիալ-հոգեբանական հարմարվածության մասին: Ցածր հարմարվողական կարողություններով մարդիկ նոր պայմաններում հակված են զանազան հոգեմարմնական խանգարումների: Նման անձինք բնորոշվում են ցածր նյարդահոգեկան կայնունությամբ և կոնֆլկտային են, կարող են թույլ տալ հակահասարակական արարքներ: Հաղորդակցական կարողությունը և բարոյական նորմատիվությունը գտնվում են 3-4 պատի սահմաններում, ինչը նշանակում է, որ նման անձինք հեշտությամբ են շփում հաստատում այլ մարդկանց, իրենց վարքի մեջ կողմնորոշվում են ընդունված հասարակական նորմերով և կանոններով: Հնարավոր է, զարգացած հաղորդակցական կարողությունը օգնում է նման իրադրության մեջ հայտնված անձանց ավելի հեշտ հարմարվել հասարակական միջավայրում, մասնավորապես, նոր կարգավիճակային պայմաններին՝ մարդկանց հետ արդյունավետ շփում հաստատելու և կոմֆորմ վարք դրսևորելու միջոցով: Ինչպես երևում է գրաֆիկից, միջին մասնագիտական և բարձրագույն կրթությամբ խմբերում, հետազոտվողների միավորները էականորեն չեն տարբերվում: Տվյալները համընկնում են ամբողջ ընտրանքի տվյալների հետ: Հարմարվողական կարողությունը՝ միջին մասնագիտական կրթությամբ խմբում մոտ՝ 1 պատի, բարձրագույն կրթությամբ հետազոտվողների մոտ՝ 2 պատի սահմաններում է:

Նյարդահոգեկան կայունությունը՝ միջին մասնագիտական կրթություն ունեցող հետազոտվողների խմբում՝ 2, բարձրագույն կրթություն ունեցող հետզոտվողների խմբում՝ 3 պատի սահմաններում է: Հաղորդակցական կարողությունը և բարոյական նորմատիվությունը երկու խմբում 4 պատի սահմաններում է:

Ինչպես երևում է գրաֆիկից, կանանց և տղամարդկանց խմբերում բոլոր ենթասանդղակներից ստացված միավորները համընկնում են ընդհանուր ընտրանքի տվյալների հետ՝ բացառությամբ բարոյական նորմատիվության, որը կանանց խմբում ավելի բարձր է՝ 5, քան տղամարդկանց մոտ՝ 4: Փաստորեն, իրենց սոցիալական վարքի մեջ, կանայք ավելի հակված են հետևել ընդունված նորմերին, կանոններին, քան տղամարդիկ: Իհարկե, նման ցուցանիշը կարելի է բացատրել ինչպես սեռային, այնպես էլ էթնիկական գործոններով: Կանայք հայ էթնոսում ավելի շատ, քան տղամարդիկ, հարկադրված են հետևելու ընդունված բարոյական նորմերին, նրանց բարոյական վարքագծի նկատմամբ ուշադրությունը ավելի մեծ է:

Աղյուսակ 6

		Կրթության միջև տարբերություն Ստյուդենտի t-չափանիշ	Սեռերի միջև տարբերություն Ստյուդենտի t-չափանիշ
Ադապտիվություն	Հարմարվողական կարողություն	-1.837	0.460
	Նյարդահոգեկան կայունություն	-0.779	-0.836
	Հաղորդակցման կարողություն	-0.991	-0.492
	Բարոյական նորմատիվություն	-0.790	2.915**

P* ≤ 0,05 ; P ≤ 0,01, P*** ≤ 0,001**

Ա. Գ. Մակլալովի և Ս. Վ. Չեմյանինի «Ադապտիվություն» հարցարանի ցուցանիշների վիճակագրական տարբերությունը խմբերի միջև

Ինչպես երևում է աղուսյակից, Ստյուդենտի t-չափանիշը բարոյական նորմատիվության համար հավասար է (2.915 p≤0,01): Այսինքն՝ կանանց բարոյական նորմատիվության մակարդակը վիճակագրորեն տարբերվում է տղամարդկանց բարոյական նորմատիվության մակարդակից: Իսկ հարմարվողականության մնացած

մակարդակների միջև նշանակալի տարբերություններ չեն նկատվել, ինչպես սեռերի, այնպես էլ կրթության տարբեր մակարդակի հետազոտվողների միջև:

Ստորև ներկայացնում ենք հետազոտության մեջ մեթոդների տվյալների միջև բացահայտված համահարաբերակցական կապեր: Ռոկիչի թեստի դեպքում օգտագործվել է խի-քառակուսին:

Աղյուսակ 7

		Դ. Ա. Լեոնտևի ԿԻԿ թեստ					
		Նպատակ	Գործըն-թաց	Արդյունք	Ես-ի վերահսկողության լոկուս	Կյանքի վերահսկողության լոկուս	Ընդհանուր ԿԻ ցուցանիշ
Ռոկիչի թեստ (արժեքներ ըստ նշանակության)	Ակտիվ կենսագործունեություն (ն)	-	-	-	-	-	-
	Կյանքի իմաստություն (ն)	-	482.56	-	-	-	-
	Առողջություն (ն)	-	-	-	-	-	-
	Հետաքրքիր աշխատանք (ն)	-	-	341.47	-	-	-
	Բնության և արվեստի գեղեցկություն (ն)	-	-	-	-	-	-
	Սեր (ն)	-	-	-	-	-	-
	Նյութապես ապահովված կյանք (ն)	-	-	-	-	-	-
	Լավ ու հարազատ ընկերներ (ն)	-	-	-	-	-	674.71
	Հասարակության կողմից ընդունում (ն)	-	-	-	-	-	-
	Ճանաչողություն (ն)	-	-	-	-	-	726.13
	Արդյունավետ կյանք (ն)	350.06	-	-	-	-	-
	Զվարճանք (ն)	420.04	-	-	-	-	784.50
	Ազատություն (ն)	-	-	-	-	-	-
	Զարգացում (ն)	-	-	-	-	-	-
	Երջանիկ ընտանեկան կյանք (ն)	-	-	-	-	-	-
	Այլ մարդկանց երջանկություն (ն)	-	-	-	-	-	-
	Արարել (ն)	-	-	-	-	-	-
	Վստահություն սեփական ուժերի մեջ (ն)	415.21	-	-	341.13	-	-

Մ. Ռոկիչի «Արժեքային կողմնորոշումների» թեստի և Դ. Ա. Լեոնտևի ԿԻԿ մեթոդիկայի ցուցանիշների միջև համահարաբերակցական կապերը

Հայտնաբերվել են համահարաբերակցական կապեր Ռոկիչի արժեքային թեստի և Դ. Ա. Լեոնտևի ԿԻԿ մեթոդիկայի որոշ ենթասանդղակների միջև: Ռոկիչի թեստի կյանքի իմաստության արժեքը համահարաբերակցվում է Դ. Ա. Լեոնտևի ԿԻԿ մեթոդիկայի «կյանքի գործընթաց» ենթասանդղակի հետ: Այս համահարաբերակցական կապը կարելի է բացատրել հետևյալ կերպ. «կյանքի գործընթաց» ենթասանդղակը ցույց է տալիս կյանքով բավարարվածությունը ներկայում, կյանքի իմաստավորվածությունը ներկայում գտնելը, իսկ կյանքի իմաստության արժեքը կապված է հետազոտվողի կողմից կյանքի մեջ իմաստներ գտնելու, դրանք արժևորելու հետ: Ուստի այս դեպքում կյանքի իմաստավորումը, իմաստության հասնելը կապված է ներկայում այն ավելի լիարժեք ապրելու, կյանքը՝ որպես տրվածք արժևորելու փաստի հետ:

Հետաքրքիր աշխատանք արժեքը համահարաբերակցվում է «կյանքի արդյունք» ենթասանդղակի հետ: Այս համահարաբերակցական կապը ցույց է տալիս, որ հետազոտվողների մոտ հետաքրքիր աշխատանք արժեքը կապվում է անցյալի զգացողությունների, անցած ուղու իմաստավորման հետ: Այսինքն՝ այս արժեքը նրանց համար անցյալի ցուցիչն է, ոչ թե ներկայի, ինչն էլ հաստատում է մեր ենթադրությունն այն մասին, որ ցածր սոցիալական կարգավիճակ զբաղեցնող անձին, որին բնորոշում ենք իբրև մասնագետ մարգինալ կամ «հետմասնագետ»՝ բնորոշ է անցյալի իդեալականացումը: Այդ փաստը հաստատում են նաև սոցիալ-հոգեբանական հարցաթերթիկի տվյալները: Հետազոտվողների ճնշող մեծամասնության մոտ դրական ապրումներն ու աշխատանքով բավարարվածությունը կապված է նախկին աշխատանքի, մասնագիտական կարգավիճակի հետ:

Բացահայտվել է համահարաբերակցական կապ նաև հարազատ ու լավ ընկերների առկայություն արժեքի և ընդհանուր ԿԻ (կյանքի իմաստավորվածություն) ցուցանիշի հետ: Այս համահարաբերակցական կապն ապացուցում է, որ սոցիալական միջավայրում ակտիվ ու ներդաշնակ գործառնության համար, մարդուն անհրաժեշտ է շրջապատված լինել հարազատ և նշանակալի մարդկանցով: Ուստի անձի կյանքում հուզական կապերի առկայությունն ապահովում է ընդհանուր իրականության իմաստավորվածության բարձր մակարդակը և թույլ է տալիս նրան զգալ իրեն յուրայինների մեջ, ոչ թե հասարակությունից օտարված: Ճանաչողության արժեքը համահարաբերակցվում է

ընդհանուր ԿԻ (կյանքի իմաստավորվածություն) ցուցանիշի հետ: Կարելի է ասել, որ ընդհանրապես կյանքի և նրա առանձին կողմերի իմաստավորումն իմացական բարդ գործընթաց է, ուստի շրջապատող իրականությունը և սեփական ես-ը ճանաչելու, ինչպես նաև իրականության դրական կողմերի արժևորումը, թույլ է տալիս անձին յուրացնել սոցիալական իրականությունը ճանաչողության միջոցով և ապահովում կյանքով բավարարվածության, իրականության իմաստավորման բարձր մակարդակ:

Առկա է նաև համահարաբերակցություն արդյունավետ կյանք արժեքի և «նպատակը կյանքում» ենթասանդղակի միջև: Արդյունավետ կյանք արժեքը պատկանում է մասնագիտական ինքնաիրացման արժեքների խմբին: Իսկ Դ. Ա. Լեոնտևի ԿԻԿ թեստի «նպատակը կյանքում» ենթասանդղակը ցույց է տալիս հետազոտվողի նպատակը կյանքում, նպատակաուղվվածությունը, ժամանակային հեռանկարը, ուղղվածությունը դեպի ապագան, ինչը, այս դեպքում, բավականին ցածր է: Սեփական ապագայով հետաքրքրվածությունը թույլ է տալիս ենթադրել, որ նոր կարգավիճակի պայմաններում սոցիալ-հոգեբանական հարմարումը որոշակիորեն տեղի է ունեցել: Զվարճանքի արժեքը համահարաբերակցվում է «նպատակը կյանքում» ենթասանդղակի և ԿԻ (կյանքի իմաստավորվածություն) ցուցանիշի հետ: Այս փաստը կարելի է բացատրել հետազոտվողների մոտ դրական հույզերի, բավարարվածություն ստանալու ձգտման և դրա միջոցով իրականությունը իմաստավորելու և ապագան կառուցելու հնարավորության հետ: Մյուս կողմից, կարելի է ենթադրել, որ հետազոտվողների հոգեկանում սոցիալական փոփոխվող պայմաններում գերակայում են հեդոնիստական պահանջմունքները: Նրանք փորձում են կյանքից ստանալ հաճույք՝ զվարճանքի միջոցով: Հաճույքը դառնում է գոյության նպատակ, այլ ոչ թե միջոց՝ առանձին դեպքերում թուլացնելով հետազոտվողների մոտ մասնագիտական կարգավիճակի փոփոխությամբ պայմանավորված դեպրեսիվ հոգեվիճակը:

Բացահայտվել է նաև համահարաբերակցական կապ Ռոկիչի թեստի վստահությունը սեփական ուժերի մեջ արժեքի՝ և Դ. Ա. Լեոնտևի «նպատակը կյանքում» և «ես-ի վերահսկողության լոկուս» ենթադանդղակների միջև, ինչը փաստում է, որ հետազոտվողների մոտ սեփական ուժերի մեջ վստահության արժևորումը կապվում է սեփական կյանքի «տերը», ինքը՝ մարդն է, ինչը թույլ չի տալիս նրան, հույսը դնել բոպեական տրամադրությունների, ճակատագրի վրա, այլ արդյունավետ և

ստեղծագործաբար գործառնել նոր սոցիալական իրականության պայմաններում՝ չդրսևորելով իմպուլսիվ, ինքնաբերական վարքագիծ:

Աղյուսակ 8

		Հարմարվողականություն (Ադապտիվություն)			
		Հարմարվողական կարողություն	Նյարդահոգեկան կարողություն	Հաղորդակցման կարողություն	Բարոյական նորմատիվություն
Ռոկիչիթեսո (նշանակալի արժեքներ)	Ակտիվ կենսագործունեություն (ն)	-	-	-	-
	Կյանքի իմաստություն (ն)	-	-	-	-
	Առողջություն (ն)	650.97	-	282.73	205.85
	Հետաքրքիր աշխատանք (ն)	-	-	-	220.17
	Բնության և արվեստի գեղեցկություն (ն)	-		-	200.55
	Սեր (ն)	-	-	-	-
	Նյութապես ապահովված կյանք (ն)	-	-	-	-
	Լավ ու հարազատ ընկերներ (ն)	-	688.95	-	-
	Հասարակության կողմից ընդունում (ն)	-	-	-	-
	Ճանաչողություն (ն)	-	-	-	-
	Արդյունավետ կյանք (ն)	-	-	229.50	-
	Զվարճանք (ն)	-	748.99		-
	Ազատություն (ն)	-	-	277.60	-
	Զարգացում (ն)		-	-	-
	Երջանիկ ընտանեկան կյանք (ն)	-	540.66	-	-
	Այլ մարդկանց երջանկություն (ն)	-	798.36	-	-
	Արարել (ն)	-	-	-	-
	Վստահություն սեփական ուժերի մեջ (ն)	-	-	-	-

Ա. Գ. Մակլակովի և Ս. Վ. Չերմյանինի «Ադապտիվություն» բազմաշերտ մեթոդիկայի ցուցանիշների և Մ. Ռոկիչի «Արժեքային կողմնորոշումների» թեստի տվյալների միջև համահարաբերակցական կապերը

Հայտնաբերվել է ուժեղ համահարաբերակցական կապ առողջություն արժեքի և հարմարվողական կարողությունների (650.97) միջև: Ավելի թույլ են հաղորդակցական կարողության (282.73), հետաքրքիր աշխատանք (220.17), բնության և արվեստի գեղեցկություն արժեքի (200.55) և բարոյական նորմատիվության ենթասանդղակի հետ համահարաբերակցական կապերը: Բացահայտվել է համահարաբերակցական կապ հարմարվողական կարողությունների և առողջություն արժեքի միջև: Առողջ անձի մոտ զարգացած հարմարվողական կարողությունների առկայությունը, ինչպես հոգեկան, այնպես էլ ֆիզիկական առողջության ցուցանիշ է: Որքան առաջնային է առողջություն արժեքը անձի համար, այնքան զարգացած են նրա հարմարվողականությունը, ինչը ենթադրում է կյանքի բարդ իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Բացահայտվել է համահարաբերակցական կապ լավ ու հարազատ ընկերների առկայության արժեքի և նյարդահոգեկան կայունության ենթասանդղակի միջև (688.95): Անձի նյարդահոգեկան կայունությունը պայմանավորվում է նրա ինքնագնահատականով, հուզական կայունությամբ, ինչպես նաև սոցիալական ընդունմամբ, որի հետ կապված է հարազատ ու լավ ընկերների առկայության արժեքը:

Այսպիսով, ստացված հետազոտական տվյալները ամբողջացրեցին և հաստատեցին վարընթաց սոցիալական շարժունությամբ պայմանավորված մասնագիտության փոփոխության պայմաններում հայտնված անձի արժեքային ոլորտի վերակառուցումների բնույթը, դրանց ուղղվածությունը և դրանցով պայմանավորված անձի հարմարվողական կարողություններն ու միտումները:

Եզրակացություններ

1. Անձի արժեքային ոլորտի վերակառուցումը օրինաչափ երևույթ է անձի զարգացման ընթացքում: Վարընթաց սոցիալական շարժունությամբ պայմանավորված մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում տեղի են ունենում անձի արժեքային ոլորտի վերակառուցումներ: Հետազոտությունը պարզել է, որ արժեքային ոլորտի բացասական միտվածությամբ վարընթաց վերակառուցումները ընթանում են բարձրակարգ արժեքների տեղաշարժմամբ դեպի արժեքային համակարգի ցածր դիրքերը՝ ցածրակարգ հարմարման արժեքների գերակայությամբ կամ բարձրակարգ և ցածրակարգ արժեքները համատեղելու գործընթացով, ինչն ուղեկցվում է արժեքային բախմամբ:
2. Հետազոտության շնորհիվ բացահայտվեց հետազոտվողների մոտ արժեքների՝ մասնավորապես մասնագիտական ինքնաիրացման խմբի արժեքների նշանակության և իրացվածության միջև տարբերությունը, ինչը որոշում է արժեքային վերակառուցման բնույթը: Վերակառուցումը ենթադրում է ոչ միայն անձի արժեքային համակարգում առաջնային արժեքների տեղաշարժ, այլ նաև դրանց նշանակության պահպանման դեպքում իրացման հնարավորության բացակայություն կամ սահմանափակություն, ինչը բնորոշում ենք իբրև «արժեքային ֆրուստրացիա»: Վերջինս արժեքային ոլորտի վերակառուցման գլխավոր նորագոյացությունն է և մեծապես դրսևորվում է մասնագիտական ինքնաիրացման արժեքների խմբում՝ պայմանավորելով այդ արժեքների իրացվածության ցածր մակարդակը՝ նոր, ոչ մասնագիտական գործունեության պայմաններում:
3. Հետազոտության ընթացքում պարզվեց հետազոտվողների արժեքային տիպը, ինչը բացահայտում է արժեքային վերակառուցման բովանդակությունը և անձի արժեքային ոլորտի վերակառուցման կարևոր բնութագրիչ է: Վարընթաց շարժունությամբ պայմանավորված մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում, անձի արժեքային ոլորտում գերակայում են հարմարման արժեքները:

Հետազոտվողների մեծամասնությունը պատկանում են հարմարման արժեքային տիպին՝ հաստատելով մեր ենթադրությունն այն մասին, որ արժեքային վերակառուցումներն ունեն հարմարման վեկտոր: Հետազոտությունը պարզեց, որ արժեքային տիպը կախված է կրթական գործոնից. բարձրագույն կրթություն ունեցող հետազոտվողների մեծամասությունը պատկանում է միջանկյալ կամ խառը տիպին, ինչը բնորոշվում է արժեքային համակարգի չկայացվածությամբ, բարձրակարգ և ցածրակարգ արժեքներն իրար հետ համատեղելու բարդ գործընթացով: Հոգեկան այս իրողությունները «հետմասնագետի» կամ «մասնագետ մարգինալի» անձի ելակետային բնութագրեր են: Պետք է նշել, որ արժեքային վերակառուցումը միշտ չէ ենթադրում ամբողջական անցում դեպի ցածրակարգ հարմարման արժեքների: Անձի արժեքային ոլորտում, առանձին դեպքերում, բարձրակարգ արժեքները, չնայած իրացման հնարավորության բացակայության, պահպանում են իրենց նշանակությունը՝ մտնելով հակասության մեջ հասարակության կողմից թելադրվող նորմերի, նոր մասնագիտական պահանջների, արժեքների հետ:

4. Հետազոտություններով բացահայտվել է նաև հետազոտվողների իմաստային ոլորտի առանձնահատկությունները, մասնավորապես, կյանքի իմաստավորվածությունը: Մասնագիտության փոփոխությունը և ոչ մասնագիտական գործունեությամբ զբաղվելը միջին տարիքի անձի համար ապրվում է որպես սթրեսային իրադրություն: Մասնագիտական գործունեությունը, մասնագիտական ինքնաիրացումը անձի կյանքի իմաստի կարևոր բաղադրիչներից է, որի իմաստավորումն առավել սուր բնույթ է ստանում միջին տարիքում: Այս պայմաններում բացասական միտվածությամբ արժեքային վերակառուցումները հանգեցնում են արժեքային ոլորտի պարզեցմանը՝ մեծապես պայմանավորելով է անձի կողմից իրականության իմաստավորման գործընթացի թուլացումը: Այն արտահայտվում է ընդհանուր կյանքի իմաստավորվածության ցածր ցուցանիշներում: Այս պայմաններում մեծանում է անձի հոգեկանում «գոյաբանական նևրոզի» հավանականությունը, որի կենտրոնում կյանքի իմաստի կորուստն է:

5. Հետազոտության ընթացքում բացահայտվեց հետազոտվողների հարմարվողական կարողությունները: Տևական հարմարումը նոր իրականությանը, ինչպես նաև ոչ մասնագիտական, ցածր որակավորմամբ գործունեության պայմաններին, ինչն ուղեկցվում է արժեքային վերակառուցումներով, հանգեցնում է անձի հարմարվողական կարողության թուլացմանը:
6. Տեսական վերլուծությունը ցույց է տալիս, որ միջին տարիքը արժեքային վերագնահատումների և ընդհանրապես կյանքի վերաիմաստավորման ժամանակաշրջան է: Աշխատանքի փոփոխությունը մարդու կյանքի տվյալ ժամանակահատվածում ապրվում է հատկապես սուր կերպով: Նախկինում բարձր կարգավիճակ զբաղեցրած «հետմասնագետի» մոտ նկատվում է կենսական ծրագրերի չիրացվածություն, մասնագիտական ինքնահիրացման կասեցում, ինչը հաճախ ուղեկցվում է զայրույթի, տագնապի, ապաթիայի, անհեռանկարայնության, դժգոհության զգացմունքներով:
7. Հետազոտությունը բացահայտեց, որ մասնագիտության փոփոխության պայմաններում անձի արժեքային ոլորտում փոխակերպման է ենթարկվում աշխատանքի արժեքի առաջնային նշանակությունը՝ ինքնաարտահայտման և զարգացման միջոցից վերաարժևորվելով հարմարման գոյատևման միջոցի:
8. Անհրաժեշտ է հոգեբանական աջակցություն մասնագիտական որակավորում ունեցող անձանց նոր պայմաններում մասնագիտական վերակողմնորոշման հարցերում: Ուստի նպատակահարմար ենք գտնում ՀՀ Զբաղվածության պետական գործակալությանը կից հոգեբանական ծառայության գործունեության անհրաժեշտությունը: Վերջինս թույլ կտա ուղղորդել նման անձանց աշխատանքի ընտրության հարցում, ուղղորդել դեպի աշխատանքային գործունեության ոլորտ, որը հեռու չէ անձի նախկին մասնագիտական կողմնորոշումից և կստեղծի հնարավորություն մասնակիորեն իրացնել սեփական մասնագիտական կարողությունները:

Գործնական առաջարկություններ

1. Տեսական վերլուծությունից բխում է, որ հասարակության զարգացման ներկայիս տեմպերը բավականին արագ են, ինչը արտահայտվում է մասնագիտական կարգավիճակների տեղաշարժերում՝ առանձին դեպքերում դրսևորվելով գործազրկության և ոչ մասնագիտական գործունության ոլորտում մեծ քանակությամբ մարդկանց հայտնվելու իրողությունների մեջ: Հետմասնագետների արժեքների, իմաստների համակարգը ձևավորվում է տևական ժամանակահատվածում և ամրապնդվում նրանց մասնագիտական գործունեության մեջ, ուստի բացասական միտվածությամբ արժեքային վերակառուցումները նոր պայմաններում, ճիշտ է ունեն հարմարման ուղղվածություն, բայց կասեցնում են ոչ միայն առանձին անձի մասնագիտական ինքնաիրացումը, այլ դառնում հասարակության առաջընթացի կասեցման պատճառ: Ուստի այս իրադրությունը պահանջում է ոչ միայն հոգեբանական աջակցություն, այլ նաև առավել լայն քաղաքականության իրագործում՝ մասնավորապես Զբաղվածության պետական գործալակության, ինչպես նաև կարիերայի կենտրոնների ներգրավմամբ:
2. Գրականության վերլուծությունը ցույց է տվեց, որ մասնագիտական կարգավիճակի հարկադիր փոփոխությունը միջին տարիքի անձի համար սթրեսածին իրադրություն է, որից ելքը ստվար զանգվածը գտնում է ոչ մասնագիտական ավելի ցածր որակավորմամբ աշխատանքի ոլորտներում: Տեղի է ունենում «ստեղծագործող» անձի վերափոխում «հարմարվող» անձի կամ մասնագետ մարգինալի, ով աշխատանքը կատարում է հանուն վարձատրության և գոյատևման, բայց ոչ թե ինքնաիրացման և զարգացման: Ուստի այս դեպքում մեծ կարևորություն է ձեռք բերում խելամիտ մշակված մասնագիտական վերակողմնորոշման գործընթացը, որում պահանջվում է սոցիալական աշխատողների, և առաջին հերթին, հոգեբանների ներգրավումը:

   Չնայած գիտական գրականությունը ողողված է մասնագիտական կողմնորոշման մասին տարբեր մոտեցումներով, որոնք վերաբերում են երիտասարտության

տարիքային շրջափուլին, բայց առավել քիչ են մասնագիտական վերակողմնորոշման մշակված մոդելները: Միջին տարիքի անձի մասնագիտական վերակողմնորշումը բարդ գործընթաց է: Խնդիրը բարդանում է, քանի որ միջին տարիքի անձինք արդեն անցել են մասնագիտական ուղի և հոգեբանական ներգործությունների նկատմամբ ավելի կոշտ են, ոչ ճկուն: Այդ իրադրությունը խորացնում է տևական գործազրկությունը և ոչ մասնագիտական գործունեությամբ զբաղվելը: Ուստի մասնագիտական վերակողմնորոշումը պետք է ուղղված լինի արժեքային ոլորտում մասնագիտական և զարգացման արժեքների նշանակության վերականգմանը և դրանց իրացման համար հնարավորության ստեղծմանը:

3. Մասնագիտական վերակողմնորոշման մոդելը, ըստ մեզ, բաղկացած է երեք փուլից: Առաջինը իր մեջ ներառում է գնահատումը՝ ուղղված անձի տագնապայնության, նրա ակտուալ պահանջմունքների և մասնագիտական հետաքրքրությունների, հավակնությունների մակարդակի, ընդունակությունների բացահայտմանը: Առաջին փուլի վրա հիմնվում է երկրորդ փուլի աշխատանքը՝ հոգեբանական խորհրդատվությունը: Տեսական վերլուծությունը ցույց է տալիս, որ նման իրադրության մեջ հայտնված անձինք բնորոշվում են կյանքի իմաստավորման գործընթացի թուլացմամբ, նախատրամադրված են գոյաբանական նևրոզի: Ուստի այս փուլում հոգեբանի կողմից կիրառելի է Վ. Ֆրանկլի լոգոթերապիայի մոտեցումը՝ ուղղված անձի կողմից իմաստներ գտնելուն և սեփական անձնային ռեսուրսները ակտիվացնելուն՝ համադրված կոգնիտիվ ուղղության տարրերի հետ: Երրորդ փուլը մասնագիտական ուղղորդումն է, ինչը ենթադրում է անձին տեղեկատվության տրամադրում աշխատաշուկայի ժամանակակից մասնագիտությունների մասին: Հիմնվելով անձի մասնագիտական հետաքրքրությունների և ընդունակությունների, ինչպես նաև սեփական կյանքի հետ կապված որոշման վրա՝ ուղղորդել գործունեության այն ոլորտներ, որոնցում անձը կարող է իրականացնել արդյունավետ գործունեություն:

4. Մասնագիտական վերակողմնորոշումը երկկողմանի գործընթաց է, այն պահանջում է ինչպես համապատասխան կենտրոնների և ծառայությունների կողմից ժամանակին նման իրադրությա ն մեջ հայտնված մարդկանց հաշվառում և ուղղորդող աշխատանք, այնպես էլ անձի ներգրավվածություն սեփական կյանքը փոխելու աշխատանքում:
5. Հետազոտության արդյունքները կարող են ներառվել Զբաղվածության պետական գործակալության, կարիերայի կենտրոնների աշխատակիցների վերապատրաստման դասընթացներում՝ վարընթաց սոցիալական շարժունությամբ պայմանավորված մասնագիտության փոփոխության պայմաններում հայտնված անձի հոգեկան իրողությունները՝ արժեքաիմաստային ոլորտի բովանդակության, տեղաշարժերի, նորագոյացությունների, հարմարման միտումների վերաբերյալ ավելի ամբողջական պատկերացում կազմելու և միջին տարիքի անձի մասնագիտական վերակողմնորոշումն ավելի հետևողական և արդյունավետ կազմակերպելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արզումանյան Ս. Ջ., Մկրտչյան Ս., Սարգսյան Վ. Ժ., «Կիրառական հոգեբանության պրակտիկում», Զանգակ 97, Երևան 2002, 392 էջ
2. Խուդոյան Ս.Ս. Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Եր.-Զանգակ-97, 2004, 248 էջ
3. Հակոբյան Ն.Ռ. Մարգինալության դրսևորման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները փոխակերպվող հասարակություններում, Երևան 2006, 302 էջ
4. Հովսեփյան Ա.Ա. «Սոցիալ–հոգեբանական տեղաշարժերը վերափոխվող Հայաստանում», Երևան 2004, Դե -Ֆակտո, 180 էջ
5. Սարգսյան Ռ.Ա. Անձի մասնագիտական ինքնաիրացման մեթոդաբանական հիմքերը, Փորձարարական հետազոտությունները հոգեբանության մեջ, գիտ. ժող. Երևան 2012, էջ 91-96
6. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն, Երևան: «Ուրարտու» համալսարան 2010, 456 էջ
7. Նալչաջյան Ա.Ա. Անձ: Խմբային սոցիալականացում և հոգեբանական ադապտացիա, Երևան, ԳԱԱ հրատ. 1985, 265 էջ
8. Акиндикова И.А. Самоактуализация личности в различних типах организации профессиональной деятельности, опубликована в сборнике научних трудов “ Психолого-педогогические проблемы развития личности в совремменых условиях: “Психология и педогогика в общественной практике, изд-во РГПУ им. А. И. Герцена, с. 29-36
9. Алексеева В.Г. Ценностные ориентации как фактор жизнедеятельности и развития личности // Психолог. журн. — 1984. — Т. 5. — № 5. — с. 63-70.
10. Ананьев Б.Г. Человек как предмет познания, М.:_ Наука 2000, 288 с.
11. Андреева Г. М., Богомолова Н. Н., Петровская Л. А. Зарубежная социальная психология XX столетия теоретические подходы, учебное пособие для вузов –М; Аспект Пресс 2002, 287 с.
12. Андреева Г.М. Психология социального познания, учебное пособие, изд. Аспект Пресс, 2004, 288 с.
13. Ануфриев Е.А. Социальний статус и активность личности как обьект и субьект социальних отношений, изд. М; 1984г. 280 с.

14. Асмолов А.Г. Психология личности. Культурно-историческое понимание развития личности. Академия, Смысл; М; 2007, 256 с.
15. Банникова Л.М. Маргинальность как социально-патологическая форма адаптации населения к меняющимся условиям жизни (к постановке проблемы) // Ползуновский альманах. — 2000. № 2.
16. Бассин Ф.В. К развитию проблемы значения и смысла // Вопросы психологии, 1973, № 6, с.18-29
17. Божович Л.И. Проблема формирования личности, изд. «Институт практической психологии» 1995, 187 с.
18. Братусь Б.С. Аномалии личности. – М., Мысль,1988.- 301 с.
19. Бутинайте Г.Л., Корнилова Т. В. Личностные ценности и личностные предпочтения субьекта, //Вопросы психологии №5 //, 1993, с. 99-105
20. Васильева Н.И. Динамика ценностных ориентаций личности в зрелом возрасте, (в сфере профессиональной деятельности педогога) автореферат, Москва 1994, 22 с.
21. Вихорев С.А. Практическая психология, обзор теоритических подходов, Псков 2006, с. 12-22
22. Гладышев С. А. Как выжить в толпе и оставаться самим собой. Ростов на Дону,“Феникс” 2004, 384 с.
23. Глотнов М. Б. Современные концепции социальной стратификации, журнал "Социальные проблемы", 2008, № 2
24. Голенкова З.Д., Игитханян Е. Д., Казаринова И. В. Маргинальный слой: феномен социальной самоидентификации, //Социологические исследования. 1996. № 5.// с. 67-75
25. Головаха Е.И. Жизненная перспектива и профессиональное самоопределение молодежи. – К.: Наукова Думка, 1988. – 144 с.
26. Громова Е.М., Беркутова Д. И., Горшкова Т. А. Ценности личности как основа жизненной и профессиональной страрегии, //Современные проблемы науки и образования, 2013 -№ 2//
27. Дементий Л.И. Проблемы профессиональной идентичности и маргинальности в ситуации сознательной смены профессии. Педогогика и Психология, 2001, с. 48-53
28. Додонов Б.И. Эмоция как ценность, М; Политиздат, 1972, 272с.
29. Дюркгейм Э. Самоубийство, социологоческий этюд, Издательство Мысль, 1994, 399с.
30. Емельянов М.С. Практикум по конфликтологии, 2-е изд., доп. и перераб. — СПб.: Питер, 2005, 400с.

31. Заковоротная М.В. Идентичность человека. Социально-философские аспекты, Ростов-на-Дону 1999, 200 с.
32. Зонкин Н.В. Психологическая концепция смысла //Вестник Самарского гос. ун.-та. 1998. № 1 с. 118-124
33. Игнатова Е.Н., Куликов Л.В., Розанова М. А. Социальные и социально-психологические аспекты стрессоустойчивости личности //Теоритические и прикладные вопросы психологии вып. 1, ч. 2 /ред. А. А. Куликов, СПБ., 1995, с. 87-95
34. Калинин И.В. Потеря ценностной основы как причина и следствие кризисной ситуации, Уляновск, //Смысл и акмэ: 10 лет поиска:/ под. ред. А. А. Бодалева, Г. А. Вайзер, Н.А. Карповой, В.Э. Чудовского. Часть 1, М.: Смысл, 2004, с. 146-156
35. Канке В. Философия, Москва Логос" 2001, 272 с.
36. Карабанова О. А. Возрастная психология, изд. <<Айрисс-пресс>>, 2005, 238с.
37. Карпинский К.В. "Психология жизненного пути личности, Учебное пособие, Гродно 2002, 167 с.
38. Климов Е.А.. Психология профессионала, М., Воронеж, 1996, 400 с.
39. Козлов В.В. Психотехнологии измененных состояний сознания. Методы и техники, М.: Изд-во Института психотерапии, 2005, 384 с.
40. Колпакова В. М. Психология адаптивности к трудной ситуации, автореферат диссерации на соискание уч. степени док. псих. наук, Казань 2011, 22 с.
41. Кон И.С. В поисках себя личность и его самосознание, М; "Политиздат", 1984, 335 с.
42. Кон. И.С. Социологическая психология , НПО "МОДЭК " оформления, 1999, 560 с.
43. Кравченко А. И. Социология Хрестоматия для вузов, изд. Академический Проэкт 2004, 736 с.
44. Кравченко А.И. Социлогия 2-е издание перераб. и доп., М: Академический Проект, 2001, 508 с.
45. Крайг Г., Бокум Д. Психология развития. 9-е изд. - СПб.: Питер, 2005 - Серия "Мастера психологии") , 940 с.
46. Крысько В.Т. Социальная психология, Москва 2006, 352 с.
47. Кузнецова О.В. Проблема индивидуальних различий в адаптивности личности, автореферат диссертации на соиск. уч. степ. канд. псих. наук., М: 2009, 22 с.
48. Куимова Н.Н. К проблеме взаимосвязьи социальной и профессиональной адаптации личности особенности развития адаптивности у младших подростков с задержкой

психического развития на этапе из начальной в основную общеобразовательную школу. Автореферат диссертации на соиск. уч. степ. канд. псих. наук, Нижний Новгород – 2012, 22 с.

49. Лебедева Ю.Г. Система ценностей в кризисе взрослости, “Психология в меняющемся мире: материалы региональной студенческой конференции <<Мир. Человек. Психология. 2007, с. 28-31
50. Леонов Н.И. Конфликтология. Хрестоматия, МПСИ, МОДЭК. Год: 2002, 384 с.
51. Леонтьев Д.А. Психология слысла: природа, строение и динамика смысловой реалности, М; Смысл 2003, 488 с.
52. Маклаков А.Г. Личностный адаптационный потенциал: его мобилизация и прогнозирование в экстремальных условиях // Психологический журнал. – 2001. – Т. 22. – № 1. – с. 16-24
53. Малкина-Пых И.Г. Возрастние кризисы взрослости, М.: изд-во, Эксмо, 2005, 416 с.
54. Маслоу А. Психология бытия: пер. с англ. — М.:Киев: Вак-лер, 1997.— 304 с.
55. Маслоу А. Мотивация и личность, Еваразия 1999, 478 с.
56. Мокшанцев Р. И., Мокшанцева А. В. Социальная психология, учебное пособие для ВУЗ-ов, М., . 2001, 408 с.
57. Налчаджян А.А. Социально-психическая адаптация (формы, механизмы, стратегии) изд. АН Армянской ССР. Ереван.1988, 263 с.
58. Новиков В.В. Социальная психология. Учебое издание. Москва, 2002, 390 с.
59. Оллпорт Г. Личность в психологии: Пер. с англ. — М.: КСП+; СПб.: Ювента, 1998. — 350 с.
60. Оллпорт Г. Становление личности. Избранные труды, под пер. с англ. Д. А. Леонтьева, Л.В. Трубницыной, под. ред. Д. А. Леонтьева, М; Смысл 2002 — 462 с.
61. Панин В. И., Лапкин В. В., Ценностные ориентации россиян в 90-ие годы, Pro et Contra, Том 4, № 2, Весна 1999, с.144-160
62. Платонов К.К. О системе психологии. М., ‚Мысль‛, 1972. 216 с.
63. Почебут Л.Г, Мейжис И.А. Социальная психология “Питер”, 2010, 672 с.
64. Психология человека от рождения до смерти под ред. А. А. Реана, СПБ.: Прайм-Еврознак 2002, 656 с.
65. Психология развития /под ред. А.К. Болотовой и О.Н. Молчановой, М. 2005, 524 с.
66. Ратникова М.А. Исследование психологических особенностей профессиональной переориентации в зрелом возрасте. Автореферат на соиск. канд. псих. наук, Москва 1999, 22 с.

67. Рогозян А.Б. К проблеме о взаимосвязи социальной и профессиональной адаптации личности, материалы международной заочной конференции. Теория и практика современной психологии, КубГУ, Краснадар 2011, с.28-33
68. Роджерс К. Клиентоцентрированная терапия: Пер. с англ. — М.: Рефл-бук; Киев: Ваклер, 1997. —320 с.
69. Ростовцева М.В. Адаптивность как отношения личности и обшества. Автрореферат на соиск. канд. филос. наук, Красноярск 2010, 22 с.
70. Семечкин Н.И. Социальная психология на рубеже веков. Часть 1. История и теория исследования: изд. Дальневосточного унивеврситета 2001, 145 с.
71. Серый А.В. Система личностных смыслов: структура, функции, динамика /науч. ред. М.С. Яницкий. - Кемерово: Кузбассвузиздат, 2004, 272 с.
72. Серий А.В., Янцикий М.С. Ценностно-смысловая сфера личности //Учебное пособие, Кемерово, 1999, 92 с.
73. Сластенин В.А., Каширин В.П. Психология и педогогика: учеб. пособие для студ. выс. учеб. Заведений /издательский центр <<Академия>>, 2006, 480 с.
74. Словарь практического психолога. /сост. С. Ю. Головин М: Харвест, 1998. — 800 с.
75. Соина И.А. Динамика ценностных ориентаций личности в ее изменяющимся социально-психологическом пронстранстве, автореферат на соиск канд. псих. наук., Москва 2011, 22 с.
76. Соловьева С.Л. Ресурсы личности. [Электронный ресурс] // Медицинская психология в России: электрон. науч. журн. № 2. URL: http:// medpsy.ru (дата обращения: 30.06.2010)
77. Сурженко Л.В. Ценности личности, философский и психологический анализ понятия, [Электронный ресурс] //Научный журнал КубГАУ. 2011. № 65 (01). С. 1-11. URL: http://ej.kubagro.ru/2011/01/pdf/18.pdf (дата обращения: 02.11.2011).
78. Столяренко Л.Д., Самыгин С. И. 100 Экзаменационный ответов по психологии, Ростов на Дону, изд. центр <<Март>>, 2001, 256 с.
79. Толочек В.А. Современная психология труда, Питер 2005, 479 с.
80. Философский словарь. /Под ред. И.Т. Фролова. – М.: Политиздат, 1986, 560 с.
81. Франкл В. Человек в поисках смысла: пер. с англ. — М.: Прогресс, 1990. —372 с.
82. Фрейд З. Психология бессознательного: сб. Произведений /Сост., науч. ред., авт. вступ. ст. М.Г. Ярошевский.-М.: Просвещение>> 1990.— 448 с.
83. Фромм Э., Здоровое общество изд. АСТ, 2005, 576 с.
84. Цвык В.А. Социально-профессиональный статус личности и престиж профессии, Вестик Тюменского государсвенного университета. 2009. № 4, с. 44-52
85. Шарп Д. Кризис среднего возраста. Записки о выживании, Независимая фирма

“Класс”, 2006 , 160 с.
86. Шибутани Т. Социальная психология, Прогресс 1969, 535 с.
87. Шихи Г. Возрастные кризисы, Санкт-Петербург, Ювента, 1999, 222 с.
88. Шпунтова В.В. Внутриличностый ценностный конфликт и способы его разрешения //Психологические исследования. сб. науч. тр. выпуск 6, под. ред. А. Ю. Агафонова В.В, Шпунтовой, Самара 2008, 452 с.
89. Штомпка П. Социология социальных изменений , М; Аспект Пресс, 1996. — 416 с.
90. Эйдман И. Прорыв в будущее. Социология интернет революции, изд. ОГИ, 2007, 384 с.
91. Эвнина К.Ю. Позитивные феномены в ценностно-смысловой сфере личности, ФГБОУ ВПО "Челябинский государственный университет", Современние проблемы науки и образования 2013-№ 2 http://www.science-education.ru/108-8629
92. Энциклопедия психодиагностики. Психодиагностика персонала. Самара: Изд. Дом “Бахрах-М”, 2010, 790 с.
93. Эриксон Э. Детство и общество. Изд. 2-е, перераб. и доп. /Пер. с англ. — СПб.: Ленато, АСТ, Фонд ,Университетская книга, 1996, 592 с.
94. Юрьева Л.Н. Кризисные состояния личности, Днепропетровск, Арт 1999, 263 с.,
95. Яницкий М.С. Ценностные ориентации личности как динамическая система— Кемерово: Кузбассвузиздат, 2000, 204 с.
96. Яницкий М.С. Адаптационный процесс: Психологические механизмы и закономерности динамики, учебное пособие, Кемерово, Кузбассвизиздат 1999, 84 с.
97. Яницкий М.С., Серый А.В. Диагностика уровня развития ценностно-смысловой сферы личности, учебное пособие, Новокузнецк 2010, 102 с.
98. Яницкий М.С., Иванов М.С., Утюгов А.А. Изменение осмысленности прошлого, настояшего и будущего как механизм переживания экстремальных ситуаций, социальные и гуманитарные науки на Дальнем Востоке, Хабаровск № 2(34), 2012, с. 124-130
99. Янушкин Н.Н., Безумова Л.Г. Изменение соотношения ценностей и потребностей в структуре смысловой сферы личности студентов в процессе социализации в ВУЗ-е, Самарская гуманитарная академия, Психология УДК159. 9; 2010
100. Merton R. Social theory and social structure, N. Y.; 1957, 696 p.
Park R.E. Human migration and the marginal man //American Journal of Sociology. Chicago, 1928, vol. 33, № 6. 355-356
101. Skolimowski H. Freedom, responsibility and the information society// Vital speeches 50. N16 1984, p. 495
102. Rokeach M. The nature of human values. N, 1972.-214 p

103. Stonequist E.V. The marginal man. A study in personality and culture conflict. - N.Y., 1961.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

Մասնագիտության փոփոխության գնահատման հարցաթերթիկ

1.Ներկայումս զբաղվում եք մասնագիտական աշխատանքով:

ա) այո

բ)ոչ

գ) զբաղվում եմ ավելի ցածր որակավորմամբ աշխատանքով

2. Այժմ աշխատանքը ձեզ համար ինքնաարտահայտման միջոց է

ա) ոչ, ապրուստի միջոց է

բ) այո, ինքանաարտահայտման և ինքնաիրացման միջոց է

3. Շրջապատում տեղի ունեցող փոփոխություններին ձեզ ուրախացնում են

ա) այո, դրանք ինձ ուրախացնում են

բ) չգիտեմ, անտարբեր եմ

գ) ոչ, փոփոխությունները վախեցնում են

4. Ձեր կյանքն այնպիսին է ինչպիսին դուք կուզենայիք.

ա) այո, ես իմ կյանքից գոհ եմ

բ)ոչ, ես իմ կյանքից գոհ չեմ

5. Ձեր համար կյանքում կարևոր է ապահովության զգացումը

ա) այո, այդպես է

բ) չգիտեմ, ինձ համար միևնույն է

գ)ոչ այդպես չէ

6. Նախկին աշխատանքը ձեզ ավելի էր գոհացնում, քան ներկայիս աշխատանքը

ա) այո

բ) ոչ

7. Զգում եք, որ կյանքում ձեր «տեղը» ամուր է.

ա) այո, այդպես է

բ)չգիտեմ

դ) ոչ այդպես չէ

8. Հաճախ եք մտածում, որ կյանքում ոչինչ փոխել հնարավոր չէ

ա) այո

բ) ոչ

9. Դուք ապրում եք անցյալի հիշողություններով

ա) այո

բ) երբեմն

գ) ոչ

10. Դուք ներդնում եմ ձեր ողջ պոտենցյալը ձեր աշխատանքի մեջ

ա) այո

բ) ոչ այդպես չէ

11. Մտածում եք ապագայի մասին:

ա) այո, հաճախ

բ)չգիտեմ, երբեմն

գ) ոչ, հազվադեպ

12. Գոհ եք այն աշխատանքից, որ կատարում եք

ա) այո, լիովին

բ) ոչ այնքան

գ) ոչ

Հավելված 2

Ռոկիչի արժեքային կողմնորոշումների մեթոդիկայի ձևաթուղթը

Հետզոտվողնին հրահանգվում է դասակարգել 18 արժեք-նպատակները (ըստ Ռոկիչի՝ տերմինալային արժեքները)՝ ըստ նշանակության՝ առաջին երկրորդ, երրորդ տեղերում անձի համար առավել անշանակալի արժեքներն են: Այնուհետև ավարտելու հետո առաջարկվում է դասակարգել արժեքները տվյալ պահին կյանքում ըստ դրանց իրացվածության աստիճանի:

Արժեքներ	**Նշանակություն**	**Իրացվածություն**
Ակտիվ կենսագործունեություն		
Կյանքի իմաստություն		
Առողջություն		

Հետաքրքիր աշխատանք		
Բնության և արվեստի գեղեցկություն		
Սեր		
Նյութապես ապահովված կյանք		
Լավ ու հարազատ ընկերներ		
Հասարակության կողմից ընդունում		
Ճանաչողություն		
Արդյունավետ կյանք		
Զվարճանք		
Ազատություն		
Զարգացում		
Երջանիկ ընտանեկան կյանք		
Այլ մարդկանց երջանկություն		
Արարել		
Վստահություն սեփական ուժերի մեջ		

Հավելված 3

Ռ. Ինգլհարդի մեթոդիկան՝ ձևափոխված Մ. Ս.Յանիցկու կողմից

Հետազոտվողին հրահանգվում է ընտրել արժեքային շարքից (9 արժեքներ) իր համար առավել կարևոր երեք արժեք, որոնք ներառում են որոշակի խմբի արժեքների նկատմամբ կողմնորոշման ինդիկատորներ: 1 4 7 կետերը հարմարման արժեքների նկատմամբ կողմնորոշման ինդիկատոերներն են, 2 5 8՝ սոցիալականացման արժեքների նկատմամբ, 3 6 9՝ անհատականացման արժեքների նկատմամբ:

1.նյութական բարեկացություն, կարիքի բացակայություն

2. ընտանեկան բարեկեցություն

3. մտավոր և ստեղծագործական իրանաիրացման հնարավորություն

4. ուժերի պահպանում և առողջություն

5. լավ հեղինակավոր աշխատանք

6.ժողովրդավարական իրավունքներից և ազատություններից օգտվելու հնարավորություն

7. հասարակության մեջ կարգուկանոնի և կայունության պահպանում

8. շրջապատողների հարգանք, հասարակական ընդունում

9. ավելի հանդուրժող և մարդասիրական հասարակության կառուցում

Հավելված 4

Ա. Գ. Մակլակովի և Ս. Վ. Չերմյանինի «Ադապտիվություն» բազմաշերտ անձնային հարցարան

Հարցաշարը պարունակում է 165 հարց և ունի հետևյալ սանդղակները.

- «Արժանահավատություն» (Ա)
- «Ադապտիվ ընդունակություն» (ԱԸ)
- «Նյարդահոգեկան կայունություն» (ՆՀԿ)

Հետազոտվողը յուրաքանչյուր հարցին պետք է պատասխանի «այո» կամ «ոչ»

Հարցարանի թեստային նյութը

1. Պատահում է, որ զայրանում եմ:
2. Առավոտյան սովորաբար արթնանում եմ թարմ և հանգստացած:
3. Այժմ ես այնքան աշխատունակ եմ, որքան նախկինում:
4. Ճակատագիրն ինչ-որ տեղ անարդարացի է իմ նկատմամբ:
5. Ես հազվադեպ եմ փորկապություններ ունենում:
6. Ես երբեմն տանից հեռանալու ցանկություն եմ ունենում:
7. Ժամանակ առ ժամանակ ես ծիծաղի կամ լացի անկառավարելի նոպաներ եմ ունենում:
8. Ինձ թվում է, որ ոչ ոք ինձ չի հասկանում:
9. Կարծում եմ, որ եթե մեկին ինձ վատություն է արել, ես էլ նրան նույն կերպ կպատասխանեմ:

10. Երբեմն իմ մտքով այնպիսի բաներ են անցնում, որ ավելի լավ է ոչ ոքի չպատմել:
11. Ինձ համար դժվար է կենտրոնանալ որևէ աշխատանքի կամ խնդրի վրա:
12. Ես հաճախ տարօրինակ և անսովոր ապրումներ եմ ունենում:
13. Ես իմ վարքի հետ կապված անախորժություններ չեմ ունենցել:
14. Մանկության տարիներին երբեմն փոքր գողություններ էի անում:
15. Պատահում է, որ ինձ մոտ ամեն ինչ ջարդելու ավերելու ցանություն է առաջանում:
16. Պատահել է, որ ես օրեր կամ նույնիսկ շաբաթներ ոչինչ չեմ կարողացել անել, քանի որ չեմ կարողացել ստիպել ինձ սկսել գործը:
17. Իմ քունը անկանոն և անհանգիստ է:
18. Ընտանիքս իմ ընտրած աշխատանքի նկատմամբ լավ է տրամադրված:
19. Եղել են դեպքեր, որ չեմ կարողացել խոստումս կատարել:
20. Իմ գլուխը հաճախ է ցավում:
21. Շաբաթը մի քանի անգամ կամ ավելի հաճախ առանց որևէ ակնառու պատճառի ամբողջ մարմնումս տապ եմ զգում:
22. Լավ կլիներ, եթե համարյա բոլոր օրենքները փոխեին:
23. Իմ առողջական վիճակը իմ ծանոթների մեծամասնության առողջական վիճակից վատ չէ:
24. Հանդիպելով իմ ծանոթներին կամ դպրոցական ընկերներին, որոնց հետ վաղուց չեմ հանդիպել, նախընտրում եմ կողքներով անցնել, եթե նրանք առաջինը չեն սկսում խոսել ինձ հետ:
25. Ինձ ճանաչող մարդկանց մեծամասնությանը ես դուր եմ գալիս:
26. Ես շփվող մարդ եմ:
27. Երբեմն ես այնքան եմ պնդում ասածը, որ մարդիկ կորցնում են իրենց համբերությունը:
28. Այժմ ինձ համար դժվար է հուսալ, որ կյանքում ինչ-որ բանի կհասնեմ:
29. Տրամադրությունս մեծ մասամբ ճնշված է:
30. Ես ինքնավստահ չեմ:
31. Ես երբեմն սուտ եմ խոսում:
32. Սովորաբար ես կարծում եմ, որ կյանքը կանգնած է:
33. Կարծում եմ՝ մարդկանց մեծամասնությունը կարող է ստել՝ ծառայության մեջ առաջ գնալու համար:

34. Ես հաճույքով մասնակցում եմ ժողովների և հասարակական այլ միջոցառումների:
35. Ես հաճախ եմ վիճում ընտանիքիս անդամների հետ:
36. Երբեմն ես ունենում եմ պարկեշտության կանոնները խախտելու և ինչ-որ մեկին վնասելու ուժեղ ցանկություն:
37. Ինձ համար ամենադժվարն ինքս ինձ հետ պայքարելն է:
38. Ինձ մոտ հազվադեպ են լինում մկանային կծկումներ և ցնցումներ:
39. Ես բավականին անտարբեր եմ, թե ինչ կլինի ինձ հետ:
40. Երբեմն, երբ ինձ լավ չեմ զգում, ես դյուրաբորբոք եմ լինում:
41. Հաճախ այնպիսի զգացում ունեմ, որ ինչ-որ բան այնպես չեմ արել կամ նույնիսկ վատ բան եմ արել:
42. Որոշ մարդիկ այնքան են սիրում հրամայել, որ ուզում եմ հակառակն անել, եթե նույնիսկ գիտեմ, որ նրանք ճիշտ են:
43. Հաճախ գտնում եմ, որ պարտավոր եմ պնդել այն, ինչ արդար եմ համարում:
44. Իմ խոսքն հիմա այնպիսին է, ինչպիսին եղել է (ոչ արագ, ոչ դանդաղ, ոչ խռպոտ):
45. Կարծում եմ, որ իմ ընտանեկան կյանքն այնքան լավ է, որքան ծանոթներիս մեծ մասինը:
46. Ես խիստ վիրավորվում եմ, երբ ինձ քննադատում են կամ հայհոյում:
47. Երբեմն զգում եմ, որ ուղղակի պետք է վնասեմ ինձ կամ ուրիշին:
48. Իմ վարքը մեծապես պայմանավորվում է ինձ շրջապատողների սովորություններով:
49. Մանկության տարիներին իմ շրջապատում բոլորը ձգտում էին միմյանց սատարել:
50. Երբեմն ցանկանում եմ որևէ մեկի հետ կռվի բռնվել:
51. Պատահել է, որ խոսել եմ այնպիսի բաների մասին, որոնցից չեմ հասկանում:
52. Հաճախ ես հանգիստ քնում եմ և ինձ ոչ մի միտք չի անհանգստացնում:
53. Վերջին տարիներին ես ինձ լավ եմ զգում:
54. Հիմա իմ քաշը կայուն է (ոչ նիհարում եմ, ոչ գիրանում):
55. Ինձ մոտ չեն եղել ոչ նոպաներ, ոչ էլ ջղաձգումներ:
56. Ես կարծում եմ, որ ինձ հաճախ անտեղի են պատժել:
57. Ես շուտ եմ հոգնում:
58. Ես քիչ եմ հոգնում:

59. Ես բավականին հանգիստ կլինեի, եթե իմ ընտանիքից որևէ մեկը տհաճություններ ունենար օրենքը խախտելու պատճառով:
60. Իմ դատողության հետ ինչ-որ վատ բան է կատարվում:
61. Ես մեծ ջանքեր եմ գործադրում, որպեսզի կոծկեմ ամաչկոտությունս:
62. Գլխապտույտի նոպաներ շատ հազվադեպ եմ ունենում (կամ չեմ ունենում):
63. Ինձ անհանգստացնում են սեռական խնդիրները:
64. Ինձ համար դժվար է խոսել մարդկանց հետ, որոնց հետ նոր եմ ծանոթացել:
65. Երբ ինչ-որ բան փորձում եմ անել, հաճախ նկատում եմ, որ ձեռքերս դողում են:
66. Իմ ձեռքերը նախկինի նման ճարպիկ և ուժեղ են:
67. Ժամանակի մեծ մասը ես ընդհանուր թուլություն եմ զգում:
68. Երբեմն, երբ շփոթված եմ, ուժեղ քրտնում եմ և դա ինձ նյարդայնացնում է:
69. Պատահում է, որ վաղվան եմ հետաձգում այն, ինչ պետք է այսօր անել:
70. Կարծում եմ, որ վաղվան եմ հետաձգում այն, ինչ պետք է անել այսօր:
71. Եղել են դեպքեր, երբ ես դժվարությամբ եմ ինձ զսպել, որ ինչ -որ մեկից կամ ինչ-որ տեղից (օրինակ խանութից) որևէ բան չգողանամ:
72. Ես չարաշահել եմ ալկոհոլը:
73. Ես հաճախ տագնապում եմ ինչ-որ բանի համար:
74. Ես կցանկանայի մի քանի խմբակների կամ միությունների անդամ լինել:
75. Ես հազվադեպ եմ շնչահեղձ լինում և չեմ ունենում ուժեղ սրտխառնոց:
76. Ամբողջ կյանքում ես հետևում եմ պարտքի զգացման վրա հիմնված սկզբունքներին:
77. Պատահել է, որ ես խոչընդոտել եմ այլ մարդկանց հակառակ եմ գործել լոկ սկզբունքից ելնելով, ոչ թե նրա համար, որ գործը իրոք, կարևոր է եղել:
78. Եթե ինձ տուգանք չի սպառնում, իսկ մոտակայքում մեքենաներ չկան, ապա ես կարող եմ փողոցն անցնել, ոչ թե նախանշված տեղից, այլ որտեղից կամեմնամ:
79. Ես միշտ եղել եմ անկախ և ընտանիքի վերահսկողությունից ազատ:
80. Ինձ մոտ այնպիսի ուժեղ անհանգստության պահեր են եղել, որ նույնիսկ չեմ կարողացել տեղս նստել:
81. Իմ արարքները հաճախ սխալ էին մեկնաբանվում:
82. Ծնողներս (կամ ընտանիքիս այլ անդամները) ինձ չափից շատ մանրախնդիր են վերաբերվում:

83. Ինչ-որ մեկը կառավարում է իմ մտքերը:
84. Մարդիկ անտարբեր են և նրանց համար մեկ է, թե քեզ հետ ինչ կլինի:
85. Ինձ դուր է գալիս գտնվել շրջապատում, որ բոլորը կատակում են:
86. Դպրոցում ես նյութն ուրիշներից դանդաղ էի սովորում:
87. Ես լիովին ինքնավստահ եմ:
88. Ոչ մեկին չվստահելն ամենաանվտանգն է:
89. Շաբաթը մեկ անգամ հաճախ ես խիստ գրգռված եմ լինում:
90. Երբ ես ընկերախմբում եմ, ինձ համար դժվար է խոսակցությսան համար թեմա գտնել:
91. Ինձ համար հեշտ է ստիպել այլ մարդկանց վախենալ ինձնից և ես այդ երբեմն անում եմ զվարճանալու համար:
92. Խաղի ժամանակ նախընտրում եմ հաղթել:
93. Հիմարություն է մեղադրել այն մարդուն, որը խաբել է նրան, ով թույլ է տվել:
94. Ինչ-որ մեկը փորձում է ազդել իմ մտքերի վրա:
95. Ես ամեն օր ջուր շատ եմ խմում:
96. Ամենաշատը երջանիկ եմ զգում ինձ, երբ միայնակ եմ:
97. Ես ամեն անգամ տարակուսում եմ, երբ լսում եմ, որ հանցագործն ինչ-որ պատճառով անպատիժ է մնացել:
98. Իմ կյանքում եղել են դեպքեր, երբ զգացել եմ, որ ինչ-որ մեկը հիպնոսի միջոցով ստիպում է ինձ այս կամ այն քայլն անել:
99. Ես հազվադեպ եմ մարդկանց հետ առաջինը խոսում:
100. Ես երբեք օրենքի հետ բախումներ չեմ ունեցել:
101. Ինձ հաճելի է իմ ծանոթների շրջանում նշանավոր մարդիկ ունենալ, դա իմ աչքերում ինձ կշիռ է տալիս:
102. Երբեմն առանց որևէ պատճառի ինձ մոտ հանկարծ անսովոր ուրախության փուլեր են սկսվում:
103. Ինձ համար կյանքը համարյա միշտ կապված է մեծ լարման հետ:
104. Դպրոցում ինձ համար շատ դժվար է դասարանի առջև խոսել:
105. Մարդիկ իմ նկատմամբ այնքնան բարեհաճություն ու կարեկցանք են ցուցաբերում, որքան ես արժանի եմ:

106. Ես հրաժարվում եմ խաղալ որոշ խաղեր, քանի որ դրանք ինձ մոտ վատ են ստացվում:

107. Ինձ թվում է, որ ես այնքան հեշտությամբ եմ ընկերներ ձեռք բերում, որքան ուրիշները:

108. Ինձ համար տհաճ է, երբ ինձ շրջապատում են մարդիկ:

109. Ես, որպես կանոն, հաջողակ եմ:

110. Ես հեշտությամբ եմ շփոթվում:

111. Իմ ընտանիքի որոշ անդամներ ինձ վախեցնող գործեր են արել:

112. Երբեմն ինձ մոտ լինում են լացի կամ ծիծաղի նոպաներ, որոնք կառավարել չեմ կարողանում (չեմ կարողանում հաղթահարել):

113. Ինձ համար դժվար է նոր հանձնարարություն կատարել կամ նոր գործ սկսել:

114. Եթե մարդիկ ինձ հակառակ տրամադրված չլինեին, ես կյանքում ավելի շատ բանի կհասնեի:

115. Ինձ թվում է, որ ինձ ոչ ոք չի հասկանում:

116. Իմ ծանոթների մեջ կան մարդիկ, որոնք ինձ դուր չեն գալիս:

117. Ես շուտ եմ կորցնում համբերությունս:

118. Նոր իրադրության մեջ հաճախ տագնապ եմ զգում:

119. Հաճախ եմ ցանկանում մեռնել:

120. Երբեմն այնքան գրգռված եմ լինում, որ դժվարությամբ եմ քնում:

121. Ես հաճախ փողոցն անցնում եմ, որ խուսափեմ ծանոթ մարդու հետ հանդիպելուց:

122. Պատահել է, որ թողել եմ սկսած գործը՝ վախենալով, որ չեմ կարող գլուխ բերել այն:

123. Համարյա ամեն օր պատահում է ինչ-որ բան, որը վախեցնում է ինձ:

124. Նույնիսկ մարդկանց հետ ես ինձ միայնակ եմ զգում:

125. Ես համոզված եմ, որ գոյություն ունի կյանքի իմաստի մեկ ճիշտ ըմբռնում:

126. Հյուր գնալիս ավելի հաճախ մի կողմում նստած զրուցում եմ որևէ մեկի հետ, քան մասնակցում եմ ընդհանուր զվարճանքին:

127. Հաճախ են ասում, որ ես բռնկվող եմ:

128. Պատահում է, որ բամբասում եմ:

129. Հաճախ ինձ համար տհաճ է, երբ ես փորձում եմ ինչ-որ մեկին սխալներից զերծ պահել, իսկ ինձ սխալ են հասկանում:

130. ս հաճախ դիմում եմ մարդկանց՝ խորհուրդ ստանալու խնդրանքով:

131. Հաճախ, նույնիսկ երբ ամեն ինչ լավ է դասավորվում, զգում եմ, որ ինձ համար միևնույն:

132. Ինձ բավականին դժվար է ափերից հանել:

133. Երբ փորձում եմ մարդկանց ցույց տալ իրենց սխալները կամ օգնել հաճախ ինձ սխալ են հասկանում:

134. Սովորաբար ես հանդարտ եմ և ինձ հոգեկան հավասարակշռությունից հանելը դժվար է:

135. Ես արժանի եմ պատժի իմ արարքների համար:

136. Ինձ բնորոշ է հիասթափությունների խորը ապրումը և ուղղակի չեմ կարողանում ստիպել ինձ չմտածել այդ մասին:

137. Երբեմն ինձ թվում է, թե ոչնչի համար պիտանի չեմ:

138. Պատահել է, որ որոշ հարցերի քննարկման ժամանակ ես առանց խորը մտածելու համաձայնել եմ ուրիշների կարծիքին:

139. Ինձ խիստ անհանգստացնումմ են զանազան դժբախտությունները:

140. Իմ հայացքներն ու համոզմունքները հաստատուն են:

141. Կարծում եմ կարելի է առանց օրենքը խախտելու սողանցել նրա մեջ:

142. Կան մարդիկ, որոնք ինձ այնքան տհաճ են, որ ես հոգու խորքում ուրախանում եմ, երբ նրանք ինչ-որ բանում ձախողվում են:

143. Եղել են դեպքեր, երբ անհանգստության պատճառով կորցրել եմ քունս:

144. Ես այցելում եմ ամենատրբեր հասարակական միջոցառումներ, քանի որ դա թույլ է տալիս լինել մարդկանց մեջ:

145. Մարդկանց կարելի է ներել իրենց կողմից սխալ համարվող կանոնների խախտումը:

146. Ես ունեմ այնքան վատ սովորություններ, որ նրան հետ պայքարելն անօգուտ է:

147. Ես հաճույքով ծանոթանում եմ նոր մարդկանց հետ:

148. Պատահում է, որ նույնիսկ անպարկեշտ կատակն ինձ մոտ ծիծաղ է առաջացնում:

149. Եթե ինձ մոտ գործը վատ է ընթանում, ապա անմիջապես ուզում եմ, այն թողնել:

150. Ես նախընտրում եմ գործել ըստ իմ պլանների ոչ թե հետևել ուրիշների ցուցումներին:

151. Սիրում եմ, որ շրջապատողներն իմանան իմ տեսակետը:

152. Եթե ես մարդու մասին վատ կարծիքի եմ կամ նույնիսկ արհամարում եմ նրան, ապա գրեթե չեմ փորձում թաքցնել այդ:

153. Ես նյարդային և դյուրաբորբոք մարդ եմ:

154. Ինձ մոտ ամեն ինչ վատ է ստացվում, ոչ այնպես, ինչպես պետք է:

155. Ապագան ինձ անհույս է թվում:

156. Մարդիկ բավականին հեշտ կարող են փոխել իմ տեսակետը, նույնիսկ, եթե մինչ այդ այն ինձ վերջնական էր թվում:

157. Շաբաթական մի քանի անգամ ինձ թվում է, թե ինչ նոր սարսափելի բան է լինելու:

158. Շատ հաճախ ես ինձ հոգնած եմ զգում:

159. Ես սիրում եմ լինել երեկույթներում կամ ընկերախմբերում:

160. Ես փորձում եմ խուսափել կոնֆլիկտներից և բարդ իրադրություններից:

161. Ինձ հաճախ նյարդայնացնում է, որ մոռանում եմ՝ ուր եմ դրել իրերը:

162. Ինձ ավելի դուր են գալիս արկածային, քան սիրային պատմվածքները:

163. Եթե ես ուզենայի ինչ-որ բան անել, իսկ շրջապատողների կարծիքով այդ անել չարժե, ապա հեշտությամբ կարող եմ հրաժարվել իմ մտադրությունից:

164. Հիմարություն է դատապարտել այն մարդկանց, որոնք ձգտում են կյանքից վերցնել այն ամենը ինչ կարող են:

165. Ինձ համար միևնույն է, թե իմ մասին ինչ են մտածում ուրիշները: